ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԻԶՅԱՆ ԽԱՉԻԿ ՌՈԲԵՐՏԻ

ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (19-ՐԴ ԴԱՐ – 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
պ.գ.դ. Ռուբեն Կառլենի Կարապետյան

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ I. ԵԳԻՊՏՈՍՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՎ ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ 16

1.1. Ներքաղաքական իրավիճակը Եգիպտոսում մինչև Նապոլեոն Բոնապարտի արշավանքը 16

1.2. Նապոլեոն Բոնապարտի արշավանքը Եգիպտոս և դրա ազդեցությունը Եգիպտոսի կառավարման և դատական համակարգերի վրա 24

ԳԼՈՒԽ II. ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1805-1848թթ.) 52

2.1. Մուհամմադ Ալիի պայքարն իշխանության համար և ներքին իրադրությունը Եգիպտոսում 52

2.2. Եգիպտոսի պետական կառավարման համակարգի բարեփոխումները Մուհամմադ Ալիի օրոք 69

2.3. Մուհամմադ Ալիի իրականացրած բարեփոխումները ռազմական ոլորտում 96

ԳԼՈՒԽ III. ԵԳԻՊՏՈՍԸ ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ 1848-1914թթ. 120

3.1. Բարեփոխումների ընթացքը Եգիպտոսում Աբբասի, Սայիդի և Իսմայիլի կառավարման տարիներին (1848-1879թթ.) 120

3.2. Ներքաղաքական իրավիճակը Եգիպտոսում 1879-1882թթ. և Օրաբի փաշայի ապստամբությունը 140

3.3. Բրիտանական տիրապետության հաստատումը Եգիպտոսում (1882-1914թթ.) 155

3.4. Հայերի ներդրումը XIX-XX դարերի Եգիպտոսի պետականաշինության մեջ 171

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 193

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 199

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Եգիպտոսում XIX-XX դարերի ռազմաքաղաքական իրադարձությունները և սոցիալ-տնտեսական էական

բարեփոխումները հանդիսացան ժամանակակից Եգիպտոսի պետականաշինության և սոցիալ-տնտեսական զարգացման իրական հենքը: Այս ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների բազմակողմանի ուսումնասիրության շնորհիվ է հնարավոր միայն կառուցել ժամանակակից Եգիպտոսի կայացման պատմագրական լիարժեք շղթան, ինչով և պայմանավորված է այս ատենախոսության թեմայի արդիականությունը:

Պայմանավորված իր աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկություններով՝ Եգիպտոսը մշտապես եղել է օտար զավթիչների հետաքրքրության կիզակետում, ընդ որում, եթե արևելյան երկրների, մասնավորապես, Օսմանյան կայսրության համար Եգիպտոսի զավթումն ուղղակիորեն միտված էր տարածքային ընդլայնմանը, ապա եվրոպական ուժերի համար այն նաև միջնորդավորված, անուղղակի նպատակներ էր հետապնդում. մի կողմից այն տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի նկատմամբ վերահսկողություն էր ապահովում, մյուս կողմից էլ եվրոպական գերտերությունների միջև ընթացող հարատև պայքարում ծանրակշիռ խաղաթուղթ էր:

Եգիպտոսի պատմության այս ժամանակահատվածի ուսումնասիրությունն առանձնակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում որպես Եգիպտոսի «Օսմանյան» ժամանակաշրջանի պատմության հիմնարար դադարի և «ժամանակակից» պատմության ստեղծման ժամանակագրական խաչմերուկ: Չնայած XIX-XX դարերում Եգիպտոսը ներքին ու արտաքին ուժերի հետ բախումներում որոշակիորեն հյուծվել էր, այնուամենայնիվ նոր ժամանակաշրջանի կառավարիչները հետամուտ եղան իրականացնելու էական բարեփոխումներ երկրի կառավարման համակարգում, նորամուծական մեթոդներ ու մեխանիզմներ ներդրեցին մի շարք ոլորտներում՝ նոր շունչ հաղորդելով Եգիպտոսի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին:

Այսպիսով, Եգիպտոսի՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվելու և Նապոլեոն Բոնապարտի արշավանքի ժամանակաշրջանի իրադարձությունների պատճառահետևանքային կապերի ուսումնասիրությունը պատմագրության մեջ

առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերել պայմանավորված ժամանակաշրջանի դեպքերի՝ ինչպես ներկայիս Եգիպտոսի քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական կյանքի վրա իր ազդեցությամբ: Այն նաև իր վճռորոշ դերն է ունեցել եվրոպական գերտերությունների զավթողական նպատակների և աշխարհաքաղաքական կոնֆլիկտների հանգուցալուծման տեսանկյունից:

Նապոլեոն Բոնապարտի արշավանքը, թեև սկիզբ էր առել XVIII դարի վերջում և հստակ արտացոլում էր ֆրանսիական զավթողական նպատակները, հանդիսացավ Եգիպտոսի պետական համակարգի և սոցիալ-տնտեսական կյանքի այնպիսի վերափոխումների սկիզբ, որոնք իրենց ուրույն ազդեցությունն ունեցան նաև XIX դարի պատմական զարգացումներում: Հետևապես Նապալեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի ուսումնասիրությունը կարևոր դեր է ձեռք բերում այս ատենախոսության ուսումնասիրության ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների համակողմանի և խորքային վերլուծության համատեքստում:

Հատկանշական է, որ Բոնապարտի արշավանքը Եգիպտոս շրջադարձային նշանակություն ունեցավ ոչ միայն Եգիպտոսի, այլև արաբական աշխարհի հետագա պատմության և զարգացման համար: Այն արթնացրեց արաբներին «դարավոր քնից» և նոր շունչ հաղորդեց արաբական աշխարհի մշակութային ու քաղաքական կյանքի զարգացմանը: Պատմական այս անցումը, այնուամենայնիվ, պայմանավորված չէ միայն տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների թելադրանքով, այն նաև Եգիպտոսի ամենաուժեղ կառավարիչներից մեկի՝ Մուհամմադ Ալիի հետևողական պայքարի և շարունակական բարեփոխումների արդյունքն է, որի համար նա Եգիպտոսի պատմության մեջ իրավացիորեն ճանաչվեց որպես «ժամանակակից Եգիպտոսի հիմնադիր»: Ընդ որում, ի տարբերություն Նապոլեոն Բոնապարտի, Մուհամմադ Ալիի գործողություններն ուղղված էին երկրի բարօրությանը և միտում ունեին լիովին անկախացնելու երկիրն ինչպես օսմանյան լծից, այնպես էլ եվրոպական կամայական կախվածությունից:

Կարևորելով նախաձեռնած բարեփոխումների ազդեցության մեջ դրանց իրականացման շղթայի անընդհատության դերը՝ անդրադարձ է կատարվել նաև Մուհամմադ Ալիի կառավարումից հետո Եգիպտոսում ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտում նախորդ ժամանակաշրջանից ժառանգած ձեռքբերումների պահպանման և դրանց զարգացման հիմնահարցերին: Մուհամմադ Ալիին հաջորդած երեք կառավարիչները, թեև Եգիպտոսը հասցրեցին ֆինանսական ծանր վիճակի, այդուհանդերձ շարունակեցին բարեփոխումների այսքան կարևոր ընթացքը: Բարեփոխումների շղթան չընդհատվեց նաև բրիտանական տիրապետության ժամանակաշրջանում, երբ քաղաքական ճնշումներին և եվրոպացիների կամայականություններին զուգահեռ երկիրը շարունակում էր արդիականացման և զարգացման գործընթացը:

Այսպիսով, այս ժամանակաշրջանը պատմագրության մեջ առանձնանում է իրադարձությունների այնպիսի զարգացմամբ, որոնց պատճառահետևանքային և խոր ուսումնասիրության դեպքում է հնարավոր միայն բացահայտել և ներկայացնել պատմական իրադարձությունների իրական դրդապատճառները և հետևանքները:

Զուգահեռաբար անհրաժեշտ է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում Եգիպտոսը հանդիսացավ հայերի գաղթման հիմնական ուղղություններից մեկը: Հիմնվելով սեփական բազմադարյան մշակութային և կրթական փորձի վրա՝ հայերն իրենց ուրույն ներդրումն են ունեցել Եգիպտոսի քաղաքական, օրենսդրական, տնտեսական և միջազգային առևտրի բնագավառներում, ինչպես նաև կրթական և մշակութային մի շարք ոլորտներում, ինչն էապես նպաստել է Եգիպտոսի զարգացմանն ու արդիականացմանը: Բարձր պաշտոններ զբաղեցնելով պետական ու հասարակական ոլորտներում՝ եգիպտահայերը մշտապես ապացուցել են իրենց հավատարմությունը Եգիպտոսի հանդեպ և պահպանել են կրթված ազգ լինելու համբավը:

XIX դարում Եգիպտոսում հաստատված հայ քաղաքական, հասարակական ու մշակութային գործիչները ստեղծեցին իրապես ազդեցիկ գաղութ և իրենց հայրենասիրության ու ազգային շահերին նվիրվածության շնորհիվ էապես օգնեցին Օսմանյան

կայսրության տեղահանումներից և ջարդերից փրկված հայրենակիցներին: Եգիպտահայ պետական գործիչները դարձան ոչ միայն Եգիպտոսի, այլ նաև սեփական ազգի պարծանքը՝ վայելելով եգիպտացիների և հայ համայնքի հարգանքն առ այսօր:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է խորքային և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել XIX-XX դարերում Եգիպտոսում տեղի ունեցած պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը և դրանց ազդեցությունը Եգիպտոսի քաղաքական համակարգի արդիականացման ու սոցիալ-տնտեսական զարգացման վրա, ինչպես նաև բացահայտել հայ համայնքի դերակատարումը վերոնշյալ գործընթացում: Առաջ քաշված նպատակն իրականացնելու համար դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել արևմտյան գերտերությունների զավթողական նկրտումներն ու քաղաքականությունը Եգիպտոսում, հետազոտել նրանց դիվանագիտության ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավոր ազդեցությունը տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի վրա,
- ուսումնասիրության ենթարկել Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի դրդապատճառները, հիմնական նպատակները, ընթացքը, հետևանքները և ձախողման պատճառները,
- լուսաբանել Նապոլեոն Բոնապարտի արշավանքի ժամանակաշրջանում կառավարման և դատական համակարգերում իրականացված բարեփոխումների կարևորությունը և դրանց արդյունքում արձանագրված ձեռքբերումները,
- վերլուծել XIX դարի սկզբին Եգիպտոսում ձևավորված ներքաղաքական իրադրությունը, Մուհամմադ Ալիի՝ իշխանության համար պայքարը և դրա ազդեցությունը երկրի ներքաղաքական պայքարի վրա,
- ուսումնասիրել և ներկայացնել իշխանության գալուց հետո Եգիպտոսի պետական կառավարման, ռազմական, գյուղատնտեսական և կրթական ոլորտներում Մուհամմադ Ալիի նախաձեռնած բարեփոխումները, դրանց իրագործման դժվարությունները և

գնահատել վերջիններիս ազդեցությունը Եգիպտոսի զարգացման ու արդիականացման վրա,

- հետազոտել Եգիպտոսի՝ Մուհամմադ Ալիին հաջորդած երեք կառավարիչների օրոք ձևավորված ներքին և արտաքին քաղաքական իրադրությունը, ինչպես նաև արևմտյան ուժերի, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ուղղակի և անուղղակի միջամտության ազդեցությունը Եգիպտոսի սոցիալ-տնտեսական և քաղաքական գործերում,
- լուսաբանել 1879-1882թթ. Եգիպտոսում ձևավորված անորոշ ներքաղաքական իրադրությունը և Օրաբի փաշայի պայքարը ներքին ու արտաքին թշնամիների դեմ՝ հանուն երկրի լիակատար անկախացման,
- ուսումնասիրել Օրաբի փաշայի նախաձեռնած անկախացման պայքարի ընթացքը և ձախողման պատճառները,
- վերլուծել անգլո-եգիպտական պատերազմի հիմնական շարժառիթները, ինչպես նաև բրիտանական դիվանագիտության արդյունքում ձևավորված անգլիամետ և ազգայնամետ քաղաքական ուժերի պայքարի դրսևորումներն ու արդյունքները,
- բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել և բացահայտել եգիպտահայ գաղութի կարկառուն ներկայացուցիչների ներդրումը XIX-XX դարերի՝ Եգիպտոսի պետականաշինության և սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, ինչպես նաև ցեղասպանությունից փրկված հայերի օգնության կազմակերպման գործում:

Ատենախոսության գիտական նորույթը

XIX-XX դարերում Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված առանձին հիմնախնդիրներ, մասնավորապես Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը, Մուհամմադ Ալիի իշխանության, նրան հաջորդող երեք կառավարիչների, Օրաբի փաշայի ղեկավարած ապստամբության ու բրիտանական տիրապետության ժամանաշրջանը, ինչպես նաև մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական կյանքում Եգիպտոսի ունեցած առանցքային դերը հանգամանորեն հետազոտվել

են հայկական, արևմտյան, ռուսաստանցի, ինչպես նաև խորհրդային հետազոտողների աշխատություններում, սակայն Եգիպտոսում Նապոլեոն Բոնապարտի կողմից կառավարման ու դատական համակարգերում, ինչպես նաև Մուհամմադ Ալիի կողմից պետական կառավարման և ռազմական ոլորտներում իրականացված բարեփոխումների դրդապատճառների, իրագործման բարդությունների և արդյունքում արձանագրված ձեռքբերումների, ինչպես նաև Եգիպտոսի արդիականացման գործում բարեփոխումների համակողմանի հետազոտությունը մեզանում դեռևս չի դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա:

Ատենախոսության թեման հայրենական արաբագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համապարփակ ուսումնասիրության: Մեզանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել արաբական սկզբնաղբյուրներ, որոնց հիման վրա փորձ է արվել ամբողջականացնելու և նորովի մեկնաբանելու տվյալ ժամանակաշրջանի պատմական իրողությունները:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընդգրկում է XIX դարի սկզբից մինչև XX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը՝ Եգիպտոսի՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվելուց մինչև Նապոլեոն Բոնապարտի արշավանքը, Մուհամմադ Ալիի իշխանության ժամանակաշրջանը՝ ներառյալ Եգիպտոսի բռնազավթումը Մեծ Բրիտանիայի կողմից: Ժամանակագրական այս սահմանների ընտրությունը պայմանավորված է Նապոլեոն Բոնապարտի արշավանքի և Մուհամմադ Ալիի իշխանության հաստատման արդյունքում Եգիպտոսում ձևավորված ռազմաքաղաքական նոր իրավիճակով, ինչպես նաև պետական համակարգում և սոցիալ-տնտեսական բնագավառներում իրականացված բարեփոխումներով, որոնք հետագայում դարձան ժամանակակից Եգիպտոսի պետականության հաստատման և տնտեսական զարգացման բացառիկ հենասյուն: Որպես ուսումնասիրության

ժամանակային սահմանագիծ ընդունել ենք XX դարի սկիզբը, քանի որ 1914թ. սկսած Առաջին համաշխարհային պատերազմն էապես փոխեց պատմական իրադարձությունների ընթացքը տարածաշրջանում և աշխարհաքաղաքական նոր համակարգի ձևավորման հիմք հանդիսացավ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են Եգիպտոսում Նապոլեոն Բոնապարտի արշավանքի և Մուհամմադ Ալիի իշխանության գալու արդյունքում ռազմաքաղաքական իրադարձությունների և իրականացված բարեփոխումների վերլուծության պատմաքննական, պատմահամեմատական-համադրական և պատմավերլուծական մեթոդները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Աշխատանքը համակարգված գիտական ուսումնասիրություն է, որտեղ ներկայացված հիմնադրույթները, մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Եգիպտոսի նոր պատմության առանձին հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններում: Աշխատանքում տեղ գտած դրույթները և եզրակացությունները կարող են օգտագործվել տվյալ ժամանակաշրջանի մասնագիտական ուսումնասիրություններում և դասընթացներում, ինչպես նաև ընդհանուր կրթական ծրագրերում: Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են հիմք դառնալ արաբական երկրների պատմության վերաբերյալ պատմագիտական և քաղաքագիտական հետազոտությունների համար:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտպանական հավանությունը

Ատենախոսությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների և թուրքիայի բաժինների համատեղ նիստում: Ուսումնասիրության հիմնական դրույթներն ու

եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում:

Աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսության համար որպես գրականություն հիմք են ծառայել հայոց և ռուսաց, անգլերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրներ, հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնք արտացոլում են XIX-XX դարերում Եգիպտոսում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, դրանց դրդապատճառներն ու հետևանքները: Ուսումնասիրության ամբողջականացման նպատակով հեղինակն աշխատել է Հայաստանի ազգային գրադարանում, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Լիբանանի Հայկազյան համալսարանի Բարսումյան և Բեյրութի Ամերիկյան համալսարանի Նամի Ջաֆեթի անվան գրադարաններում: Հետազոտության համար կարևոր հիմք են ծառայել նաև հայ և օտարազգի հետազոտողների՝ ուսումնասիրության թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Աշխատության մեջ օգտագործվել են Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի դրդապատճառների, ընթացքի և հետևանքների, ինչպես նաև եվրոպական ներքաղաքական իրավիճակի վրա եգիպտական հիմնախնդրի ազդեցության ուսումնասիրման և վերլուծության մի շարք հայ, ռուս և արտասահմանյան հեղինակների աշխատանքներ: Նրանցից հատկապես կարելի է առանձնացնել Ն. Հովհաննիսյանի[1], Ռ. Կարապետյանի[2], Ռ. Դյուֆրեսի[3], Եվ. Տառլեի[4], Ա. Մանֆրեդի[5], Վ. Բեշանովի[6], Ջ. Քոլի[7], Ֆ. Մաքլինի[8], Վ. Գիրի[9] աշխատությունները:

---

[1] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 2, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918թթ.), Ե., 2004:
[2] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003:
[3] Дюфрес Р., Наполеон, М., 2003.
[4] Тарле Е., Наполеон, М., 1957.
[5] Манфред А., Наполеон Бонапарт, М., 1971.
[6] Бешанов. В., Шестьдесят сражений Наполеона, Минск, 2000.
[7] Cole J., Napoleon’s Egypt, Inviding the Middle East, New York, 2007.
[8] McLynn F., Napoleon, A Biography, New York, 2002.
[9] Geer W., Napoleon The First, An Intimate Biography, New York, 1921.

Եգիպտոսի կառավարման և դատական համակարգերում Նապոլեոն Բոնապարտի նախաձեռնած բարեփոխումների անհրաժեշտության, դրանց ներդրման խնդիրների և Եգիպտոսի սոցիալ-տնտեսական կյանքի վրա ազդեցության համակողմանի ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն է ունեցել նույն ժամանակաշրջանի հայտնի արաբ պատմաբան Աբդ առ-Ռահման ալ-Ջաբարտիի՝ Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի ժամանակահատվածի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքը[10], ինչպես նաև ֆրանսիացի պատմաբան Ֆ. Շառլ-Ռուի[11] աշխատությունը՝ թարգմանված Ե. Դիքսի կողմից: Ատենախոսության այս բաժնի ամբողջականացման համար կարևոր աղբյուր է ծառայել նաև ռուս արաբագետներ Ս. Կիրիլինայի և Մ. Ռյաբկովի՝[12] Եգիպտոսում պետական կառավարման և մուսուլմանական դատական համակարգի վերաբերյալ ուսումնասիրությունը, որտեղ հեղինակների կողմից հանգամանորեն վերլուծության են ենթարկվել Եգիպտոսի պետական կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման իրական դրդապատճառները, ֆրանսիական վարչակարգի կողմից դիվանների միջոցով քաղաքական և տնտեսական ազդեցության օղակների ընդլայնման ուղիները, ինչպես նաև ներքին անհամաձայնությունների ծագման պատճառները և ֆրանսիացիների իրականացրած դիվանագիտական քաղաքականությունը վերջինների հարթման ուղղությամբ:

Ֆրանսիական ռազմարշավից հետո Եգիպտոսում ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակի և Եգիպտոսի հետագա զարգացման համար բեկումնային դեր ունեցող նոր կառավարչի՝ Մուհամմադ Ալիի իշխանության համար վարած պայքարի վերաբերյալ ուսումնասիրվել են արաբ պատմաբանների, մասնավորապես Ահմադ Հուսեյնի[13], Աբդ առ-Ռահման առ-Ռաֆիի[14], Աբդ առ-Ռահման ալ-Ջաբարտիի[15], Կալիֆոռնիայի համալսարանի եգիպտացի պատմաբան

[10] Ал-Джабарти Абд ар-Р., Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), М., 1962.
[11] Charles-Roux F., Bonaparte: Governor of Egypt, Translated From The French by Dickes E, London, 1937.
[12] Кириллина С., Рябков М., Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон 1 Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, сб. статей, М., 1991.
[13] أحمد حسين، موسوعة تاريخ مصر، الجزء الثالث، القاهرة، ١٩٧٣.
[14] عبد الرحمن الرافعي، تاريخ الحركة القومية و تطور نظام الحكم في مصر،الجزء الثانى، القاهرة، ١٩٥٨، عصر محمد علي، القاهر، ١٩٥١.
[15] عبد الرحمن الجبرتي، عجائب الآثار في التراجم و الأخبار، الجزء ثالث، القاهرة، ١٩٦٤.

Աֆաֆ Լուտֆի ալ-Սայիդ Մարսոտի[16] աշխատությունները: Արաբ պատմաբանների երկերից բացի, ուսումնասիրվել են նաև ռուս և արտասահմանցի պատմաբանների, մասնավորապես՝ Վ. Լուցկիի[17], Հ. Դոդվելլի[18], Պ. Հոլթի[19] աշխատությունները:

Մուհամմադ Ալիի կառավարման ժամանակաշրջանում Եգիպտոսի արդիականացմանն ուղղված բարեփոխումների մանրամասն ուսումնասիրության համար հեղինակն անդրադարձ է կատարել մի շարք հայտնի ռուս, եգիպտացի և օտարազգի պատմաբանների՝ Ե. Զելենևի[20], Ռ. Համեդի[21], Հ. Ռիվլինի[22], Ե. Հիլլի[23], Ն. Այուբիի[24], Յու. Ռիզկի[25] աշխատություններին, որտեղ ներկայացվել են կարևոր փաստեր վարչական և դատական համակարգերում Մուհամմադ Ալիի նախաձեռնած բարեփոխումների, ինչպես նաև դրանց ներդրման բարդությունների պատճառահետևանքային կապերի մասին:

Մուհամմադ Ալիի իրականացրած ռազմական բարեփոխումների առանձնահատկությունների ուսումնասիրման համար հիմք են ծառայել առավելապես արաբ պատմաբանների, մասնավորապես Ալի Մուհամմադ Ծալաբիի[26], Մուհամմադ Ֆուադ Ծուքրիի, Աբդ ալ-Մաքսուր ալ-Յունանիի, Սայիդ Մուհամմադ Խալիլի[27], Մուհամմադ Մահմուդ Սառուջիի[28] աշխատությունները, որտեղ նշված պատմաբանների կողմից բացահայտվել են եգիպտական բանակում ստեղծված իրավիճակի խնդիրները, բարեփոխումների անհրաժեշտությունը և պետականության ապահովմանն ուղղված միջոցառումների ամբողջությունը: Ուսումնասիրության համար բացառիկ հետաքրքրություն է ներկայացրել եգիպտացի ռազմական

---

[16] Marsot A. L. al-S., Egypt in the reign of Muhammad Ali, Cambridge, 1984.
[17] Луцкий В., Новая история арабских стран, М., 1965.
[18] Dodwell H., The Founder of Modern Egypt: A Study of Muhammad Ali, Cambridge, 1931.
[19] Holt P., Egypt and the Fertile Crescent 1516-1922, A Political History, London, 1966.
[20] Зеленев Е., Государственное управление, судебная система и армия в Египте и Сирии (XVI - начало XX века), СПб., 2003.
[21] Hamed R., The Siyasatname and the Institutionalization of Central Administration under Muhammad Ali, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995.
[22] Rivlin H., The Agricultural Policy of Muhammad Ali in Egypt, Cambridge, Massachusetts, 1961.
[23] Hill E., Courts and the Administration of Justice in the Modern Era, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995.
[24] Ayubi N., Bureaucracy and Politics in Contemporary Egypt, London, 1980.
[25] Rizk Y., The Development of the Ministerial System in Egypt 1878-1923, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995.
[26] علي محمد شلبي، المصريون و الجندية في القرن التاسع عشر، القاهرة، ١٩٨٨.
[27] محمد فؤاد شكري، عبد المقصود العناني، سيد محمد خليل، بناء دولة مصر محمد علي (السياسة الداخلية)، القاهرة، ١٩٤٨.
[28] محمد محمود السروجي، الجيش المصري في القرن التاسع عشر، القاهرة، ١٩٦٧.

հեղինակավոր պատմաբան Օմար Թուսունի՝[29] Մուհամմադ Ալիի կառավարման ժամանակաշրջանում եգիպտական բանակի բարեփոխումներին նվիրված աշխատությունը: Հեղինակը բարձր գնահատական է տվել Մուհամմադ Ալիի գործունեությանը ռազմական ոլորտում՝ առանձնացնելով նրան որպես ղեկավար, ով կարողացավ բացահայտել Եգիպտոսի ռազմական բարեփոխումների օբյեկտիվ անհրաժեշտությունը և իր կուտակած ռազմական փորձի շնորհիվ եվրոպական ռազմական կառավարման մոտեցումներն ու մեթոդները ներդրեց եգիպտական բանակի վերակազմավորման և արդիականացման գործում:

Մուհամմադ Ալիին հաջորդած երեք կառավարիչների՝ Աբբասի, Սայիդ և Իսմայիլի ժամանակաշրջանում Եգիպտոսի ներքին և արտաքին ռազմաքաղաքական իրավիճակի նկարագրության և կարևոր փաստարկների բացահայտման տեսանկյունից հեղինակի համար ուղենշային են եղել Աբդ առ-Ռահման առ-Ռաֆիի[30], Պ. Ղազալեի[31], Բ. Մալորտիի[32], Դ. Լենդսի[33], Ռ. Հանթերի[34] աշխատությունները:

XIX դարի վերջում Եգիպտոսում ստեղծված քաղաքական և սոցիալ տնտեսական ծանր իրավիճակի արդյունքում ձևավորված քաղաքական ընդդիմության պայքարի ընթացքի ուսումնասիրության նպատակով դիտարկվել են մի շարք հեղինակների՝ Վ. Լուցկիի[35], Վ. Կոշելևի[36], Ֆ. Ռոտշտեյնի[37], Ջ. Քոլի[38] հետազոտությունները: Վերոնշյալ բաժնի ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն է ունեցել արաբ պատմաբան Աբդ առ-Ռահման առ-Ռաֆիի՝[39] արաբական հեղաշրջմանը և բրիտանական բռնազավթմանը նվիրված աշխատությունը, որտեղ բացահայտվել են հատուկ

---

[29] الأمير عمر طوسون، صفحة من تاريخ مصر في عهد محمد علي، الجيش المصري السبري و البحري، القاهرة، ١٩٩٠.

[30] عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الأول، القاهرة، ١٩٨٢.

[31] Ghazaleh P., The Guilds: Between Tradition and Modernity, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995.

[32] Malortie B., Egypt: Native Rulers and Foreign Interference, London, 1883.

[33] Landes D., Bankers and Pashas: International Finance and Economic Imperialism in Egypt, Cambridge, Massachusetts, 1958.

[34] Hunter R., Egypt Under the Khedives 1805-1879: From Household Government to Modern Bureaucracies, Pittsburgh, 1984.

[35] Луцкий В., Новая история арабских стран, М., 1965.

[36] Кошелев В., Египет: уроки истории. Борьба против колониального господства и контрреволюции (1879-1981), Минск, 1984.

[37] Ротштейн Ф., Захват и Закабаление Египта, М., 1959.

[38] Cole J., Colonialism and Revolution in the Middle East: Social and Cultural Origins of Egypt's Urabi Movement, Princeton, New Jersey, 1993.

[39] عبد الرحمن الرافعي، الثورة العرابية و الاحتلال الإنجليزي، القاهرة، ١٩٨٤.

կարևորության փաստեր ընդդիմական պայքարը ղեկավարող Օրաբի փաշայի նախաձեռնած ռազմական քայլերի շարժառիթների ու դրանց ձախողման պատճառների և բրիտանական ներխուժման մասին: Վերոնշյալ համատեքստում ուսումնասիրվել է նաև Ահմադ Օրաբիի[40] կողմից գրված մենագրությունը:

XIX-XX դարերում Եգիպտոսում տեղի ունեցող պատմական իրողություններին հայկական գաղութի մասնակցության վերլուծության և ներկայացման համար մեծապես նպաստել են հայտնի հայ պատմաբաններ Ս. Զեյթլյանի[41], Հ. Ստեփանյանի[42], Ս. Հարությունյանի[43], Ա. Աբրահամյանի[44], Ա. Ալպոյաճյանի[45], Հ. Թոփուզյանի[46], Ս. Գասպարյանի[47] աշխատանքները, որոնց շնորհիվ հաջողվել է բացահայտել ոչ միայն Եգիպտոսի հայկական գաղութի դերը Եգիպտոսի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում, այլ նաև հնարավորություն է ստեղծվել ներկայացնել Եգիպտոսի հայ գաղութի նշանավոր ներկայացուցիչների իրականացրած հսկայածավալ գործունեությունը: Այսպիսով, հիմք ընդունելով ատենախոսության ուսումնասիրության ժամանակաշրջանի, ինչպես նաև ժամանակակից ուսումնասիրությունները, հետազոտությունները և փաստագրական նյութերը՝ իրականացվել է խորքային և համընդգրկուն վերլուծություն XIX-XX դարերում Եգիպտոսում պատմական իրադարձությունների և ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումների վերաբերյալ:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են ինը

---

[40] عرابي أحمد، مذكرات الزعيم أحمد عرابي، القاهرة، ١٩٨٩.

[41] Զէյթլեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Մոնթրէալ, 2004:

[42] Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ե., 2011:

[43] Арутюнян С., Укрепление позиций Британской империи в Египте (80-90 гг. XIX в.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989.

[44] Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատոր Բ, Ե., 1967:

[45] Ալպոյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960:

[46] Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմությունն (1805-1952), Ե., 1978:

[47] Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Ե., 1962:

ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ
ԵԳԻՊՏՈՍՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՎ ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

1.1. Ներքաղաքական իրավիճակը Եգիպտոսում մինչև Նապոլեոն Բոնապարտի արշավանքը

1517թ. Եգիպտոսն Օսմանյան կայսրության տիրապետության տակ էր որպես վերջինի նահանգներից մեկը: Սուլթան Սուլեյման Ի-ի (1520-1566թթ.) 1523թ. կայացրած որոշման համաձայն՝ Եգիպտոսը բաժանվեց 14 նահանգների: Յուրաքանչյուր նահանգ կառավարվում էր պետական պաշտոնյայի կողմից, ով սովորաբար կրում էր սանջակբեյ տիտղոսը և ենթարկվում էր Եգիպտոսի նահանգապետին՝ բեյլերբեյին (հետագայում՝ վալի): Այսպիսով, Եգիպտոսը հավասարեցվեց օսմանյան մյուս նահանգներին (վիլայեթներին), որոնք ենթարկվում էին նահանգապետներին, ում իրենց հերթին ենթարկվում էին սանջակբեյները, քաշիֆները, ցեղերի շեյխերը, տեղական կայազորների հրամանատարները: Եգիպտոսի վրա դրվեց տարեկան տուրք՝ 100 հազար դինար գումարի չափով[48]: Եգիպտոսում օսմանյան բանակի հիմքը կազմում էին 7 ռազմական կազմավորումները (օջաքները)՝ մյուսթահֆըզներ, ազաբներ, մութաֆառռիկներ, քավուսներ, գոնուլլուներ (գամիլիներ), թուֆենքչիներ և չիռաքիսներ: Եգիպտոսի տարածքում առավել կարևոր ռազմական կազմավորումները ենիչերիներն[49] էին[50]: Մյուսթահֆըզներ և ազաբներ ռազմական կազմավորումները իշխում էին Կահիրեի և մյուս խոշոր քաղաքների քաղաքական կյանքում մինչև XVIII դարում մամլուքյան[51] ռազմական կառուցվածքի կողմից

[48] Зеленев Е., Государственное управление, судебная система и армия в Египте и Сирии (XVI - начало XX века), СПб., 2003, с. 32-33.

[49] Ենիչերիները 1365-1826թթ. Օսմանյան կայսրության մշտական հետևակն էին և սիպահների (ծանր հեծելազոր) ու աքինջիի (թեթև անկանոն հեծելազոր) հետ միասին կազմում էին օսմանյան ռազմական ուժի հիմքը: Ենիչերիական զորքերը Օսմանյան կայսրությունում իրականացնում էին նաև ոստիկանական, պահակային և, ըստանհրաժեշտության, պատժիչ գործառույթներ:

[50] Crecelius D., The Roots of Modern Egypt, A Study of the Regimes of Ali Bey al-Qabir and Muhammad Bey Abu al-Dhahab, 1760-1775, Minneapolis, 1981, p. 20-21.

[51] Մամլուքները միջնադարյան Եգիպտոսում ռազմական միավորում էին, որոնք ձևավորվում էին թյուրք և կովկասյան (աբխազներ, չերքեզներ, վրացիներ և այլն) ծագմով երիտասարդ ստրուկներից: Երիտասարդներն ընդունում էին իսլամ,

վերջինների կլանումը: Մինչև XVI դարի վերջը Եգիպտոսի ներքաղաքական կյանքում էական իրադարձություններ տեղի չէին ունենում, և այն լիովին համապատասխանում էր հնազանդ նահանգի կարգավիճակին, որը գործում և զարգանում էր օսմանյան սուլթանների պաշտպանության ներքո: Օսմանյան նահանգային կառավարումը ենթադրում էր իր առանձին նահանգների, այդ թվում՝ Եգիպտոսի համար նահանգապետի նշանակում, ով պատասխանատու էր երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակի համար: Հատկանշական է, որ նշանակված նահանգապետներն ուղղակի վերահսկողություն չունեին առանձին բանակային միավորումների նկատմամբ, որոնք ենթարկվում էին իրենց հրամանատարներին. ձևավորված կառավարման համակարգը ենթադրում էր, որ ռազմաքաղաքական անկայունության պարագայում նահանգապետը մեծ հավանականությամբ կորցնում էր բանակային ուժերի նկատմամբ վերահսկողությունը: Օսմանյան կայսրությունում ծագած լուրջ տնտեսական խնդիրները, որոնք ուղղակիորեն հանգեցրին կայսրության ամբողջ տարածքում վարչական վերահսկողության թուլացման, հետագայում ենթակա նահանգներում, այդ թվում՝ Եգիպտոսում, զանգվածային ապստամբությունների պատճառ դարձան[52]:

Եգիպտական բանակային միավորումների ապստամբություններից հետո յուրաքանչյուր անգամ Բարձր դուռն ուղարկում էր նորանշանակ նահանգապետ, սակայն ոչ ոք չէր կարողանում շտկել իրավիճակը, քանի որ այդ միավորումների նկատմամբ ուղղակի վերահսկողություն չուներ: Նոր նահանգապետի հետեկած բանակային զորամիավորումները, որպես կանոն, շատարագ անցնում էին ընդդիմադիր բանակային միավորումների կողմը, իսկ նահանգապետն ամբողջությամբ կորցնում էր իր բանակային միավորման նկատմամբ վերահսկողությունը և փաստացի դառնում գրեթե անպաշտպան: Բարձր դուռը, սակայն, կարողացավ ստեղծված իրավիճակին տալ ժամանակավոր լուծում. լուծումը եղավ մամլուքյան ուժերի հետ համագործակցությունը, որոնք

սովորում էին արաբերեն և մարզվում էին փակ ճամբարներում ռազմական ծառայություն իրականացնելու նպատակով:

[52] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 42:

հաջողությամբ գործում էին օսմանյան ռազմական ուժերի դեմ: Այնուամենայնիվ, ստեղծված իրավիճակում վալին վաղ թե ուշ բախվելու էր ընդդիմադիր խմբավորումների միասնական գործողություններին, ինչը նահանգապետներից պահանջում էր մշտապես հետևել ուժերի հավասարակշռության պահպանմանը: Նոր քաղաքական իրավիճակում, որը ձևավորվել էր XVII դարում, մամլուքները վերադարձրին երկրում իրենց առաջատար դիրքերը՝ իրագործելով իրենց քաղաքական և տնտեսական նպատակները: Երկրի և նրա ավանդույթների իմացությունը, միասնականությունը և ջանասիրությունը դարձնում էին նրանց անփոխարինելի, այնպես որ նրանք դանդաղ, բայց վստահորեն թափանցում էին պետական համակարգի բոլոր օղակները[53]: Օսմանյան կայսրությունը XVII դարի վերջում գործնականում կորցրեց Եգիպտոսի պետական կառավարման գործառույթները: Պայքարն իշխանության համար ընդունել էր ավելի կոշտ բնույթ, և օսման նահանգապետները հայտնվել էին դիտորդի դերում[54]:

Մի շարք ապստամբություններ կրտսեր և ավագ ենիչերիական խմբերի ղեկավարների միջև առկա հակասությունների հետևանք էին: Վերջին ապստամբությունը ստացավ «մեծ խռովություն» անվանումը և շարունակվեց 1707-1711թթ.: Ըստ էության այն քաղաքացիական պատերազմ էր Եգիպտոսում օսմանյան բանակի խմբավորումների միջև, մի կողմից՝ ենիչերիների, մյուս կողմից՝ ազաբների գլխավորությամբ օսմանյան այլ ռազմական կազմավորումների[55]: Քասիմիների ընտանիքը աջակցում էր ազաբների զորքերին, իսկ Ֆաքարիյա ընտանիքը հանդես էր գալիս ենիչերիների կողմից, որոնց հրամանատարն էր Աֆրանջ Ահմադը: Այսպիսով, վերոնշյալ ուժերն էին մասնակցում 1707-1711թթ. իրադարձություններին, որտեղ հաղթեց Քասիմիների ընտանիքը՝ մեծ վնաս հասցնելով Ֆաքարիյա ընտանիքին[56]: Քասիմիներին վերջնական հաղթանակ բերեց 1711թ. հրամանատար Աֆրանջ Ահմադի

[53] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 43-44:
[54] Ацамба Ф., Система административного управления египетской провинции Османской империи (XVI-XVIII вв.), Восток в новое время. Экономика, государственный строй, сб. статей, М., 1991, с. 14-15.
[55] Raymond A., The Role of the Communities (Tawa'if) in the Administration of Cairo in the Ottoman Period, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 32-43.
[56] أنور زقلمة، المماليك في مصر، القاهرة، ١٩٩٥، ص. ١٢٢-١٢٣.

մահը, ինչը վերջ դրեց ենիչերիների նկատելի ազդեցությանը Եգիպտոսում: Այսպիսով, Եգիպտոսում քաղաքական իշխանությունը հաջորդ հարյուր տարիներին վերահսկում էին մամլուք խոշոր ընտանիքների ղեկավարները, որոնք կրում էին բեյ տիտղոսը[57]:

Մինչև 1707-1711թթ. ռազմական գործողությունները մամլուք բեյերը և օսմանյան զորաբանակների բոլոր ընտանիքների բարձրագույն խավերը գրեթե նույն ազդեցությունն ունեին: Արդեն XVIII դարի սկզբին Եգիպտոսի զինվորական վերնախավը ձուլվեց մամլուքյան համակարգի հետ. վերջինը հաստատվեց 3 խոշորագույն ընտանիքների առաջացմամբ, որոնք 1711թ. հետո պայքարում էին իշխանության համար: Հատկանշական է, որ Ֆաքարիյաների ընտանիքը ծագել էր հենց չերքեզ մամլուքներից, իսկ ահանրանց դաշնակից Կազդուխլի ընտանիքն ուներ թուրքական արմատներ: Քասիմիների ընտանիքն ուներ բոսնիական ծագում, սակայն XVII դարում արդեն մամլուքներից չէր տարբերվում: 1711թ. հետո Եգիպտոսի ողջ զինվորական վերնախավը միավորվեց մամլուքյան բեյլիկատի հովանու տակ, որը վերածվեց իշխանության կենտրոնի[58]:

Բեյլիկատը հարուստ և բարձր վարձատրվող այն մամլուքյան բեյերի միավորումն էր, ովքեր, որպես կանոն, Եգիպտոսի նահանգապետի մտերիմներն էին, սակայն պաշտոնապես ներառված չէին օսմանյան ռազմական յոթ կազմավորումներից և ոչ մեկում: Բեյլիկատը մամլուքյան ազնվականների ակումբից աստիճանաբար վերածվեց պետական իշխանության կենտրոնական օրգանի, որի անդամները նշանակվում էին Եգիպտոսի վարչական համակարգի ամենաբարձր պետական պաշտոններում: Բացարձակապես մամլուքներից էր նշանակվում նաև դեպի Մեքքա ուղևորվող ամենամյա ուխտավորների քարավանի հրամանատարը՝ էմիր ալ-հաջը[59]: Հաջորդ հեղինակավոր պաշտոնը, որը մամլուքյան բեյերի մենաշնորհն էր, քարավանի առաջնորդի պաշտոնն էր, որն ամեն տարի Կոստանդնուպոլիս էր տանում Եգիպտոսի ամենամյա տուրքը:

[57] Holt P., Political and Social Change in Modern Egypt, Historical Studies From the Ottoman Conquest to the United Arab Republic, London, 1968, p. 85-86.
[58] Holt P., նշվ. աշխ., 1968, էջ 87:
[59] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 45:

Մամլուքյան բեյերից էր նշանակվում նաև ֆինանսական բաժանմունքի ղեկավարը՝ դեֆթերդարը: Բացի դրանից մամլուքները նշանակվում էին նաև կայմակամների (տեղական վարչությունների ղեկավարներ), քաշիֆների (բարձրաստիճան պաշտոնատար անձինք), սերդարների (ռազմական կազմավորումների հրամանատարներ) և Վերին Եգիպտոսի կառավարիչների պաշտոններում: Այսպիսով, բեյլիկատն աստիճանաբար դարձավ Եգիպտոսի քաղաքական կյանքը կառավարող առաջատար ուժ[60]: Բեյերի միջև պայքարն առաջնորդ (ռիյասա) դառնալու համար կազմում էր բեյլիկատի քաղաքական կյանքի իմաստը: Ընդորում ղեկավար կարող էր դառնալ ինչպես մեկ բեյ, այնպես էլ երկու և ավելի բեյերի դաշինքը: Առաջնորդության համար պայքարում թույլատրվում էր ցանկացած եղանակ: XVIII դարի կեսերին բեյլիկատի առաջնորդը սկսեց ստանալ տիտղոս, որը պաշտոնապես ընդունվում էր օսմանյան իշխանության կողմից. դրանք մի քանիսն էին՝ «ամիռ Միսռ» («Եգիպտոսի էմիր»), «քաբիռ ալ-բալադ» («երկրի մեծ մարդ»), «քաբիռ ալ-քաում» («ազգի մեծ մարդ»): Սակայն ամենաընդունելի տիտղոսը դարձավ «շեյխալ-բալադը», որն առաջ եկավ XVIII դարի 30-ական թթ., և որը ղեկավար մամլուք բեյերը կրում էին մինչև 1798թ.[61]:

1711թ. առաջնորդությունը գրավելուց հետո Քասիմիների ընտանիքը տրոհվեց իրարամերժ խմբավորումների, ինչը թույլ տվեց նրանց մրցակից Ֆաքարիյա-Կազդուխլի ընտանիքներին ուժ հավաքել և 1730թ. ջախջախիչ պարտության մատնել նրանց: Չնայած Քասիմիների կլանը պահպանվեց որպես ազդեցիկ մամլուքյան միավորում, սակայն այլևս գերագույն իշխանություն չունեցավ: Ջախջախված Քասիմիների կլանի մի մասն ապաստան գտավ Վերին Եգիպտոսում, որտեղ իշխանությունը գրավել էր նրանց վաղեմի դաշնակից շեյխ Խումամ Իբն Յուսիֆը ալ-Խավարա տոհմային միությունից: Նեղոսի դելտայում իշխող դիրք էր գրավել Բանու Հաբիբ տոհմային միությունը[62]:

Իշխանության գալով՝ Ֆաքարիյա կլանը չկարողացավ պահպանել ներքին միասնությունը և տրոհվեց մրցակցող խմբերի,

[60] Holt P., նշվ. աշխ., 1968, էջ 83-84
[61] Նույն տեղում, էջ 87-88:
[62] أنور زقلمة, նշվ. աշխ., էջ 124:

որոնց պայքարը թուլացրեց այդ ընտանիքի առաջատար դերը և ճանապարհ բացեց դեպի իշխանություն Իբրահիմ Քահյա ալ-Կազդուխլիի համար: Իբրահիմ Քահյան դաշինք կնքեց օսմանյան զորամասի հրամանատարներից մեկի՝ Ռիդվան ալ-Ջուլֆիի հետ և իշխեց 7 տարի: 1754թ. Իբրահիմ Քահյան մահացավ, ինչը հանգեցրեց հերթական երկպառակությանը բեյլիկատում, որի առաջին զոհը դարձավ Ռիդվան ալ-Ջուլֆին[63]: Մի քանի տարվա պայքարից հետո հաղթանակ տարավ զինվորական և քաղաքական գործիչ, եգիպտական մամլուքների նշանավոր կառավարիչ Ալի բեյը, ով կրում էր ալ-Քաբիռ (Մեծ, Հզոր) մականունը: 1760թ. նա հռչակվեց բեյլիկատի ղեկավար «շեյխալ-բալադ» տիտղոսով[64]:

Ծագումով աբխազ Ալի բեյը՝ մամլուքների նոր առաջնորդը, խորամանկ էր, փառասեր և դաժան: Մամլուքյան մրցակցող կլանները մի քանի անգամ նրան հեռացրին իշխանությունից, սակայն 1767թ. Ալի բեյը վերականգնեց իր իշխանությունը բեյլիկատում, իսկ 1769թ. ամրապնդեց այն՝ դաժանորեն հաշվեհարդար տեսնելով ընդդիմության նկատմամբ: Նա հրաժարվեց բոլորի կողմից ընդունված միջոցներից. իր հակառակորդներին զրկեց մաքսային եկամուտներից և բոլոր արտոնություններից, բանտարկեց իր մրցակից մամլուքներին և օսմաններին: Ի տարբերություն իր նախորդների՝ նա կողոպտում էր ոչ մուսուլմաններին (հրեաներ, ղպտիներ և եվրոպացի առևտրականներ) ու սահմանում անօրինական մեծ հարկեր: Իր միանձնյա իշխանությունն ամրապնդելու և օրինականացնելու համար Ալի բեյը բեյլիկատ մտցրեց իրեն հավատարիմ մամլուքներին՝ դրանով իրեն ապահովելով կայուն դիրք երկրի այդ բարձր վարչական կառույցում: Նրա ամենամոտ համախոհներն էին 2 մամլուքներ՝ Իբրահիմ բեյը և Մուհամմադ բեյը՝ Աբու ազ-Զահաբ մականունով, իսկ նրա համախոհների թիվը 1766թ. հաշվվում էր մոտ 3000 մամլուք[65]:

Ալի բեյը չէր բավարարվում երկրի ղեկավարի իր դիրքով և ձգտում էր Եգիպտոսը դարձնել անկախ Օսմանյան կայսրությունից, ընդարձակել նրա սահմանները, վերածել կայսրության՝ գրավելով

[63] Ал-Джабарти Абд ар-Р., Египет в канун экспедиции Бонапарта (1776-1798), М., 1978, с. 11.
[64] Holt P., նշվ. աշխ., 1968, էջ 88:
[65] Crecelius D., նշվ. աշխ., էջ 38-39, 47-48:

Սիրիան և Հիջազը: Չնայած բազմաթիվ համախոհ մամլուքների առկայությանը՝ նա ստիպված էր օգտագործել վարձկան զինվորների՝ իր նպատակներն իրագործելու համար: Վերջինը թուլացնում էր նրաբանակի հզորությունն ու հուսալիությունը՝ ավանդական մամլուքյան բանակի համեմատությամբ: Այս բացը լրացնելու և իր իշխանությունն ամրապնդելու համար Ալի բեյն իր մարդկանց նշանակեց որպես նահանգապետներ եգիպտական բոլոր 14 նահանգներում, ովքեր պետք է կյանքի կոչեին իր հրամանները[66]: Ալի բեյի ներքին քաղաքականության մեջ կարևոր մաս էր կազմում այն, որ նա ցանկանում էր ստանալ մուսուլմանական հոգևոր դասի աջակցությունը, որոնց մեծ մասը բնիկ եգիպտացիներ էին և մեծ ազդեցություն ունեին իրենց համաքաղաքացիների վրա: Այդ ճանապարհին կարևոր ձեռքբերում էր մուսուլման հոգևորական շեյխ Ծամս ադ-Դին Մուհամմադ ալ-Հիֆնիի աջակցությունը: Ալի բեյի կողմնակիցներից էին նաև ազդեցիկ իմամ և շեյխ Մուհամմադ ալ-Հալբավի ալ-Ջամահարին, գիտնական և հոգևոր գործիչ Հասան Բուրհան ադ-Դին ալ-Ջաբարտին[67]: Ըստ երևույթին, սկսած Ալի բեյի կառավարումից, եգիպտական աստվածաբանները, առաջին հերթին՝ ալ-Ազհարի շեյխերը և սուֆիական առաջնորդները, սկսեցին կարևոր դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում, ինչն իր գագաթնակետին հասավ 1798-1801թթ. ֆրանսիական ներխուժման դեմ պայքարում, ինչպես նաև Մուհամմադ Ալիի կառավարման սկզբնական շրջանում (1801-1808թթ.)[68]:

Այսպիսով, ամրապնդելով իր իշխանությունը՝ Ալի բեյը 1770թ. հեշտությամբ գրավեց Հիջազը: Այդ նույն թվականին եգիպտացիները սկսեցին հարձակումը Սիրիայի վրա, որը օսմաններն արդարացիորեն համարում էին Մերձավոր Արևելքի կարևոր աշխարհաքաղաքական տարածք և վճռականորեն պատրաստվում էին պաշտպանելու այն: Այս ամենը հանգեցրեց նրան, որ ի վերջո Ալի բեյը պարտություն կրեց, ծանր վիրավորվեց, գերի ընկավ և

[66] Նույն տեղում, էջ 46-47:
[67] Ацамба Ф., նշվ. աշխ., էջ 40-43:
[68] Кириллина С., Ислам в Османском Египте в XVIII-первой трети XIX века (социально-политические и идеологические функции), диссертация на соискание ученой степени доктора исторических наук М., 1998, с. 32-33.

1773թ. մայիսի 8-ին վախճանվեց Կահիրեում (ամենայն հավանականությամբ, սպանվեց)[69]:

Ալի բեյի կառավարումը մամլուքյան քաղաքական համակարգի զարգացման գագաթնակետն էր, որը միաժամանակ դարձավ անցումային շրջան միանձնյա կառավարման նոր փուլի համար՝ կոլեգիալ-կորպորատիվից դեպի կանոնավոր միապետություն, որը հաստատվեց Մուհամմադ Ալիի իշխանության գալուց հետո (իշխանության փոխանցումը ժառանգականության սկզբունքով)[70]:

Ալի բեյի մահից հետո Եգիպտոսում գերագույն իշխանությունը «շեյխ ալ-բալադ» տիտղոսի հետ անցավ Ալի բեյի նախկին դաշնակից, իսկ հետո թշնամի Մուհամմադ Աբու ազ-Զահաբին, ում մահը 1776թ. առիթ հանդիսացավ Կազդուխլիների կլանի ներսում բեյլիկատի գերագույն իշխանությանը կրկին տիրելու համար: Այդ պայքարի գլխավոր մասնակիցներն էին մի կողմից՝ Ալի բեյի նախկին համախոհ Իսմայիլ բեյը, իսկ մյուս կողմից՝ Աբու ազ-Զահաբի 2 համախոհ մամլուքները՝ Մուրադ բեյը և Իբրահիմ բեյը. պայքարի արդյունքում հաղթեցին վերջին երկուսը[71]: 1786թ. Բարձր դուռը փորձ արեց վերականգնելու իր իշխանությունը Եգիպտոսի վրա: Հատուկ կորպուսն ադմիրալ Ղազի Հասան փաշայի գլխավորությամբ մամլուքների համար անսպասելի ափ իջավ Ալեքսանդրիայում և սկսեց շարժվել դեպի Կահիրե: Իբրահիմ բեյն իր մամլուքների հետ անմիջապես լքեց մայրաքաղաքը և շարժվեց դեպի հարավ՝ Վերին Եգիպտոս, որտեղ նա անհասանելի էր օսմանների համար: Մուրադ բեյը, սակայն, շարժվեց դեպի հյուսիս և Նեղոսի դելտայի մոտ ջախջախվելով օսմանների կողմից՝ միացավ հարավ փախած Իբրահիմ բեյին[72]:

Հասան փաշան, գրավելով իշխանությունը Կահիրեում, սկսեց բարեփոխումներ իրականացնել՝ մամլուքների (առաջին հերթին Իբրահիմ բեյի և Մուրադ բեյի) դիրքերը թուլացնելու համար: Օսմանյան նոր նահանգապետին աջակցում էր մամլուք Իսմայիլ

[69] جرجي زيدان، مصر العثمانية، تحقيق د. محمد عرب، القاهرة، ١٩٩٣، ص. ٢٥٦.
[70] Hanna N., Administration in Egypt from Ottoman Times to the Present: An Introduction, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 8.
[71] جرجي زيدان, նշվ. աշխ., էջ 267-270:
[72] أنور زقلمة, նշվ. աշխ., էջ 124-125:

բեյը[73]: Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև նոր պատերազմի սպառնալիքի հետևանքով օսմանյան զորքերը հեռացան, ինչը հնարավորություն տվեց մամլուք ապստամբներին վերականգնելու իրենց դիրքերը որպես Եգիպտոսի կառավարիչներ[74]:

Մուրադ և Իբրահիմ բեյերի կառավարությունը շարունակվեց մինչև 1798թ. հուլիսը, երբ Եգիպտական ափ իջան Նապոլեոն Բոնապարտի զորքերը, ինչով տապալվեց օսմանյան փորձը՝ վերականգնելու իրենց ազդեցությունը Եգիպտոսում[75]:

Այսպիսով, վերոնշյալ ժամանակահատվածում Եգիպտոսի քաղաքական կյանքը կարելի է բնութագրել Օսմանյան կայսրության և մամլուքյան ուժերի միջև ընթացող մշտական հակամարտությամբ, ինչը դրսևորվում էր ինչպես քաղաքական համակարգում կարևոր պաշտոնների համար պայքարով, այնպես էլ ժամանակ առ ժամանակ բռնկվող ապստամբություններով: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրությունն այս ամբողջ ժամանակահատվածում, Եգիպտոսում ունենալով դե յուրե իշխանություն, մշտապես պայքարում էր այդ իշխանության դե ֆակտո կարգավիճակի համար: Ի վերջո մամլուքյան ուժերը, օգտվելով Օսմանյան կայսրության՝ Ռուսաստանի դեմ պայքարում ռազմական ուժերի կենտրոնացումից, վերականգնեցին իրենց իշխանությունը Եգիպտոսում՝ ստանձնելով երկրի կառավարման ղեկը, որը պահպանեցին մինչև ֆրանսիական զորքերի ներխուժումը 1798թ.:

1.2. Նապոլեոն Բոնապարտի արշավանքը Եգիպտոս և դրա ազդեցությունը Եգիպտոսի կառավարման և դատական համակարգերի վրա

Նապոլեոն Բոնապարտի Եգիպտական արշավանքը, սկիզբ առնելով XVIII դարի վերջում, ունեցավ իր ուրույն ազդեցությունը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի, այլ նաև XIX դարի պատմական

[73] جرجي زيدان, նշվ. աշխ., էջ 266-267:
[74] Holt P., նշվ. աշխ., 1968, էջ 99-101:
[75] Vatikiotis P., The History of Modern Egypt. From Muhammad Ali to Mubarak, 4th edition, London, 1991, p. 30-33.

զարգացումներում: Այն հիմք դրեց մի շարք բարեփոխումների, որոնք անքակտելի մաս դարձան XIX դարի Եգիպտոսի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման և արդիականացման գործում:

Ֆրանսիան դեռևս բուրժուական հեղափոխությունից շատ առաջ ձգտում էր գրավել Եգիպտոսը, իսկ հեղափոխությունից հետո ֆրանսիական բուրժուազիան արտաքին քաղաքական օրակարգում դրեց եգիպտական հարցը: Ֆրանսիան մշտապես կարևորել է Միջերկրական ծովի արևելյան վերջնամասում գտնվող այդ երկրի ռազմավարական դիրքը: Եգիպտոսը գրավելու դեպքում Ֆրանսիան, որն արդեն իսկ իշխում էր Ապենինյան թերակղզում, հնարավորություն կստանար վերահսկողություն հաստատելու Միջերկրականի ողջ տարածքում՝ մշտապես լարվածության մեջ պահելով իր վաղեմի հակառակորդ Մեծ Բրիտանիային[76]:

Նման առավելություն ձեռք բերելու հնարավորությունը բաց չթողնելու համար 1797թ. հոկտեմբերի 26-ին Դիրեկտորիան Բոնապարտին հանձնարարեց լուծել արտաքին քաղաքական երկու խնդիրներ, որոնք առնչվում էին Մեծ Բրիտանիայի դեմ պատերազմին և Ռեյնի հարցի վերջնական կարգավորմանը, որի համար նա Ռաշտադում նշանակվեց լիազոր ներկայացուցիչ[77]:

Նապոլեոնը ժամանեց Ռաշտադ նոյեմբերի 26-ին, իսկ դեկտեմբերի 1-ին ավստրիական կողմի ներկայացուցիչների հետ ստորագրեց գաղտնի համաձայնագիր Սուրբ կայսրության զորքերի՝ Մայնցից, իսկ ֆրանսիական զորքերի՝ վենետիկյան տարածքներից դուրս բերելու պայմանների մասին: Դեկտեմբերի 5-ին գեներալը վերադարձավ Փարիզ և սկսեց պատրաստվել Մեծ Բրիտանիայի դեմ պատերազմին: Անհրաժեշտ էր բանակը տեղափոխել դեպի Բրիտանական կղզիներ և ծովային ուժեր կենտրոնացնել՝ Լա Մանշը հաղթահարելու համար: Փետրվարի 8-ից 20-ը, զննելով ծովափը, Բոնապարտը համոզվեց, որ ֆրանսիական նավատորմը անմխիթար վիճակում է, և կասկածելով ֆրանսիացիների հաջողությանը՝ չցանկացավ վտանգել իր հեղինակությունը: Դիրեկտորիային զեկույց ներկայացնելով՝ նա դեմ արտահայտվեց զորքը Մեծ

[76] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 15:
[77] Дюфрес Р., Наполеон, М., 2003, с. 36.

Բրիտանիա իջեցնելուն՝ առաջարկելով հակառակորդին պարտության մատնել Հանովերում կամ Եգիպտոսում: Հանովերի վրա հարձակվելը նպատակահարմար չէր. դրանով ֆրանսիացիները մինչև Ռաշտադի կոնգրեսի ավարտը կարող էին կրկին ռազմական գործողություններ հրահրել Գերմանիայում: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այն պատկանում էր Օսմանյան կայսրությանը, որն այդ ժամանակ Մեծ Բրիտանիայի դաշնակիցը չէր և Ֆրանսիայի հետ պատերազմական վիճակում չէր գտնվում[78]:

Ընտրությունն ընկավ Եգիպտոսի վրա, և դա պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. Եգիպտոսն ուներ աշխարհագրական բարենպաստ դիրք. այն գտնվում էր կարևոր ռազմաքաղաքական խաչմերուկում, որին տիրանալու դեպքում կարելի էր նվաճել կամ վերահսկողություն սահմանել արաբական մյուս երկրների՝ Սիրիայի, Արաբիայի, Պաղեստինի, Իրաքի, Հյուսիսային Աֆրիկայի վրա, կտրել Արևելքի հետ Մեծ Բրիտանիային կապող հաղորդակցության ուղիները, Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական ծով, այնուհետև ներխուժել Հնդկաստան և ազատել այն Մեծ Բրիտանիայի տիրապետությունից: Ըստ Ֆրանսիան կառավարող Դիրեկտորիայի հաշվարկների՝ վերջինը մահացու հարված կլիներ Մեծ Բրիտանիայի համար:

2. Հեղափոխական Ֆրանսիան, թեև հռչակելով հանդերձ ազատություն և հավասարություն կարգախոսները, այնուամենայնիվ հետամուտ էր գաղութային քաղաքականության: Ասիայում և Աֆրիկայում նոր գաղութներ ձեռք բերելը նրանց համար առաջնահերթ խնդիր էր, հատկապես այն բանից հետո, երբ Ֆրանսիան կորցրեց Ամերիկայում իր գաղութների մեծ մասը և ցանկանում էր դրանք փոխհատուցել նոր գաղութներով:

3. Կարևոր էր նաև անձնական գործոնը. Դիրեկտորիայի անդամներին խիստ անհանգստացնում էր գեներալ Բոնապարտի՝ օրեցօր աճող հեղինակությունը Ֆրանսիայում: Դիրեկտորիայի անդամները մտավախություն ունեին, որ վճռական գործողությունների ընդունակ գեներալը կարող է գայթակղվել,

[78] Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 36:

պետական հեղաշրջում կատարել և վերցնել իշխանությունը: Բոնապարտի այդ հնարավոր քայլը կանխելու նպատակով Դիրեկտորիան հավանություն տվեց ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը գեներալ Բոնապարտի հրամանատարությամբ Եգիպտոս ուղարկելու ծրագրին: Չպետք է բացառել այն ենթադրությունը, որ Դիրեկտորիան ավելի քան համոզված էր, որ Բոնապարտը հաջողության չէր հասնելու: Իսկ այդ դեպքում դա հարմար առիթ կարող էր ծառայել՝ նրան մեղադրելու, վարկաբեկելու և ասպարեզից հեռացնելու համար: Ահա այսպիսին էին նրանց հաշվարկները[79]:

1798թ. մարտի 5-ին Բոնապարտը նշանակվեց «Արևելյան» բանակի գլխավոր հրամանատար և Դիրեկտորիայից հրաման ստացավ սկսել արշավանքը դեպի Եգիպտոս[80]: Նավատորմը կազմված էր մոտ 350 մեծ ու փոքր նավերից և բեռնանավերից[81]: Այն պետք է տեղափոխեր 30 հազար մարդ, 1200 ձի, 171 հրանոթ, ինչպես նաև գիտական նպատակներով ուղևորվող անձանց[82]: Նրանց թվում էին 21 մաթեմատիկոս, 3 աստղագետ, 17 ճարտարագետ-շինարար, 13 բնագետ և լեռնային ճարտարագետներ, նույնքան աշխարհագետ, 3 քիմիկոս, 4 ճարտարապետ, 8 նկարիչ, 10 մեխանիկ, 1 քանդակագործ, 15 թարգմանիչ, 10 գրականագետ, գրաշարներ, որոնց տրամադրության տակ կային լատինական, հունական և արաբական տառատեսակներ[83]: Ֆրանսիայի Հանրապետության լավագույն գեներալները՝ Կլեբերը, Բերտիեն, Դեզեն, Լաննը, Մյուրատը, Բեսիերը, Բոնապարտի ամենամտերիմ զինակիցները՝ Ժյունոն, Մարմոնը, Դյուրոկը, Սուլկովսկին, Լավալետը, Բուրիենը, կազմում էին հրամանատարի «արևելյան բանակի» հիմնաքարը[84]:

1798թ. մայիսի 19-ին ֆրանսիական զորքերը դուրս եկան Տուլոնից և ուղևորվեցին դեպի Մալթա: Ֆրանսիական նավատորմը

---

[79] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր II, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918թթ.), Ե., 2004, էջ 113-114:
[80] Սաքոյան Տ., Նապոլեոն Բոնապարտի Արևելյան արշավանքի շարժառիթները, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XI-XII (հոդվածների ժողովածու), Երևան, 2017, էջ 151:
[81] Тарле Е., Наполеон, М., 1957, с. 60.
[82] Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 37:
[83] Тюлар Ж., Наполеон, или миф о «спасителе», М., 2009, с. 75.
[84] Манфред А., Наполеон Бонапарт, М., 1971, с. 207.

հունիսի 9-ին հասավ Մալթա և առանց դիմադրության գրավեց այն, իսկ հունիսի 19-ին արդեն շարունակում էր իր ճանապարհը դեպի Եգիպտոս[85]: Բոնապարտն իր բանակով հունիսի 30-ին հասավ Եգիպտոսի ափերին և խարիսխ գցեց Ալեքսանդրիա քաղաքից ոչ հեռու: Սակայն պարզվեց, որ բրիտանական նավատորմը ծովակալ Նելսոնի հրամանատարությամբ, տեղեկանալով ֆրանսիացիների կողմից Մալթայի գրավման մասին, շտապել էր դեպի Եգիպտոս, բայց չհանդիպելով նրանց՝ ուղևորվել դեպի Կոստանդնուպոլիս՝ մտածելով, որ այնտեղ կարող է հանդիպել ֆրանսիացիներին[86]:

ֆրանսիացիները մեծ արագությամբ ափ իջան. հուլիսի 2-ի գիշերը ժամը 2-ին զորքերն արդեն ցամաքի վրա էին[87]: Թուրքական կայազորը, որը հարձակման ենթարկվեց առանց պատերազմի հայտարարության, ջախջախվեց, և 3 հազար ֆրանսիացիներ Կլեբերի հրամանատարությամբ գրավեցին Ալեքսանդրիան: Բոնապարտը, մնացած զորքի գլուխ անցած, շարժվեց դեպի Կահիրե, իսկ նավատորմը բարձրացավ Նեղոսով դեպի վեր: Հուլիսի 21-ին Կահիրեից ոչ հեռու՝ Գիզայում, մամլուքների հեծելազորը Մուրադ և Իբրահիմ բեյերի գլխավորությամբ հարձակվեց ֆրանսիական բանակի վրա, սակայն նրա հարձակումները կասեցվեցին ֆրանսիացիների կողմից[88]: Մամլուքների զորքը հիմնովին ջախջախվեց՝ տալով 10 հազար զոհ, սակայն Մուրադ բեյին հաջողվեց փախչել կռվի դաշտից: Ինչ վերաբերում է ֆրանսիացիներին, ապա վերջիններիս վնասներն էական չէին: Այս հաղթանակը խիստ զգաստացրեց ֆրանսիացիներին և հեշտացրեց Կահիրեի գրավումը: Հուլիսի 24-ին նրանք մտան Կահիրե, սակայն Բոնապարտը երկար չվայելեց իր հաղթանակը[89]: 1798թ. օգոստոսի 1-ին բրիտանական նավատորմը ծովակալ Նելսոնի գլխավորությամբ հարձակվեց Աբուկիրի ծովախորշում խարսխված ծովակալ Բրյուսեի ֆրանսիական նավատորմի վրա, և, չնայած այն բանին, որ ֆրանսիացիները թնդանոթների առավելություն ունեին, Նելսոնն իր ձեռքը վերցրեց նախաձեռնությունը և մարտի ելքը լուծեց իր

[85] Cole J., Napoleon's Egypt, Inviding the Middle East, New York, 2007, p. 8-11.
[86] Бешанов. В., Шестьдесят сражений Наполеона, Минск, 2000, с. 74-77.
[87] Նույն տեղում, էջ 77:
[88] Манфред А., նշվ. աշխ., էջ 214:
[89] McLynn F., Napoleon, A Biography, New York, 2002, p. 179.

օգտին: Օգոստոսի 2-ի առավոտյան ֆրանսիական նավատորմը դադարեց գոյություն ունենալուց, իսկ ծովակալ Բրյուսեն սպանվեց մարտում[90]:

Աբուկիրում կրած պարտությունը ծանր հետևանքներ ունեցավ Բոնապարտի առաքելության վրա: Խզվեց ծովային կապը Ֆրանսիայի հետ, որի պատճառով նրա զորքերն այլևս չէին կարող համալրում ստանալ: Բրիտանացիների կողմից ֆրանսիական նավատորմի ոչնչացումից հետո Բոնապարտն այլևս չէր կարող մտածել Հնդկաստանին տիրանալու և Մեծ Բրիտանիային ծնկի բերելու մասին: Նա այժմ ավելի շատ պետք է մտածեր իր և իրեն վստահված ֆրանսիական զորքերի փրկության մասին: Ֆրանսիացիների դրությունը բարդանում էր նաև այն պատճառով, որ Եգիպտոսը փաստորեն նրանց համար վերածվեց թշնամական միջավայրի: Եգիպտացիները նրանց չընկալեցին որպես ազատարարների, որոնք եկել էին իրենց ազատագրելու մամլուքներից և օսմանյան սուլթանի տիրապետությունից, այլ նրանց դիտում էին որպես օտար նվաճողներ: Եգիպտացիների հակաֆրանսիական զգացումների առաջացման մեջ իր դերն ունեցավ Բոնապարտի երկակի քաղաքականությունը: Նա, հակառակ իր խոստումներին, եգիպտացիների հետվարվում էր շատ դաժան. երբ նրա զորքերը մտան Կահիրե, սկսեցին կողոպտել քաղաքի բնակչությանը, հրկիզել նրանց տները և շատերին մահապատժի ենթարկել: Բանակի կարիքները բավարարելու համար Բոնապարտի հրամանով գյուղացիներից բռնագրավվեցին հացահատիկը և անասնակերը: Բնականաբար, նման քաղաքականությունը պետք է ֆրանսիացիների դեմ տրամադրեր երկրի գյուղական և քաղաքային բնակչությանը: Բռնազավթումը տեղական բնակչության համար անհանդուրժելի էր, և դրությունն ավելի սրվեց, երբ օսմանյան սուլթան Սելիմ III-ը (1789-1807թթ.)[91] ֆրանսիացիների դեմ սրբազան պատերազմի կոչ արեց: 1798թ. սեպտեմբերից սկսած՝ ապստամբություններն ավելի հաճախակի դարձան, որոնց էլ հետևում էին արյունալի պատիժները: 1798թ. հոկտեմբերին ապստամբություն սկսվեց նաև Կահիրեում:

[90] Бешанов. В., նշվ. աշխ., էջ 84:
[91] Սուլթան Սելիմ III-ի մասին տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., 2011, էջ 369-392:

Ապստամբական շարժման կենտրոն դարձավ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր մզկիթներից մեկը՝ ալ-Ազհարը, այստեղ հավաքվեց մոտ 15 հազար կահիրեցի: Ալ-Ազհարի անցնելն ապստամբների կողմը մեծ նշանակություն ունեցավ: Կահիրեին օգնության եկան գյուղացիները՝ մոտ 5000 ֆելլահներ[92], ինչպես նաև քոչվոր բեդվինները՝ հարևան Լիբիական անապատից: Բոնապարտը հրամայեց հրետակոծել ալ-Ազհար մզկիթը և այնտեղ հավաքված մոտ 15 հազար հասարակ, հավատացյալ մուսուլմանների: Այդ ռմբակոծության զոհը դարձան հազարավոր մարդիկ: Այսպիսի ողբերգական ավարտ ունեցավ եգիպտացիների հակաֆրանսիական ապստամբությունը[93]:

Ռազմական տեսանկյունից եգիպտական արշավանքը ձախողվեց: Գիտակցելով, որ հնարավորություն չունի անմիջականորեն ղեկավարել երկիրը՝ Նապոլեոնը յուրաքանչյուր քաղաքում անվանի մարդկանցից ստեղծեց «դիվաններ»՝ նպատակ ունենալով այսպես կառավարել երկիրը: Վերջինները գործում էին ֆրանսիական կոմիսարների հսկողության տակ, որոնց վրա դրված էին ղեկավարելու, մատակարարելու և կարգը պահպանելու պարտականությունները: Դրա հետ մեկտեղ նա պահպանեց տեղական դատավարության և հարկահավաքության համակարգը[94]:

Մեծ Բրիտանիան Եգիպտոսի վրահարձակվելու նախագիծ մշակեց թուրքական 2 բանակներով, որոնցից մեկը տեղակայվեց Նեղոսի դելտայից արևմուտք, իսկ երկրորդը շարժվեց Սիրիայից: Բոնապարտը շարժվեց դեպի Սիրիա՝ նպատակ ունենալով նախհարված հասցնել թուրքական բանակին: 1799թ. փետրվարի 10-ին էքսպեդիցիոն կորպուսը լքեց Կահիրեն: Անցումն անապատի միջով և ժանտախտը ջախջախիչ հարված հասցրին Նապոլեոնի բանակին: Այդուհանդերձ, փետրվարի 21-ին ֆրանսիացիները գրավեցին Էլ-Արիշը, փետրվարի 25-ին հանձնվեց նաև Գազան[95]: Անցնելով Սուեզի պարանոցը՝ Նապոլեոնը շարժվեց դեպի Յաֆա 1799թ. մարտի 4-ին պաշարեց այն[96]:

---

[92] Ֆելլահ էին անվանում գյուղացիներին Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում:
[93] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 119-122:
[94] Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 39:
[95] McLynn F., նշվ. աշխ., էջ 189:
[96] Abbott J., The Life of Napoleon Bonaparte, London, 1900, p. 99.

1799թ. մարտի 6-ին սկսվեց գրոհը, և զինվորները, ներխուժելով քաղաք, սկսեցին անխնա կոտորել բոլորին[97]: Յաֆայից հետո ֆրանսիացիները գրավեցին նաև Հայֆան: Սակայն թե՛ երկարատև պաշարումը, թե՛ հարձակումը Բոնապարտին թույլ չտվեցին գրավել Ակր ամրոցը (ինչպես ֆրանսիացիներն են ասում՝ Սեն-Ժան դ-Ակրը), որի պաշտպանությունը ղեկավարում էր ֆրանսիացի փախստական Լե Պիկար դե Ֆելիպոն: Երբ բրիտանական նավատորմի հրամանատար Սիդնեյ Սմիթը ծովում գրավեց Բոնապարտի հրանոթային փոխադրամիջոցը, իսկ իր սեփական հրանոթներով ուժեղացրեց ամրոցը, Բոնապարտը հասկացավ, որ Ակրը սիրիական արշավանքի վերջն է այնպես, ինչպես Աբուկիրեն՝ եգիպտականինը: Այսպիսով, Ակրի պաշարումը տևեց 2 ամիս և ավարտվեց անհաջողությամբ, որից հետո ֆրանսիացիները սկսեցին նահանջը դեպի Եգիպտոս արդեն հյուծված բանակով[98]: Պաշտոնական տվյալներով սիրիական արշավանքի ժամանակ ֆրանսիացիների կորուստները կազմեցին 1200 սպանված, 1800 վիրավոր, 600 մարդ էլ մահացավ ժանտախտից: Ըստ բժիշկ Ալ են Ժերարի՝ մահացածների ընդհանուր թիվը 4945 էր[99]:

1799թ. հունիսի 14-ին Բոնապարտի բանակը վերադարձավ Կահիրե: Բոնապարտը դեռ չէր հանգստացել, երբ լուր եկավ, թե Աբուկիրեի մոտ թուրքական բանակ է ափիջել, որն ուղարկված է՝ Եգիպտոսն ազատագրելու ֆրանսիական զորքերից: Բոնապարտն անմիջապես իր բանակով դուրս եկավ Կահիրեից և ուղևորվեց հյուսիս՝ դեպի Նեղոսի դելտան[100]: Հուլիսի 25-ին նա հարձակվեց թուրքական բանակի վրա և ջախջախեց թուրքական նավատորմը. գրեթե 15 հազար թուրք կոտորվեցին այդ հարձակման ընթացքում[101]: Բոնապարտը, որ երկար ժամանակ կտրված էր Եվրոպայից, «պատահաբար» իր ձեռքն ընկած մի լրագրից տեղեկացավ, որ Եգիպտոսը նվաճելու ժամանակ Ավստրիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Նեապոլի թագավորությունը վերսկսել են պատերազմը Ֆրանսիայի դեմ, իսկ Սուվորովը Իտալիայում պարտության է մատնել ֆրանսիացիներին, ոչնչացրել Այսրալպյան Հանրապետությունը, շարժվել է դեպի

[97] Նույն տեղում, էջ 100-101:
[98] Мережковский Д., Данте Наполеон, М., 2000, с. 386.
[99] Бешанов В., նշվ. աշխ., էջ 99:
[100] Geer W., Napoleon The First, An Intimate Biography, New York, 1921, p. 103-104.
[101] Тененбаум Б., Великий Наполеон, «Моя любовница-власть», М., 2011, с. 62.

Ալայան լեռներ և սպառնում է ներխուժել Ֆրանսիա: Նապոլեոնը որոշում ընդունեց բանակի հրամանատարությունը հանձնել գեներալ Կլեբերին և խիստ գաղտնի պատրաստված 4 նավերով 1799թ. օգոստոսի 22-ին մեկնեց Ֆրանսիա[102]: Հինգ ամիս անց՝ 1800թ. հունվարի 21-ին, Էլ-Արիշում Կլեբերը ստիպված էր ստորագրել հաշտության համաձայնագիր, որը նախատեսում էր ֆրանսիական զորքերի տարհանումը: Սակայն բրիտանական կառավարությունը հրաժարվեց հաստատել համաձայնագիրը և պահանջեց, որ ֆրանսիական բանակն անվերապահորեն անձնատուր լինի: Կլեբերը, հայտնվելով անելանելի դրության մեջ, հարձակվեց հակառակորդի վրա և 1800թ. մարտի 20-ին Հելիոպոլիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց թուրքերին և դուրս շպրտեց Եգիպտոսից: Այդուամենայնիվ, դա չբարելավեց ֆրանսիացիների դրությունը[103]:

Այդ ժամանակ Կահիրեում տեղի ունեցավ երկրորդ ապստամբությունը: Սկզբնական շրջանում հաջողությունն ուղեկցում էր ապստամբներին, որոնք ոչնչացրին Կահիրեում ֆրանսիական կայազորը, սակայն այս անգամ ևս ֆրանսիական զորքերին հաջողվեց շրջապատել Կահիրեն և մեկ ամսվա պաշարումից հետո դաժանորեն ճնշել ապստամբությունը: Այսպիսով, Կահիրեի երկրորդ ապստամբությունը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ ֆրանսիացիները որևէ հեռանկար չունեն Եգիպտոսում մնալու, առավել ևս այն իրենց տիրապետության տակ պահելու համար[104]:

1801թ. սկզբից Եգիպտոսում ֆրանսիական կորպուսի դրությունը դառնում է օրհասական: Եգիպտոս է մտնում բրիտանական 20-հազարանոց կորպուսը, որը նախ՝ շրջապատում է Կահիրեն, ապա՝ Ալեքսանդրիան: Ֆրանսիացիները հունիսին հանձնում են Կահիրեն, իսկ օգոստոսին՝ Ալեքսանդրիան: 1801թ. սեպտեմբերին այն, ինչ մնացել էր ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսից, բրիտանացիների թույլտվությամբ հեռանում է Եգիպտոսից և վերադառնում Ֆրանսիա: Նույն թվականի հոկտեմբերի

[102] Тарле Е., նշվ. աշխ., էջ 69:
[103] Бешанов В., նշվ. աշխ., էջ 106:
[104] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 123-124:

9-ին հաշտության պայմանագիր ստորագրվեց Ֆրանսիայի և Թուրքիայի միջև, որով Ֆրանսիան կորցրեց Եգիպտոսը, իսկ Օսմանյան կայսրությունը վերականգնեց իր տիրապետությունը Եգիպտոսի վրա:

Այսպիսով, ֆրանսիական Դիրեկտորիան պարտություն կրեց իր հետապնդած բոլոր 3 հիմնախնդիրներում: Ֆրանսիան չկարողացավ հաստատվել Եգիպտոսում և այն օգտագործել որպես կամուրջ՝ Հնդկաստան դուրս գալու համար: Չիրականացան նաև նոր գաղութներ նվաճելու և Բոնապարտի հեղինակազրկվելու ու քաղաքական ասպարեզից նրա հեռանալու՝ Դիրեկտորիայի սպասելիքները: Բոնապարտի եգիպտական արշավանքը ձախողվեց, բայց դա ամենևին չանդրադարձավ նրա քաղաքական կարիերայի վրա: Ընդհակառակը, Բոնապարտը կարողացավ վերադառնալ Ֆրանսիա, ցրել Դիրեկտորիան, դառնալ Ֆրանսիայի առաջին կոնսուլը՝ դրանով իսկ հող նախապատրաստելով մի քանի տարի անց Ֆրանսիայի կայսր՝ Նապոլեոն Ի հռչակվելու[105]:

Նապոլեոնի արշավանքի ամենակարևոր արդյունքը եղավ այն, որ շուրջ 3 տարվա ֆրանսիական իշխանության ընթացքում Եգիպտոսը ձեռք բերեց ազգային-ազատագրական շարժման առաջին փորձառությունը, իսկ ֆրանսիացիների միակ օգուտն այդ արշավանքից եղավ այն, որ բանակում գտնվող տարբեր մասնագիտությունների տեր անձինք հետազոտություններ կատարեցին մաթեմատիկայի, աստղագիտության, բժշկության, պատմության, արվեստի, իրավունքի, լեզվաբանության բնագավառներում: Արշավանքի ընթացքում նրանք կարողացան մանրամասն ուսումնասիրել Եգիպտոսը և դրա շնորհիվ ժառանգություն թողնել «Եգիպտոսի նկարագրությունը» (“Description de l’ Egypte”) 20-հատորանոց արժեքավոր աշխատությունը, որտեղ առկա են տարբեր տեղեկություններ Եգիպտոսի ջրամատակարարման, գյուղատնտեսության, արհեստների, ավանդույթների, մշակութային հուշարձանների, ժողովրդական երաժշտության, սոցիալական հարաբերությունների և այլնի մասին[106]: Զորքին ուղեկցող գիտնականների գործունեությունը դյուրացնելու համար

[105] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 124-125:
[106] Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 21:

Բոնապարտը 1798թ. օգոստոսի 22-ին հրամայեց ստեղծել ֆրանսիական ակադեմիայի մասնաճյուղ՝ «Եգիպտոսի ինստիտուտ», որի առաքելությունն էր «նպաստել Եգիպտոսի առաջընթացին և լուսավորության տարածմանը», ինչպես նաև ուսումնասիրել երկրի ռեսուրսները և պատմությունը: Ֆրանսերենով հրատարակվեցին 2 լրագրեր՝ «Եգիպտոսի սուրհանդակը» և «Եգիպտոսի տասնօրյակը»: Հնարավորություն ստեղծվեց խոսելու Եգիպտոսի վերելքի մասին, որն ազատվել էր տնտեսական, հասարակական և նույնիսկ կրոնական սահմանափակումներից, որոնք առաջացել էին մամլուքների բռնապետության ժամանակ[107]: Բոնապարտը հրամայեց միջոցներ ձեռնարկել՝ Նեղոսով նավարկությունը բարելավելու համար և վերականգնել Նեղոսն ու Կարմիր ծովն իրար կապող հին ուղիները, ինչպես նաև ներկայացնել ճանապարհների շինարարության նախագծեր[108]:

Բժշկության ոլորտում աշխատանք սկսած Լարրեյը և Դեժենետն Ալեքսանդրիայում, Ռոզետտայում, Դամիեթում ու Կահիրեում բացեցին հիվանդանոցներ և սկսեցին զբաղվել զանազան հիվանդությունների ուսումնասիրությամբ[109]: Բոնապարտը մեծ համակրանքով և ուշադրությամբ էր վերաբերվում իր գիտնական ուղեկիցներին, որոնց նա իր հետ վերցրել էր՝ մասնակցելու ռազմարշավին: Մամլուքների հետ տեղի ունենալիք մի ճակատամարտից առաջ նա հրամայել է. «Էշերին և գիտնականներին մեջտեղ»: Ըստ Ե. Տարլեի՝ դա նշանակում էր ճակատամարտի ընթացքում պաշտպանել արշավախմբի համար կենսական նշանակություն ունեցող բեռնակիր կենդանիներին և գիտության ներկայացուցիչներին, ինչով ակնհայտորեն ցույց էր տալիս գիտության առանձնակի նշանակությունն իր համար[110]:

Պատմագրության մեջ հայրենական և արտասահմանյան ուսումնասիրողների կարծիքով Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքը (1798-1801թթ.) կրում էր ակնհայտ զավթողական բնույթ, բայց դրա հետ մեկտեղ ֆրանսիական վարչակարգի

[107] Тюлар Ж., նշվ. աշխ., էջ 78:
[108] Дюфрес Р., նշվ. աշխ., էջ 39-40:
[109] Чандлер Д., Военные компании Наполеона. Триумф и трагедия завоевателя, М., 2000, с. 152.
[110] Тарле Е., նշվ. աշխ., էջ 64:

քաղաքականությունը նվաճողականի հետ միասին ներառում էր նաև առաջադիմական գաղափարներ, որոնք Նապոլեոն Բոնապարտը փորձում էր իրականացնել ֆրանսիական բանակի կողմից բռնազավթված երկրներում: Այս մասին փաստում է նաև խորհրդային պատմաբան, Ֆրանսիայի պատմության, մասնավորապես Ֆրանսիական մեծ հեղափոխության հայտնի մասնագետ Ալբերտ Մանֆրեդն իր «Նապոլեոն Բոնապարտ» գրքում. նա նշում է, որ Եգիպտոսում Նապոլեոնն իրականացրեց հակաֆեոդալական բնույթի մի շարք բարեփոխումներ, սակայն չստացավ արաբների աջակցությունը[111]:

Արևմտյան պատմաբան-արևելագետների որոշ աշխատություններում դարձյալ խոսվում է այն մասին, որ Նապոլեոնը հակված էր վերափոխելու Եգիպտոսի ներքին կյանքը, այդ թվում՝ նաև այդ երկրի իշխանական մարմինների և իրավական ինստիտուտների կառուցվածքը: Հայտնի ամերիկացի արևելագետ Ստենֆորդ Ջ. Շոուն հաստատում է, որ ֆրանսիական ռազմարշավը հեղափոխեց ինչպես Եգիպտոսի կառավարման համակարգը, այնպես էլ հասարակությունը[112]:

Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավի ժամանակ Եգիպտոսի քաղաքական իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս որոշել, թե իրականում որքանով էին առաջադիմական ֆրանսիական իշխանությունների միջոցառումները՝ հաշվի առնելով ինչպես իրականացված, այնպես էլ նախատեսվող նորարարությունները կառավարման և դատական համակարգերում:

Հուլիսի 2-ին Ալեքսանդրիայում ֆրանսիական զորքերի իջեցումից և 1798թ. հուլիսի 21-ին՝ մամլուքյան ջոկատների ջախջախումից հետո, էքսպեդիցիոն կորպուսի միավորումները Նապոլեոնի հրամանով բռնազավթեցին Դելտայի մարզերը և սկսեցին Միջին և Վերին Եգիպտոսի գրավումը:

Վարչական բաժանումը, որը ներդրվեց ֆրանսիական բռնազավթման սկզբում, էապես տարբերվում էր նախկինում գոյություն ունեցածից: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին եգիպտական գանձապետարանի պաշտոնյա Հուսեյն էֆենդին

[111] Манфред А., նշվ. աշխ., էջ 212-213:
[112] Efendi H., Ottoman Egypt in the Age of the French Revolution: Translated by Stanford Jay Shaw, Cambridge, 1964, p. 23.

Նապոլեոնի ռազմարշավի նախօրեին ներկայացնում է Եգիպտոսի 14 նահանգների ցուցակը[113]: Ֆրանսիացիների օրոք Եգիպտոսի վարչական բաժանումը որոշակի փոփոխությունների ենթարկվեց, և նահանգների քանակը, որոնք միավորված էին ընդամենը 8 շրջանների մեջ, սկսեց տատանվել 14-ից 18-ի սահմաններում: Ինքնուրույն վարչատարածքային միավորներ (նահանգներ) դարձան Ռոզետտան և Դամիեթթաքաղաքները:

Եգիպտական նահանգներում բարձրագույն իշխանությունը գտնվում էր ֆրանսիացի գեներալների ձեռքում, ովքեր նշանակվել էին այդ նահանգների նահանգապետներ: Վերին Եգիպտոսի բռնազավթված մասի կառավարիչ դարձավ գեներալ Դեզեն: Ստորին Եգիպտոսում նահանգապետներ նշանակվեցին Ռենեն՝ Ծարկիայում, Դյուգան՝ Էլ-Մանսուրում, Մյուրատը՝ Կալյուբիայում, Դյումուին՝ Բուհեյրայում, Բեյարը՝ Էլ-Գիզայում, Զայոնչեկը՝ Մինուֆիայում, Ռամպոնը՝ Ատֆիայում[114]: Նահանգապետների պարտավորությունների մեջ մտնում էին նաև ֆրանսիական զորքերի ապահովումը, կարգապահության վերահսկումը, հարկերի հավաքումը, հակաֆրանսիական ելույթների դեմ պայքարը: Ֆրանսիական իշխանության լիիրավ ներկայացուցիչների հենարանը գանձարանային ոլորտում գլխավորապես եգիպտացի քրիստոնյաներն էին՝ ղպտիները, անվտանգության ոլորտում՝ տեղական ոստիկանական ապարատը, գյուղերում՝ գյուղական ավագները (շեյխերը կամ օմդաները): Նահանգապետները, Նապոլեոնի հրամանների համաձայն, պետք է նշանակեին ենիչերիական ջոկատների հրամանատարներին՝ ոստիկանական ծառայություն իրականացնելու համար: Հարկերի հավաքումը դրված էր հատուկ ինտենդանտի վրա, ովքեր գերազանցապես ղպտիներ էին: Վերջինի հետ պետք է գտնվեր ֆրանսիացի հսկիչը՝ ֆրանսիական բանակի ֆինանսական հարցերը կարգավորելու համար[115]:

Եգիպտոսի գրավված տարածքների վրա հաստատելով օկուպացիոն համակարգ՝ Նապոլեոնը ձգտում էր ստանալ տեղական

[113] Նույն տեղում, էջ 48:
[114] Кириллина С., Рябков М., Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон 1 Бонапарта (1798-1801гг.): Восток в новое время. Экономика, государственный строй, сб. статей, М., 1991, с. 130.
[115] Charles-Roux F., Bonaparte: Governor of Egypt, Translated From The French by Dickes E, London, 1937, p. 55.

բնակչության աջակցությունը: Ռազմարշավի հենց սկզբից Նապոլեոնը ձգտում էր աջակիցներ գտնել: Ալեքսանդրիայում գեներալ Կլեբերին պարետ նշանակելու հետ կապված վերջինիս ուղղված նամակում Նապոլեոնը գրում էր, որ անհրաժեշտ է հնարավորինս արաբների հետ համաձայնության գալ և մեծ հարգանք ցուցաբերել մուֆթիների և գլխավոր շեյխերի նկատմամբ: Հատկանշական է, որ Նապոլեոնը սկզբում հակված էր Եգիպտոսի համար ավանդական կառավարման պետական ինստիտուտների պահպանմանը: Դեռևս 1798թ. հուլիսի 2-ից 7-ը՝ ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի իջեցումից հետո, Ալեքսանդրիայում նրա հրամանով ստեղծվեց դիվան, որի մեջ ընդգրկվեցին առավել հարգված շեյխեր և հայտնի քաղաքացիներ: Բոնապարտը դիվանի անդամներին հավաստիացրեց, որ ֆրանսիական ռազմական իշխանությունները պետք է խորհրդակցեն նրանց հետ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ: Միաժամանակ նա դիվանի անդամներից պահանջեց չեզոքություն դրսևորել ֆրանսիական վարչակարգի նկատմամբ[116]:

Հասարակական հեղարանի փնտրտուքը տեղական վերնախավի մեջ և օկուպացիոն վարչակարգի համագործակցությունը դիվանների հետ դարձան Նապոլեոնի ներքին քաղաքականության չափանիշը Եգիպտոսում: 1798թ. հուլիսի 25-ին՝ ֆրանսիական զորքի՝ Կահիրե մտնելուց մեկ օր հետո, Նապոլեոնը տվեց Կահիրեի դիվանի ձևավորման հրամանը: Հաջորդ օրը շեյխերը և ենիչերիական կորպուսների ղեկավարները հրավիրվեցին գլխավոր հրամանատարի տեղակալի մոտ՝ իշխանության ձևափոխված մարմնի 10 անդամների նշանակման կապակցությամբ բանակցություններ վարելու համար: Արդյունքում որոշվեց վերոնշյալ անդամների կազմում ընդգրկել մուսուլմանական հոգևորականության ակնառու ներկայացուցիչներին՝ շեյխեր Աբդալլա աշ-Շարկավիին, Խալիլա ալ-Բաքրիին, Մուսաֆա աս-Սավիին, Սուլեյման ալ-Ֆայումիին, Մուհամմադ ալ-Մահդիին, Մուսու աս-Սիրսիին, Մուստաֆա ադ-Դամանհուրիին, Ահմադ ալ-Արիշիին, Յուսուֆ աշ-Շուբրահիտիին և

[116] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 131:

Մուհամմադ ադ-Դավահիլիին[117]: Այդպիսի նշանավոր հոգևորականների ընդգրկումը դիվանի մեջ, որոնք նախկինում այդքան ակտիվ ներառված չէին իշխանության մարմինների աշխատանքում, պայմանավորված էր ֆրանսիացիների՝ պետական կառավարումից մամլուքներին դուրս մղելու ծրագրերով, ովքեր բռնազավթիչներին դիմադրող հիմնական ռազմական ուժն էին[118]:

Այսպիսով, Բոնապարտն իրագործեց հստակ մտածված և բազմակողմանի հետևանքներ ենթադրող կարևոր քաղաքական քայլ. նա ոչ միայն պետական կառավարման համակարգից դուրս մղեց մամլուքներին, այլ նաև օգտագործելով մուսուլմանական ժողովրդի հավատքը և տրամադրվածությունը հոգևորականների նկատմամբ՝ այն ուղղեց իր կողմից վերափոխված կառավարման համակարգի նկատմամբ հավատի բարձրացմանը:

Դիվանի աշխատանքը հսկելու համար նշանակվում էին ֆրանսիացի խորհրդականներ: Ֆրանսիացիները զբաղեցրին նաև մի շարք կարևոր պաշտոններ Եգիպտոսի պետական համակարգում, օրինակ՝ ամիր ալ-բահրայնա (Միջերկրական և Կարմիր ծովերի նավահանգիստների եգիպտական մաքսատների կառավարիչ) և դեֆթերդար (պետական գրասենյակի կառավարիչ) պաշտոնները: Եգիպտոսի ֆինանսների և մաքսատների ղեկավար էր նշանակվել ֆրանսիական բանակի գլխավոր ինտենդանտ Ժ. Բ. Պուսելգը: Ֆրանսիացիների ձեռքն անցավ նաև Կահիրեի դրամահատարանի գործերի կառավարումը: Հրաման արձակվեց մեծ քանակությամբ պղնձե մանրադրամի թողարկման համար, և, ինչպես հետագայում նշում էր Նապոլեոնը, այս գործողության արդյունքում «գանձարանը ստացավ ավելի քան 60% եկամուտ»[119]:

Դիվանի անդամների երաշխավորությամբ մի շարք կարևոր պաշտոններում նշանակվեցին մամլուքներ: Մասնավորապես ոստիկանապետ նշանակվեց Ալի Աղա աշ-Շաարավին, իսկ ավագ հարկահավաք (մուհթասիբ)՝ Հասան Աղա Մուհարամը: Չնայած ֆրանսիացիները դեմ էին այդ պաշտոններում մամլուքների նշանակմանը, այնուամենայնիվ շեյխերը հավատացնում էին նրանց,

[117] Ал-Джабарти Абд ар-Р., Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), М., 1962, с. 68.
[118] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 39-40:
[119] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 132:

որ հիշատակված անձինք վստահելի են: Դիվանի անդամների խոսքերի համաձայն՝ վերջինները ծագում էին հին ընտանիքներից և ընդունակ չէին ուրիշ մամլուքների նման իրագործելու որևէ չարագործություն[120]:

Նապոլեոնը հաշվի առավ նաև դիվանի անդամների կարծիքը նահանգային կառավարման մարմինների կազմակերպման վերաբերյալ: Շեյխերն արտահայտվեցին նահանգային նախկին վարչական համակարգի պահպանման օգտին և աջակցեցին այն ծրագրին, ըստ որի՝ Եգիպտոսի բոլոր նահանգներում ստեղծվում էին տեղական դիվաններ, որոնք կազմված էին 7 անդամներից: Նրանք պետք է պաշտպանեին նահանգի շահերը, բողոքներն ուղարկեին Նապոլեոնին, կանխեին գյուղերի միջև պատերազմները, հետևեին անվստահելի մարդկանց ու պատժեին նրանց՝ անհրաժեշտության դեպքում դիմելով ֆրանսիական պարետի օգնությանը: Նահանգային դիվանները պետք է իրենց ներկայացուցիչներին ուղարկեին՝ մասնակցելու Կահիրեի կենտրոնական դիվանի աշխատանքներին[121]:

Այսպիսով, դիվանների ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական կառավարման համակարգերին տրվեցին հիմնականում խորհրդակցական գործառույթներ: Ֆրանսիացիները, խորհրդականների միջոցով խստորեն հսկելով կենտրոնական և նահանգային դիվանների գործունեությունը, այն ուղղորդում էին իրենց համար ձեռնտու ճանապարհով և խոչընդոտում էին ինքնուրույն որոշումներ կայացնելու փորձերը, որոնք չէին համապատասխանում օկուպացիոն համակարգի շահերին[122]:

Շրջանցելով կենտրոնական դիվանը՝ ֆրանսիական իշխանությունները հրամայում էին վճարել հարկերը, իրականացնում էին խուզարկություններ և ձերբակալություններ, բռնագրավում էին բնակչության ունեցվածքը: Ալ-Ջաբարտիի վկայությամբ արդեն 1798թ. վերջին ֆրանսիական իշխանությունները սկսեցին անտեսել իրենց կողմից ստեղծված կահիրյան դիվանը[123]: Խոստացված խորհրդակցությունը, որը պետք է

[120] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 69:
[121] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 132-133:
[122] Charles-Roux F., նշվ. աշխ., էջ 52-58:
[123] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 88:

անցկացվեր նրա անդամների հետ, չիրականացվեց, և արդյունքում այդ կառույցը դադարեցրեց իր գործունեությունը ստեղծումից ընդամենը 2 ամիս անց:

Շուտով ֆրանսիական վարչակարգը փորձեց ձևավորել նոր համաեգիպտական մարմին, որը ստացավ Մեծ դիվան (Գերագույն խորհուրդ) անվանումը: Նահանգների ֆրանսիացի նահանգապետները նոր դիվանի աշխատանքներին մասնակցելու համար Կահիրե ուղարկեցին տեղական ավագանիների ներկայացուցիչներին, ովքեր էական ազդեցություն ունեին բնակչության մեջ և չեզոք էին օկուպացիոն իշխանությունների նկատմամբ: Եգիպտոսի 16 նահանգներից 13-ն ուղարկեցին իննական մարդ՝ 3 ներկայացուցիչ ուլամայի հոգևոր դասից, 3 առևտրականների, գյուղապետի, բեդվինական առաջնորդի և ֆելլահի: Շարկիյա և Մինուֆիյա նահանգները ներկայացված էին յուրաքանչյուրը 18 պատգամավորով, իսկ Կահիրեից դիվանի կազմ մտան 27 ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ դիվանում հաշվվում էր 180 եգիպտացի[124]: Դիվանի այսքան լայն հասարակական կազմը, որը ներառում էր առևտրական շերտի, գյուղացիության և ցեղերի ներկայացուցիչներ, նկատելիորեն տարբերում էր Մեծ դիվանը մամլուքների իշխանության օրոք գոյություն ունեցած նմանատիպ մարմիններից:

1798թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Մեծ դիվանի առաջին նիստը, որին մասնակցեցին Կահիրեի շեյխերը, տարբեր նավահանգիստներից և քաղաքներից ժամանած մարդիկ, ենիչերիական կորպուսների ղեկավարներ, հայտնի առևտրականներ, քրիստոնյաներ՝ ղպտիներ ու սիրիացիներ և դիվանի ֆրանսիացի ղեկավարներ[125], իսկ դիվանի ղեկավար ընտրվեց շեյխ Աբդալլահ աշ-Շարկավին[126]: Ընտրությունները կայանում էին օսմանյան եգիպտոսի համար ոչ ավանդական եղանակով՝ գաղտնի քվեարկությամբ, որն առաջարկել էին ֆրանսիացիները:

Ֆրանսիական իշխանություններն առաջին հերթին ձգտում էին օգտագործել Մեծ դիվանը՝ այն միջոցառումներն

[124] Charles-Roux F., նշվ. աշխ., էջ 58:
[125] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 95:
[126] Charles-Roux F., նշվ. աշխ., էջ 61:

օրինականացնելու համար, որոնք ուղղված էին օկուպացիոն համակարգի դիրքերի ամրապնդմանը: Կենտրոնական դիվանի վրա ֆրանսիական ազդեցության հետագա ամրապնդման նպատակով 1798թ. հոկտեմբերին ծրագրվեց դիվանի վերակազմավորումը: Ըստ նախագծի՝ նախատեսվում էր կրճատել եգիպտացիների ներկայացուցչությունը մինչև 25 մարդ (9 պատվիրակներ Կահիրեից և մեկական մարդ Եգիպտոսի 16 նահանգներից): Նախագիծն ընդգրկում էր նաև իշխանության նոր մարմնի՝ մշտական դիվանի ստեղծումը, որն իրականացնելու էր ընթացիկ գործերի քննարկումը: Ընդ որում Եգիպտոսում ֆրանսիական զորքերի գերագույն գլխավոր հրամանատարին իրավունք էր վերապահվում նշանակելու նրա 9 անդամներին: Միաժամանակ նախատեսվում էր Եգիպտոսի մարզերում անցկացնել ժողովներ (ասամբլեաներ) տեղի հոգևորականության, առևտրաարհեստավորական շերտերի և գյուղական շեյխերի ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց թեկնածությունները հաստատվում էին ֆրանսիացի նահանգապետների կողմից: Նահանգապետների հսկողության տակ ժողովները պետք է նշանակեին իննական մարդ նոր նահանգային դիվաններում և թեկնածուների ցուցակներն ուղարկեին հաստատման Մեծ դիվան[127]: Սակայն Կահիրեում բռնկված ապստամբության և մարզերում հուզումների ուժեղացման հետևանքով այդ նախագիծը չիրականացավ:

1798թ. հոկտեմբերին ֆրանսիացիների կողմից Կահիրեի ապստամբությունը ճնշվելուց հետո Մեծ դիվանը փաստացի չէր գործում: Միայն 2 ամիս անց՝ 1798թ. դեկտեմբերին, ֆրանսիական վարչակարգը սկսեց վերջինի վերակազմավորումը: Այն կազմված էր 60 անդամներից. նախկին Գլխավոր խորհրդի համեմատությամբ դիվանի անդամների թիվը 3 անգամ կրճատվեց: Նրա մեջ մտան հոգևորականության ներկայացուցիչները և դերվիշական եղբայրությունների ղեկավարները, ենիչերիական կորպուսների սպաները, ովքեր ծառայում էին ֆրանսիացիների մոտ, խոշոր առևտրականները, արհեստավորական արտադրամասերի շեյխերը:

[127] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 134:

Այլևս խոսք չկար ֆելլահների կամ բեդվինների մասին[128]: Այսպիսով, ակնհայտորեն տեղի էր ունենում եգիպտացիների ներկայացուցչության կտրուկ դուրս մղումը դիվանից:

Մեծ դիվանի անդամներից ձևավորվեց Յուրահատուկ կամ Մշտական դիվան, որի մեջ մտան 14 մարդ՝ շեյխեր աշ-Շարկավին, ալ-Մահդին, աս-Սավին, ալ-Բաքրին և ալ-Ֆայումին, վաճառականներ՝ ալ-Մահրուկին և Ահմադ Մուհարրամը, քրիստոնյա ղպտիներ՝ Լուտֆալլահ ալ-Միսրին ու Իբրահիմ Հեր ալ-Ալիտը և սիրիացիներ Յուսուֆ Ֆարահաթն ու Միխայիլ Կահիլը, ինչպես նաև եվրոպացիներ՝ շվեդ բժիշկ Վոլմարը և ֆրանսիական հպատակներ Բոդինին ու Մուսա Կաֆֆը (վաճառական Մարսելից)[129]: Եգիպտական հասարակությունից ընտրված էին ֆրանսիացիների նկատմամբ առավել չեզոք դիրք ունեցող տարրերը, որով և բացատրվում է դիվանի մեջ քրիստոնյաների՝ ղպտիների և սիրիացիների ընդգրկումը:

Գլխավոր խորհրդում ֆրանսիական օկուպացիոն իշխանությունների կոմիսարներ նշանակվեցին ֆրանսիացի գիտնականներ՝ մաթեմատիկոս Մոնժը և քիմիկոս Բերտոլեն: Մեծ դիվանի իրավասությունների մեջ մտնում էր ընթացիկ հարցերի քննարկումը, և այն, ինչպես նախկինում, գլխավորապես իրականացնում էր խորհրդակցական գործառույթներ[130]:

Ընդհանուր առմամբ, ինչպես արդեն ասվեց, Կահիրեում և նահանգներում ստեղծված դիվանների համակարգը կոչված էր դառնալու օկուպացիոն վարչակարգի քաղաքականության ուղեցույցը: Գաղութային վարչակարգում դիվաններին հատկացված էր կառավարման մարմինների խամաճիկային դեր: Դրա հետ մեկտեղ Բոնապարտի գլխավորությամբ ֆրանսիական իշխանությունները չէին փորձում ինչ-որ ձևով «եվրոպականացնել» և «հեղափոխել» Եգիպտոսի կառավարման համակարգը: Նապոլեոնն իր խաղադրույքը կատարել էր ավանդական մուսուլմանական իշխանության մարմինների վրա: Նրանց հաճախակի վերակառուցումը պայմանավորված էր լավագույն հարաբերակցության փնտրտուքով

[128] Նույն տեղում, էջ 135:
[129] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 128:
[130] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 135:

ֆրանսիական և տեղական վարչությունների միջև, որը կապահովեր քաղաքական ոլորտում ֆրանսիացիների բացարձակ գերակայությունը[131]:

Դիվանները չէին համարվում դեմոկրատական իշխանության մարմիններ, քանի որ նրանց անդամները, որպես կանոն, չէին ընտրվում, այլ նշանակվում էին: Դիվանի անդամներ սովորաբար դառնում էին մարդիկ, ովքեր չեզոք էին օկուպացիոն իշխանությունների նկատմամբ, սակայն ժամանակի ընթացքում փոխում էին իրենց դիրքորոշումը: Այսպես, օրինակ՝ Կահիրեի վաճառականների առաջնորդ Ահմադ ալ-Մահրուկին, ով մտնում էր Մեծ և Յուրահատուկ (Մշտական) դիվանների կազմի մեջ, արդյունքում դարձավ 1800թ. գարնանը Կահիրեում բռնկված ապստամբության ղեկավարներից մեկը: Ընդհանուր առմամբ ֆրանսիական ռազմական վարչության և դիվանների միջև բախումները պայմանավորված էին հարկային դրույքների հետ կապված անհամաձայնություններով, ռազմատուգանքների չափազանց մեծ ծավալներով և այլ հարցերով, որոնք կապված էին օկուպացիոն զորքերի ապահովման հետ[132]:

Ինչպես արդեն նշվեց, Նապոլեոնի ռազմարշավի ժամանակ ակնհայտ փոփոխություններ տեղի ունեցան դիվանների հասարակական կազմում: Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ իշխանության մարմիններում հանդես եկան սահմանափակ թվով առևտրաարհեստավորական շերտերի ներկայացուցիչներ: Ֆրանսիական վարչակարգի կողմից մամլուքների դեմ ճնշումների հետ կապված կառավարման համակարգում նրանց տեղը զբաղեցրին հիմնականում բարձրագույն մուսուլմանական հոգևորականության ներկայացուցիչները: Սակայն այդպիսի փոփոխությունները հակաֆեոդալական բնույթ չէին կրում, որը հաճախ վերագրվում է Եգիպտոսում Նապոլեոնի բարեփոխումներին: Դասային տեսակետից իշխանության մարմինների կազմը գործնականում չփոխվեց, քանի որ ուլեմները, զբաղեցնելով մամլուքների տեղը, իշխող դասի բավականին ազդեցիկ խումբ էին:

---

[131] Charles-Roux F., նշվ. աշխ., էջ 63:
[132] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 135-136:

Իշխանության մարմինների մեջ մի շարք կրոնական ակնառու հեղինակությունների ընդգրկումը պայմանավորված էր նրանով, որ ուլեմները Նապոլեոնի կողմից դիտվում էին միակ իրական քաղաքական ուժ՝ որպես այլընտրանք մամլուքյան խմբավորումներին և օսմանյան իշխանություններին: Ուլեմները կարևոր դեր էին խաղում երկրի հասարակական կյանքում՝ հանդիսանալով իսլամական գաղափարախոսության կրողը և մուսուլմանական իրավունքի գիտակները, ինչպես նաև նշանակալի ազդեցություն էին ունենում եգիպտական հասարակության տարբեր շերտերի վրա: Հատկանշական է, որ պատմաբանների, մասնավորապես խորհրդային արևելագետ Ֆարիդե Ացամբայի կարծիքով օսմանյան Եգիպտոսում ուլեմների քաղաքական դերը որոշելիս միանշանակ գնահատական տալը սխալ է: Եգիպտոսում հոգևոր հեղինակությունների քաղաքական մեծ կշռի մասին վկայում է ուլեմների մասնակցությունը երկրի բոլոր կարևոր իրադարձություններին: Ուլեմները որպես միջնորդ դատավորներ էին մամլուքյան տարբեր խմբավորումների, ինչպես նաև մամլուքների, օսմանյան կենտրոնական կառավարության և փաշայի միջև վիճաբանություններում: Նրանց վրա էին դրվում Եգիպտոսի ներկայացուցչության գործառույթները Բարձր դռան հետ պաշտոնական շփումներում: Միաժամանակ եգիպտական մուսուլմանական հոգևորականության և մամլուքների միջև կային որոշակի հակասություններ, մասնավորապես մամլուքյան կառավարիչների ակտիվ գործողությունները, որոնք ուղղված էին իրական քաղաքական իշխանությունից ուլեմների դուրս մղմանը: Ֆրանսիական ռազմարշավի նախօրյակին մուսուլմանական հոգևորականությունը Եգիպտոսում բարդ քաղաքական պայմաններում եզակի ազգային ուժ էր: Ֆրանսիական իշխանությունները Բոնապարտի գլխավորությամբ ձգտում էին հոգևորական գործիչներին գրավել իրենց կողմը՝ օգտագործելու համար որպես իրենց քաղաքականության իրավազոր ուղեկցորդներ: Նապոլեոնը գիտակցում էր, որ «ֆրանսիացիները, եթե նույնիսկ ուզենային, ապա չէին կարող կառավարել այս երկիրը», այդ պատճառով անհրաժեշտ էր դիմել ուլեմների աջակցությանը, ովքեր,

նրա խոսքերով, «միաժամանակ և՛ ազնվականներ էին, և՛ իրավագետներ»[133]:

Նապոլեոնը ռազմարշավի առաջին ամիսներին հայտարարում էր մուսուլմանական արժեքներին իր նվիրվածության մասին և մասնավորապես արտահայտվում էր իսլամական դատական ինստիտուտների պահպանման օգտին: Նման հայտարարությունները ձևական բնույթ չէին կրում և գործնականում իրականացվում էին: 1798թ. հոկտեմբերին կայացած դիվանի նիստերում մի շարք հարցեր դրվեցին, որոնք վերաբերում էին շարիաթական իրավական դատական ոլորտին, անշարժ գույքի փաստաթղթերին և այլ հարցերի: Դիվանը որոշում ընդունեց պահպանել գոյություն ունեցող դատավարության համակարգը և գործերի քննարկման ընթացակարգը: Դիվանի անդամները, այդ թվում նաև քրիստոնեական հավատի ներկայացուցիչները կողմ արտահայտվեցին ժառանգականության հետ կապված հարցերում շարիաթի կանոններին անվերապահորեն հետևելու մոտեցմանը: Հետագայում ֆրանսիացիները չէին պնդում, որ լուրջ փոփոխություններ իրականացվեն դատական ինստիտուտի համակարգում, որն ուլեմների գործունեության ավանդական ոլորտն էր[134]:

Ֆրանսիական վարչակարգի կողմից դատական համակարգում իրականացված նորարարության կարևոր հետևանքը 1798թ. Եգիպտոսի համար դատական նոր մարմնի (մահկամաթ ալ-կադայա) ստեղծումն էր, որի մեջ մտան 6 քրիստոնյա ղպտիներ և 6 մուսուլման վաճառականներ: Ֆրանսիացիների նախաձեռնությամբ գլխավոր դատավորի պաշտոնը ստանձնեց ղպտի Մալթին (ով նախկինում մամլուքյան զորահրամանատար և գանձապահ Այուբ բեյ ադ-Դեֆթերդարի գրագիրն էր): Եգիպտոսի համար անսովոր երևույթ էր արդարադատության համակարգում արտոնությունների վստահելը քրիստոնեություն դավանող մարդու: Նոր դատական գերատեսչության իրավասությունների մեջ մտնում էր հարցերի լուծումը, որոնք վերաբերում էին առևտրական գործողություններին, քաղաքացիական հայցերի քննարկմանը, այդ թվում նաև սեփականությանը վերաբերող հարցերին: Հատուկ այդ

[133] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 136-137:
[134] Charles-Roux F., նշվ. աշխ., էջ 64:

դատարանի համար մշակվեց կանոնակարգ, որը որոշում էր նրա գործառույթները և գրանցում էր հարցերի քննարկման ընթացակարգը: Բացի դրանից՝ նրանք կանոնակարգի պատճենները փակցրին ճանապարհների խաչմերուկներին, նրբանցքների մուտքերի մոտև մզկիթների դարպասներին: Ալ-Ջաբարտին, լինելով ուլեմների հոգևոր դասի ներկայացուցիչ, կտրուկ բացասական վերաբերմունք ցույց տվեց իրավական նոր մարմնի և համապատասխան կանոնակարգի նկատմամբ, որը, իր համոզմամբ, ներմուծում էր «բացասական նորամուծություններ»[135]: Եգիպտացի ժամանակագիրը նոր դատարանի կանոնակարգը բնութագրում էր որպես անհեթեթ և անգրագետ փաստաթուղթ, որի կազմողը ծանոթ չէր արաբերենի քերականության կանոններին: Վերլուծելով այդ փաստաթղթի բովանդակությունը՝ ալ-Ջաբարտին հանգեց այն եզրակացության, որ կանոնադրությունը «խորամանկ հնարք է, բնակչության ունեցվածքը բռնագրավելու համար»[136]: Իր խիստ գնահատականի հաստատման համար եգիպտացի ժամանակագիրը մասնավորապես մատնանշում է կանոնակարգի կողմից հաստատված բազմաստիճան ընթացակարգը, որը հաստատում էր իրավունքն անշարժ գույքի վրա, որն էլ այն հնարավորություններ էր բացում սեփականատերերի իրավունքների բողոքարկման և նրանց անշարժ գույքի բռնագրավման համար ֆրանսիական Հանրապետության օգտին: Այդ նորամուծությունը զարգացում չստացավ, սակայն դա դարձավ այն նմուշը, որով հետագայում կողմնորոշվում էր Եգիպտոսի գերագույն կառավարիչ Մուհամմադ Ալին (1805-1849թթ.)[137]:

Ֆրանսիական ռազմարշավի նախօրյակին, չնայած մամլուքների տիրապետությանը, Եգիպտոսում մուսուլմանական դատավարական համակարգը շարունակում էր մնալ Բարձր դռան հսկողության տակ: Դատական ապարատում առաջատար պաշտոնները որպես կանոն զբաղեցնում էին ոչ եգիպտացիները: Դրա հետևանքով տեղ էր գտնում կրոնական-իրավական ոլորտի մասնակի անցման միտում տեղական մուսուլմանական հոգևորականության ձեռքը: Մամլուքները, հանդես գալով Բարձր դռան դիկտատի դեմ, հանձինս օսմանյան

[135] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 88:
[136] Նույն տեղում, էջ 89:
[137] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 137-138:

շարիաթական դատավորների, տեսնում էին կենտրոնական կառավարության շահերի ջատագովների, ինչի արդյունքում սկսեցին եգիպտական դատական համակարգից դուրս մղել օսմանյան կադիներին ու մեծացնել տեղական կադիների թիվը: Այս քաղաքականությունը, պայմանավորված մի քանի այլ շարժառիթներով, շարունակվեց ֆրանսիացիների կողմից: Ֆրանսիական վարչակարգի միջոցառումների շրջանակներում, որոնք ուղղված էին եգիպտական մուսուլմանական հոգևորականության հետ մերձեցմանը, աստիճանաբար իրականացվում էր Կոստանդնուպոլսից ուղարկված կադիների փոխարինումը եգիպտացի շարիաթական դատավորներով: Այն փուլում, երբ Բոնապարտը, քողարկելով ռազմարշավի իրական նպատակները, մարտիկի դեր էր խաղում Եգիպտոսի վրա Բարձր դռան սուվերենության պահպանման համար, 5 դատական պաշտոնները պահպանվում էին օսմանյան կադիների կողմից՝ օսմանյան գերիշխանության պատրանքն ինչ-որ կերպ պահպանելու համար: Միևնույն ժամանակ Նապոլեոնը գիտակցում էր, որ օսմանյան հոգևորական հեղինակությունները, ժամանակավորապես գտնվելով Եգիպտոսում, դժվար թե ակտիվորեն համագործակցեն օկուպացիոն բանակի հետև աջակցեն ֆրանսիական նախագծերի կյանքի կոչմանը: Ֆրանսիական վարչակարգի կարծիքով եգիպտական հոգևորական հեղինակությունները դատական համակարգում պատասխանատու և առանցքային պաշտոններ ստանալուց հետո կարող էին հանդես գալ որպես օկուպացիոն իշխանությունների կամքի կատարողներ: Կոստանդնուպոլսի դրածո, Եգիպտոսի գերագույն շարիաթական դատավոր Ջումկաշի զադեի փախուստից հետո՝ 1799թ. մայիսին, երկրի գլխավոր կադիի պաշտոնում նշանակվեց եգիպտացի իրավագետ Ահմադ ալ-Արիշին[138], ով այդ պաշտոնը որոշ ընդմիջումով զբաղեցրեց մինչև բռնազավթման վերջը (1801թ.): Միաժամանակ Նապոլեոնը նշեց, որ այսուհետ կադիի պաշտոններում պետք է նշանակվեն միայն եգիպտացիները: 1800թ. աշնանը կոմիսար Ֆուրեին լիազորեցին հետևել շարիաթական դատարաններում պաշտոնների նշանակմանը: Այդ պաշտոնում ընտրվածները պետք է հաստատվեին ֆրանսիական

[138] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 211:

բանակի գլխավոր հրամանատարի կողմից, ով այդ ժամանակ գեներալ Մենուներ[139]:

Ֆրանսիական իշխանությունների հրամանի համաձայն՝ ընտրությունները անցկացվեցին 1800թ. վերջին, և 2 ամիս անց՝ 1801թ. հունվարին հայտարարվեց Ահմադ ալ-Արիշիի՝ Կահիրեի կադի դառնալու հրամանը: Միաժամանակ կադիի պաշտոններում հաստատվեցին Ահմադ էֆենդի Աբդ ալ-Կադիրը՝ Դամիեթում, շեյխեր Ռիդվան Նաջը և Աբդ առ-Ռահման Թահիր առ-Ռաշիդին՝ Էլ-Աբյարում և Մահալլեթ-Մարհումեում (2 բնակավայրերն էլ գտնվում էին Մինուֆիա նահանգում), համապատասխանաբար[140]: Եգիպտոսից ֆրանսիական զորքերի տարհանումից հետո երկրում վերականգնվեց շարիաթական իրավական մարմինների կախվածությունն օսմանյան իշխանություններից: Առավել կարևոր կադիի պաշտոնները, այդ թվում՝ Եգիպտոսի ավանդական դատական համակարգի ղեկավարի պաշտոնը, դարձյալ զբաղեցրին Կոստանդնուպոլսից ուղարկված մարդիկ[141]:

Ռազմարշավի վերջնական փուլում ֆրանսիական վարչակարգը պահպանում էր նախկին հարաբերությունները բարձրագույն մուսուլմանական հոգևորականության և օկուպացիոն համակարգի հետ, որոնք սոցիալական և քաղաքական միակ հնարավոր հենարանն էին: Ղպտիները, որոնց բռնազավթման ընթացքում կարևոր տեղ էր տրվել ֆինանսական համակարգում, ռազմարշավի վերջում ենթարկվեցին պատժամիջոցների, իսկ հարկահավաք ղպտիների մի մասը նույնիսկ ձերբակալվեց[142]:

1800թ. նոյեմբերի սկզբին ֆրանսիացիները դարձյալ վերակազմավորեցին իշխանության մարմինների համակարգը: Մեծ դիվանը ցրվեց, Մշտական դիվանի կազմի մեջ մտան գերազանցապես հոգևոր շրջանակների ներկայացուցիչները՝ շեյխեր աշ-Շարկավին (նախագահ), ալ-Մահդին (քարտուղար), ալ-Ամիր աս-Սավին, ալ-Ջաբարտին, աս-Սիրեին, ալ-Բաքրին, ալ-Ֆայումին, սեյիդ Ալի առ-Ռաշիդին, կադի Իսմայիլ ազ-Զարկանին: Կենտրոնական դիվանի

[139] Նույն տեղում, էջ 359:
[140] Նույն տեղում, էջ 370:
[141] Кириллина С., Рябков М., նշվ. աշխ., էջ 139:
[142] Efendi H., նշվ. աշխ., էջ 116:

վերստեղծումը, նույնիսկ այսպիսի կրճատված տեսքով, ալ-Ջաբարտիի վկայությամբ ստացավ Կահիրեի բնակիչների հավանությունը: Սակայն նոր դիվանի գործառույթների մեջ մտնում էին միայն բողոքների քննարկումը և դիմումների ուղարկումը գերագույն գլխավոր հրամանատարին: Դիվանի գործունեությունը հսկելու համար ֆրանսիական վարչակարգը նշանակեց կոմիսար Ֆուրեին, ով փաստորեն ղեկավարում էր դիվանի աշխատանքը: Սակայն այս դիվանը ձևական բնույթ էր կրում և ֆրանսիական բանակի կապիտուլյացիայի պայմանագիրը կնքելուց 2 ամիս առաջ դադարեցրեց իր գործունեությունը Եգիպտոսում: Դիվանի վերջին նիստը կայացավ 1801թ. հուլիսի 6-ին[143]:

Կառավարման համակարգը, որը զուգակցում էր ֆրանսիական օկուպացիոն վարչակարգը և տեղական կառավարման մարմինները, գործում էր ֆրանսիացիների կողմից գրավված Ստորին և մասամբ Միջին Եգիպտոսի տարածքներում: Այն չտարածվեց Վերին Եգիպտոսում, որը դարձել էր երկարատև մարտերի խաղասպարեզ մամլուքյան կազմավորումների և ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի զորամասերի միջև:

Այսպիսով, Նապոլեոն Բոնապարտի արշավանքը շատ կարևոր էր ֆրանսիացիների համար. ունենալով համեմատաբար թույլ նավատորմ, ինչը հնարավորություն չէր տալիս ուղղակիորեն պայքարել Մեծ Բրիտանիայի դեմ՝ ֆրանսիացիներն իրենց համար առաջնային նպատակ սահմանեցին Եգիպտոսը դարձնել իրենց գաղութը՝ մշտապես լարվածության մեջ պահելով հակառակորդ Մեծ Բրիտանիային և Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական: Թեև ֆրանսիացիներն էական ռազմական հաջողություններ ունեցան Եգիպտոսում և անցան իշխանության գլուխ, սակայն այդ ճանապարհին թույլ տված քաղաքական կոպիտ սխալները հնարավորություն չընձեռեցին՝ այդ իշխանությունն ամրապնդելու և հարատև դարձնելու ֆրանսիական տիրապետությունը Եգիպտոսում: Բոնապարտի՝ տեղացի բնակչության նկատմամբ կիրառած կոպիտ քաղաքականությունը չէր կարող իր հետևանքները չունենալ. չնայած երկրի կարևոր

[143] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 355-357:

ոլորտներում իր իրականացրած բարեփոխումներին՝ նա բնակչության կողմից չճանաչվեց որպես ազատարար, այլ ընկալվեց որպես հերթական բռնազավթիչ:

Ֆրանսիական ռազմարշավի ժամանակահատվածում Եգիպտոսի կառավարման համակարգը պարունակում էր գաղութային համակարգի տարրեր, որոնք ֆրանսիական ռազմարշավի դիրքերի ամրապնդմանը զուգընթաց ավելի էին ընդգծվում: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցելու էր գալիս այն, որ ֆրանսիական ռազմարշավի բարձրաձայնած նպատակները սին էին, և Եգիպտոսի ազատագրումն Օսմանյան լծից միջանկյալ նպատակ էր տվյալ տարածաշրջանում միանձնյա վերահսկողության հաստատման ճանապարհին:

Գիտակցելով այն հանգամանքը, որ սեփական ուժերը բավարար չեն իշխանության հաստատման և պահպանման համար՝ Բոնապարտը կառավարման համակարգի պաշտոններում փորձեց զուգակցել ֆրանսիացիների և տեղացիների դերերը: Չնայած պահպանվել էին թե՛ կառավարման ավանդական մարմինները, թե՛ մուսուլմանական իրավունքի վրա հիմնված դատական համակարգը, այնուամենայնիվ, դրա հետ մեկտեղ Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավը նշանակալի ազդեցություն թողեց եգիպտական հասարակության հետագա զարգացման վրա: Եգիպտոսում ֆրանսիացիների եռամյա գոյության արդյունքում մամլուքների հասարակական-քաղաքական դիրքերը քայքայվեցին: Հիմնական կառավարման համակարգում նրանք իրենց տեղը զիջեցին իսլամական հոգևոր հեղինակություններին: Ֆրանսիացիների օրոք Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ իշխանության մարմինների հասարակական կազմի ընդարձակում, ինչը ենթադրում էր համապատասխան հասարակական շերտերի առկայություն և ուղղված էր ներքին խռովությունների մեղմացմանը և բացառմանը:

Վերոնշյալ մարտավարական սխալներն իրենց տրամաբանական հետևանքն ունեցան ֆրանսիական ռազմարշավի համար. 1801թ. Ֆրանսիայի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը և 1802թ. կնքված անգլո-ֆրանսիական Ամիենյան հաշտությունը վերջնականապես խափանեցին Բոնապարտի եգիպտական ծրագրերը: Համաձայն վերոնշյալ համաձայնագրերի՝ Եգիպտոսը կրկին անցավ

թուրքական սուլթանի սուվերենության տակ, ինչով վերջ դրվեց նաև Նապոլեոն Բոնապարտի եգիպտական ռազմարշավին:

Ընդհանուր առմամբ Եգիպտոսում ֆրանսիական վարչակարգի քաղաքականությունը ծայրահեղ հակասական էր. փորձելով ներմուծել որոշակի նորամուծություններ երկրի կառավարման կառուցվածքի մեջ՝ այն միաժամանակ կրում էր պահպանողական տարրեր: Ցավոք, Բոնապարտի նախաձեռնած մի շարք բարեփոխումներ միայն մասնակիորեն իրականացվեցին ֆրանսիական իշխանության գերակայության ժամանակահատվածում, սակայն հետագայում դրանք կյանքի կոչվեցին Մուհամմադ Ալիի կողմից իրականացվող Եգիպտոսի կառավարման համակարգի վերակազմավորման ժամանակ: Եգիպտացիների համար, ովքեր համագործակցում էին ֆրանսիացիների հետ և իրականացնում էին մի շարք վարչական առաջադրանքներ, ակնհայտ դարձավ, որ Եգիպտոսը կարող է ազատագրվել մամլուքներից, եթե գտնվի առաջնորդ, ով ընդունակ կլինի միավորելու հակամամլուքյան ուժերը: Նման եզրակացության եկան նաև հակաֆրանսիական ընդդիմության առաջնորդները, ովքեր ներկայացված էին մուսուլմանական հոգևոր վերնախավում: Այդպիսի մարդ շուտով հայտնվեց. Եգիպտոսի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների նախաձեռնողը դարձավ երիտասարդ սպա և հետագայում Եգիպտոսի կառավարիչ, առաջադեմ գաղափարների ջատագով Մուհամմադ Ալին:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1805-1848ԹԹ.)

2.1. Մուհամմադ Ալիի պայքարն իշխանության համար և ներքին իրադրությունը Եգիպտոսում

1801թ. ֆրանսիացիների՝ Եգիպտոսից հեռանալուց հետո երկրում խաղաղություն չհաստատվեց. Եգիպտոսը չդադարեց պատերազմների թատերաբեմ լինելուց, միայն թե այժմ դերակատարները փոխվեցին: Բրիտանացիները, թուրքերը և մամլուքները նոր տառապանքներ պատճառեցին եգիպտացիներին: Արաբ պատմիչ ալ-Ջաբարտիի վկայությամբ բռնազավթիչները «թալանում էին վաճառականների խանութները, արհեստավորներին ստիպում էին 4 անգամ ավել հարկեր վճարել և իրականացնում էին բռնություններ»[144]: Այլ կերպ ասած, երկիրը կողոպտվում էր, բնակչությունը հայտնվել էր թշվառության եզրին, ինչի արդյունքում աճում էր բնակչության դժգոհությունը բռնազավթիչներից: 1801-1803թթ. Եգիպտոսը գտնվում էր օսմանյան (40 հազար), բրիտանական (20 հազար) և մամլուքյան (4 հազար) զորամիավորումների իշխանության տակ, որոնք մնացել էին երկրում ֆրանսիացիների հեռանալուց հետո: Վերջիններս ունեին հետևյալ նպատակները. բրիտանացիների նպատակն էր ֆրանսիացիներին դուրս մղելուց հետո հաստատվել Եգիպտոսում և այն դարձնել իրենց գաղութը: Թուրքերի նպատակն էր օգտվել ֆրանսիացիների պարտությունից, վերականգնել օսմանյան տիրապետությունը Եգիպտոսում և իրենց ձևական իշխանությունը դարձնել իրական: Մամլուքները ձգտում էին վերահաստատել իրենց իշխանությունը և դառնալ Եգիպտոսի անսահմանափակ կառավարողներ, ինչպես նախքան Բոնապարտի ներխուժումն էր: Սակայն նրանց քաղաքականության մեջ կար մի նրբություն. մամլուքները հասկանում էին, որ առանց բրիտանացիների կամ թուրքերի աջակցության չեն կարող իրականացնել իրենց

[144] Ал-Джабарти Абд ар-Р., նշվ. աշխ., էջ 54:

երազանքները: Ուստի նրանք պետք է համագործակցեին կամ բրիտանացիների, կամ էլ թուրքերի հետ[145]:

Օսմանյան հավաքակազմը բաժանված էր 2 խմբավորումների. ալբանացիները՝ Թահիր փաշայի ու նրա տեղակալ Մուհամմադ Ալիի գլխավորությամբ, թուրքերը՝ Յուսուֆ Դայա փաշայի հրամանատարությամբ (Կահիրեի կորպուս) և դելտայում գտնվող զորամասերի ու նավատորմի հրամանատար Հուսեյն փաշայի (Ալեքսանդրիա և Աբուկիր) գլխավորությամբ: Մամլուքները նույնպես առանձնանում էին 2 կլանների միությամբ՝ ալ-Էլֆի բեյի, դուումվիրատի Իբրահիմ բեյի և Օսման բեյ ալ-Բարդիսիի առաջնորդությամբ[146]: 1802թ.՝ բրիտանացիների հեռանալուց հետո, այդ 4 խմբավորումների միջև պայքար է սկսվում իշխանության համար, որը պատմության մեջ նշվում է որպես թուրք-մամլուքյան պատերազմ (1802-1804թթ.): Այդ պայքարի առաջին փուլում թուրքերը չորս հազարանոց մամլուքյան զորքից սպանեցին 1500-ին և գերի վերցրին 2500-ին, որոնք ազատվեցին միայն բրիտանացիների միջամտությամբ[147]:

Այնուհետև մամլուքները, աջակցություն ստանալով բրիտանացիներից, ջախջախիչ պարտության մատնեցին օսմանյան զորքերին Դամանհուրի տակ՝ ոչնչացնելով 5 հազար թուրք (7 հազարից): Դրանից հետո մամլուքները միացան դեռևս Ալեքսանդրիայում գտնվող բրիտանացիներին՝ պատրաստվելով իշխանության համար վճռական պայքարի[148]: Այդ ընթացքում միջազգային իրադրությունը փոխվեց. համաձայն անգլո-ֆրանսիական Ամիենյան հաշտության պայմանագրի (1802թ. մարտի 27)՝ բրիտանացիները պետք է հեռանային Եգիպտոսից: Թեպետ նրանք ամեն կերպ ձգձգում էին տարհանումը, այնուամենայնիվ 1802թ. սկզբին նրանց գլխավոր ուժերը դուրս բերվեցին երկրից, իսկ 1803թ. մարտին բրիտանական զորքի մնացած մասը լքեց Ալեքսանդրիան: Բրիտանացիները Լոնդոն տարան իրենց հակաօսմանյան կոալիցիայի դաշնակից Մուհամմադ ալ-Էլֆիին՝

---

[145] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 147-149:
[146] أحمد حسين، موسوعة تاريخ مصر، الجزء الثالث، القاهرة، ١٩٧٣، ص. ٩٠٩-٩١٠.
[147] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 150:
[148] يانج جورج، تاريخ مصر من عهد المماليك إلى نهاية حكم إسماعيل، تعريب: علي أحمد شكري، القاهرة، ١٩٩٦، ص. ٥٨.

հարմար պահի նրան եգիպտական ասպարեզ բաց թողնելու համար[149]: Մինչև նրա վերադարձը (1804թ.) մամլուքյան կլանի ամենից ուժեղ ղեկավար Օսման բեյ ալ-Բարդիսին, ով որոշ ժամանակ գտնվում էր Վերին Եգիպտոսում, վերադառնալով Կահիրե, ակտիվ մասնակցություն ունեցավ քաղաքական պայքարում և դաշինք կնքեց Եգիպտոսում գտնվող ալբանական զորախմբի հետ: Ալբանացիները ծառայում էին օսմանյան զինուժերում XVII դարի 2-րդ կեսից որպես վարձու զինվորներ՝ ձևավորելով ինքնուրույն ջոկատներ, որոնք անհրաժեշտության դեպքում հնազանդեցնում էին անհնազանդ ենիչերիներին և ապստամբող օսմանյան այլ զորամասերի[150]:

Անգլո-ֆրանսիական Ամիենյան հաշտության պայմանագրով Եգիպտոսը վերադառնում էր թուրքական սուլթանի գերագույն իշխանության տակ, սակայն Օսմանյան կայսրությունը ուժ չուներ երկրում հաստատելու անմիջական թուրքական կառավարում: Վախենալով, որ իշխանության գլուխ կգա ուժեղ առաջնորդ, Բարձր դուռը, որպես կանոն, նշանակում էր թույլ կարողություններով և ոչ հեղինակավոր անհատների: Հենց այդպիսին էին վերջին 3 փաշաները մինչև Մուհամմադ Ալիի իշխանության գալը[151]:

Դրանցից առաջինը Հուսրև փաշան էր: Նա սուլթանի կողմից չնախատեսված հարկեր մտցրեց, հատկապես պահանջեց վճարել անշարժ գույքի եռամյա վարձը, ինչպես նաև 5 ամիս զինվորներին չվարձատրեց, այդ թվում և ալբանացիներին: Զինվորների մի մասը, առաջնորդվելով ալբանացիների առաջնորդի տեղակալ Մուհամմադ Ալիի կողմից, որպես բողոքի նշան անցան Կահիրեի փողոցներով՝ պահանջելով վճարել պարտքերը[152]: Այդ ժամանակ նահանգապետը հայտարարեց, որ ալբանացիների ներկայությունը Եգիպտոսում ավելորդ է, և առաջարկեց նրանց վերադառնալ հայրենիք, հակառակ դեպքում՝ սպառնաց ոչնչացնել նրանց[153]: Ի պատասխան՝ ալբանացիներն ապստամբեցին, իսկ Հուսրև փաշան, ձգտելով ահաբեկել ապստամբներին, միջնաբերդից հրանոթային կրակ բացեց վերջինների վրա: Ի պատասխան՝ ալբանացիների հրամանատար Թահիր

---

[149] Луцкий В., Новая история арабских стран, М., 1965, с. 43.
[150] Marsot A. L. al-S., Egypt in the reign of Muhammad Ali, Cambridge, 1984, p. 32.
[151] يانج جورج, նշվ. աշխ., էջ 62:
[152] عبد الرحمن الرافعي، تاريخ الحركة القومية و تطور نظام الحكم في مصر، الجزء الثانى، القاهرة، ١٩٥٨، ص. ٣٠٧-٣٠٩.
[153] عبد الرحمن الجبرتي، عجائب الآثار في التراجم و الأخبار، الجزء ثالث، القاهرة، ١٩٦٤، ص. ٢٤٠.

փաշան գրավեց միջնաբերդը և զենքն ուղղեց նահանգապետի տան վրա: Հուսրև փաշան ահաբեկված ընտանիքով փախավ Կահիրեից՝ ուղղվելով դեպի Դամմիեթ[154]:

Այս դեպքերից հետո՝ 1803թ. մայիսի 6-ին, ալբանացիների առաջնորդ Թահիր փաշան դիվանի նիստում ընտրվեց կայմակամ և ժամանակավորապես ստանձնեց նահանգապետի պարտականությունները մինչ Կոստանդնուպոլսից կստանային ֆիրմանը (սուլթանի հրաման), որը հաստատում էր նրան այդ պաշտոնում: Սակայն 1803թ. մայիսի 26-ին Թահիր փաշան զոհվեց 2 ենիչերիների հետընդհարման արդյունքում[155]: Մինչև զոհվելը նա հասցրել էր համաձայնության գալ մամլուքների միության (դուումվիրաթ) հետ՝ Իբրահիմ բեյի և Օսման բեյ ալ-Բարդիսիի գլխավորությամբ մամլուքների և ալբանացիների կոալիցիա ստեղծելու և օսմանների դեմ համատեղ պայքարի համար: Մամլուքյան այդ միության կազմում կային 1200 մամլուք և մամլուքներին աջակցող մոտ 5000 բեդվիններ[156]:

Այս միության իսկական նախաձեռնողը Թահիր փաշայի տեղակալ Մուհամմադ Ալին էր: Մուհամմադ Ալին, ով հսկայական դեր է խաղացել Եգիպտոսի պատմության մեջ, ծնվել է 1769թ. Հունաստանի Կավալա քաղաքում ալբանական ընտանիքում: Վաղ հասակում կորցնելով ծնողներին՝ Մուհամմադ Ալին փոքր հասակից կատարում էր զանազան աշխատանքներ, զբաղվում ծխախոտի առևտրով և այլն: Սուլթան Սելիմ III-ը, պատրաստվելով պատերազմել Եգիպտոս ներխուժած ֆրանսիացիների դեմ, 1799թ. հրաման արձակեց կայսրության տարբեր վայրերից նոր զորաջոկատներ կազմակերպել և դրանք Եգիպտոս ուղարկել: Այդ հրամանը տարածվեց նաև մակեդոնական Կավալա քաղաքի վրա: Սահմանված էր, որ այստեղ պետք է կազմավորվեր 300 հոգուց բաղկացած ալբանական մի զորախումբ: Մուհամմադ Ալին մտավ այդ զորախմբի մեջ՝ միանգամից նշանակվելով հրամանատարի օգնական: Զորախմբի կազմում նա մեկնեց Եգիպտոս և մասնակցեց ֆրանսիացիների դեմ մղված մարտերին: Նա այդ մարտերի ընթացքում իրեն հիանալի դրսևորեց,

[154] Dodwell H., The Founder of Modern Egypt: A Study of Muhammad Ali, Cambridge, 1931, p. 14.
[155] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 912:
[156] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 38:

ցուցաբերեց խիզախություն և մեծ բանիմացություն ռազմական գործերում: Ծուտով նա նշանակվեց թուրքական բանակում գործող ալբանական բոլոր զորքերի հրամանատար: Այսպես սկսվեց նրա ռազմական, ապա նաև քաղաքական գործունեության վերելքը: Երբ օսմանյան կառավարությունը Կահիրե ուղարկեց նոր նահանգապետին սպանված Թահիր փաշայի փոխարեն, ալբանացիների և մամլուքների միավորված ուժերը շրջապատեցին Կահիրեն և պահանջեցին, որ Կոստանդնուպոլսից նշանակված նահանգապետը 24 ժամվա ընթացքում հեռանա մայրաքաղաքից: Այնուհետև ալբանա-մամլուքյան զորամասերը մտան քաղաք և Իբրահիմ բեյի ու Մուհամմադ Ալիի անունից ժողովրդին կոչ արեցին պահպանել հանգստություն և վերադառնալ իրենց առօրյա գործերին[157]: Այս իրադարձությունների ժամանակ Մուհամմադ Ալիի վճռորոշ պահվածքը հնարավորություն տվեց նրան գրավելու ալբանական ուժերի առաջնորդի տեղը[158]: Դրանից հետո մամլուքների և ալբանացիների միացյալ ջոկատներն ուղղվեցին դեպի Դամմիեթ քաղաք, որտեղ գտնվում էր Հուսրև փաշան: Հուսրև փաշան բռնվեց, բերվեց Կահիրե և սպանվեց, իսկ Դամմիեթը ավերվեց[159]: Այնուհետև Կոստանդնուպոլսից ֆիրման եկավ, որի համաձայն՝ Հուսրև փաշային վալիի պաշտոնում պետք է փոխարիներ Ջազահիրլի Ալի փաշան, ով չհաջողեց զբաղեցնել նահանգապետի պաշտոնը, քանի որ 1804թ. սպանվեց ալ-Բարդիսիի կողմից[160]:

Կահիրեի կառավարիչ մնաց ալ-Բարդիսին: Այդ ընթացքում երկրում սկսվեց պարենային ճգնաժամ, որը սպառնում էր սովով և իրադրության անկայունությամբ: Ալ-Բարդիսին, գործելով Մուհամմադ Ալիի խորհրդով, կարգադրեց հացահատիկ բաժանել քաղցած բնակչությանը, որոնք պահվում էին մամլուքներին պատկանող անհատական պահեստներում: Այդ գործողության կատարումը նա հանձնարարեց Մուհամմադ Ալիին, ով, իրականացնելով այդ բարդ առաջադրանքը, հերոսացավ մայրաքաղաքի բնակչության աչքում: Դրանից հետո Մուհամմադ Ալին համոզեց ալ-

[157] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1958, էջ 312:
[158] Holt P., Egypt and the Fertile Crescent 1516-1922, A Political History, London, 1966, p. 176.
[159] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 914:
[160] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 38-40:

Բարդիսիին վճարել զորքերի ուշացված աշխատավարձը: Պարզվեց, որ վճարումները կարող էին իրականացվել միայն ժողովրդից հավաքվող հարկերի հաշվին, ինչը հղի էր ալ-Բարդիսիի դեմ ապստամբության վտանգով, ում հեռացումն իշխանությունից Մուհամմադ Ալիին դարձնում էր Կահիրեի կառավարիչ: 1804թ. փետրվարի 27-ին բռնկվեց հերթական զինվորական խռովությունը, որը պայմանավորված էր աշխատավարձի ուշացումով. ապստամբությանն աջակցեց նաև քաղաքային բնակչությունը: Արտակարգ հարկերը, որոնցով նախատեսված էր վճարել զինվորների աշխատավարձը, հետաձգվեցին: Անկարգությունների ժամանակ Մուհամմադ Ալին մի շարք քայլեր ձեռնարկեց, որոնք նրան փառք և համբավ բերեցին: Զինվորների կողմից ժողովրդի նկատմամբ բռնի գործողությունները կանխելու նպատակով նա քաղաքի տարբեր շրջաններ ուղարկեց ալբանացիների ջոկատներ, որոնք պետք է կանխեին թալանի ցանկացած դեպք և ձերբակալեին մեղավորներին: Այդ ժամանակ սկսեց ձևավորվել ուժերի մի խումբ, որն ավելի ուշ Մուհամմադ Ալիին բերեց իշխանության. այդ խմբի մեջ ներառված էին բանակը (ալբանացիները և մասամբ մամլուքյան և օսմանյան զորամասերը), առևտրականները և մուսուլման հոգևորականները[161]:

1804թ. փետրվարյան ապստամբությունից հետո ալ-Բարդիսին հրավիրեց մուսուլմանական հոգևոր վերնախավի ժողով, որ կշտամբի նրանց՝ ապստամբներին ներողամիտ վերաբերմունք ցուցաբերելու համար: Ժողովի ժամանակ, երբ ալ-Բարդիսին ներկաների դժգոհությունն առաջացրեց, Մուհամմադ Ալին, ճիշտ պահը որսալով, անսպասելի հայտարարեց, որ համաձայն չէ նրա հետ, որ զինվորների աշխատավարձը վճարելու համար լրացուցիչ հարկերի անհրաժեշտություն չկա: Նա հայտարարեց, որ զորքերին անհրաժեշտ է վճարել ալ-Բարդիսիի անձնական գանձարանից: Այս դեպքերից որոշ ժամանակ անց Կահիրեի փողոցներում տեղի ունեցան բախումներ ալբանացիների և մամլուքների միջև, ընդ որում տեղի բնակչությունն ուրախանում էր մամլուքների պարտությամբ, ովքեր քանակապես զիջում էին ալբանացիներին: Միաժամանակ Մուհամմադ Ալին կապեր հաստատեց խոշոր

[161] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1958, էջ 322-326:

ընտանիքների ղեկավարների՝ ալ-Մահրուկի և ալ-Մուվայլիհի, ինչպես նաև հոգևոր վերնախավի առաջնորդների հետ[162]:

Իրավիճակի բարդությունն այն էր, որ մամլուքները, չկարողանալով Կահիրեում դիմադրել Մուհամմադ Ալիին, կարող էին իրենց դաշնակից բեդվինական ցեղերի միջոցով հսկել մայրաքաղաքի հացահատիկի մատակարարումը, որը բերվում էր Վերին Եգիպտոսից, և դրանով սաստկացնել մայրաքաղաքի չքավոր խավի դժգոհությունը: Այդ պատճառով Մուհամմադ Ալիի և մամլուք ալ-Բարդիսիի քաղաքական պայքարը պետք է անհապաղ հանգուցալուծում ստանար:

Քաղաքական կյանքի նոր գործոնը, որն ավելի էր բարդացնում իրավիճակը, 1804թ. մայիսին Կոստանդնուպոլսի կողմից նշանակված նոր նահանգապետի՝ ծագումով վրացի Խուրշիդ փաշայի ժամանումն էր, ով իր հետ Եգիպտոս բերեց 5 հազար սիրիացի, որոնց մեջ մտնում էին նաև քրդեր, դրուզներ և ալ-ավիներ[163]: Այդ կորպուսի գլուխ կանգնած էր այն ենիչերիների եղբայրներից մեկը, ով սպանել էր Թահիր փաշային: Վրիժառու ալբանացիները սպանեցին նրան, ինչի հետևանքով սիրիացիները ներխուժեցին Հին Կահիրեի (մայրաքաղաքի կենտրոնական մասերը) փողոցները, որտեղ նրանք սկսեցին զբաղվել թալանով, սպանությամբ և մարդկանց առևանգմամբ: Իրավիճակի սրությունը բացատրվում էր նրանով, որ սիրիացիների մեծամասնությունը շիաներ էին: Ահաբեկված սուննի բնակչությունը դիմեց հոգևորականությանը, ովքեր իրենց հերթին պահանջեցին նահանգապետից կանգնեցնել սիրիացիներին, որոնք չէին կատարում նահանգապետի ցուցումները: Այդ ժամանակ հոգևորականները ծայրահեղ քայլի դիմեցին, որը Կահիրեն մոտեցրեց քաղաքացիական պատերազմի. նրանք հրամայեցին փակել ալ-Ազհարի դարպասները, ինչը նշանակում էր, որ բնակչությունը պետք է թողնի իր առօրյա զբաղմունքը և անցնի ինքնապաշտպանության: Նահանգապետ Խուրշիդ փաշան փորձեց բանակցել հոգևորականության հետ, սակայն ժողովուրդը նրան քարկոծեց, և վերջինը թաքնվեց միջնաբերդում: Այդ

[162] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1951, էջ 156-158:
[163] جورج يانج, նշվ., աշխ., էջ 63-64:

պայմաններում Կահիրեում ստացան օսմանյան սուլթանի ֆիրմանը, որի համաձայն՝ Մուհամմադ Ալին նշանակվում էր արաբական Ջիդդայի նահանգապետ (վալի), որով էլ նա ստանում էր փաշայի տիտղոս[164]: Այդ նշանակումով օսմանները փորձում էին Եգիպտոսից հեռացնել Մուհամմադ Ալիին ու նրա ենթակայության տակ գտնվող ալբանացիներին և ուղարկել նրանց Արաբիա, որտեղ ենթադրվում էր հյուծել վերջինների ուժերը վահաբիների դեմ պատերազմում[165]:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Մուհամմադ Ալին հմտորեն օգտագործեց Կոստանդնուպոլսի այդ քայլը: Այսպես, փաշայի տիտղոս ստանալու պաշտոնական արարողության ժամանակ սպաները և զինվորները պահանջեցին վճարել իրենց աշխատավարձը, իսկ Մուհամմադ Ալին պատասխանեց, որ դա պետք է անի իրենց նահանգապետը[166]: Զինվորականներն անմիջապես փողը պահանջեցին վալի Խուրշիդ փաշայից, իսկ նա իր հերթին դա պահանջեց Կահիրեի առևտրականների գիլդիայից, որը ղեկավարում էին Մուհամմադ Ալիի ընկերները՝ խոշոր առևտրականներ ալ-Մահրուկին և ալ-Գաուհարին: Նրանց ջանքերի շնորհիվ Կահիրեում լուրեր տարածվեցին, որ վալին նախատեսում է վերականգնել ֆրանսիական թալանող հարկահավաքության համակարգը, որն էլ մուսուլման դատավորների կողմից որակվել էր որպես հակահիսլամական[167]:

Ֆիրմանի համաձայն, որով Մուհամմադ Ալին նշանակվում էր Ջիդդայի նահանգապետ, նա ձևականորեն դուրս մնաց Կահիրեում ծավալվող քաղաքական պայքարից: Նոր նշանակումը նրան ազատում էր տեղի ունեցող իրադարձությունների պատասխանատվությունից, որոնցում նաև ներ անմիջական մասնակցություն և, ավելին, դրանց նախաձեռնողն էր: Այս վճռորոշ պայմաններում առաջին պլան դուրս եկան կրոնական գործիչները, ովքեր վալիից պահանջեցին քաղաքից հեռացնել սիրիական զորքը, կասեցնել բոլոր նոր հարկերը, վերականգնել կապը Վերին Եգիպտոսի հետ,

[164] Dodwell H., նշվ. աշխ., էջ 15-18:
[165] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 916:
[166] يانج جورج, նշվ. աշխ., էջ 64:
[167] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 47:

համաձայնության գալ մամլուքների հետ, առանց որի քաղաքի բնակչությանը սպառնում էր սով[168]:

Այս պահանջները նահանգապետը չէր ուզում կատարել և իրականում չէր էլ կարող: Խուրշիդ փաշան պատրաստվում էր հաշվեհարդար տեսնել այն հոգևորականների հետ, ովքեր վերջնագիր էին ներկայացրել իրեն: Իրենց կյանքը փրկելու համար հոգևորականներն օգնության դիմեցին Մուհամմադ Ալիին՝ խնդրելով Խուրշիդ փաշայի փոխարեն դառնալ Եգիպտոսի նահանգապետ: Նրանց ընտրությունը կանգ առավ Մուհամմադ Ալիի վրա, քանի որ նա ուներ փաշայի աստիճան և նահանգապետի պաշտոն, ճկուն քաղաքական գործիչ էր և, վերջապես, օժտված էր իր բոլոր հակառակորդներին գերազանցող ռազմական ուժով: Մուհամմադ Ալիի ընտրությունը մեծապես պայմանավորված էր Օմար Մակրամի դիրքորոշումով, ով աջակցում էր ալբանացիների առաջնորդին: Հատկանշական է, որ Մակրամը համարվում էր մամլուքների առաջնորդներից ալ-Էլֆի բեյի ընկերը, սակայն դրա հետ մեկտեղ գաղտնի բանակցություններ էր վարում Մուհամմադ Ալիի հետ, ով համարվում էր մամլուքների գլխավոր մրցակիցը[169]:

Մակրամի աջակցությունը վճռական նշանակություն ունեցավ հոգևորականների կողմից Մուհամմադ Ալիի ընտրության հարցում: Մուհամմադ Ալին ընդունեց հոգևորականների առաջարկը և անձամբ ալ-Ազհար համալսարանի ռեկտոր աշ-Շարկավին՝ ալբանացիների առաջնորդին, ում վալիի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ ծիսական խալաթ հագցրեց: Վերևում ներկայացված իրադարձությունների արդյունքում իշխանության եկավ մի անհատ, ով հավասարապես հեռացած էր և՛ մամլուքներից, և՛ օսմաններից, ինչը վկայում էր քաղաքական ուժերի վերադասավորության աստիճանական փոփոխության մասին: Զգուշանալով, որ Խուրշիդ փաշան պատասխան գործողություններ կձեռնարկի՝ բնակչությունը սկսեց զինվել: Խուրշիդ փաշան հրաժարվեց ենթարկվել հոգևոր վերնախավի որոշմանը՝ հայտարարելով, որ ինքը նշանակվել է սուլթանի կողմից, և միայն սուլթանը կարող է հեռացնել իրեն: Զինվորների մեծ մասը լքեց Խուրշիդ փաշային, ով ոչ մեծ ուժերով

[168] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 916:
[169] عبد الرحمن الجبرتي، عجائب الآثار في التراجم و الأخبار، الجزء الرابع، القاهرة، ١٩٦٥، ص. ٣٤.

Միջնաբերդում հայտնվեց շրջափակման մեջ Կահիրեի բնակչության կողմից: Միջնաբերդի շուրջը՝ Կահիրեի փողոցներում, ռազմական գործողություններ ծավալվեցին բնակչության և զինվորների միջև[170]:

1805թ. հունիսի 29-ին լուր եկավ այն մասին, որ Կոստանդնուպոլսից Ալեքսանդրիա է ժամանել սուրհանդակը սուլթան Սելիմ III-ի ֆիրմանով, որով Մուհամմադ Ալին նշանակվում էր Եգիպտոսի նոր նահանգապետ: Տասը օր անց սուրհանդակի շքախմբին Կահիրեի բնակչությունը դիմավորեց ցնծությամբ: Շքախումբն ուղղվեց դեպի Մուհամմադ Ալիի տուն, որտեղ հայտարարվեց սուլթանի ֆիրմանը Խուրշիդ փաշայի հեռացման և նրա փոխարեն Մուհամմադ Ալիի նշանակման մասին[171]:

Այսպիսով, Հունաստանի Կավալա քաղաքում՝ ալբանական ընտանիքում, ծնված Մուհամմադ Ալին, ով 1799թ. 30 տարեկան հասակում դուրս էր եկել իր հայրենի քաղաքից և կյանքում առաջին անգամ ոտք էր դրել Եգիպտոս, ընդամենը 6 տարի անց դարձավ Եգիպտոսի տիրակալը: Դառնալով Եգիպտոսի տիրակալը՝ Մուհամմադ Ալին կառավարեց Եգիպտոսը մոտ 40 տարի, որը Եգիպտոսի բազմադարյան պատմության փառավոր ժամանակաշրջաններից մեկն էր, և որը պատմության մեջ մտել է որպես «Մուհամմադ Ալիի դարաշրջան»[172]:

Այդ ընթացքում քաղաքում շարունակվում էին զինված ընդհարումները զինվորների և բնակչության միջև, իսկ Խուրշիդ փաշան հայտարարեց, որ կլքի իր պաշտոնը սուլթանի ֆիրմանը տեսնելուց հետո: Նրա հրամանով պարբերաբար Միջնաբերդից Կահիրեն գնդակոծվում էր: Իրադրությունը սրվեց, երբ Կահիրեի ծայրամասերում հայտնվեցին մամլուքները, ովքեր համոզում էին բնակչությանը միանալ իրենց: Այս քաղաքական բարդ իրավիճակում նորից ներգրավվեցին մուսուլման հոգևորականները, ովքեր այս իրավիճակից 2 ելք էին տեսնում.առաջինը՝ ղեկավարել ժողովրդի քաղաքական պայքարը (վերցնել իշխանությունն իրենց ձեռքը) և երկրորդը՝ հասնել հակազդեցության դադարեցմանը

[170] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 48:
[171] عبد الرحمن الجبرتي, նշվ. աշխ., 1964, էջ 336:
[172] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 158:

(իշխանությունը հանձնել Մուհամմադ Ալիին): Հոգևորականները, ընտրելով երկրորդ ուղին, ժողով հրավիրեցին, որտեղ որոշում կայացրին դադարեցնել ցանկացած քաղաքական գործունեություն և ժողովրդին կոչ անել վերադառնալ իրենց առօրյա գործերին: Նրանք որոշեցին բացել ալ-Ազհարի դռները և վերականգնել պարապմունքները: Ժողովրդի ուղեկցությամբ նրանք շարժվեցին դեպի Մուհամմադ Ալիի նստավայրը, որտեղ հայտարարեցին, որ նա, պաշտոնապես նշանակված լինելով նահանգապետ, պետք է իրականացնի երկրի ղեկավարի պարտականությունները[173]:

Մուհամմադ Ալին չէր սերում մամլուքներից, ինչը թույլ էր տալիս նրան մերթ մոտենալ, համարյա ձուլվել նրանց հետ, մերթ հեռանալ նրանցից՝ պաշտոններ և տիտղոսներ ընդունելով օսմանյան սուլթանից: Նույնքան գործնական էին նրա հարաբերությունները հոգևորականության հետ: Մուհամմադ Ալին, ըստ երևույթին, ենթադրում էր, որ նրանք՝ որպես քաղաքական մրցակիցներ, վտանգ չեն ներկայացնում, սակայն կարևոր քաղաքական դաշնակիցներ են: Նա օգտագործում էր վերջիններին՝ որպես ավանդույթների պաշտպաններ, գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերի երաշխավորներ, և չէր սխալվում իր վարած քաղաքականության մեջ: Մուհամմադ Ալիի հաջողության կարևոր գրավականներից էր նաև կահիրեցիների հավատը նրա նկատմամբ, որ վերջինս կհասնի հասարակության կայունացմանը և կվերականգնի այն վիճակը, որը տիրում էր Եգիպտոսում ֆրանսիացիների ներխուժման նախօրյակին, այսինքն՝ կստեղծի միանձնյա իշխանական համակարգ, որը կսահմանափակվի ավանդույթներով և կրոնական օրենքով[174]:

Մուհամմադ Ալիի իշխանության համար վտանգ էին ներկայացնում մամլուքները, ովքեր տեղակայվել էին Կահիրեի ծայրամասում: Նրանք գաղտնի պայմանավորվել էին Խուրշիդ փաշայի հետ համագործակցության համար և 1805թ. հուլիսի 8-ին գրոհեցին քաղաքի վրա: Սակայն մամլուքների նամակը, որը ներառում էր ռազմական գործողության նախագիծը, ընկավ

[173] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 918:
[174] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 44:

Մուհամմադ Ալիի ձեռքը: Նրա ենթակայության տակ գտնվող ալբանացիները ծուղակ պատրաստեցին և հետմղեցին մամլուքների հարձակումը, որից հետո միայն Խուրշիդ փաշան համաձայնվեց լքել Եգիպտոսը: 1805թ. օգոստոսի 3-ին նախկին վալին հեռացավ Կահիրեից՝ իր լիազորությունները տալով Մուհամմադ Ալիին, ով հսկողություն սահմանեց ողջ Կահիրեի վրա[175]:

Մամլուքները որոշեցին, որ նախկին վալիի հեռացումը և անկայունությունը մարզերում թույլ կտան իրենց վերադարձնել իշխանությունը երկրի վրա: 1805թ. օգոստոսի 18-ին 6 բեյեր և 400 մամլուքներ հյուսիսից ներխուժեցին Կահիրե և, բաժանվելով 2 խմբի, սկսեցին շարժվել դեպի երկրի կենտրոն: Մի խումբը հանդիպման գնաց Օմար Մակրամի և շեյխալ-Ծարկավիի հետ: Երկու շեյխերը հրաժարվեցին օգնել նրանց և պահանջեցին անմիջապես լքել քաղաքը, ինչը և մամլուքներն արեցին: Մամլուքների երկրորդ խումբը շրջափակման մեջ ընկավ Կահիրեի Բաբ ազ-Զուվեյլա դարպասներից ոչ հեռու, որտեղ գնդակոծվեց մաղրիբյան ինքնապաշտպանական զորքերի կողմից, ինչից հետո ավելի քան 50 հոգի ձերբակալվեցին և սպանվեցին[176]: Հայտնի մամլուք բեյերի մահը մամլուքյան կազմակերպությանը զրկեց հանրաճանաչ առաջնորդներից, իսկ երիտասարդ բեյերը չունեին անհրաժեշտ հեղինակություն՝ Մուհամմադ Ալիի դեմ պայքարելու համար, սակայն նրանք բավականաչափ ուժեր ունեին, որ հենվելով դաշնակից քոչվոր ցեղերի և հույներից, արաբներից ու թուրքերից կազմված վարձկան զինվորների վրա՝ հսկողություն սահմանեին Վերին Եգիպտոսի վրա, որը հացահատիկի շտեմարան էր[177]:

Գլխավոր խնդիրները, որոնց լուծումից էր կախված՝ կմնա՞ արդյոք Մուհամմադ Ալին որպես երկրի ղեկավար, հետևյալներն էին.

1. կկարողանա՞ արդյոք նապահպանել օսմանների դիրքը,
2. արդյոք նրա ուժերը կբավարարե՞ն՝ դիմակայելու մամլուքյան ընդդիմության գործողություններին,

[175] جلال يحيى، مصر الحديثة ١٨٠٥-١٨٤٠، القاهرة، ١٩٨٣، ص. ٩٢-٩٣.
[176] عبد الرحمن الرافعي، عصر محمد علي، القاهرة، ١٩٥١، ص. ٣٠-٣١.
[177] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 53-54:

3. կկարողանա՞ արդյոք դրամական միջոցներ հայթայթել, որ բավականին մեծ բանակ պահի՝ մամլուքների և օսմանների դեմ կռվելու համար:

Այս 3 խնդիրներն ուղեկցում էին Մուհամմադ Ալիին կառավարման առաջին 5 տարիների ընթացքում, սակայն դրամական միջոցների պակասը զորքերին աշխատավարձ վճարելու համար դարձավ առաջին կարևոր խնդիրը նրա իշխանության գալուց հետո: Նա սկսեց փոխառություններ վերցնել առևտրականներից, ղպտիներից և այլ քրիստոնյաներից, բռնագրավել ուխտագնացների միջոցները և, վերջապես, դիմեց հոգևորականներին՝ խնդրելով օգնել գումար ստանալ բնակչությունից լրացուցիչ հարկահավաքության ճանապարհով՝ խոստանալով, որ ինքը դա կանի առաջին և վերջին անգամ[178]: Ծուտով նոր նյութական խնդիրներ առաջացան Մուհամմադ Ալիի համար՝ ալ-Էլֆի բեյի պահանջների հետ կապված, ով պահանջում էր փոխանցել իրեն Ֆայում, Բանի Սուեյֆ, Գիզա և Բուհեյրա մարզերի կառավարումը, ինչպես նաև 200 գյուղերի իլթիզամները: Միայն այդ պահանջների կատարման դեպքում էր նա համաձայնվում ընդունել նոր նահանգապետի իշխանությունը: Մուհամմադ Ալին նրան հողեր առաջարկեց Գիրգիից հարավ և Գիզայի մարզը, ինչն ալ-Էլֆիին չգոհացրեց, և նա պաշարեց Դամանհուրը, ինչը չպսակվեց հաջողությամբ, քանի որ Օմար Մակրամը հասցրեց քաղաքն ապահովել զենքով և պարենով[179]:

Այս իրադարձությունների թեժ պահին լուր եկավ Եգիպտոս օսմանյան նավատորմ մտնելու մասին, որը գլխավորում էր Քյուչուկ Հուսայն փաշան: Նրա հետ Եգիպտոս եկան նիզամ ալ-ջադիդի[180] զորքերը, ինչպես նաև Մուսա փաշան՝ որպես Եգիպտոսի նոր նահանգապետ, այն դեպքում, երբ սուլթանի հրամանագրով Մուհամմադ Ալին պետք է զբաղեցներ հունական Սալոնիկի նահանգապետի պաշտոնը[181]: Մուհամմադ Ալիին Եգիպտոսի նահանգապետ նշանակելու Բարձր դռան որոշման չեղարկումը և նրա

[178] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 108:
[179] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 920-921:
[180] Նիզամ ալ-ջադիդ էին կոչվում Օսմանյան կայսրության նոր բանակային զորամիավորումները, որոնք ստեղծվել էին եվրոպական օրինակով և նպատակ էին հետապնդում փոխարինել ենիչերիներին:
[181] جورج جنى, նշվ. աշխ., էջ 67:

տեղափոխումն այլ վիլայեթ կարելի է բացատրել բրիտանացիների բանսարկությամբ սուլթանական պալատում և ալ-Էլֆի բեյին՝ որպես Եգիպտոսի վալի նշանակելու նրանց աջակցությամբ[182]: Մուհամմադ Ալիի դիրքը՝ որպես Եգիպտոսի քաղաքական առաջնորդ, հայտնվեց վտանգի տակ, ինչը նա չէր կարող հաղթահարել սեփական ուժերով: Մուհամմադ Ալիին կրկին օգնության եկան հոգևորականները՝ Օմար Մակրամի գլխավորությամբ, ովքեր Մուհամմադ Ալիի հետ 2 օր շարունակ քննարկում էին կաբուդան[183] փաշայի ուղերձը: Մամլուքներին, ում օսմանցիները ծրագրել էին փոխանցել իշխանությունը, տրվեց գնահատական, ըստ որի՝ նրանք կաշառակեր, անվստահելի ու ինքնակամ էին, ովքեր հակված են ապստամբությունների: Իրեն վալիի պաշտոնում թողնելու դեպքում Մուհամմադ Ալին խոստանում էր գանձարանին վճարել նույնքան գումար, որքան ալ-Էլֆի բեյը՝ ավելացնելով, որ հավատարիմ կմնա Կոստանդնուպոլսին և կձախողի մամլուքների անջատականությունը[184]: Արդյունքում կաբուդան փաշան փոխեց իր մտադրությունները և որոշեց աջակցել Մուհամմադ Ալիին: Օգտագործելով Կոստանդնուպոլսի իր կապերը և կաբուդան փաշայի աջակցությունը՝ Մուհամմադ Ալին հասավ Եգիպտոսի վալիի սեփական պարտականությունների վերականգնմանը, սակայն ստիպված էր համաձայնվել Կոստանդնուպոլսի հետ համաձայնեցված գումարի վճարման հետ, ինչպես նաև Կոստանդնուպոլիս ուղարկեց իր ավագ որդի Իբրահիմին՝ որպես իր ստանձնած պարտականությունների իրականացման պատանդ և երաշխիք[185]:

Այսպիսով, օսմաններն ընդունեցին Մուհամմադ Ալիի քաղաքական գերիշխանությունը Եգիպտոսում, ում գլխավոր հակառակորդներն իշխանության պահպանման համար մնում էին մամլուքները և բրիտանացիները, ովքեր միմյանց հետ կնքել էին ռազմավարական դաշինք: Վերին Եգիպտոսում ամրապնդված մամլուքներին Մուհամմադ Ալին կարողացավ իր իշխանությանը ենթարկել միայն ուժի միջոցով: Սակայն մամլուքյան մյուս

---

[182] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1951, էջ 37:
[183] Կաբուդան փաշան կամ կապտան-ի դերյան Օսմանյան կայսրության նավատորմի հրամանատարի կոչումն է:
[184] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 57:
[185] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1951, էջ 40-41:

խմբավորումը՝ Մուհամմադ ալ-Էլֆիի գլխավորությամբ, պատրաստվում էր պայքարել Մուհամմադ Ալիի դեմ Ստորին Եգիպտոսում: 1804թ. վերադառնալով Մեծ Բրիտանիայից, որտեղ բրիտանացիները խոստացել էին նրան ցույց տալ ռազմական և ֆինանսական աջակցություն՝ Մուհամմադ Ալիի դեմ պայքարելու համար, ալ-Էլֆին սկսեց պատրաստվել Կահիրեի վրա հարձակվելուն[186]: Ռազմական հաջողությունն ուղեկցում էր ալ-Էլֆիին, սակայն նա 1807թ. հունվարի 28-ին Կահիրեի մատույցներում հանկարծամահ եղավ[187]: Առաջնորդի մահը անկասկած թուլացրեց մամլուքների դիրքերը, ինչպես նաև նրանք կորցրին հզոր բեդվինական ցեղերի և երկրի մուսուլմանական հոգևոր վերնախավի մի մասի աջակցությունը: Կորցնելով հոգևորականության աջակցությունը՝ մամլուքները կորցրին իշխանությունը վերադարձնելու օրինական հնարավորությունը և ստիպված էին հյուծիչ և անհաջտ պայքար մղել Մուհամմադ Ալիի միապետության դեմ: Այս պայքարը սկսվեց այն բանից հետո, երբ 1805թ. Մուհամմադ Ալին նշանակվեց որպես փոխանորդ, և շարունակվեց մինչև 1811թ. դեպքերը, երբ Ալին գնդակահարեց մամլուքյան հայտնի առաջնորդներին[188]:

Անհաջողությամբ ավարտվեց նաև Մուհամմադ Ալիին տապալելու բրիտանացիների փորձը, ովքեր 1807թ. մարտի 17-ին գեներալ Ֆրեյզերի հրամանատարությամբ Եգիպտոս իջեցրին 5-հազարանոց դեսանտ և ամրացան Ալեքսանդրիայում[189]: Նրանք ենթադրում էին, որ արագ ու հեշտ հաղթանակներ կտանեն և Եգիպտոսը կդարձնեն իրենց ենթակա երկիր: Սակայն նրանք հաշվի չէին առել, որ տվյալ պահին Եգիպտոսն ուներ Մուհամմադ Ալիի պես խոհեմ ու խելացի ղեկավար՝ ընդունակ համարձակ գործողությունների: Մուհամմադ Ալին չվախեցավ բրիտանական զորքերից և անմիջապես մարտի մեջ մտավ նրանց դեմ: Եգիպտական և բրիտանական զորքերի առաջին մարտը տեղի ունեցավ մարտ ամսվա վերջերին Ռոզետտա քաղաքում: Մուհամմադ Ալիին հաջողվեց

---

[186] Holt P., նշվ. աշխ., 1966, էջ 162:
[187] Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., История национально-освободительной борьбы народов Африки в новое время, М., 1976, с. 172-173.
[188] Crabites P., Ibrahim of Egypt, London, 1935, p. 7-9.
[189] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 921-926:

ջախջախել բրիտանական զորախումբը և նրանց դուրս շպրտել քաղաքից: Մարտի նման ելքն անսպասելի էր բրիտանացիների համար, և նրանք, կրկնապատկելով իրենց ուժերը, նորից անցան հարձակման: Ռոզետտայի մոտ տեղի ունեցած երկրորդ մարտը նույնպես ավարտվեց բրիտանացիների պարտությամբ[190]:

Եգիպտացիների այս 2 հաղթանակներն ունեցան նաև մեկ այլ նշանակություն. պարտությունը բրիտանացիներին ստիպեց հրաժարվել Կահիրեի վրա արշավելուց, և վերջինները նահանջելով ամրապնդվեցին Ալեքսանդրիայում: Մուհամմադ Ալին առանց հապաղելու իր զորքերով շարժվեց Ալեքսանդրիայի ուղղությամբ և հայտնվեց նրա մատույցներում: Բրիտանական զորքերի հրամանատարը, վախենալով պարտությունից, հրաժարվեց նոր ճակատամարտ տալու մտքից և բանակցությունների մեջ մտավ Մուհամմադ Ալիի հետ հաշտության և բրիտանական զորքերի ազատ նահանջի վերաբերյալ: Եգիպտոսի կառավարիչը բրիտանական կողմի 2 պահանջներն էլ բավարարեց: Հաշտությունը ստորագրվեց, և բրիտանական զորքերն իրենց նավերով 1807թ. սեպտեմբերին հեռացան Եգիպտոսից[191]: Մուհամմադ Ալին իր զորքերով մտավ Եգիպտոսի իր նշանակությամբ երկրորդ քաղաքը՝ Ալեքսանդրիա, որի բնակչությունը մեծ ցնծությամբ ընդունեց նրան: Բրիտանացիների դեմ տարած հաղթանակը և Եգիպտոսը գրավելու բրիտանացիների փորձերի ձախողումը կարևոր գործոններ էին Մուհամմադ Ալիի իշխանության և Եգիպտոսի անկախության ամրապնդման ուղղությամբ: Դա նաև կարևոր քայլ էր Կոստանդնուպոլսից Եգիպտոսի կախվածության թուլացման ճանապարհին[192]: Մամլուքների ձախողումն ալ-Էլֆիի հրամանատարությամբ և նրա դաշնակից բրիտանացիների նկատմամբ հաղթանակն ամրապնդեցին Մուհամմադ Ալիի դիրքերը՝ որպես Եգիպտոսի միանձնյա ղեկավար: Մուհամմադ Ալին ոչ միայն մոտ 50 տարի կառավարեց երկիրը, այլև դարձավ արքայատոհմի հիմնադիր, որը ղեկավարեց Եգիպտոսը մինչև 1952թ.:

---

190 طه جاد، معالم تاريخ مصر الحديث و المعاصر، القاهرة، ١٩٨٥، ص. ٤٩-٥٠.
191 طه جاد, նշվ. աշխ., էջ 49-50:
192 Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 161-162:

Մուհամմադ Ալիի համար մյուս ծանր փորձությունը, որը կարող էր նրա համար ճակատագրական լինել, կապված էր սուլթան Սելիմ III-ի կողմից նրան պաշտոնազուրկ անելու նոր փորձերի հետ: Վերջինը թեև 1805թ. ֆիրմանով Մուհամմադ Ալիին նշանակել էր Եգիպտոսի փաշա, 1807թ. նրան պաշտոնանկ անելու և Եգիպտոսից հեռացնելու ևս մի փորձ կատարեց: Սուլթանին շարունակում էին անհանգստացնել Մուհամմադ Ալիի բարձր հեղինակությունը և նրա՝ շատ հեռուն գնացող քաղաքական ծրագրերը: Բայց սուլթանն այս անգամ ևս անհաջողության մատնվեց: Մուհամմադ Ալիին թիկունք կանգնեց ամբողջ Կահիրեն, և դրա հետևանքով սուլթանը նահանջեց, ինչը եղավ Մուհամմադ Ալիին իշխանությունից հեռացնելու նրա վերջին փորձը: Ծատ չանցած՝ նրան տապալեցին և սպանեցին ենիչերիները, որոնց հետ Սելիմ III-ի հարաբերությունները մշտապես լարված բնույթ ունեին՝ պայմանավորված վերջինի կողմից նախաձեռնած բարեփոխումների արդյունքում Օսմանյան կայսրության ռազմական ուժերում ենիչերիների դերակատարման էական նվազմամբ[193]:

Մուհամմադ Ալիի քաղաքական հաջողությունները մեծ մասամբ բացատրվում էին նրանով, որ դատապարտված չլինելով եգիպտական քաղաքական ավանդույթներին՝ նա կարողացավ աջակցություն ստանալ թվում է թե եգիպտական հասկացություններին անհամատեղելի քաղաքական և հասարակական ուժերի կողմից: Օսմանները տեսնում էին նրամեջ ոչ այնքան վստահելի կառավարչի, որը, այնուամենայնիվ, համարվում էր իրենց վասալը: Նա այնքան մտերմացավ մամլուքների հետ, որ համարյա ձուլվեց նրանց հետ: Մուսուլմանական հոգևորականները նույնպես աջակցեցին նրան՝ հավատալով, որ կարող են ավելի արդյունավետ ազդել նրա կողմից ստեղծված քաղաքական համակարգի վրա, քան օսմանների և մամլուքների ժամանակ: Զինվորական միավորումները նրա մեջ տեսնում էին իր զինվորներով հետաքրքրված հրամանատարի, իսկ բնակչությունը, հետևելով հոգևորականության կոչերին, աջակցեց նրան՝ հույս ունենալով, որ նակպաշտպանի իրենց շահերը:

[193] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 162-163:

Ամփոփելով նշենք, որ չնայած Նապոլեոն Բոնապարտի զորքերի հեռանալուն՝ երկրում կրկին տիրում էր պատերազմական վիճակ բրիտանացիների, թուրքերի և մամլուքների միջև, որոնցից յուրաքանչյուրի նպատակն էր իշխել Եգիպտոսում, ինչը նրանցից և ոչ մեկին չհաջողվեց: Տևական, սակայն և դիվանագիտորեն լավ մշակված պայքարի արդյունքում Մուհամմադ Ալիին հաջողվեց վայելել ինչպես հասարակ եգիպտացիների և զինվորականների, այնպես էլ հոգևորական վերնախավի հավանությունը, ինչի հետևանքը դարձավ այն, որ Բարձր դուռը, հակառակ իրեն հնազանդ նահանգապետների նշանակման քաղաքականությանը, 1805թ. ստիպված եղավ Մուհամմադ Ալիին հռչակել Եգիպտոսի վալի, քանի որ միայն այս ուժն էր ի զորու իր հեղինակության շնորհիվ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո Եգիպտոսում հաստատել տևական կայունություն: Իր կառավարման ժամանակահատվածում, հզորացնելով երկրի ռազմական ներուժը և բարձր հեղինակություն վայելելով հասարակության լայն շերտերում՝ նա աստիճանաբար լուրջ սպառնալիք դարձավ Օսմանյան կայսրության համար: Մուհամմադ Ալին կարողացավ հասնել մամլուքների և օսմանների չեզոքությանը, ովքեր սովորաբար վճռորոշ դեր էին խաղում երկրի բարձրագույն պաշտոնի համար պայքարում, և Եգիպտոսի ազգային-քաղաքական ուժերին հնարավորություն տվեց դրսևորվելու երկրի ռազմաքաղաքական ոլորտներում, ինչի արդյունքում վերջինները ժամանակի ընթացքում ամբողջությամբ դուրս մղեցին օսմաններին և մամլուքներին Եգիպտոսի քաղաքական կյանքից:

2.2. Եգիպտոսի պետական կառավարման համակարգի բարեփոխումները Մուհամմադ Ալիի օրոք

Մուհամմադ Ալին իրավամբ համարվում է ժամանակակից Եգիպտոսի հիմնադիրը, իսկ նրա կառավարման ժամանակաշրջանն ընդունված է անվանել Մուհամմադ Ալիի դարաշրջան: Հենց այս ժամանակաշրջանում Եգիպտոսում առաջացան նոր տնտեսական համակարգ և պետական մարմինների նոր կառուցվածք, ինչը հիմք է տալիս խոսել Եգիպտոսում ժամանակակից պետականության

ստեղծման մասին: Այս հայեցակարգի համաձայն՝ Մուհամմադ Ալիի բարեփոխիչ գործունեությունը խզեց մամլուքյան անցյալի հետ կապը և նշանավորեց Եգիպտոսի անցումը նոր պատմական դարաշրջան, որի էությունը հետևյալն էր. անցում ավանդական ժամանակաշրջանից դեպի նորը և ավանդական հասարակությունից՝ դեպի ժամանակակիցը, իսկ այդպիսի անցման ճանապարհը դարձավ արդիականացումն իր տարբեր ձևերով:

Մուհամմադ Ալիի կողմից Եգիպտոսի արդիականացմանն ուղղված բարեփոխումներն անդրադարձան քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային ոլորտներին, ինչը բնականորեն անդրադարձավ երկրի բնակչության մեծամասնության վրա[194]: Մի քանի հարյուրամյակ գտնվելով քաղաքական և հասարակական մեկուսացման և անգործության մեջ, ինչը բնորոշ էր մամլուքների դարաշրջանին՝ Եգիպտոսը XIX դարի առաջին կեսին կրեց արմատական փոփոխություններ՝ հեռուն գնացող հետևանքներով: Այդ վերափոխումները դրեցին արդիականացման դարաշրջանի սկիզբը, ինչը պատմական գրականության մեջ ունի «Նահդա» անվանումը ու ընդգրկում է XIX դարի վերջին 3 քառորդները և XX դարի մեծ մասը:

Ա. Գյուղատնտեսական բարեփոխումների կարևորությունը և ընթացքը

Մուհամմադ Ալիի տնտեսական բարեփոխումների շարքում կարևոր նշանակություն ունեին գյուղատնտեսական բնագավառում իրականացված բարեփոխումները, քանի որ Եգիպտոսի տնտեսությունն ինքնին հենված էր գյուղատնտեսության վրա, և ընդհանուր առմամբ իրականացվող տնտեսական բարեփոխումների հաջողությունն էապես կախված էր գյուղատնտեսական բարեփոխումների ընթացքից: Մուհամմադ Ալին գյուղատնտեսության ոլորտում իր բարեփոխումներն իրականացրեց

[194] Մուհամմադ Ալիի բարեփոխումները մեծ ազդեցություն ունեցան օսմանյան թանզիմաթի ժամանակ: Թանզիմաթը բարեփոխումների իրականացման ծրագիր էր, որը կոչված էր զարգացնելու Օսմանյան կայսրության հետամնաց տնտեսությունը, ռազմական գործը և մշակութային կյանքը: Այն սկսվել է 1839թ., երբ Օսմանյան կայսրությունում գահ է բարձրացել Աբդուլ Մեջիդ սուլթանը (1839-1861թթ.) և ավարտվել է 1876թ.: Թանզիմաթի մասին տե՛ս Zürcher E., Turkey, A Modern History, 3rd edition, London, 2004, p. 50-70., Findley C., The Tanzimat, The Cambridge History of Turkey, Volume 4, Turkey in the Modern World, edited by Kasaba R., Cambridge, 2008, p. 11-37.

աստիճանաբար՝ 1808-1815թթ. ընթացքում[195]: Նա սկսեց իլթիզամի[196] համակարգի վերացումից և 1808թ. բռնագրավեց այն մուլթազիմների[197] կալվածքները, որոնք խուսափում էին հարկերի վճարումից: Այլ կերպասած՝ նաիր հարվածը սկզբում ուղղեց ոչ թե մուլթազիմների ամբողջ հզոր խավի, այլ միմիայն նրա այն հատվածի դեմ, որն իրավական առումով խախտում էր Օսմանյան ամբողջ կայսրությունում հաստատված օրենքները, որոնք գործում էին նաև Եգիպտոսում: 1812թ. Մուհամմադ Ալիի քաղաքականությունը գյուղատնտեսության բնագավառում ունեցավ նոր հաջողություններ, որը ցնցեց իր համարձակությամբ: Մամլուքներն օրինական և ապօրինի ճանապարհներով իրենց ձեռքում էին կենտրոնացրել հսկայական կալվածքներ, որոնք բռնագրավվեցին Մուհամմադ Ալիի կողմից, ինչը ծանր հարված հասցրեց նրանց: Այսպիսով, Մուհամմադ Ալիին այլևս ոչինչ չէր կարող խանգարել մամլուքներին առհասարակ զրկելու հողերից և վերացնելու իլթիզամի համակարգը, ինչը և նա հաջողությամբ իրականացրեց 1814թ.: Մուլթազիմների ձեռքում մնացին միայն այսպես կոչված ուսիահողերը, որոնք նախկին համայնքային հողեր էին և ժամանակի ընթացքում յուրացվել էին կալվածատերերի կողմից: Իսկ ինչ վերաբերում է մուլթազիմներին պատկանող հողերի վրա աշխատող ֆելլահների հետագա ճակատագրին, ապա նրանք ազատվեցին մուլթազիմներին հարկեր վճարելու պարտականությունից, սակայն շարունակում էին աշխատել նույն հողակտորի վրա, որն այժմ դարձել էր պետական սեփականություն[198]:

---

[195] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 124:

[196] Իլթիզամը հարկային համակարգ է, որը գործել է Օսմանյան կայսրությունում և իրագործվել է պետական եկամուտների հավաքագրման ոլորտում: Պետությունը աճուրդի էր հանում հարկի ստացման իրավունքը և այն փոխանցում ամենաբարձր գին առաջարկող գնորդին (մուլթազիմ), որոնք հետագայում հավաքում էին պետական հարկերը և իրականացնում ֆիքսված վճարումներ՝ պահելով հարկերից եկամուտների մի մասը սեփական օգտագործման համար: Իլթիզամի համակարգը ներառում էր հողի հարկը, քաղաքային հարկերը, որոշ ապրանքների (օրինակ՝ գինու, աղի կամ սեննայի) արտադրության և որոշ ծառայությունների մատուցման գծով նախատեսված հարկերը: Այն սկսվել է կիրառվել Սուլթան Մեհմեդ II-ի (1444-46, 1451-81թթ.) կառավարման ժամանակ և պաշտոնապես վերացվել է 1856թ.: Իլթիզամի տարբեր ձևերը, սակայն, շարունակվում էին կիրառվել մինչև XX դարի սկիզբ՝ Օսմանյան կայսրության տիրապետության ավարտը, երբ համակարգը փոխարինվեց հարկային նոր մեթոդներով, որոնք վերահսկում էին պետական պաշտոնյաները:

[197] Մուլթազիմը իլթիզամի սեփականատերն է:

[198] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 172-173:

Այսպիսով, նոր հարկային համակարգի կիրառման արդյունքում հողերը գրանցվեցին գյուղացիների անունով, որոնք և հարկերի վճարման համար պատասխանատու էին ուղղակիորեն պետությանը: Ըստ այս համակարգի՝ ֆելլահները չէին կարող ձեռք բերել սեփականության կամ ժառանգության իրավունք հողի նկատմամբ. միակ իրավունքը, որը տրվում էր կառավարության կողմից, կյանքի ընթացքում հողի օգտագործման իրավունքն էր, որի սեփականատերը շարունակում էր մնալ պետությունը: Արդյունքում Մուհամմադ Ալին 10 տարվա ընթացքում կարողացավ հաջողությամբ ազգայնացնել եգիպտական հողերը՝ թուլացնելով արտոնյալ խավի գյուղատնտեսական դիրքերը[199]:

Մուհամմադ Ալին փոփոխություններ մտցրեց նաև վաքուֆային հողերի պատկանելության և դրանց նկատմամբ հարկերի գանձման քաղաքականության մեջ: 1809-1815թթ. նա բռնագրավեց վաքուֆային հողերը, որոնք դարձան պետականապատկան, ինչն էապես թուլացրեց մուսուլման հոգևորականության (ներառյալ ալ-Ազհար մզկիթը և նրա հոգևորականությունը) դիրքերը[200]: Նրանց դժգոհությունը և ընդդիմական տրամադրությունները կանխելու համար Մուհամմադ Ալիի որոշմամբ մզկիթների և մուսուլման հոգևորականության պահպանման ծախսերը եգիպտական պետությունը վերցրեց իր վրա, ինչը չգոհացրեց հոգևորականությանը, քանի որ վերջինները վաքուֆային հողերի պատկանելությունից ավելի մեծ եկամուտներ էին ստանում, և, բացի այդ, պետականացումից հետո նրանց կախվածությունը պետությունից մեծանում էր: Այս ամենի արդյունքում հոգևորականության շրջանակներում դժգոհություն առաջացավ Մուհամմադ Ալիի դեմ, ով, սակայն, չէր հանդուրժում նման անհնազանդության դրսևորումներ, որի համար և պատժեց հոգևորականությանը, իսկ նրա առավել աչքի ընկնող ղեկավարներին աքսորեց Կահիրեից[201]: Մուհամմադ Ալիի բարեփոխումները գյուղատնտեսության բնագավառում առաջացրին նաև մամլուքների դժգոհությունը, որոնք 1809-1810թթ. երկու անգամ ապստամբեցին, սակայն երկու անգամ էլ ճնշվեցին Մուհամմադ Ալիի

[199] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 54:
[200] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 124:
[201] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 54:

կողմից: Մամլուքների այս ելույթները Մուհամմադ Ալիին հանգեցրին նրանց ամբողջապես ոչնչացնելու գաղափարին, որը նա իրականացրեց 1811թ.[202]:

Հողօգտագործման ձևերի ու պատկանելության փոփոխությունը և մամլուքների դասի վերացումը Մուհամմադ Ալիի ձեռք բերած ամենակարևոր փոփոխություններն էին գյուղատնտեսության ոլորտում: Այս փոփոխությունները Մուհամմադ Ալիին հնարավորություն տվեցին ստեղծելու սեփական սոցիալական հենարան, որը պետք է ամրապնդեր նրա դիրքերը երկրի ներսում, ստեղծեր կայունություն և ապահովություն իր իշխանության համար: Մուհամմադ Ալին դրա իրականացմանը ձեռնամուխ եղավ 1820-ական թվականների վերջերին և 1830-ական թվականների սկզբներին:

Մուհամմադ Ալին սկսեց անմշակ հողերի անվճար տրամադրման լայնածավալ գործընթացը պետության բարձրաստիճան պաշտոնյաներին և այլոց: Սրանով Մուհամմադ Ալին ազատեց նրանց հարկերից՝ պայմանով, որ հող ստացողները պարտադիր պետք է իրականացնեին հողի վերամշակում և բարձրացնեին երկրի գյուղատնտեսական արտադրության ծավալները: Հողերի շնորհման այս գործընթացը կոչվում էր իբադիա, որի շրջանակներում հող ստացողը չուներ սեփականության իրավունք, այլ տիրապետում էր միայն օգտագործման իրավունքին: Աստիճանաբար 1836թ. այս հողերը դարձան ժառանգական, որոնք անցնում էին հողը ստացողից իր ավագ որդուն, իսկ 1848թ. սեփականության իրավունքն ամբողջապես փոխանցվեց նրանց[203]: Հողային բարեփոխումների շրջանակում Մուհամմադ Ալին ընդունեց ևս մեկ համակարգ, որը կոչվում էր չիֆթլիք: Այս համակարգը ենթադրում էր, որ համապատասխան հողատարածքները՝ դրանց վրա գտնվող շինությունների և այլ անշարժ գույքի հետ միասին, որպես նվեր պետք է անցնեին Մուհամմադ Ալիի ընտանիքի անդամներին և ազգականներին: Նա նաև հաստատեց ուհդա կոչվող հողերի համակարգը, որի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնյաները, բանակային սպաները, մարզպետները և նշանավոր անձինք գյուղական հողատարածքների նկատմամբ ստացան օգտագործման իրավունք: Այս հողերին տիրապետողները

[202] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 174-175:
[203] علي بركات، تطور الملكية الزراعية في مصر (١٨١٣-١٩١٤) و أثره على الحركة السياسية ، القاهرة، ١٩٧٧، ص. ٤١-٤٢.

պետք է հարկ վճարեին միայն փաշայի հրամանագրով և բացի վերամշակման հարկից, այլ հարկեր չէին վճարում[204]:

Այսպիսով, Մուհամմադ Ալին գյուղատնտեսական ոլորտում կատարած բարեփոխումների արդյունքում կարողացավ վերացնել իլթիզամի համակարգը և ֆեոդալիզմի իր դարն ապրած եղանակները, իրեն թշնամի մուլթազիմների և մամլուքների դասը և նորամուծություններ մտցնելով ֆեոդալական հողօգտագործման ու եղանակների մեջ՝ ստեղծել իր համար նոր և հուսալի սոցիալական հենարան:

Գյուղատնտեսական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները նպաստեցին գյուղատնտեսության զարգացմանը: Մեծ թափ ստացան ոռոգման աշխատանքները, հին ջրանցքների վերականգնումն ու վերանորոգումը, նոր ջրանցքների ու ջրամբարների կառուցումը[205]: Ընդհանուր առմամբ 1,135,775 մետր երկարությամբ ջրանցք փորվեց, որը միաժամանակ կարող էր պարունակել 116,050,843 խորանարդ մետր ջուր[206]: Իրականացված բարեփոխումների արդյունքում նշանակալիորեն ավելացան նաև ջրովի հողերը, և մոտ 50 տոկոսով ընդարձակվեցին մշակելի հողատարածքները, ինչը բնականորեն հանգեցրեց բերքատվության ծավալների մեծացմանը: Մուհամմադ Ալին հատուկ ուշադրություն էր դարձնում նաև այն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակմանը, որոնք արտահանման մեծ պահանջարկ և հեռանկարներ ունեին. դրանց թվին էին պատկանում բրինձը, բամբակը և այլն: Նա բամբակի մշակումը Եգիպտոս ներմուծեց Սուդանից, որը մշակվում էր Նեղոսի դելտայում[207]:

Չնայած այն հանգամանքին, որ իրականացված գյուղատնտեսական բարեփոխումները վերացրին ֆելլահների կախվածությունը մուլթազիմներից և մամլուքներից, այնուամենայնիվ նրանք ձեռք չբերեցին ազատություն և այսուհետ հարկերը վճարում էին ուղղակիորեն պետությանը կամ նոր ֆեոդալներին, որոնք Մուհամմադ Ալիի դրածոներն էին: Բացի

[204] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 55:
[205] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 127:
[206] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 149-150:
[207] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 176:

դրանից, ֆելլահները տարեկան երկու ամիս պարտավոր էին անվճար աշխատել անձամբ Մուհամմադ Ալիին պատկանող կալվածքներում[208]:

Գյուղացիների վիճակի վատթարացման վրա մեծապես ազդեց պետական որոշումը, որը պարտադրում էր նրանց իրենց ստացած բերքի և գյուղատնտեսական մթերքների մեծ մասը հանձնել պետական գնորդներին: Այսինքն՝ ֆելլահը զրկվեց իր բերքն ազատորեն վաճառելու իրավունքից: Դա խոր դժգոհություն առաջացրեց ֆելլահների շրջանում, որոնք 1820-ական թթ., հաճախ միավորված քաղաքային բնակչության, մասնավորապես արհեստավորների հետ, որոնք նույնպես գտնվում էին ծանր պայմաններում, բազմիցս ապստամբել են իշխանությունների դեմ: Դա բողոքի արտահայտություններից մեկն էր, որին, սակայն, բոլորը պատրաստ չէին մասնակցելու: Կար նաև բողոքի այլ ձև՝ գյուղացիների փախուստը Եգիպտոսից արաբական մյուս երկրներ, մասնավորապես Սիրիա և Սուդան: Մուհամմադ Ալին ճնշում էր գյուղացիական ելույթները, իսկ փախածներին ստիպում էր վերադարձնել Եգիպտոս: Եվ քանի որ Սիրիան ու Սուդանը չէին հանդգնում մերժել Մուհամմադ Ալիին, ապա փախստական եգիպտացի ֆելլահների մեծ մասը վերադարձվում էր Եգիպտոս, որտեղ նրանք ենթարկվում էին դաժան պատիժների[209]:

Չնայած գյուղատնտեսական բարեփոխումների իրականացման գործընթացում առաջացած դժվարություններին և գյուղատնտեսական շրջանակների բողոքներին, այդուհանդերձ, Մուհամմադ Ալիի կողմից իրականացված այս բարեփոխումներն ընդհանուր առմամբ դրական էին և շարժիչ ուժ հանդիսացան երկրի տնտեսական զարգացման համար:

Բ. Բարեփոխումները կրթության բնագավառում

Մուհամմադ Ալիի բարեփոխումների շարքում իրենց ուրույն տեղն ունեին բարեփոխումները կրթության և մշակույթի բնագավառներում: Մուհամմադ Ալին բարեփոխումներին մոտենում էր որպես մեկ ամբողջական համակարգի՝ գտնելով, որ եթե բարեփոխումների ամբողջական շղթայում թեկուզ և մեկ օղակ

[208] Նույն տեղում, էջ 177:
[209] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 177:

չվերակառուցվի, ապա դա կհանգեցնի ընդհանրապես բարեփոխումների քաղաքականության ձախողման: Կարելի է ասել, որ Մուհամմադ Ալիի բարեփոխումների քաղաքականությունը հիմնված էր 4 սյուների վրա՝ բարեփոխումներ պետական-կառավարման ոլորտում, զինվորական ոլորտում, գյուղատնտեսական հարաբերություններում և կրթական-մշակութային ասպարեզում: Եթե նրանցից մեկը չլիներ, ապա բարեփոխումների շղթան կընդհատվեր: Դրանով է բացատրվում Մուհամմադ Ալիի բացառիկ ուշադրությունը նաև կրթության և մշակույթի բնագավառներում անցկացվող բարեփոխումներին[210]:

Մուհամմադ Ալին, ձեռնամուխ լինելով այս բարեփոխումներին, մշակեց համապատասխան հայեցակարգ: Այդ հայեցակարգի հիմքը նա համարեց դպրոցական կրթությունը, նրա մակարդակի բարձրացումը և նրա ոլորտի ընդլայնումը, այն հաշվով, որպեսզի ինչքան հնարավոր է ավելի շատ երեխաներ ընդգրկվեն դպրոցական կրթության մեջ, և Եգիպտոսում ավելանա կրթված մարդկանց ու մասնագետների թիվը[211]:

Նա ստեղծեց երկու կարգի դպրոցներ՝ ընդհանուր կրթական և մասնագիտական: Նրա որոշմամբ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ բացվեցին աշխարհիկ դպրոցներ, որոնք եռաստիճան էին: Առաջին աստիճանի (տարրական) դպրոցներում ընդգրկված էին 8-12 տարեկան աշակերտները: Այս փուլում նրանց դասավանդվող հիմնական առարկաներն էին արաբերենը և թվաբանությունը: Երկրորդ աստիճանը միջնակարգ դպրոցն էր, որտեղ սովորում էին 12-16 տարեկան աշակերտները: Այստեղ ավելի կարևոր առարկաներ էին ուսուցանվում, ինչպես՝ մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն և այլն, իսկ լեզուներից ավելանում էր թուրքերենի ուսուցումը: Միջնակարգ դպրոցներից միայն երկուսը, որոնք ստեղծվել էին 1820թ. կեսերին Կահիրեում և Ալեքսանդրիայում, միասին հավաքագրել էին շուրջ 2000 աշակերտ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ այստեղ դասավանդող անձնակազմը նախնական վերապատրաստումներ չէր անցել և ուսումնական գործընթացը կազմակերպում էր ավանդական

[210] Նույն տեղում, էջ 186:
[211] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 186-187:

մեթոդներով, ինչն անընդունելի էր ժամանակակից կրթական համակարգի համար[212]: Երրորդ աստիճանը հատուկ ուսումնարաններն էին, որտեղ ուսումը կարող էին շարունակել միայն միջնակարգ դպրոցի շրջանավարտները: Ուսման տևողությունն այդ ուսումնարաններում 4 տարի էր: Այսպիսով, մինչև 20 տարեկան դառնալը եգիպտացի պատանին կարող էր ստանալ տարրական, միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն, ինչը մեծ նվաճում էր Եգիպտոսի համար[213]:

Հետաքրքրական է, որ Մուհամմադ Ալին, կարևորելով կրթությունը, ինքը կրթված չէր և ցանկանում էր տարրական կրթությունը հասանելի դարձնել նաև այն տարեցների համար, որոնք գրել և կարդալ չգիտեին: Հնարավորություն ընձեռելով վերացնելու կրթական այդ բացը և հաղորդակից լինելու գրաճանաչությանը՝ Մուհամմադ Ալին ինքը դարձավ գրաճանաչ և օրինակ ծառայեց իր ժողովրդի համար[214]:

Ուսուցման գործը հեշտացնելու և աշակերտներին լիարժեք գիտելիքներ ու տեղեկատվություն հաղորդելու նպատակով Մուհամմադ Ալիի կարգադրությամբ եվրոպական լեզուներից արաբերեն թարգմանվեցին և հրատարակվեցին դասագրքեր ու զանազան ձեռնարկներ, իսկ հետագայում դասագրքեր հրատարակվեցին արդեն Եգիպտոսում:

Ընդհանուր աշխարհիկ դպրոցներ բացելուն զուգահեռ հիմնվեցին նաև նեղ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Մուհամմադ Ալին 1816թ. հիմնեց Եգիպտոսում առաջին ճարտարագիտական, ապա բժշկական ուսումնարանը: Նրա իշխանության տարիներին հիմնվեցին նաև գյուղատնտեսական և անասնաբուժական, տեխնիկական, լեզվաբանական, երաժշտական, անգամ քաղաքագիտական և այլ մասնագիտությունների գծով ուսումնարաններ: Ուսուցումն անվճար էր, պետությունն անգամ նրանց թոշակ էր վճարում, իսկ գյուղական վայրերից Կահիրե և այլ քաղաքներ եկածներն ապահովվում էին կացարանով և սննդով[215]:

---

[212] Radwan A., Old and New Forces in Egyptian Education, New York, 1951, p. 88.
[213] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 187:
[214] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 187:
[215] Նույն տեղում, էջ 188:

Դպրոցներ բացվեցին ոչ միայն Կահիրեում և մյուս քաղաքներում, այլև գյուղական վայրերում, կարելի է ասել ամբողջ Եգիպտոսում: Այսպես, օրինակ, Վերին Եգիպտոսում գործում էին 26, իսկ Ստորին Եգիպտոսում՝ 40 նորաբաց տարրական դպրոցներ: Ստեղծված դպրոցներում ներգրավված էին մոտ 9000 երեխա, որոնցից հատուկ դպրոցներում ուսանում էին 2761, հիմնական դպրոցներում՝ 4971-5500 և նախապատրաստական դպրոցներում՝ 2111 հոգի[216]: Ինչ վերաբերում է ուսումնարաններին, ապա դրանք տեղակայված էին գլխավորապես Կահիրեում և Ալեքսանդրիայում: Կրթական բարեփոխումների շրջանակներում Մուհամմադ Ալին կարևորեց նաև լեզուների և թարգմանության դպրոցների ստեղծումը: Ուսումնական գործընթացում առաջացած հիմնական խնդիրներից մեկն օտար լեզվի հետկապված բարդություններն էին, որոնք լուծելու համար Մուհամմադ Ալին 1835թ. հիմնեց Մադրասաթ ալ-ալսուն լեզուների դպրոցը՝ թարգմանիչներով լսարաններն ապահովելու, ինչպես նաև համապատասխան դասագրքերի և նյութերի թարգմանությունն իրականացնելու համար[217]:

Դպրոցների և ուսումնարանների բացումը, բնականաբար, համապատասխան ուսուցիչներով դրանք համալրելու հրատապ խնդիր էր առաջացնում, որը լուծվեց երկու ճանապարհով. նախ՝ զգալի թվով ուսուցիչներ հրավիրվեցին եվրոպական երկրներից, ինչը նաև նպաստեց երկրում օտար լեզուների, առաջին հերթին՝ ֆրանսերենի տարածմանը: Դպրոցներն ուսուցիչներով ապահովելու խնդրի լուծման մյուս ուղին եղավ եգիպտացիներին եվրոպական ուսումնական հաստատություններում պատրաստելը: 1826-1848թթ. ընթացքում 319 ուսանողներ ուղարկվեցին Եվրոպա՝ ուսումնական առաքելության, որից 35%-ը ուսանել են ռազմական և նավատորմային գիտությունների, 27 տոկոսը՝ արդյունաբերական տեխնիկայի, 18%-ը՝ ճարտարագիտության, 7%-ը՝ բժշկության, 6%-ը՝ վարչարարության, օրենսդրության և քաղաքականության, 4%-ը՝ գյուղատնտեսության և 3%-ը՝ գիտության բնագավառներում[218]: Հատկանշական է, որ Եվրոպա մեկնող ուսանողների ընտրությունը

[216] Клот-бей А., Египет в прежнем и нынешнем своем состоянии, ч. II, СПб., 1845, с. 261.
[217] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 94-95:
[218] Abu-Lughod I., Arab Rediscovery of Europe, A Study in Cultural Encounters, Princeton, 1963, p. 35.

որևէ կերպ կապված չէր նրանց կրոնական կամ սոցիալական կարգավիճակի հետ. նրանցից շատերն աղքատ ընտանիքներից էին, որոնց ծախսերը հոգում էր իշխանությունը[219]: Ավարտելով ուսումը և վերադառնալով Եգիպտոս՝ նրանք ոչ միայն աշխատանքի էին անցնում պետական համակարգում որպես պաշտոնյաներ կամ բանակում ծառայում որպես սպաներ, այլև լրացնում էին ուսուցիչների շարքերը: Եվրոպայում ուսումնառության ընթացքում նրանք նաև հավաքագրում էին եվրոպական գրքեր ու դասագրքեր, որոնք հանդիսացան երկրի առաջին պետական փոքր գրադարանների հիմքը[220]:

Սկզբնական ժամանակաշրջանում Մուհամմադ Ալիի կրթական քաղաքականությունն ուներ սահմանափակ նպատակներ, քանի որ նա ցանկանում էր կազմել մասնագետների մի խումբ, որոնք հնարավորություն կունենային իրականացնելու երկրի, մասնավորապես ռազմական ուժերի առջև դրված հատուկ առաջադրանքները, ինչը պայմանավորված էր Մուհամմադ Ալիի՝ Եգիպտոսը հզոր երկիր դարձնելու առաջնային նպատակով: Մուհամմադ Ալիի կրթական բարեփոխումներն ուղղված էին եգիպտական բանակի ուժեղացմանը, ինչն իրականացվում էր օտարերկրացիների կողմից պատրաստված մասնագետների կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև 1820թ. իտալերենը համարվում էր Եգիպտոսում առավել տարածված օտար լեզու՝ առաջին եգիպտացի ուսանողներն ուղարկվեցին Իտալիա, մասնավորապես Լեգորն, Միլան, Ֆլորենցիա և Հռոմ քաղաքներ՝ ուսանելու տպագրություն, նամակագրություն և նավաշինություն: Ելնելով այն հանգամանքից, որ դպրոցական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բանակի համար անհրաժեշտ կանոնադրությունների և պաշտոնական այլ փաստաթղթերի հրատարակությունը պահանջում էր ունենալ տպարան՝ 1809-1816թթ. առաջին կրթական առաքելության նպատակ սահմանվեց տպագրության արվեստի ուսուցանումը եգիպտացիներին, ինչի արդյունքում 1822թ. Բուլակ քաղաքում ստեղծվեց առաջին պետական տպագրական մամուլը, որն ուներ տառատեսակներ երեք լեզուներով՝ արաբերեն,

[219] Soliman H., Zamalek: The Changing Life of a Cairo Elite, 1850-1945, Cairo, 2005, p. 26.
[220] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 95:

պարսկերեն և թուրքերեն: Դրանից հետո գրահրատարակությունը, թարգմանական և ազգային գրականության հրատարակությունը զարգացան բավականին արագ և իրենց ուրույն տեղը գրավեցին եգիպտական ազգային մշակութային կյանքում: Տպարանների հիմնումը նպաստեց Եգիպտոսում ազգային մամուլի հանդես գալուն: Մուհամմադ Ալիի առաջնային հետաքրքրությունը կառավարական մամուլի ստեղծումն էր, ինչն ուղղված էր երկրի օրենքների, կանոնակարգերի և կարգադրությունների տպագրմանն ու տարածմանը: Այս ամենը բնականորեն հանգեցրեց թանաքի և թղթի արտադրության զարգացմանը երկրում[221]:

Ինչպես մամուլի, այնպես էլ թղթի և թանաքի գործարանների ստեղծման և գործարկման համար անհրաժեշտ էին մասնագետներ, որոնք առաջին հերթին հավաքագրվեցին հայերի, սիրիացիների և իտալացիների շրջանակներից: Մուհամմադ Ալին դիտարկում էր տպագրական մամուլը՝ որպես եվրոպական գիտելիքները Եգիպտոս ներմուծելու լավագույն միջոց: Տպագրական մամուլի ստեղծումն էապես օգնեց բարելավել կենտրոնական և տեղական մարմինների միջև կապը ու վարչարարությունը դարձնել ավելի արդյունավետ: Մուհամմադ Ալիի հիմնած առաջին արաբական տպարանում հրատարակվեց առաջին եգիպտական Ալ-Վակայի ալ-Միսրիա՝ «Եգիպտական իրադարձություններ» թերթը: Դրանով Եգիպտոսը մտավ ազգային մամուլ ունեցող փոքրաթիվ երկրների շարքը[222]:

Գ. Բարեփոխումները պետական կառավարման բնագավառում

Մուհամմադ Ալիի բարեփոխումների էական մասն էր կազմում պետական կառավարման մարմինների վերակառուցումը, ինչն իր նշանակալի ազդեցությունը թողեց քաղաքական իշխանության ամբողջ համակարգի, նահանգների վարչական կառավարման, իրավական համակարգի, տնտեսության, մշակույթի, կրթության և այլ բնագավառների պետական կարգավորման ոլորտներում: Մուհամմադ Ալին իր ազդեցության տակ միավորեց ոչ միայն քաղաքական և ռազմական, այլև տնտեսական և վարչական իշխանությունները՝

[221] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 95-98:
[222] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 99:

վերացնելով Եգիպտոսի կախվածությունն Օսմանյան կայսրությունից[223]:

Եգիպտոսում ավանդական օսմանյան վարչաքաղաքական համակարգը ստեղծվեց Սուլեյման I-ի օրոք՝ այսպիսով կանխորոշելով Եգիպտոսում օսմանյան կառավարման համակարգի հիմնական սկզբունքների գերակայությունը համարյա 3 դար (XVI-XVIII դդ.): Օսմանների և մամլուքների միջև քաղաքական պայքարը իշխանության համար (XVII-XVIII դդ.) հանգեցրեց օսմանյան կառավարման կառուցվածքի որոշակի ձևափոխման՝ թուլացնելով կախվածությունը կայսրության կենտրոնական մարմիններից այնպիսի սկզբունքային ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսահարկայինը, ռազմականը, դատականը և, վերջին հաշվով, քաղաքականը:

Եգիպտոսում իշխանության գալու առաջին օրվանից Մուհամմադ Ալին սկսեց որոնել երկիրը կառավարելու մեթոդներ և միջոցներ՝ հիմնված ավանդական սկզբունքների վրա, ինչն ապահովեց հոգևորականության (ուլամա) և առևտրականների աջակցությունը: Իր իշխանության բացահայտ ընդդիմության ջախջախումից հետո Մուհամմադ Ալին անցավ երկրի կայունության և անվտանգության վերականգնմանը: Նրա իշխանության գալու պահին (1805թ.) Եգիպտոսի մարզային կառավարման օսմանյան համակարգը կազմալուծված էր: Ձգտելով Եգիպտոսը դարձնել ամուր հենակետ իր և իր ընտանիքի համար՝ Մուհամմադ Ալին մեծ ջանքեր գործադրեց՝ վարչակառավարման մարմինների վրա ամբողջական հսկողություն սահմանելու համար[224]: Առաջին հերթին նրան հետաքրքրում էր հարկահավաքությունը, հատկապես իլթիզամի համակարգի վերացումից հետո, որն իր իշխանությանը սպառնացող մամլուքների հենարանն էր[225]:

Հարկային համակարգը տարվեց պետության վարչատնտեսական գործունեության առանձին ուղղությամբ[226]: Օսմանյան բարձրագույն ֆինանսական պաշտոնյան դեֆթերդարն էր, ով

[223] Hamed R., The Siyasatname and the Institutionalization of Central Administration under Muhammad Ali, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 75.
[224] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 100:
[225] علي بركات, նշվ. աշխ., էջ 42:
[226] Rivlin H., The Agricultural Policy of Muhammad Ali in Egypt, Cambridge, Massachusetts, 1961, p. 53.

ավանդաբար նշանակվում էր սուլթանի կողմից: Նաղեկավարում էր «ռուզնամեի» գերատեսչությունը (հարկային վարչությունը), որը գլխավորում էր «ռուզնամջին», ում պարտականությունների մեջ մտնում էր գանձարան դրամական միջոցների մուտքի և ծախսերի վերահսկումը, ինչպես նաև ամենամյա և ամենամյա հաշվեկշռային հաշվետվություններ կազմելը, որոնք ներկայացվում էին վալիին[227]: XVIII դարի վերջում, երբ մամլուքները գրավեցին Եգիպտոսի քաղաքական իշխանությունը, դեֆթերդարի նշանակությունը երկրի ֆինանսական կյանքում փոքրացավ: Ղեկավարող դերն անցավ ռուզնամջիին, ով, որպես կանոն, մամլուք էր և ում ենթարկվում էին ֆինանսական պաշտոնյաները՝ սառաֆները, գլխավորապես ղպտիները: Ֆրանսիացիների օրոք, երբ թուրք պաշտոնյաները լքեցին երկիրը, հարկային կառույցի բարձրագույն պաշտոնը գրավեց ղպտի սառաֆների ղեկավար Մուալլիմ Գիրգիսը[228]: Մուհամմադ Ալիի օրոք դեֆթերդարի նշանակությունը, որպես երկրի ֆինանսահարկային համակարգի բարձրագույն դեմք, վերականգնվեց հատկապես այն բանից հետո, երբ այդ պաշտոնում սուլթանի հրամանով նշանակվեց Մուհամմադ Ալիի որդի Իբրահիմ փաշան, ով 1807թ. վերադարձավ Կոստանդնուպոլսից, որտեղ վերջինս գտնվում էր պատանդի կարգավիճակում: Իբրահիմ փաշան այդ պաշտոնը զբաղեցրեց 6 տարի՝ հանդիսանալով Վերին Եգիպտոսի փոխանորդ[229]:

Վերականգնելով դեֆթերդարի նշանակությունը որպես ֆինանսական համակարգի ղեկավար՝ Մուհամմադ Ալին ռուզնամջիի գլխավորությամբ ռուզնամեն դարձրեց ֆինանսահարկային հաստատություն, որը որոշում էր հարկերի չափերը և նրանց հավաքը: Հավաքված բոլոր հարկերը մտնում էին ռուզնամե և այնտեղ վերաբաշխվում ու վճարվում էին որպես աշխատավարձ: Մուհամմադ Ալին ռուզնամջիի պաշտոնում նշանակեց ղպտի Մուալլիմ Գալիին, ով անմիջականորեն ենթարկվում էր իր որդուն՝ Իբրահիմ փաշային[230]: Մուհամմադ Ալին ֆինանսահարկային

[227] Նույն տեղում, էջ 80-81:
[228] سلوى العطار، التغييرات الاجتماعية في عهد محمد علي، القاهرة، ١٩٨٩، ص. ٣٠٩.
[229] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 106:
[230] Նույն տեղում:

համակարգի վերակազմավորման հաջողության համար պարտական էր ղպտիներ Մուալլիմ Գիրգիս ալ-Գաուհարիին և Մուալլիմ Գալի Սարգիոսին, ովքեր նրան անհրաժեշտ տեղեկություններ էին տալիս ֆինանսական և հարկային հարցերի հետ կապված և օգնում նրան նորացնել մամլուքաօսմանյան անարդյունավետ հարկահավաքության համակարգը՝ դարձնելով այն կենտրոնացված և առավել արդյունավետ[231]: Եգիպտոսի ղեկավար մարմինների համակարգում հարկային վարչակարգի նշանակությունն աստիճանաբար աճեց, ինչի մասին վկայում է 1837թ. ռուզնամեի վարչության ընդգրկումը Խորհրդի (Խեդիվի դիվան) կազմի մեջ, իսկ 1848թ. արդեն այն մտավ ֆինանսների դիվանի կազմի մեջ[232]:

Ռուզնամեից հետո իր նշանակությամբ երկրորդ ֆինանսական հաստատությունը գանձատունն էր (խազինա), որի ղեկավարը մտնում էր Խորհրդի կազմի մեջ կառավարչի օրոք (դիվան ալ-վալի, իսկ ավելի ուշ՝ դիվան խեդիվի): Այդ մարմինը հսկում էր մարզերից եկող հարկերը՝ ներառյալ Հիջազից և Սուդանից ստացվող հարկերը, կազմում և վալիին էր ուղարկում ամենամսյա և ամենամյա հաշվեկշռային հաշվետվությունները: 1834-1835թթ. գանձատունը՝ որպես վարչական մարմին, կորցրեց իր ինքնուրույն նշանակությունը՝ փոխանցելով ղեկավարման հիմնական գործառույթները նորաստեղծ ֆինանսական մուտքերի դիվանին (դիվան ալ-իռադաթ): 1837թ. այդ դիվանը բաժանվեց 2 մասի. առաջինը վարում էր բոլոր ֆինանսական մուտքերի հաշվետվությունն անմիջապես Եգիպտոսում (բացի գյուղական շրջաններից), իսկ երկրորդը՝ բոլոր մարզերից, ինչպես նաև Կրետեից և Սուդանից եկող դրամական մուտքերի հաշվետվությունը: Գյուղական շրջաններից ֆինանսական մուտքերի հաշվետվությունը գտնվում էր առևտրի դիվանի տնօրինության տակ (դիվան աթ-թիջարա) այն դեպքում, երբ Սիրիայի ֆինանսական գործերը գտնվում էին հատուկ տեսուչի տնօրինության տակ (մուբաշիր): Հարկերը հավաքվում էին նահանգների մուդիրների կողմից և ուղարկվում էին «դիվան ալ-իռադաթ»: Ֆրանսիացի խորհրդական Ռուզզետի (ում 2 տարով վարձել էին Ֆրանսիայի ֆինանսների նախարարությունից՝ Եգիպտոսի

[231] سلوى العطار, նշվ. աշխ., էջ 310-311:
[232] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 107:

ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով) խորհրդով 1844թ. «դիվան ալ-իռադաթը» վերջնականապես լուծարվեց՝ այդպես էլ չտալով սպասված արդյունքը: Այնուհետև կառավարության բոլոր ֆինանսական վարումները կենտրոնացվեցին մեկ դիվանի շրջանակներում՝ «ադ-դիվան ալ-մաիյա ալ-միսրիա», որը ղեկավարում էր հատուկ պաշտոնյա՝ «նազիրը»: Մուհամմադ Ալիի կողմից հարկահավաքության և ֆինանսական համակարգում կատարվող բարեփոխումների գլխավոր խնդիրը նպատակաուղղված էր ֆինանսական չարաշահումները, գանձարանի թալանը և միջոցների վատնումը սահմանափակելուն, որոնք մեծ մասամբ հնամենի հաշվապահական սխալների արդյունք էին, երբ գոյություն չուներ հետևողական հսկողություն մուտքագրվող և ելքագրվող դրամական միջոցների նկատմամբ[233]:

Մուհամմադ Ալիի օրոք երկրի ամենաազդեցիկ վարչական մարմինը դարձավ Վարչական խորհուրդը: 1833-1844թթ. այն վերանվանվեց «Ծուրա ալ-մուավանա» («Օժանդակ խորհուրդ»), այնուհետև նորից ստացավ իր սկզբնական անունը: Վերջինի օգնությամբ «վալին» կարող էր արդյունավետ ազդել երկրի վարչական քաղաքականության վրա: Բոլոր կարևոր որոշումներն ընդունում էր երկրի ղեկավարը Վարչական խորհրդի հետհամատեղ, և դրանք ձևակերպվում էին հրամանների և կարգադրությունների տեսքով: Խորհրդի գլխավոր խնդիրն էր երկրում օրինականության հսկումը և պետական կարգադրությունների իրագործումը: Խորհրդի իրավասությունների մեջ մտնում էին կանոնավոր հաշվետվությունների (քուշուֆաթ) պատրաստումը և ներկայացումը Մուհամմադ Ալիին, հարցերի քննարկումը, որոնք կապված էին պաշտոնյաների պարտականությունների խախտումների հետ, դիվանագիտական նամակագրություն վարելը արտասահմանյան երկրների, ինչպես նաև Կոստանդնուպոլսի հետ: Խորհուրդը կազմված էր 2 պալատից՝ արաբական և թուրքական, որոնք պատասխանատու էին բոլոր փաստաթղթերի և նյութերի՝ համապատասխան լեզուներով թարգմանությունների համար[234]:

---

[233] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 107-108:
[234] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 102-103:

Խորհրդի գործունեությունը սերտորեն կապված էր այսպես կոչված «օգնականների» (մուավինուն) ինստիտուտի հետ, ովքեր մտնում էին երկրի բոլոր վարչական մարմինների մեջ՝ կատարելով հսկողների և ուղեկցողների դեր պետության գերագույն ղեկավարի քաղաքականության մեջ: Նրանք բոլորը ենթարկվում էին «գերագույն օգնականին» (բաշ մուավինին): Այդ պաշտոնը 10 տարի զբաղեցրեց Սամի բեյը (1831-1841թթ.), հետո նրան փոխարինեցին Հուսայն փաշան, Ռաղիբ փաշան, Յուսուֆ Քամիլ փաշան: Մուավինները զբաղեցնում էին ամենատարբեր պաշտոնները բանակային սպաներից մինչև գերագույն պաշտոններ բանակում, նավատորմում և քաղաքացիական հիմնարկներում[235]:

Մուհամմադ Ալիի օրոք Եգիպտոսի վարչական համակարգի կառուցվածքի հիմքը կազմում էին խորհրդատվական-գործադիր վարչական մարմինները՝ դիվանները (խորհուրդները) և մաջլիսները (ասամբլեաները): Նրանց միջև սկզբունքային տարբերություն չկար: Այսպես, բարձրագույն խորհրդատվական մարմինը՝ խեդիվի դիվանը, որը ձևավորվել էր 1805թ. Մուհամմադ Ալիի կողմից, 1824թ. ռազմական դիվանի հետ միաձուլվելուց հետո վերանվանվեց «ալ-Մաջլիս ալ-ալի» (Բարձրագույն ասամբլեա), իսկ ավելի ուշ՝ «ալ-Մաջլիս ալ-ջիհադի» (Սրբազան պատերազմի ասամբլեա): Խեդիվի դիվանը երկրի խորհրդատվական-գործադիր իշխանության կարևորագույն ինստիտուտն էր և զբաղվում էր ներքին քաղաքականության հարցերով (բացառությամբ ֆինանսական գործերի): 1846թ. նրա տնօրինության տակ գտնվում էին բազմաթիվ բաժանմունքներ (մասալիհներ), այդ թվում՝ գանձատան, վաքֆերի, անշարժ գույքի, ծախսերի, անձնագրային, փոստային, դատական գործընթացների, արաբական բյուրոյի և այլն բաժանմունքներ: Մինչև 1842թ. խեդիվի դիվանը լուծում էր նաև դատական հարցերը, իսկ 1842թ. հետո դրանք փոխանցվեցին դատական բարձրագույն մարմին՝ «Մաջլիս ալ-ջամիա ալ-հականիա»-ին[236]: Բաժանմունքների մեծ մասը ստեղծվում էր որոշակի պայմաններում՝ նպատակ ունենալով լուծել խիստ անհրաժեշտ հարցեր: Դրանք ենթարկվում

[235] Նույն տեղում, էջ 104:
[236] Hill E., Courts and the Administration of Justice in the Modern Era, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 99.

և հաշվետու էին Մուհամմադ Ալիին, ով ցավով էր ընդունում գործառնային թերությունները, որոնք առաջանում էին իր կողմից ստեղծված վարչական համակարգերի գործունեությունից:

Մուհամմադ Ալին շուտով հասկացավ, որ վարչական միջոցներն արդյունք տալ չեն կարող, եթե նրանք չեն կառուցվում օրինականության հիմքի վրա և չեն սատարվում հասարակական ազդեցիկ ուժերի կողմից: Ձգտելով շտկել ստեղծված իրավիճակը՝ Մուհամմադ Ալին Խեդիվի դիվանի հետ մեկտեղ 1829թ. օգոստոսին ձևավորեց «Մաջլիս աշ-շուրան» (խորհրդատվական խորհուրդ), որն արտաքնապես հիշեցնում էր օսմանյան ժամանակաշրջանի Գերագույն դիվանը, ինչպես նաև Նապոլեոնի կողմից ստեղծված դիվանը: Գերագույն դիվանում նախագահում էր Իբրահիմ փաշան: Խորհրդի մեջ մտնում էին 33 բարձրաստիճան անձինք, դիվանների և բաժանմունքների ղեկավարներ, հոգևոր գործիչներ, մուֆթիներ, խոշոր սուֆիական միավորումների ղեկավարներ՝ շեյխեր ալ-Բաքրին և աս-Սադաթը, 24 բաժանմունքների ղեկավարներ, գյուղերի մոտ 100 շեյխեր[237]: Մուհամմադ Ալիի օրոք այս մարմնի կարևոր յուրահատկությունն այն էր, որ նրա կազմում գերակշռում էին ստորին և միջին վարչական օղակի ներկայացուցիչները: Այս մարմինն օրենսդրական չէր և իրականացնում էր միմիայն խորհրդատվական գործառույթներ: Վերջինի առանձնահատկությունն էր, որ նրա օգնությամբ Մուհամմադ Ալին օրինականացնում էր այնպիսի պետական փաստաթղթեր, ինչպիսին էր գյուղացիների գյուղատնտեսական գործունեության մանիֆեստը (1829թ.), որում նկարագրված էր թե ինչպես վարել գյուղատնտեսական աշխատանքները, ինչպիսի պետական մարմիններ են ներգրավված, և ինչպես կարող են նրանց հսկել[238]:

Ինչպես նշվում է վերևում, գործադիր մարմինների (դիվանների) կառուցվածքը ստեղծվում էր իրավիճակների ազդեցության տակ և հստակ խնդիրների լուծման համար: Այսպես, 1814թ. նավատորմի ստեղծման առիթով կազմակերպվեց ծովային գործերի և ծովագնացության դպրոցների դիվան (ադ-դիվան ալ-

[237] سامي أمين، تقويم النيل، ج. ٢، القاهرة، ١٩٣٦، ص. ٣٥٢-٣٥٣.
[238] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 108-109:

բահրի վա-ալ-մադարիս ալ-բահրիա), 1817թ. ստեղծվեց գյուղատնտեսական դիվանը (դիվան ազ-զահրիա), բանակային գործերի դիվանը (ադ-դիվան ալ-ջիհադի), որն առաջ եկավ 1822թ. կանոնավոր զորամասերի առաջացման կապակցությամբ, 1824թ. առաջ եկավ արդյունաբերական գործերի դիվանը (դիվան ալ-ֆաուրիկատ), 1828թ. ստեղծվեց պետական լրատվության բաժանմունքը (դիվան ալ-ժուրնալ), 1829թ. ստեղծվեց պետական արխիվը (դեֆթերհանե)[239]: Մուհամմադ Ալիի օրոք նշանակալի թվով դիվանների կողքին ստեղծվեց մանր վարչությունների ցանց (մասալիհ)՝ ներառելով մետաքսի, վառոդի, նավաշինության, հրացանների և հրանոթների արտադրության, շաքարի, սուրճի, փռերի, շինարարական աշխատանքների, պահեստների և այլ վարչություններ[240]: Դիվանների և վարչությունների աճը պահանջում էր դրանց գործունեության համադասում և արտոնությունների սահմանափակում: Հոգալով այդ մասին՝ Մուհամմադ Ալին հանձնարարեց իր օգնականներից քեթխուդա Մուհամմադ Լազ Օղլուին նախագիծ պատրաստել առաջին հերթին հաշվապահական գործերում վարչությունների վերակազմավորման համար[241]:

Չնայած իրենց լայնածավալ բնույթին՝ վարչական բարեփոխումները տևական ժամանակ խորը հետևանքներ չունեցան երկրի հասարակական կյանքի համար: Անդրադառնալով բյուրոկրատական բուրգի վերին շերտերին՝ բարեփոխումները կորցնում էին իրենց նշանակությունը միջին և ստորին վարչական համակարգի օղակներում: Բարեփոխումների արդյունավետությունը վերին մակարդակում բացատրվում էր նրանով, որ Մուհամմադ Ալին, օժտված լինելով որոշումներ կայացնելու միանձնյա իրավունքով, համեմատաբար հեշտ էր հասնում դրանց իրականացմանը երկրի բյուրոկրատական վերնախավի կողմից, քանի որ այն բաղկացած էր նրա ընտանիքի անդամներից և մերձավորներից: Սակայն եթե որոշումների ընդունումը համեմատաբար հեշտ էր իրականացվում Մուհամմադ Ալիի մոտ, ապա դրանց կյանքի կոչելը բախվում էր բազմաթիվ

[239] Rivlin H., նշվ. աշխ., էջ 75-79:
[240] Ayubi N., Bureaucracy and Politics in Contemporary Egypt, London, 1980, p. 102-104.
[241] Hamed R., նշվ. աշխ., էջ 77:

խնդիրների, քանի որ այն իրենից պահանջում էր բազմաթիվ՝ իր հետ ուղղակիորեն չառնչվող մարդկանց քրտնաջան աշխատանքը: Վարչական համակարգի անարդյունավետության գլխավոր պատճառն այն էր, որ քաղաքական նոր վերնախավի ձևավորումը չէր ուղեկցվում ստորին վարչական օղակի հասարակական կազմի համապատասխան փոփոխություններով[242]:

Մուհամմադ Ալին աստիճանաբար հանգեց այն մտքին, որ իր կողմից ստեղծված վարչական համակարգի անարդյունավետությունը մեծապես պայմանավորված է որոշումներ ընդունող բյուրոկրատական վերնախավի և այդ արդյունավետության իրականացման համար պատասխանատու ստորին վարչական մակարդակների փոխհարաբերություններով: 1808թ. վերոնշյալ խնդրի լուծման համար Մուհամմադ Ալին ձեռնամուխ եղավ Եգիպտոսի վարչատարածքային բաժանման բարեփոխմանը[243]: 1825թ. հետո կատարվեց Եգիպտոսի տարածքային նոր բաժանումը, որի արդյունքում երկիրը տրոհվեց 24 շրջանների (կղիսմ)՝ հետագայում վերափոխվելով 7 մարզերի (իկղլիմ), որոնք իրենց հերթին վերակազմվեցին մուդիրիաների: 1833-1834թթ. հաշվվում էր 10 մուդիրիա (7-ը՝ Դելտայում, 3-ը՝ Միջին և Վերին Եգիպտոսում), որոնք կառավարում էին տեղական վարչությունների ղեկավարները՝ մուդիրները: Նրանց պարտականությունների մեջ, ի տարբերություն նախկին համակարգի, հարկահավաքության և կարգ ու կանոնի ապահովմանը զուգընթաց մտնում էին պետական հաստատությունների կառավարումը, ոռոգման համակարգերի, կամուրջների և ճանապարհների աշխատանքի ապահովումը, նոր հողերի յուրացումը և բազմաթիվ այլ տնտեսական գործառույթներ, որոնց Մուհամմադ Ալին տալիս էր առաջնակարգ նշանակություն[244]:

Վարչատարածքային նոր բաժանմանն ուղղված բարեփոխումը, դյուրացնելով երկրի կառավարումը, չլուծեց փոխհարաբերությունների գլխավոր խնդիրը, որն առկա էր բյուրոկրատական վերնախավի և ստորին վարչական գործադիր իշխանության միջև: Ձգտելով բարձրացնել վարչական համակարգի

---

[242] Hamed R., նշվ. աշխ., էջ 77:
[243] محمد نور فرحات، القضاء الشرعي في مصر في العصر العثماني، القاهرة، ١٩٨٨، ص. ٩٦.
[244] Rivlin H., նշվ. աշխ., էջ 87-88:

արդյունավետությունը՝ Մուհամմադ Ալին հասավ դրա կենտրոնացմանը: Հին վարչական համակարգը, որի կենտրոնական դեմքը «քաշիֆներն» էին՝ մարզային վարչությունների ղեկավարները, որոնք իրենց մարզերում ունեին լայն արտոնություններ, ամբողջապես վերակառուցվեց վարչական կենտրոնացման, ստորակարգման և կանոնակարգման գործառույթների սկզբունքների հիման վրա: Մուհամմադ Ալիի կադրային քաղաքականության առանցքում էր այն, որ բարձրագույն պետական պաշտոնները զբաղեցնում էին իրեն անձնապես նվիրված սպաները կամ մերձավոր ազգականները: Պաշտոնյաներ նշանակելու ժամանակ վերջինների մասնագիտական հատկանիշները երկրորդական տեղ էին գրավում, այդ պատճառով եվրոպական օրինակով վերակառուցված պետական համակարգը, ինչպես և նախկինում, պահպանում էր անձնային բնույթը[245]:

Եգիպտոսի վարչաքաղաքական կյանքի կարևորագույն իրադարձությունը, որն ազդեցություն թողեց երկրի պետական կառուցվածքի հետագա գործընթացի վրա, 1837թ. Մուհամմադ Ալիի կարգադրությամբ ստեղծված Վարչական օրենսգիրքն էր՝ «Քանուն աս-Սիասաթնամե» անունով[246]:

Օրենսգրքի առաջին բաժնում նկարագրվում էր վարչական մարմինների կենտրոնացված համակարգը: Գլխավորը խեդիվն էր, ով ուներ միանձնյա որոշումներ ընդունելու իրավունք: Նրա օրոք ստեղծվեց խորհուրդ (շուրա)՝ որպես օժանդակ խորհրդատվական մարմին: Պետական համակարգի կառուցվածքային հիմքը կազմում էին 7 հիմնական դիվանները, որոնք ղեկավարվում էին գլխավոր տնօրենների (ալ-մուդիր ալ-ամմ) կողմից: Դիվանը բաժանվում էր վարչությունների (մասլահա), որոնք ղեկավարվում էին տնօրենների (մուդիր) կողմից: Վարչությունները կազմված էին բաժանմունքներից (վարշա)՝ հսկիչների (նազիր) գլխավորությամբ[247]:

Համաձայն երկրի կառավարման համակարգում ունեցած իրենց նշանակության՝ դիվանները դասակարգվեցին հետևյալ կերպ.

[245] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 138:
[246] Hamed R., նշվ. աշխ., էջ 78:
[247] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 140:

1. կառավարչին առընթեր խորհուրդ (դիվան ալ-խեդիվ), որի իրավասության տակ մտնում էին մուսուլմանական պետության համար ավանդական գործառույթները՝ ֆինանսական գործունեության (ռուզնամեի վարչություն), պետական սեփականության (բեյթ ալ-մալ), դրամահատարանի, շուկաների տեսչության (հիսբա) հսկողությունը: Դիվան ալ-խեդիվի նոր իրավասության տակ մտնում էր քաղաքային տարածքների, առաջին հերթին՝ Կահիրեի կառավարումը, որն առաջ մտնում էր քեթխուդայի պարտականությունների մեջ, ինչպես նաև մարզային վարչակարգի ընդհանուր և մարզերի մուդիրների անմիջական հսկողությունը: Այս դիվանի նոր գործառնական պարտականությունների մեջ մտնում էին տրանսպորտային և առևտրական հարցերի լուծումը, ներառյալ Մահմուդիաջրանցքի աշխատանքային վիճակի ապահովումը, փոստային ծառայության, քարավանային առևտրի, աշխատանքային պալատի (մաջլիս աթ-թուդջար), եվրոպական առևտրային պալատի (մաջլիս թուդջար ալ-ուռուբբա) գործունեության հսկողությունը, որոնք գործում էին որպես առևտրային դատարաններ[248]: Ըստ էության խեդիվի դիվանը նոր կենտրոնացված վարչական համակարգի կարևորագույն մարմինն էր, որի իրավասության տակ մտնում էր ֆինանսական, իրավաբանական և վարչական հարցերի մի ամբողջ փաթեթ՝ բյուջեի, փողի շրջանառության, ներքին առևտրի հսկողություն, մայրաքաղաքի և մարզերի վարչական կառավարում[249]:
2. Ֆինանսների (եկամուտների) կառավարման վարչություն (դիվան ալ-իռադաթ), որը կազմված էր 2 բաժիններից: Դրանցից մեկը տնօրինում էր բուն Եգիպտոսի, ինչպես նաև Կրետեի, Հիջազի և Սուդանի ֆինանսական հարցերը, երկրորդը՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի՝ ներառյալ պետական տուրքերի և հարկերի բոլոր տեսակները: Երկու բաժիններն էլ ղեկավարում էին գլխավոր տնօրենները (մուդարաումում): Սիրիայի նկատմամբ ֆինանսական հսկողությունն իրականացվում էր առանձին՝ հաշվի առնելով նրա ինքնավար վիճակը, որից օգտվում էր այդ

[248] Hamed R., նշվ. աշխ., էջ 80:
[249] Rivlin H., նշվ. աշխ., էջ 79-80:

մարզը ղեկավարող Իբրահիմ փաշան: Սիրիայի ֆինանսական հարցերը գտնվում էին հատուկ պաշտոնյայի (մուբաշիր) իրավասության տակ, ով տարեվերջին հաշվետվություն էր ներկայացնում խեդիվին Սիրիայի ֆինանսական վիճակի մասին[250]: 1844թ. այդ 2 բաժինները միացան մեկ ընդհանուր՝ եգիպտական ֆինանսական վարչության մեջ (դիվան ալ-մալիա ալ-միսրիա), որը ղեկավարում էր Ծարիֆ փաշան[251]:

3. Ռազմական վարչություն (դիվան ալ-ջիհադիա), որը զբաղվում էր բանակի համալրման հարցերով, զորքերի մարտական և շարային նախապատրաստումով, զորամասերի և ստորաբաժանումների ձևավորումով: Այս վարչության և նրան ենթակա բաժինների ու դեպարտամենտների մեջ մտնում էր ռազմական կրթության համակարգի, հիվանդանոցների, ռազմական արդյունաբերության, ռազմական պահեստների և այլ հարցերի հսկողությունը, որոնք վերաբերում էին բանակին[252]:
4. Ծովային վարչություն (դիվան ալ-բահր), որը զբաղվում էր Եգիպտոսում նավարկության, նավաշինության, ծովային կրթության հարցերով (մասնավորապես Ալեքսանդրիայում), պահեստներով և հանդերձանքով, ինչպես նաև Ալեքսանդրիայի և նրա ենթաշրջանների ծովային հիվանդանոցներով:
5. Կրթության վարչություն (դիվան ալ-մադարիս), որը հսկում և ղեկավարում էր Եգիպտոսի բոլոր ուսումնական հաստատությունները: Նրա իրավասության տակ էին գտնվում քաղաքացիական դպրոցները, գրադարանները, լաբորատորիաները, պետական հրատարակչական գործը՝ ներառյալ «Եգիպտական նորություններ» (Ալ-Վակայի ալ-Միսրիա) թերթը: Բացի այդ, վարչությունը զբաղվում էր ոռոգման հարցերով, որը պահանջում էր ժամանակակից գիտելիքների իմացություն, ինչպես նաև հասարակական գործերով, առաջին հերթին ջրամբարների և ոռոգման այլ կառույցների շինարարությամբ:
6. Արտաքին գործերի և եգիպտական առևտրի վարչություն (դիվան ալ-ումուռ ալ-աֆրանջիա վա աթ-թիջարա ալ-միսրիա), որը

[250] لطيفة محمد سالم، الحكم المصري في الشام (١٨٣١-١٨٤١م)، القاهرة، ١٩٩٠، ص. ١١٧-١٢٠.
[251] Hamed R., նշվ. աշխ., էջ 80-81:
[252] Նույն տեղում, էջ 81:

զբաղվում էր եգիպտական ապրանքների իրացման ընդհանուր հարցերով և կանոնավոր եկամուտների վարչություն էր ներկայացնում երկրի ամբողջ առևտրական գործունեությանը վերաբերող փաստաթղթեր՝ աուդիտորական ստուգում անցկացնելու համար[253]:

7. Արդյունաբերության վարչություն (դիվան ալ-ֆաուրիկաթ), որը ղեկավարում էր ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզերի քաղաքացիական բոլոր հաստատությունները: Բոլոր ֆինանսական փաստաթղթերն այդ վարչության կողմից պետք է ներկայացվեին եկամուտների վարչություն՝ ստուգման համար[254]:

Յուրաքանչյուր վարչություն ամեն շաբաթ (երեքշաբթի օրերին) պետք է խեդիվին (վալիին) հաշվետվություն ուղարկեր իր կատարած աշխատանքների և ծագած խնդիրների մասին: Ընդհանուր հարցերը լուծելու և առանձին վարչությունների գործողությունները համակարգելու նպատակով ամեն տարի ժողովներ էին գումարվում բոլոր վարչությունների տնօրենների և պետության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ[255]:

Վարչությունների ֆինանսական գործունեությունն իրականացվում էր խեդիվի կողմից հաստատված բյուջեներով, որոնք մշակվում էին վարչությունների կողմից: Բյուջեով նախատեսված ծախսերի գերազանցումը կատարվում էր միայն խեդիվի անձնական թույլտվությամբ: Վարչությունների ամենամսյա ֆինանսական հաշվետվությունները նույնպես ներկայացվում էին անձնապես խեդիվին, իսկ տարեկանը՝ ֆինանսների վարչությանը, որտեղ այն մանրակրկիտ ստուգվում էր: Բոլոր ֆինանսական փաստաթղթերը պետք է պահպանվեին վարչությունների կողմից մինչև ֆինանսական տարվա ավարտը, որից հետո դրանք ենթակա էին ոչնչացման: Օրենսգրքի առաջին մասում խոսքը համակարգող, խորհրդատվական մարմնի ստեղծման մասին էր, որը պետք է կոչվեր խորհրդատուների կոմիտե (շուրա) և պետք է կազմված լիներ 7 անդամներից, ովքեր պետք է լինեին գերագույն վարչական

[253] Rivlin H., նշվ. աշխ., էջ 83-84:
[254] Hamed R., նշվ. աշխ., էջ 82:
[255] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 143:

պաշտոնյաներ, բայց չլինեին վարչությունների տնօրեններ: Կոմիտեի պարտականությունների մեջ մտնում էր ամենշաբաթյա հաշվետվությունների ստուգումը, որոնք վարչությունների կողմից ներկայացվում էին խեդիվին, և դրանց հիման վրա մշակվում էին անհրաժեշտ լուծումներ և հանձնարարականներ: Կոմիտեն պետք է կատարեր նաև դատական մարմնի դեր վարչական մարմինների, հատկապես վարչությունների տնօրենների և բաժինների ղեկավարների (մասլահա) կողմից կատարված չարաշահումները և բացթողումները քննարկելու ուղղությամբ[256]:

Օրենսգրքի երկրորդ մասը պարունակում էր բացատրություններ բարձրաստիճան պաշտոնյաների (ինչպես կենտրոնական, այնպես էլ մարզային վարչությունների) մասնագիտական պարտականությունների կատարման մասին: Օրենսգրքի այս մասի հոդվածներում խոսվում էր, որ բարձրաստիճան պաշտոնյաները պետք է հոգան հարկերն ամբողջական ծավալով բնակչությունից ժամանակին հավաքելու մասին, պահպանելու ոռոգման համակարգերը աշխատանքային վիճակում և հսկելու գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարումը: Պաշտոնյաներին կարգադրվում էր կանխել գյուղացիների նկատմամբ չարաշահումները, հատկապես նրանց ստիպողական անվճար աշխատանքի օգտագործումը: Խոսվում էր նաև բարձրաստիճան ֆինանսական պաշտոնյաների (սառաֆների) գործառույթների կարգի մասին, հարկային գրասենյակների (իլթիզամ) աշխատանքային կարգի մասին և այլն: Օրենսգրքի մի շարք հոդվածներ պարզաբանում էին գյուղացիների գյուղատնտեսական արտադրանքի իրացման և այն պետության կողմից գնելու կարգը և պայմանները: Հոդվածներ կային, որոնք վերաբերում էին արդյունաբերական արտադրությանը և արդյունաբերական ձեռնարկություններին: Օրենսգրքում նույնիսկ անդրադարձ էր կատարվում աշխատողների անձնական նախաձեռնության խթանման համակարգերին[257]:

Օրենսգրքի մի մասը նվիրված էր պետական պաշտոնյաների պատժամիջոցներին՝ տարբեր բացթողումներին, կոպիտ

[256] Hamed R., նշվ. աշխ., էջ 82-83:
[257] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 143-144:

խախտումներին և հանցագործություններին: Պատիժները 2 տեսակի էին. առաջին հերթին աշխատանքի անբավարար որակին հետևում էին մարմնական պատիժներ՝ ճիպոտահարում՝ կախված հանցագործության ծանրությունից (25-500 հարված): Իսկ ավելի լուրջ հանցանքների համար՝ բանտարկություն (6 ամսից մինչև 5 տարի): Ավելի խիստ պատժվում էին այնպիսի չարաշահումները, ինչպիսիք էին պետական միջոցների հափշտակումը, կաշառակերությունը, պետական փաստաթղթերի կեղծումը և սպանությունը: Վերջին դեպքում բանտարկությունը կարող էր լինել ցմահ, եթե մեղավորը չէր կարող սպանվածի ընտանիքին վճարել օրենքով նախատեսված դրամական փոխհատուցումը[258]:

Վարչաքաղաքական համակարգի բարեփոխումներում ակնհայտ է Եվրոպայի ազդեցությունը, սակայն անվիճելի է նախկինում գոյություն ունեցող վարչական ձևերի ժառանգությունը: Պետական վարչական համակարգի գերկենտրոնացումը Մուհամմադ Ալիին չտվեց դրական արդյունքներ, քանի որ չէր կարող արմատախիլ անել եգիպտական բյուրոկրատիայում գոյություն ունեցող մշտական արատները[259]: Այսպես, կաշառակերության և թալանի հետևանքով պետական գանձարանի կորուստները գնահատվում էին բնակչությունից գանձվող դրամական միջոցների 40%-ի չափով: Գործնականում թույլ էր առանձին վարչությունների գործողությունների համաձայնեցումը, քանի որ խեդիվը, չվստահելով իր կողմից ստեղծված մարմիններին, ձգտում էր անձամբ հսկել բոլոր հնապաշտական վարչական գործերը[260]:

1840-ական թթ. Մուհամմադ Ալին խստացրեց վարչական կառույցի համակենտրոնացումը, սակայն չհասավ նրա աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Նոր վարչական օրենսգիրքը հիմք չհանդիսացավ վարչական համակարգի առավել արդյունավետ գործունեության համար: Պահպանելով իրենց նահապետական ավանդույթները՝ պետական կառավարման մարմիններն այդպես էլ մնացին Մուհամմադ Ալիի «ընտանեկան ձեռնարկությունը»[261]:

---

[258] Hamed R., նշվ. աշխ., էջ 83:
[259] Նույն տեղում, էջ 84-85:
[260] Rivlin H., նշվ. աշխ., էջ 86:
[261] Tignor R., Modernization and British Colonial Rule in Egypt (1882-1914), New Jersey, 1966, p. 32.

Այնուհանդերձ Վարչական օրենսգիրքը (Կանուն աս-Սիասաթնամե) կարևոր նշանակություն ունեցավ Եգիպտոսի ապագայի համար: Այն չլուծեց առկա համակարգային խնդիրները, սակայն ռազմավարական տեսանկյունից որոշեց եգիպտական վարչական իշխանության զարգացման կարևորագույն միտումները հաջորդող տասնամյակների համար: Մինչև 1878թ. այդ փաստաթուղթը Եգիպտոսում հանրային իշխանության գործունեության իրավական հիմքն էր, որով ղեկավարվում էին իշխանության գլուխ կանգնած Մուհամմադ Ալիի ժառանգորդները[262]: Բարեփոխումների ցածր արդյունավետությունը բացատրվում էր նրանով, որ, ի տարբերություն եվրոպական երկրների, որտեղ բյուրոկրատական պետականության առաջացմանը նախորդում էր բնակչության քաղաքացիական կորպորատիվության զգացողությունը, Եգիպտոսում Մուհամմադ Ալիի օրոք սկզբում առաջացավ պետական մարմինների կառույցը, իսկ հետո նրա որոշակի լրացումը եգիպտացիներով սկսեց ձևավորել նրանց քաղաքացիական համերաշխության և պատասխանատվության զգացողությունը: Փարավոնների ժամանակներից սկսած՝ առաջին անգամ գերագույն իշխանությունը եգիպտացիներին հնարավորություն տվեց զգալու իրենց որպես պետության մի մաս, սակայն ամբողջական ներգրավվածությունը տեղի ունեցավ միայն 100 տարի հետո՝ XX դ. 30-ական թթ., երբ ամբողջ վարչական համակարգն ամբողջապես համալրվեց եգիպտացիներով, և այնտեղից դուրս մղվեցին բոլոր ոչ եգիպտական տարրերը[263]:

Եվրոպական տիպի նախարարական համակարգը սկսեց Եգիպտոս ներմուծվել միայն խեդիվ Իսմայիլի ժամանակ 1878թ.՝ հետո, իսկ վերջնականապես ձևավորվեց 1923թ., ինչը նշանակում էր եգիպտական պետականության անցումը ավտորիտար-բյուրոկրատական ձևի՝ մրցակցային օլիգարխիայի տարրերով[264]: Մուհամմադ Ալիի օրոք այդ ուղղությամբ արվել էր միայն առաջին քայլը՝ Եգիպտոսում պետական իշխանության գործառույթների շերտավորումը, սակայն իշխանության կառույցի կենտրոնական տեղը գրավում էր ինքը՝

[262] Hamed R., նշվ. աշխ., էջ 85:
[263] Marsot A. L. al-S., A Short History of Modern Egypt, Cambridge, 1985, p. 60.
[264] Rizk Y., The Development of the Ministerial System in Egypt 1878-1923, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 87-97.

Մուհամմադ Ալին, ով ձգտում էր իրականացնել իր կողմից ստեղծված վարչական մարմինների անձնական հսկողությունը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Եգիպտոսը, դարեր շարունակ կանգնած լինելով քաղաքական և հասարակական բարդ խնդիրների առջև, Մուհամմադ Ալիի նախաձեռնած բարեփոխումների շնորհիվ XIX դարի առաջին կեսին էական փոփոխությունների ենթարկվեց: Մեծ եղավ Մուհամմադ Ալիի ներդրումը Եգիպտոսի քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունացման, զարգացման և Օսմանյան կայսրության անմիջական հսկողությունից ձերբազատվելու գործում: 1811թ. նա հիմք դրեց կենտրոնացված պետական կառավարման համակարգին, ինչն իր հերթին ռազմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում արմատական փոփոխությունների իրականացման հենասյունն էր: Եգիպտոսի պետական համակարգում ներդնելով կառավարման լավագույն միջազգային փորձը՝ Մուհամմադ Ալիի առջև, այնուամենայնիվ, կանգնեց ֆորմալ կառավարման սկզբունքների գործնական կիրառության խնդիրը:

Չնայած կառավարման, իրագործման և վերահսկողության առաջադեմ մոտեցումների որդեգրմանը՝ Մուհամմադ Ալին չկարողացավ ամբողջությամբ օգտագործել վերջինների իրական ներուժը՝ մեծամասամբ պայմանավորված կառավարման միանձնյա համակարգի թերություններով և կառավարման միջին ու ստորին օղակներում հետևողականության, վերահսկողության, սկզբունքայնության, արմատացած կոռուպցիոն մտածելակերպի և պետական մոտեցումների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, երկրի կառավարման նորաստեղծ համակարգը՝ որպես տեսական և գործնական մոտեցումների համախումբ, որակապես տարբերվեց նախորդներից և հիմք դրեց սոցիալ-տնտեսական երկարաժամկետ բարեփոխումների մի ամբողջ շարքի, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն ունեցան ինչպես ողջ երկրում, այնպես էլ յուրաքանչյուր եգիպտացու կյանքում:

2.3. Մուհամմադ Ալիի իրականացրած բարեփոխումները ռազմական ոլորտում

Մուհամմադ Ալին, 1805թ. իշխանության գալով Եգիպտոսում, ժառանգություն ստացավ մի երկիր՝ քայքայված տնտեսությամբ, կառավարման բարդ ու հետադիմական համակարգով, օսմանյան սուլթանների, նրանց տեղական պաշտոնյաների և մամլուքների կամայականությունների ու բռնությունների վրա խարսխված իշխանությամբ: Տրամաբանորեն մոտենալով իր իշխանության հիմքերի կառուցմանը և կայուն հիմքեր պատրաստելով հետագա սոցիալ-տնտեսական բարեփոխումների համար՝ Մուհամմադ Ալին իրավացիորեն առաջնային դեր հատկացրեց հուսալի բանակի կառուցման հիմնախնդրին:

Որպես առաջադեմ ղեկավար՝ նա հստակ գիտակցում էր, որ բանակն առաջին հերթին մարդիկ են և նրանց կառավարումը. հենց այս մոտեցումը նա դարձրեց հիմք իր հետագա ռազմական մարտավարության կառուցման համար: Բանակի հիմնովին վերափոխման նպատակով նա որդեգրեց միջազգային լավագույն փորձը, մասնավորապես ֆրանսիական բանակի կառավարման մոտեցումները, ինչը մեծ հաշվով պայքար էր հին և արմատացած կարծրատիպերի դեմ:

Այսպես, XIX դարում Մուհամմադ Ալիի կողմից հաջողությամբ իրականացված ռազմական բարեփոխումների կարևոր նախադրյալը ֆրանսիական բանակի ներխուժումն էր Եգիպտոս (1798-1801թթ.): Չնայած այն բանին, որ ֆրանսիացիները վերջին հաշվով ջախջախիչ պարտություն կրեցին, ֆրանսիական ռազմարշավն ամբողջությամբ ցնցեց եգիպտական հասարակությանը և մասնավորապես եգիպտական ռազմական կազմակերպությանը: Ֆրանսիացիների օրոք հայտեկան սպառազինման նոր տեսակներ, մարտերը վարելու նոր ռազմավարություններ, զորքերը համախմբելու և ղեկավարելու նոր սկզբունքներ և այլն, որոնք Մուհամմադ Ալին հետագայում լայնորեն կիրառեց սեփական բանակի կառուցման գործընթացում: Ֆրանսիական ռազմարշավը խզեց տեղական բնակչության կապը մամլուքների հետ, ապացուցեց նրանց ռազմական անկարողությունը եվրոպացիների դեմ պայքարում: Մամլուքյան ռազմական կազմակերպության վարկաբեկումը բարոյահոգեբանական կարևոր

նախադրյալ էր Մուհամմադ Ալիի կողմից XIX դարում ձեռնարկված արմատական ռազմական բարեփոխումների համար:

Առաջին հերթին ուշադրության է արժանի ֆրանսիացիների հովանավորությամբ ստեղծված և վարժեցված քրիստոնեական ղպտիական զորախմբի գործունեությունը: Բանն այն է, որ Եգիպտոսում Բոնապարտն իրական աջակցություն ստացավ միայն քրիստոնյաների, առաջին հերթին ղպտիների կողմից՝ նրանց ռազմաքաղաքական առաջնորդ Յակուբ Խաննայի (Մուալլիմ Յակուբ) գլխավորությամբ, ով «...երազում էր հասնել Եգիպտոսի ինքնուրույնությանը եվրոպական պետությունների հովանավորության ներքո, ավելին՝ պատրաստ էր աջակցելու ցանկացած իշխանության, բացի թուրքերի և մամլուքների կառավարությունից»[265]: Մուսուլմանները մեծ մասամբ քրիստոնյաների այդ վարքը գնահատեցին որպես աջակցություն բռնազավթիչներին և մասնակցություն չունեցան ֆրանսիական վարչական մարմիններում, որում բարձրագույն պաշտոններում նշանակվեցին բացառապես քրիստոնյաներ՝ ղպտիներ, սիրիացիներ, մալթացիներ և հույներ:

1800թ. մայիսի 29-ին Յակուբ Խաննան սկսեց ղպտիական զորախմբի ձևավորումը, որը ֆրանսիական օկուպացիոն բանակի օժանդակ ստորաբաժանում էր, որտեղ հաշվվում էին ավելի քան 2000 ղպտի զինվորներ, ովքեր կրում էին ֆրանսիական զինվորական համազգեստ և գտնվում էին ֆրանսիական սպաների հրամանատարության տակ: 1800թ. հուլիսին գեներալ Կլեբերի դեմ մահափորձից և նրա վախճանից հետո Յակուբ Խաննան ֆրանսիացիներին առաջարկեց հայտարարել Եգիպտոսի անկախությունը, ինչը նրա զորախումբը կդարձներ անկախ պետության ազգային բանակ: Այս առաջարկը հավանության չարժանացավ ֆրանսիական բանակի նոր հրամանատար գեներալ Մենուի կողմից[266]: 1801թ. Յակուբ Խաննան արժանացավ ֆրանսիական օկուպացիոն բանակի բրիգադային գեներալի կոչման և հայտնի դարձավ գեներալ Յակուբ անունով: Ֆրանսիացիների կապիտուլյացիայից հետո ղպտիական զորախումբը լուծարվեց, իսկ

[265] Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., նշվ. աշխ., էջ 166:
[266] جرجي زيدان, նշվ. աշխ., էջ 27:

գեներալ Յակուբը ֆրանսիական զորաբանակի մնացորդների հետ հեռացավ Եգիպտոսից, բայց Ֆրանսիա չհասավ, քանի որ ճանապարհին մահացավ:

Հայտնի է, որ ղպտիների հետ միասին ֆրանսիական բանակում ծառայում էին 16-20 տարեկան բարձրակարգ ռազմական հմտություններով օժտված մամլուքներ, մաղրիբցի զինվորներ, հույներ, թուրքեր և սիրիացիներ: Հույները ծառայում էին ինչպես ցամաքային զորքերում, այնպես էլ նավատորմում, թուրքերը՝ ոստիկանական բաժանմունքներում, որոնք պարեկություն էին անում Կահիրեում և նրա շրջակայքում, սիրիացիները՝ հետևակային զորքերում և որպես թարգմանիչներ: Տեղեկություններ կան, որ բացի ղպտիներից ֆրանսիական բանակի կազմում սեփական զորախմբեր ունեին նաև հույները և սիրիացիները, ընդ որում հունական զորախմբերը համարվում էին առավել մարտունակ[267]:

1801-1805թթ. ֆրանսիական զորքերի տարհանումից հետո Եգիպտոսը գտնվում էր օսմանյան, բրիտանական և մամլուքյան ռազմական ստորաբաժանումների իշխանության ներքո, որոնք պայքար էին մղում իշխանության համար: Այս պայմաններում Մուհամմադ Ալին՝ օսմանյան բանակի ալբանական վարձկանների առաջնորդը, հակամարտող կողմերից անջատ այն մարմինն էր, ում ալբանացիների հետ մեկտեղ աջակցում էին թուրքական և մամլուքյան զորքերի մի մասը, ինչպես նաև իսլամական ազդեցիկ հոգևոր գործիչների խումբը և քաղաքային մեծամեծները: Ունենալով նման ազդեցիկ աջակցություն՝ նա 1805թ. իրականացրեց ռազմական հեղաշրջում և եկավ իշխանության[268]:

Մուհամմադ Ալին Եգիպտոս եկավ օսմանյան բանակի ալբանական ջոկատի կազմում կրտսեր սպայի կոչումով: Սկսած XVII դարի 2-րդ կեսից՝ ալբանացիներն օսմանյան բանակում կազմավորեցին ինքնուրույն զորախումբ և ծառայում էին ի հակակշիռ անվստահելի, ապստամբությունների հակված ենիչերիների[269]: 1801-1803թթ. Մուհամմադ Ալին դեռ չէր խորհում ռազմական

[267] Heyworth-Dunne J., An Introduction to the History of Education in Modern Egypt, London, 1968, p. 98, 467.
[268] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 36-50:
[269] Նույն տեղում, էջ 32:

բարեփոխումների մասին, այլ իր համար ճանապարհ էր հարթում ալբանական զորախմբի հրամանատարի պաշտոնի համար, որը նա ստացավ 1803թ. մայիսին[270]: 1803-1805թթ. նա ձգտում էր ամրապնդել իր քաղաքական և ռազմական դիրքերը՝ դաշինք կնքելով մամլուքյան ազդեցիկ խմբավորումներից մեկի հետ, որը գլխավորում էր Օսման բեյ ալ-Բարդիսին: Միևնույն ժամանակ նա ստացավ մուսուլմանական հոգևորականության աջակցությունը՝ Օմար Մակրամի գլխավորությամբ: Մուհամմադ Ալիի առաջ դրված էին հետևյալ խնդիրները. առաջին հերթին գալ իշխանության, երկրորդ՝ պահպանել այն: Վերոնշյալ 2 խնդիրներն էլ առաջնահերթ լուծվում էին բանակի միջոցով: Այդ ամբողջ ժամանակաշրջանում Մուհամմադ Ալիի հենարանը մնում էին ալբանական զորքերը և նրանց հետ կապված օսմանյան բանակի այլ ստորաբաժանումներ[271]:

1805թ. հուլիսին սուլթան Սելիմ III-ը հանգամանքների ճնշման տակ ստիպված էր հաստատել Մուհամմադ Ալիին որպես Եգիպտոսի կառավարիչ՝ նրա տնօրինությանը հանձնելով այնտեղ տեղակայված օսմանյան բոլոր զորքերը[272]: Դրանից հետո իշխանության պահպանման պայքարում Մուհամմադ Ալիի գլխավոր քաղաքական հակառակորդներն են դառնում մամլուքները և բրիտանացիները, որոնք միմյանց հետ ռազմական դաշինք էին կնքել: 1805-1815թ. Մուհամմադ Ալին շարունակում էր գործել եգիպտական ռազմական կազմակերպության ավանդական պատկերացումների ոգով: Ըստ դրանց՝ եգիպտական բանակը կազմված էր մանր ստորաբաժանումներից, որոնք ունեին իրենց հրամանատարները, ովքեր և վարձատրում էին իրենց զինվորներին: Այդպիսի կազմակերպությունը չէր կարող ունենալ միասնական հրամանատարություն, խիստ կարգապահություն, նույնիսկ հաղորդակցման միասնական լեզու: Մաղրիբցիները, ալբանացիները, բոսնիացիները, չերքեզները և այլք ծառայում էին եգիպտական օսմանյան բանակում միասնական ազգային խմբերով՝ այն դարձնելով էթնիկապես տարասեռ[273]:

---

[270] Holt P., նշվ. աշխ., 1966, էջ 176:
[271] عبد الرحمن زكي، التاريخ الحربي لعصر محمد علي الكبير، القاهرة، ١٩٥٠، ص. ٢٥.
[272] Holt P., նշվ. աշխ., 1966, էջ 77:
[273] عبد الرحمن الرافعي, նշվ աշխ., 1951, էջ 373-380:

Չնայած նրան, որ 1807թ. ավանդական բանակի օգնությամբ Մուհամմադ Ալին հասավ մի շարք ռազմական հաղթանակների մամլուքների և բրիտանացիների նկատմամբ, նա բավարարված չէր զինուժի վիճակով: Նա իրավացիորեն զգուշանում էր խռովություններից և ապստամբություններից, որոնցից մեկն էլ իրեն բերեց իշխանության: Կյանքը ցույց տվեց, որ այդ մտավախությունները իզուր չէին: 1807թ. բրիտանական ներխուժման ժամանակ Մուհամմադ Ալին ուշացրեց զորքերի ամենամյա աշխատավարձի վճարումը, ի պատասխան որի՝ գումար պահանջող ռազմական ստորաբաժանումները շարվեցին նրա նստավայրի առաջ և նրա ուղղությամբ կրակ բացեցին: Ծուտով անկարգությունները ընդգրկեցին ամբողջ Կահիրեն և շարունակվեցին մինչև աշխատավարձի պարտքի ամբողջական մարումը: Անհնազանդություն արտահայտեցին նաև մամլուքները: Դժգոհ լինելով Մուհամմադ Ալիի կողմից իրականացվող պետության օգտին հողերի շահագործման քաղաքականությունից՝ նրանք 2 անգամ՝ 1809 և 1810թթ., նրա դեմ ապստամբություն բարձրացրին, որոնք ճնշվեցին տվյալ պահին նահանգապետին հավատարիմ ալբանական զորքերի կողմից: Ապստամբած մամլուքների մի մասը փախավ Սուդան, իսկ մնացածները ստիպված էին ընդունել Մուհամմադ Ալիի իշխանությունը, բայց շարունակում էին ենթադրյալ վտանգ ներկայացնել, ինչը նրան մղեց մամլուքյան ռազմաքաղաքական վերնախավի լիկվիդացման[274]: Նրա բանակի կորիզն առաջվա պես մնում էին ալբանացիները, որոնց ուժերով 1811թ. մարտի 1-ին նա իրականացրեց 500 ակնառու մամլուքների, ներառյալ 24 բեյերի գնդակահարությունը[275]:

Հետազոտելով վերոնշյալ պատմական իրադարձությունները՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ բանակի կառավարման ոչ կենտրոնացված մեխանիզմը թեև ապահովում էր լրացուցիչ զինվորական ուժի ներգրավում, ինչն իր իրական դերն ունեցավ պայքարի տարբեր դրվագներում, սակայն այդ մեխանիզմը նաև շատ երերուն էր, քանի որ հիմնված չէր ազգային, կրոնական, սկզբունքային պայքարի վրա: Զերծ լինելով միասնական

[274] Луцкий В., նշվ. աշխ., էջ 48-49:
[275] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1951, էջ 108-116:

գաղափարախոսությունից՝ բանակի առանձին միավորումներ, ելնելով իրենց անձնական շահերից, յուրաքանչյուր պահի պատրաստ էին դուրս գալու պայքարի այն ուժերի դեմ, ում հետ գտնվում էին ռազմական դաշինքի մեջ:

1815թ. օգոստոսին՝ Արաբիայի ռազմարշավի ընթացքում վահաբիների դեմ տարած առաջին հաղթանակներից հետո, Մուհամմադ Ալին, ձգտելով թուլացնել իր կախումը զինվորական հրամանատարներից, փորձեց ստեղծել նոր տեսակի զորք: Դրա համար պաշտոնական առիթ հանդիսացան 1815թ. Հիջազից եկած մի քանի հարյուր զինվորների կողմից Կահիրեում սկսված անկարգությունները: Նրանք թալանում էին պահեստները, խանութները, ներխուժում էին տները: Քանի որ նրանց մեջ կային ալբանացիներ, ալբանական զորքը հրաժարվեց նրանց հնազանդեցնել, ինչը և Մուհամմադ Ալիին դրդեց ստեղծել նոր, կարգապահ զորաբանակ՝ «ան-նիզամ ալ-ջադիդ»[276]: Այդ նպատակով նա իր ավագ որդի Իբրահիմ փաշային հրամայեց սկսել առաջին ջոկատի նոր զինվորների ուսուցումը Կահիրեի Բուլակ արվարձանում[277]: Ի պատասխան դրա՝ ալբանական ջոկատների հրամանատարները, միավորվելով ալ-Ազհարի շեյխերի հետ, պահանջեցին դադարեցնել նոր զինվորների պատրաստումը: Մուհամմադ Ալին ստիպված էր հնազանդվել և փոխել իր հրամանը: Հատկանշական է, որ հոգևորականները բնութագրեցին նոր ստեղծվող զորամասերը՝ «ան-նիզամ ալ-ջադիդ», որպես «անթույլատրելի նորամուծություն» («բիդայա»), որը տանում է դեպի «մոլորություն», ինչն իր հերթին հավասար էր մահացու մեղքի և փակում էր դրախտի ճանապարհը: Այդպիսի լուրջ դիմադրությունը Մուհամմադ Ալիին թույլ չտվեց վճռական գործողություններ ձեռնարկել, և բանակի բարեփոխումը ստիպված հետաձգվեց[278]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 1815թ. Մուհամմադ Ալիի մեջ ձևավորվել էր բանակը բարեփոխելու հստակ մտադրություն, և նաև ներ այդ բարեփոխումների հայեցակարգը: Սակայն Մուհամմադ Ալին ռազմական ոլորտում բարեփոխումների իրականացումը

---

[276] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 126:
[277] عبد الرحمن زكي, նշվ. աշխ., էջ 28:
[278] علي محمد شلبي، المصريون و الجندية قي القرن التاسع عشر، القاهرة، ١٩٨٨، ص. ٢٠.

հետաձգեց մինչև XIX դարի առաջին քառորդի վերջը, այլ կերպասած՝ նա ռազմական բարեփոխումները կառուցեց պետական տարբեր ոլորտներում իրականացված բարեփոխումների հիմքի վրա՝ առաջին հերթին էական բարեփոխումներ իրականացնելով գյուղատնտեսության և վարչական համակարգերում, այնուհետև կրթության և արդյունաբերության ոլորտներում: Բանակում բարեփոխումներ սկսելու զգուշավորությունը բացատրվում էր իր նախորդների դրական և բացասական փորձի վերլուծությամբ, և որ ամենակարևորն էր, Մուհամմադ Ալին հասկանում էր իր կողմից լուծվելիք խնդրի բարդությունն ու վտանգավորությունը:

Որպես խելացի քաղաքական գործիչ՝ Մուհամմադ Ալին հաշվի առավ թուրքական բարեփոխիչների՝ Սելիմ III-ի և Մուստաֆա փաշա Բայրաքթարի տխուր փորձը, ովքեր սպանվեցին 1808թ. ենիչերիների ձեռքով: Նա հասկանում էր, որ ուժեղ, կանոնավոր բանակի ստեղծման համար անհրաժեշտ է նախ վերջ դնել ներքին հետադիմությանը՝ այս դեպքում մամլուքներին: Այստեղից էլ Մուհամմադ Ալին հանձն առավ մամլուքների նկատմամբ հաշվեհարդարը, որն օգնեց նրան խուսափել Սելիմ III-ի ճակատագրից և իր դարաշրջանի ամենաառաջադեմ նմուշներով կառուցել Եգիպտոսի նոր բանակը[279]: Ավելացնենք, որ, ստեղծելով նոր բանակ, Մուհամմադ Ալին ոչ միայն պետք է հաղթահարեր երկրի ներսի դիմադրությունը, այլև պետք է վերջ դներ կախվածությանն Օսմանյան կայսրությունից: Այդ պատճառով, ի տարբերություն Սելիմ III-ի, ստեղծելով նոր բանակ, Մուհամմադ Ալին հայտնվեց կրկնակի վտանգի առաջ՝ ձեռք բերելով ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիներ: Ստեղծելով նոր բանակ՝ նա հնարավորություն ստացավ միաժամանակ պահպանելու և՛ իշխանությունը, և՛ հասնելու անկախության:

Եգիպտական ռազմական հեղինակավոր պատմաբան Օ. Թուսունի կարծիքով Մուհամմադ Ալին, ունենալով պատերազմի փորձ ֆրանսիացիների, բրիտանացիների և նրանց օգնությամբ բարեփոխված ալ-Էլֆի բեյի զորամասերի դեմ, աստիճանաբար սկսեց գիտակցել եվրոպական ռազմական կազմակերպության

[279] Луцкий В., նշվ. աշխ., էջ 48:

առավելությունն ավանդականի հետ համեմատած: Նրա համար ակնհայտ էր նաև կանոնավոր, ժամանակակից բանակի առավելությունները՝ համեմատած վարձու բանակի հետ: Այդ առավելությունները վերաբերում էին ոչ միայն մարտունակությանը, այլ նաև բանակի քաղաքական հուսալիությանը: Այդ պատճառով, նույնիսկ ամրապնդելով իր իշխանությունը, հետ մղելով մամլուքյան և բրիտանական ներխուժումները (1807թ.) և ոչնչացնելով մամլուքների վերնախավը (1811թ.), Մուհամմադ Ալին շարունակ մտածում էր ոչնչացնել այն վտանգը, որը թաքնված էր իր սեփական զորքերում[280]:

Այդ հնարավորությունը նրան տվեց Արաբիայի վահաբիների դեմ պատերազմը (1811-1818թթ.), որը դարձավ առաջին ռազմարշավը իշխանության գլուխ հաստատվելուց և ներքին ընդդիմությանը ճնշելուց հետո: Մարտական գործողություններում եգիպտական կողմից մասնակցում էր բանակային միավորված խմբավորումը, որը կազմված էր ալբանացիներից, սակավաթիվ թուրք և մամլուք զինվորներից, ովքեր աջակցում էին Մուհամմադ Ալիին, ինչպես նաև նորաստեղծ մաղրիբյան զորախումբը, որն առավելապես կազմված էր թունիսցիներից, ալժիրցիներից և օժանդակ բեդվինական զորամիավորումներից: Այդ բոլոր կազմավորումներն ունեին իրենց հրամանատարները, հանդերձանքը և սպառազինումը: Այսպիսով, մաղրիբյան զորախումբը կազմված էր 7 անկախ ջոկատներից, որոնց հրամանատարները լավ հարաբերությունների մեջ չէին միմյանց հետ[281]: Փաստորեն Արաբիայում եգիպտական բանակը առանձին ջոկատների դժվար կառավարվող միավորում էր, որի կորիզը կազմում էր ալբանական զորաբանակը:

Պաշտոնապես պատերազմը սկսվեց օսմանյան սուլթանի հանձնարարությամբ: Սակայն սկսելով այն՝ Մուհամմադ Ալին հետապնդում էր սեփական նպատակները, որոնցից մեկը Եգիպտոսից զինվորների զգալի քանակի հեռացումն էր, ովքեր նրա իշխանության գալուց հետո դարձել էին վտանգավոր քաղաքական ուժ: Հնարավոր է՝ դրանով են բացատրվում այդ ռազմարշավի արյունահեղությունը և երկարատևությունը, որի ընթացքում

[280] الأمير عمر طوسون، صفحة من تاريخ مصر في عهد محمد علي، الجيش المصري السبري و البحري، القاهرة، ١٩٩٠، ص. ٣-٤.
[281] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 126:

ոչնչացվում էին ոչ միայն արաբիացիները, այլ նաև նախկին եգիպտական ոչ կանոնավոր բանակի զինվորները: Միայն պատերազմի առաջին փուլում (1811-1813թթ.) եգիպտական բանակի կորուստները կազմեցին 8 հազար մարդ, իսկ ողջ պատերազմի ընթացքում կորուստները գնահատվում էին 20 հազար մարդ[282]: Զգալի կորուստների դիտավորությունը քողարկելու նպատակով Մուհամմադ Ալին բանակի ղեկավար նշանակեց իր կրտսեր որդի Թուսունին (1793-1816թթ.): Այդպիսի պատասխանատու հանձնարարության կապակցությամբ նրան շնորհվեց փաշայի տիտղոս, ընդ որում՝ ավելի շուտ, քան իր ավագ եղբայր Իբրահիմին, ով ստանձնեց արաբիական բանակի ղեկավարությունը Թուսունի մահից (ժանտախտ) հետո[283]:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ Մուհամմադ Ալին նոր տիպի զորամիավորում («ան-նիզամ ալ-ջադիդ») ստեղծելու իր առաջին փորձը ձեռնարկեց 1815թ.՝ օգտագործելով արաբիական պատերազմը որպես շեղող միջոց, սակայն այդ փորձը ավարտվեց անհաջողությամբ: Չորս տարի անց, որի ընթացքում եգիպտական բանակը շարունակում էր հյուծվել արաբիական պատերազմում, Մուհամմադ Ալին որոշեց ձեռնարկել ևս մեկ փորձ: 1819թ. Վերին Եգիպտոսում, նա սկսեց եգիպտական նոր կանոնավոր բանակի ստեղծման նախագծի իրականացումը[284]:

Մոտավորապես այդ նույն ժամանակ Սուդանին սահմանամերձ Ֆաշոդում և Ասուանում կազմակերպվեցին ռազմական մարզման ճամբարներ: Ֆաշոդում գտնվող ճամբարի ցանկալի արդյունքներ չտալու պատճառով նախագծի ծանրության կենտրոնը տեղափոխվեց Ասուան, որտեղ ուսուցումն իրականացնում էին օտարազգի ռազմական մասնագետները[285]: Նրանց ղեկավարում էր ֆրանսիացի վտարանդի, գնդապետ Սևը (1788-1860թթ.), իսկ իսլամ ընդունելուց հետո՝ Սուլեյման փաշա ալ-Ֆարանսաուին, ով իրավամբ համարվում է եգիպտական նոր բանակի ստեղծողը: Դրա հետ մեկտեղ զինվորների ուսուցմամբ զբաղվում էին նաև այլ օտարազգի մասնագետներ՝

[282] Луцкий В., նշվ. աշխ., էջ 74-79:
[283] عبد الرحمن الرافعي, նշվ աշխ., 1951, էջ 143:
[284] محمد فؤاد شكري، عبد المقصود العناني، سيد محمد خليل، بناء دولة مصر محمد علي (السياسة الداخلية)، القاهرة ١٩٤٨، ص. ١٤٨-١٤٩.
[285] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 20:

բարոն Բոյերը, Վասսիերան, սպա Պլանան, ովքեր Բուրբոնների վերականգնումից հետո լքել էին հայրենիքը: Սովորաբար հիշատակում են նաև իտալացիներին, պորտուգալացիներին, իսպանացիներին և լեհերին: Նոր զորքերի պատրաստման որակը ստուգելու համար Մուհամմադ Ալին նշանակեց իր ավագ որդի Իբրահիմ փաշային: Նոր բանակի ստեղծման ֆինանսավորումը կատարվում էր 1809-1815թթ. իրականացված գյուղատնտեսական բարեփոխումների արդյունքում ստացված միջոցների հաշվին[286]:

Հատկանշական էր, որ թեկնածուներ ընտրելիս, ովքեր պետք է սովորեին Ասուանի ուսուցման կենտրոնում, Մուհամմադ Ալին նախընտրեց մամլուքներին, որոնց նա զրկել էր Եգիպտոսում ռազմական և տնտեսական իշխանությունից, սակայն պահպանել էր նրանց որպես պոտենցիալ ռազմական ուժ: Ըստ նրա նախագծի՝ մամլուքները պետք է կազմեին նոր զորքի կորիզը, ովքեր պետք է ուսանեին նոր ծրագրով և դառնային նոր բանակի սպաները: 1820թ. գնդապետ Սևի հրամանատարությամբ Ասուան ուղարկվեցին 400 (այլ տվյալներով 500) երիտասարդ մամլուքներ: Ավելի ուշ այդ թիվը հասավ մինչև 1000-ի: Նրանք անցան երեքամյա նախապատրաստական դասընթացը և կազմեցին եգիպտական բարեփոխված բանակի սպայական կորպուսի կորիզը[287]:

Մուհամմադ Ալին դիտարկում էր նոր բանակը սուդանցիներով համալրելու հնարավորությունը, ովքեր ունեին զինվորական լավ հատկանիշներ: Այդ գաղափարը հիմնականներից մեկն էր, որը նրան դրդեց նախաձեռնել Սուդանի գրավումը 1820-1822թթ.: Այդ նվաճումից հետո մոտ 30 հազար սուդանցի տեղափոխվեցին Ասուան և այնտեղ անցան զինվորական ուսուցում օտարազգի հրահանգիչների ղեկավարությամբ[288]:

Ասուանում սուդանցիներից կազմվեցին 3 հետևակային բրիգադներ և ուղարկվեցին Մորեա՝ մասնակցելու ռազմական գործողություններին: Մուհամմադ Ալին այդ ռազմարշավի

---

[286] الأمير عمر طوسون, նշվ. աշխ., էջ 10-15:
[287] Նույն տեղում, էջ 3:
[288] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 126-127:

ընթացքում եգիպտական բանակի գլուխն նշանակեց իր որդի Իբրահիմ փաշային, իսկ նրա օգնականը դարձավ գնդապետ Սևը[289]:

Մուհամմադ Ալիի հույսերը սուդանցիների հետ կապված չարդարացան: Խիզախ, ճշտակատար և ընկալունակ լինելով հանդերձ՝ նրանք չկարողացան հարմարվել Նեղոսի դելտայի, առավել ևս Արաբիայի և հատկապես Հունաստանի կլիմայական պայմաններին, որտեղ նրանց ուղարկեցին 1824-1828թթ. ռազմարշավի ժամանակ: Սուդանցիների վախճանը ցրտահարությունից և տիֆի համաճարակից կործանարար ազդեցություն ունեցավ եգիպտական բանակի մարտունակության վրա, և սուդանցիների զանգվածային հավաքագրումը զինվորական ծառայության համար դադարեցվեց[290]:

Բարձր դուռը, Մուհամմադ Ալիի ռազմական ուժի հզորացումից վախենալով, դադարեցրեց զինվորական համալրումներ ուղարկել Արաբիա, իսկ այնուհետև՝ Հունաստանում պատերազմող եգիպտական բանակ: Սուդանը ևս չտվեց անհրաժեշտ քանակությամբ ուժեղ զինվորներ, ինչի արդյունքում եգիպտական կառավարչի առաջնահերթ խնդիրը դարձավ բանակի նոր հայեցակարգի մշակումը, որը պետք է կազմվեր եգիպտացիներից: Եվրոպացի ռազմական մասնագետները, ովքեր հաջողությամբ իրականացրին մամլուքներից եգիպտական բանակի սպայական կորիզի նախապատրաստումը, ստեղծեցին սուդանցիներից կազմված զորամասեր և Մուհամմադ Ալիին առաջարկեցին եգիպտացի գյուղացիներից կազմված եգիպտական բանակի համալրման նոր մոտեցում, ովքեր պետք է ծառայության անցնեին զինվորական զորակոչի միջոցով: Աշխարհի բազմաթիվ երկրներում սովորական այդ գաղափարն անսպասելի էր Եգիպտոսի համար, որտեղ ֆելլահներն ավելի քան 2 հազար տարի չգիտեին, թե ինչ բան է զինվորական ծառայությունը[291]: Կշռադատելով այդ առաջարկը և գալով այն եզրահանգման, որ այլ ելք չկա, Մուհամմադ Ալին 1822թ. փետրվարի 27-ի հրամանով զորակոչի պարտավորություն մտցրեց՝ իր զորքերը

[289] Նույն տեղում, էջ 127-128:
[290] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 18:
[291] محمد محمود السروجي، الجيش المصري في القرن التاسع عشر، القاهرة، ١٩٦٧، ص. ١٧.

համալրելով եգիպտական ֆելլահների հաշվին, որոնց բանակ էին զորակոչում ուժով[292]:

Եգիպտացիները զորակոչն ընդունեցին թշնամաբար: Որոշ պատմաբաններ զորակոչի հետ էին կապում մի շարք գյուղացիական ընդվզումներ: Ապագա զորակոչիկների ծառայությունից խուսափելը և հարազատ վայրերից փախուստը զանգվածային բնույթ էր կրում: 1820-ական թթ. վերջին ավելի քան 6 հազար եգիպտացիներ, ովքեր փախել էին զորակոչից, կուտակվեցին Եգիպտոսին սահմանամերձ սիրիական Ակկամարգում, որտեղ նրանք ստացան տեղի նահանգապետ Աբդալլահ փաշայի հովանավորությունը: Այնտեղ էին թաքնվում նաև Եգիպտոսից փախած պաշտոնազուրկ մամլուքները: Մուհամմադ Ալին Աբդալլահից պահանջեց վտարել արդեն ընդունած եգիպտացի փախստականներին և հրաժարվել նորերին ընդունելուց, սակայն համաձայնություն չստացավ: Բացի այդ, հայտնի դարձավ, որ Աբդալլահը, ում Մուհամմադ Ալին նախկինում աջակցում էր, նրան վարկաբեկել էր սուլթանական պալատում: Ինչպես հայտնի է, այս ամենը առիթ հանդիսացավ եգիպտա-սիրիական պատերազմի համար (1831-1833թթ.)[293]:

Ֆրանսիական ռազմական խորհրդականներն առաջարկեցին Եգիպտոսում կիրառել բանակի հավաքագրման նույն ձևերը, որոնք գործում էին Նապոլեոնի ժամանակ Ֆրանսիայում: Հավաքագրողները դրամական պարգև էին ստանում նույնիսկ ուժով բանակ զորակոչված ամեն մեկի համար: Հավաքագրվողները, ովքեր խուսափում էին զինվորական ծառայությունից, ենթարկվում էին բռնի զորակոչման, իսկ երկրորդ անգամ խուսափելու դեպքում հետևում էր պատիժ՝ երկաթով խարանել, տաժանակիր աշխատանք թիանավերի վրա և մահապատիժ: Պատժվում էին նաև խուսափողի ընտանիքի անդամները, ինչպես նաև այն մարդիկ, ովքեր նրան ապաստան և սնունդ էին տվել: Հենց այդ դաժան համակարգը, որը Նապոլեոնի կողմից կիրառվել էր Ֆրանսիայում, զինվորների կարիք ունեցող Մուհամմադ Ալին տարածեց նաև Եգիպտոսում: Զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով զորակոչի ենթակա անձինք իրենց դիտմամբ խեղում էին (ամենից հաճախ

[292] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 39:
[293] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 132:

կոտրում էին իրենց դիմացի ատամները, որպեսզի հնարավոր չլիներ կծել վառոդի պարկուճները, կտրում էին ցուցամատի վերին մատոսկրը, որպեսզի հնարավոր չլիներ կրակել, կտրում էին ոտքի բութ մատը, որպեսզի հնարավոր չլիներ վազել): Այդ գործողությունները համատարած բնույթ ստանալուն պես սկսեցին հետապնդվել և պատժվել օրենքով[294]: Գյուղերում զորակոչի համար պատասխանատու էին գյուղական շեյխերը՝ օմդաները: Հավաքագրումը ձախողելու կամ անբավարար քանակով զորակոչիկներ հավաքելու դեպքում օմդաները պատժվում էին: Բանակում նորակոչիկների ոչ բավարար քանակի դեպքում պետք է գնային օմդաների որդիները, եղբայրները կամ ազգականները. եթե այդպիսիք չէին լինում, ապահինքը պետք է ծառայեր[295]:

Զորակոչը մշտապես իրականացվում էր վերը նշված կոպիտ մեթոդներով, քանի որ Մուհամմադ Ալիի կառավարման ժամանակաշրջանում Եգիպտոսը մշտապես գտնվում էր պատերազմական իրավիճակում (ռազմարշավը Արաբիա (1811-1818թթ.), Սուդան (1820-1822թթ.), Կրետե, Կիպրոս և Մորեա (1824-1828թթ.), 2 սիրիական ռազմարշավները (1831-1833թթ. և 1839-1840թթ.)): Այդ բոլոր պատերազմներում, բացի առաջինից և մասամբ երկրորդից, կռվում էին զորքերը, որոնք կազմված էին կամավոր կամ ուժով զորակոչված զինվորներից: Նրանք ուսուցանվել էին եվրոպացիների կողմից, զինված էին ժամանակակից զենքերով, կառավարելի էին և մարտունակ: Մուհամմադ Ալիի օրոք բանակում ծառայելու ժամկետը շարքայինների և սպաների համար կարգավորված չէր: Մուհամմադ Ալին բազմիցս մտցնում էր ծառայության ժամկետի սահմանափակում (սովորաբար նշվում էր 15 տարի ժամկետը), սակայն պատերազմների մշտական առկայության պարագայում այս ժամկետը չէր պահպանվում[296]:

1824թ. եգիպտական նոր զորքերի թիվը հաշվվում էր 24 հազար մարդ[297]: Հետագայում այն շարունակում էր աճել՝ հասնելով 100 հազար մարդու և ավելի, ընդ որում եգիպտական բանակի թվաքանակի

[294] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 34-36:
[295] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 128-130:
[296] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 145-147:
[297] محمد فؤاد شكري, նշվ. աշխ., էջ 153:

վերաբերյալ տարբեր հեղինակներ տարբեր թվեր են ներկայացնում: Ըստ Օ. Թուսունի՝ եգիպտական բանակի ընդհանուր թվաքանակը հասնում էր 123 225 մարդու[298]: Ֆուադ Շուքրիի տվյալները հիմնված են անգլիական աղբյուրների վրա, որոնք թույլ են տալիս ասել, որ եգիպտական բանակը XIX դարի 30-ական թթ. կեսին հաշվվում էր 158 970 մարդ. հետևակ՝ 34 գունդ, ընդհանուր թվաքանակով 111 600 մարդ (108 000 շարքային, 3 400 սպա, այսինքն՝ մոտավորապես 100 սպա յուրաքանչյուր գնդում, 200 բարձրագույն սպաներ, ովքեր կազմում էին Իբրահիմ փաշայի ամենամոտ շրջապատը), հեծելազոր՝ 15 գունդ՝ կազմված 13 180 մարդուց (այսինքն՝ ամեն մեկում 860 զինվոր), ներառյալ 280 բարձրաստիճան սպաներ, հրետանի՝ ընդհանուր թվով 25 890 մարդ, բեդվինական զորամաս՝ 5 հազար մարդ, ալբանական զորամաս՝ 1 000 մարդ, մաղրիբցիներ՝ 1 500 մարդ[299]:

Խորհրդային հեղինակները ներկայացնում են հետևյալ տվյալները. 1833թ. եգիպտական բանակը հասնում էր 180 հազար մարդու, որոնք բաշխված էին 14 գվարդիական, 5 հրետանային, 36 հետևակային և 15 հեծելազորային գնդերի, ճարտարագիտական ստորաբաժանումներով և համբարակային (ինտենդանտական) ծառայությունով[300]: 1833թ. ռազմական բյուջեն հաշվվում էր 1 156 975 գինեյ, որից 300 հազարը ծախսվում էր նավատորմի վրա, այն դեպքում, երբ երկրի ընդհանուր բյուջեն կազմում էր ավելի քան 2 500 000 հազար գինեյ: Այսպիսով, բանակի ծախսերը կազմում էին ընդհանուր բյուջեի ծախսերի 50%-ը[301]:

Մուհամմադ Ալիի բանակում ավագ սպաները բացառապես թուրք-օսմաններ, մամլուքներ և ալբանացիներ էին, կրտսերները՝ ներառյալ մինչև կապիտան՝ եգիպտացիներ: Նույնիսկ 1882թ. եգիպտական բանակում գնդապետի կոչում ունեին միայն 4 բնիկ եգիպտացիներ, և չկար ոչ մի եգիպտացի գեներալ: Եգիպտացի կրտսեր սպաների զանգվածային հոսքը բանակ սկսվեց 1829թ., երբ զինված

[298] الأمير عمر طوسون, նշվ. աշխ., էջ 60:
[299] محمد فؤاد شكري, նշվ. աշխ., էջ 488:
[300] Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., նշվ. աշխ., էջ 177:
[301] علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 43:

ուժեր ընդունվեցին նոր ռազմական կրթական հաստատությունների առաջին շրջանավարտները[302]:

Մուհամմադ Ալին վերականգնեց նաև եգիպտական հզոր նավատորմը՝ այդ նպատակով ռազմանավեր գնելով արտասահմանից: 1829թ. Նավարինյան մարտում Եգիպտոսը կորցրեց 81 ռազմանավ, ինչը փաստորեն նշանակում էր ամբողջ նավատորմի կորուստ: Մուհամմադ Ալին այդ կորուստն ընդունեց փիլիսոփայորեն և անմիջապես ձեռնարկեց նավատորմի վերականգնումը եգիպտացիների ուժերով: Ալեքսանդրիայում կառուցվեց նավաշինարան, որտեղ արագ տեմպերով սկսեցին կառուցել ռազմական նավեր, ընդ որում հիմնականում եգիպտացի բանվորների ուժերով, որոնց թիվը գերազանցում էր 8 հազարը: Այդ ջանքերի արդյունքում արդեն 2 տարի անց Եգիպտոսը ստեղծեց նոր նավատորմ և դադարեց գնել արտասահմանյան ավելի թանկարժեք նավեր: Նոր կառուցված նավատորմի համար կարճ ժամանակահատվածում եգիպտացիներից պատրաստվեցին ավելի քան 15 հազար նավաստի[303]:

1820-ական թթ. վերջից տեղի է ունենում բանակի զանգվածային եգիպտացում: Մի քանի հարյուրամյակից հետո առաջին անգամ այն ձեռք է բերում ազգային բնույթ: Եգիպտացիներին բարձրագույն սպայական պաշտոններում առաջադրելու և համապատասխան կոչումներ շնորհելու հարցում ակտիվ կողմնակից էր Մուհամմադ Ալիի ավագ որդի Իբրահիմ փաշան: Իր հորն ուղղված նամակում նա գրում էր, որ զարմացած է, թե ինչու է Մուհամմադ Ալին դեմ եգիպտացիներին կապիտանից (յուզբաշի) բարձր սպայական կոչումներ շնորհելուն, քանի որ ինչքան բարձր լինի նրանց կոչումը, այնքան ավելի շատ նրանք կսիրեն իրենց կառավարչին: Իբրահիմ փաշան գրում է. «20 տարվա զինվորական ծառայության ընթացքում ես հասկացա, որ եթե 1000 թուրքից հավատարիմ են 300-ը, ապա 1000 արաբ-եգիպտացիներից հավատարիմ են 700-ը»: Իբրահիմ փաշայի ջանքերով եգիպտական բանակում դրվեց եգիպտացիներից կազմված սպայական կորպուսի հիմքը, որից ժամանակի ընթացքում դուրս եկան եգիպտական ազգային-հայրենասիրական շարժման (1873-

[302] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 132:
[303] الأمير عمر طوسون, նշվ. աշխ., էջ 65-68:

1882թթ.) ականավոր առաջնորդներ, ովքեր համախմբվեցին գնդապետ Օրաբի փաշայի շուրջը, իսկ ավելի հեռու ապագայում՝ հանրապետական Եգիպտոսի բոլոր նախագահները:

Բանակի վերակառուցմանը զուգընթաց Մուհամմադ Ալին իրականացրեց նրա ամբողջական վերազինումն այդ ժամանակվա համար արդիական զենքով: Դրամի մասը գնվում էր արտասահմանից, բայց զգալի մասը սկսեց արտադրվել բուն Եգիպտոսում: Այդ նպատակով ռազմական բարեփոխման հետ միաժամանակ առաջին քայլերը ձեռնարկվեցին երկրի ինդուստրացման համար. արտասահմանից ներմուծվող զինվորական հանդերձանքը փոխարինվեց եգիպտական արտադրության ապրանքներով: 1816թ. սկսած՝ գանձարանի գումարներով կառուցվեցին պետական գործարաններ, որոնց մի մասը տեղակայված էր անմիջապես Մուհամմադ Ալիի նստավայրի՝ Կահիրեի Միջնաբերդի սահմաններում[304]:

Ռազմամթերքի արտադրության հսկողությունը կատարվում էր ֆրանսիացիների կողմից: 1837թ. 3 խոշոր ռազմական գործարաններում, որոնք տեղակայված էին Միջնաբերդում և նրանից տարածքներում, ինչպես նաև Բուլակում, աշխատում էր մոտ 2600 մարդ, ընդ որում՝ միայն Միջնաբերդում 900 մարդ: Այս գործարաններում 1 ամսում արտադրվում էին մինչև 625 հրացան, 600 թուր և 3-4 թնդանոթ: Այն, ինչ նախկինում ներմուծվում էր, սկսեցին արտադրել նոր գործարաններում, որտեղ արտադրվեցին մեծ քանակությամբ հրացաններ, մուշկետներ, թնդանոթներ, վառոդ և սառը զենք: Զարգացավ կաշվի և տեքստիլ արդյունաբերությունը, որը բանակն ապահովում էր զինվորական կոշիկներով և հանդերձանքով[305]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Մուհամմադ Ալիի որոշումը՝ կազմակերպել ռազմական արտադրանքի արտադրությունն անմիջապես երկրի ներսում, ոչ միայն ապահովեց բանակի անկախությունն արտաքին մատակարարներից, այլ նաև ունեցավ էական սոցիալ-տնտեսական ազդեցություն. ռազմական արտադրությունը ստեղծեց նոր աշխատավայրեր, երկրի ներքին

[304] محمد فؤاد شكري, նշվ. աշխ., էջ 459-460:
[305] Նույն տեղում, էջ 460:

շրջանառության մեջ ավելացրեց փողի զանգվածը՝ ապահովելով տնտեսական դրական արդյունք:

Բանակի և նավատորմի արդիականացումը և դրա հետ կապված ինդուստրալացումը հանգեցրին մի շարք նորամուծությունների ներդրման անհրաժեշտության կրթության համակարգում: Երկրին անհրաժեշտ էին հայրենական որակյալ մասնագետներ գիտության տարբեր բնագավառներում, քանի որ միայն արտասահմանցիների ուժերով հնարավոր չէր ապահովել այդպիսի լայնածավալ բարեփոխումների ծրագիր: Մուհամմադ Ալիի նախաձեռնությամբ պետական միջոցներով ստեղծվեցին բարձրաշխարհիկ հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններ եվրոպական օրինակով: Այդ ուսումնական հաստատությունների մեծ մասը մասնագետներ էր պատրաստում բանակի և նավատորմի համար: 1822-1828թթ. հիմնվեցին հետևակային ուսումնարան՝ Դամիեթում, ռազմածովային՝ Ալեքսանդրիայում: Ծարունակում էր գործել Կահիրեի մոտ գտնվող սպայական դպրոցը, որը տեղափոխվել էր Ասուանից: 1831թ. բացվեցին հրետանային ուսումնարանը և հեծելազորային սպայական դպրոցը, իսկ 1825թ.՝ Գլխավոր շտաբի ուսումնարանը: 1844թ. Եգիպտոսի կառավարության կողմից Փարիզում կազմակերպվեցին բարձրագույն զինվորական դասընթացներ (Մադրասա ղարբիյա), քանի որ գանձարանի համար ավելի հեշտ և ձեռնտու էր ուսանողներին ուղարկել Փարիզ, քան Եգիպտոս հրավիրել որակյալ ֆրանսիացի մասնագետների: Այս ուսումնական հաստատությունը գոյատևեց մինչև 1867թ.: 1827թ. սկսեց ուսուցում իրականացվել ռազմական-երաժշտական դպրոցում, որն ապահովում էր բանակը նվագախմբերով[306]: Բացի ռազմական ուսումնական հաստատություններից, ստեղծվեցին նաև քաղաքացիական՝ բժշկական և անասնաբուժական (1827թ.), պոլիտեխնիկական՝ Մուհանդիս խանե (1828թ.), գյուղատնտեսական (1833թ.), օտար լեզուների և թարգմանության՝ Դար ալ-ալսուն (1836թ.) ուսումնական հաստատությունները[307]:

[306] محمد محمود السروجي, նշվ. աշխ., էջ 18:
[307] Vatikiotis P., նշվ. աշխ., էջ 60-63:

Քանի որ ռազմական մասնագետները բավարար չէին, որակավորված հայրենական մասնագետների նախապատրաստման գործում մեծ նշանակություն ունեցան «ուսումնական առաքելությունները», որոնց կազմում եգիպտացի երիտասարդները պետության հաշվին ուղարկվեցին եվրոպական երկրներ՝ ուսումնասիրելու տեխնիկական առարկաներ, բժշկություն, իրավագիտություն, ռազմական գործ, տնտեսագիտություն և այլ գիտություններ, որոնք անհրաժեշտ էին բարեփոխման շրջափուլում գտնվող երկրի համար: 1813-1848թթ. ընթացքում արտասահմանում տարբեր մասնագիտություններ սովորեցին 339 ուսանողներ, որոնց մեծամասնությունը ստանում էր կամ զինվորական, կամ բանակի կարիքներին անհրաժեշտ մասնագիտություններ[308]: Ընդհանրապես 1826-1882թթ. եվրոպական երկրներում կրթություն ստացան 1000-ից ավելի եգիպտացիներ, ընդ որում նրանց կեսից ավելին սովորում էր Ֆրանսիայում, 16%-ը՝ Մեծ Բրիտանիայում և 23%-ը՝ այլ երկրներում[309]: Կրթական բարեփոխումները հեղափոխական նշանակություն ունեին Եգիպտոսի ապագայի համար՝ եգիպտացիների համար մուտք բացելով, ծայրահեղ դեպքում տեսականորեն, կրթության բոլոր աստիճանների, այդ թվում՝ նաև ամենաբարձր աստիճանների համար, ինչն իր հերթին նրանց հետագայում հնարավորություն էր տալիս զբաղեցնելու պաշտոններ պետական համակարգում, այդ թվում՝ նաև բանակում, ինչը նախկինում անհասանելի էր:

Եգիպտոսի վերափոխման հսկայական ծրագիրը և մասնավորապես՝ բանակի բարեփոխումը, վերազինումը և հանդերձավորումը պահանջում էին նշանակալի ֆինանսական միջոցներ: Ստանալով այդ միջոցները՝ Մուհամմադ Ալին ոչ միայն մնաց իշխանության գլխին, այլ նաև ձեռնամուխ եղավ «ան-նիզամ ալ-ջադիդ» նախագծի իրականացմանը, որը փաստորեն ուղղակիորեն հանգեցնում էր Եգիպտոսի հասարակական կյանքի բոլոր կողմերի, այդ թվում՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և հոգևոր ոլորտների լայնածավալ արդիականացման:

---

[308] محمد محمود السروجي, նշվ. աշխ., էջ 19:

[309] Черновская В., Формирование египетской интеллигенции в XIX-первой половине XX в., М., 1979, с. 28.

Բարեփոխված զորքերը կոչված էին պաշտպանելու քաղաքական նոր վերնախավին, որն առաջացել էր մամլուքների հողային սեփականության բռնագրավման և վերաբաշխման արդյունքում, որն իրականացվել էր 1808-1812թթ.: Այս նոր վերնախավին գլխավորում էին ինքը՝ Մուհամմադ Ալին, նրա բազմանդամ ընտանիքի անդամները, զինվորականներից կազմված մտերիմ շրջապատը, ինչպես նաև այն եգիպտացիները, ովքեր ներգրավվեցին բարեփոխված վարչական համակարգի մեջ[310]:

Նոր վերնախավին էր պատկանում եգիպտական գյուղական ավագանին՝ այանները, ովքեր դեռ մամլուքների ժամանակ գյուղական տոհմերի ավագներն էին՝ շեյխալ-բալադ կամ օմդա: Նոր վարչակարգում նրանք զբաղեցրին ստորին աստիճան՝ իրենց վրա վերցնելով գյուղում պետության շահերի ներկայացումը, իսկ ավելի հստակ՝ 2 կարևորագույն պետական գործառույթների իրականացումը՝ հարկերի հավաքումը և բանակի համար նորակոչիկների մատակարարումը, ինչի արդյունքում լուծվեցին կարևորագույն խնդիրներ, որոնք ապահովում էին «ան-նիզամ ալ-ջադիդ» ծրագրի իրականացումը: Վերոնշյալ տեղական գյուղական տոհմերի ավագները, Մուհամմադ Ալիի օրոք հողեր ստանալով, XIX դարի վերջին կազմեցին խոշոր հողատերերի շերտը, որոնք իշխող դիրք ունեին Եգիպտոսում: Վերջիններն ազդեցին եգիպտական բանակի որակյալ կազմի վրա՝ զբաղվելով նորակոչիկների հավաքագրմամբ:

Ռազմական բարեփոխումների արդյունքում ստեղծվեց ռազմական կառավարման նոր համակարգ, որը կապված էր պետական-վարչական ինստիտուտների միասնական համակարգի հետ: Բոլոր կարևորագույն որոշումները, որոնք վերաբերում էին բանակին, ընդունվում էին միայն Մուհամմադ Ալիի կողմից, սակայն դրանք կյանքի կոչելու համար պահանջվում էր ստեղծել զինվորական վարչական բնույթի հատուկ մարմիններ: Բեյլիկաթի ժամանակների մամլուքյան կառավարման համակարգին, Ալի բեյի միանձնյա կառավարմանը, նրա հետևորդների ու Մուհամմադ Ալիի կառավարման առաջին շրջանին XX դարի սկզբին փոխարինելու եկավ վարչական

[310] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 60:

նոր համակարգ: Դրանում կարևոր դեր էր խաղում ռազմավարչական ապարատը, որը ստեղծվեց 1821-1822թթ., երբ Մուհամմադ Ալիի կարգադրությամբ հիմնվեց Ռազմական դիվանը (դիվան ալ-ջիհադիա)՝ երկիրը կառավարելու 7 բարձրագույն մարմիններից մեկը: Այն ղեկավարում էր ռազմական հարցերով տեսուչը (նազիր ալ-ջիհադիա): Դիվանի պարտականություններն էին խստագույն կերպով իրականացնել երկրի կառավարչի հրահանգները: Ռազմական դիվանն իրականացնում էր ռազմավարչական գործառույթներ՝ կառավարելով ռազմական կրթությունը և մարտական պատրաստվածությունը, բանակի զինումը, ռազմական շինարարությունը, ռազմաբժշկական հաստատությունները և այլն: Այս հաստատությունը գոյատևեց մինչև 1842-1843թթ., երբ 1841թ. համաձայնագրերի կատարման արդյունքում եգիպտական բանակը կրճատվեց մինչև 18 հազար մարդ, և հսկայական վարչական ապարատ պահելը դարձավ անիմաստ: Չնայած խիստ կրճատված կազմին՝ Ռազմական դիվանը պաշտոնապես պահպանվեց Մուհամմադ Ալիի և Աբբասի կառավարման ողջ ժամանակահատվածում ու Սաիդ փաշայի՝ իշխանության գալու առաջին տարիներին[311]:

1834թ. սկսած՝ Մուհամմադ Ալին սկսեց բացահայտորեն Բարձր դռնից պահանջել ընդունել Եգիպտոսի անկախությունը, սակայն կտրուկ մերժում ստացավ: Օսմանյան կայսրությանն այդ հարցում աջակցում էին եվրոպական պետությունները, բացի Ֆրանսիայից, որը չնայած կանգնած էր Եգիպտոսի կողքին, սակայն ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, պատրաստ չէր պաշտպանելու եգիպտական շահերը եվրոպական երկրների դեմ ռազմական ընդհարումների վտանգի պարագայում:

1838թ. օգոստոսի 16-ին ստորագրվեց հայտնի անգլո-թուրքական պայմանագիրը առևտրի և ծովագնացության մասին, որը նախաձեռնել էին Մեծ Բրիտանիայի վարչապետ Գ. Պալմերսոնը և Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջ. Պոնսոնբին[312]: Մուհամմադ Ալին կտրականապես հրաժարվեց տարածել այդ պայմանագրի պայմաններն իր տիրույթների՝ Եգիպտոսի, Սիրիայի և

[311] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 102-108:
[312] Մանրամասն տե՛ս Шеремет В., Война и бизнес: Власть, деньги и оружие, Европа и Ближний Восток в новое время, М., 1996, с. 424-432.

Արաբիայի վրա: Նա կտրականապես հանդես եկավ նաև Եփրատով բրիտանական նավագնացության դեմ և Սուեզի պարանոցով ջրանցքի կառուցման տարբեր նախագծերին: Բրիտանացիների ուշադրությունից չվրիպեցին ռազմական հաջողություններն Արաբիայում՝ երկրորդ անգամ Նաջդի գրավումը և ելքը դեպի Պարսից ծոց: Մուհամմադ Ալիի նկատմամբ Մեծ Բրիտանիայի բացասական դիրքը բացատրվում է նաև նրա մրցակցությամբ Ֆրանսիայի հետ, որը, լինելով Եգիպտոսի դաշնակիցը, գերակշռող դիրք էր գրավում Սիրիայում և Եգիպտոսում: Այս ամենը դրդապատճառ դարձավ Մեծ Բրիտանիայի կողմից Մուհամմադ Ալիին հեռացնելու որոշման և թուրք-եգիպտական հակամարտության կարգավորումը խոչընդոտելու համար[313]:

1839-1840թթ. սիրիական երկրորդ ռազմարշավն ավարտվեց Եգիպտոսի պարտությամբ Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի կոալիցիայի կողմից, ովքեր աջակցում էին օսմանյան սուլթանին: Դա հանգեցրեց եգիպտական ռազմական կարողության նշանակալի թուլացման: Եգիպտոսի վրա տարածվեցին 1838թ. անգլո-թուրքական պայմանագրի դրույթները, որոնք լրացվեցին 1841թ. հունիսի 1-ի սուլթանական վճռով, ինչը ենթադրում էր Եգիպտոսի բոլոր կառավարիչների ենթարկվելն այս վճռին[314]:

Սուլթանական հրամանը, ինչին աջակցում էին եվրոպական 5 պետությունները, սահմանափակում էր եգիպտական բանակի մարտունակությունը: Սահմանափակումները վերաբերում էին բանակի թվաքանակին, որը խաղաղ պայմաններում չպետք է գերազանցեր 18 հազարը, իսկ պատերազմի ժամանակ կարող էր ավելացվել միայն Բարձր դռան պահանջով: Ռազմական նավաշինությունն ամբողջապես դադարում էր, ինչը կարող էին վերսկսել միայն օսմանյան սուլթանի համաձայնությամբ: Եգիպտոսի ցամաքային և ռազմածովային պահպանված միավորումները պետք է ունենային օսմանյան հանդերձանք և տարբերանշաններ: Գնդապետի կոչումից սկսած՝ բոլոր

[313] Луцкий В., նշվ. աշխ., էջ 100:
[314] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 309:

կոչումները կարող էին տրվել օսմանյան սուլթանի որոշմամբ: Բանակում ծառայության ժամկետը սահմանափակվում էր 5 տարով (Մուհամմադ Ալիի ժամանակ այն կազմում էր 15 տարի, իսկ գործնականում այն անժամկետ էր)[315]:

Իբրահիմ փաշայի, այնուհետև նաև Մուհամմադ Ալիի հիվանդությունը և մահն ընդհատեցին ռազմական բարեփոխումների անցկացումը Եգիպտոսում: Բարձր դռան համաձայնությամբ երկրի նոր կառավարիչ դարձավ Մուհամմադ Ալիի թոռը՝ Աբբաս Հիլմի Ի-ը (1848-1854թթ.), ով պետք է իրականացներ 1841թ. սուլթանական ֆիրմանի այս և այլ պահանջները:

Հայտնի փաստ է, որ յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման ապահովման համար առաջնային հիմնաքարը կայուն, հուսալի և ուժեղ բանակն է: Իր առջև նպատակ դնելով ստեղծել նմանատիպ բանակ՝ Մուհամմադ Ալին բախվեց մի շարք անհաջողությունների, որոնք, այնուամենայնիվ, երկրի ղեկավարի համար չդարձան ընկրկման պատճառ: Դրսևորելով կամային բարձր հատկանիշներ՝ նա յուրաքանչյուր անհաջողություն ընդունեց որպես փորձ, որը խելացիորեն օգտագործեց՝ իր հետագա ռազմավարական քայլերի կառուցման համար:

Մուհամմադ Ալիի օրոք բանակի համալրման և կառավարման մշակույթը ձևավորվեց եվրոպական, մասնավորապես ֆրանսիական ռազմական ուժերի կառավարման մեթոդների և մոտեցումների հիման վրա: Սակայն առաջադեմ մոտեցումների կիրառումն այնքան հեշտ չիրականացավ, ինչպես ենթադրում էր Մուհամմադ Ալին: Բանակի վերակառուցման գործընթացում էական նշանակություն ունեցավ եգիպտացիների դերի բարձրացումը, ովքեր բնականաբար առանձնանում էին իրենց անձնվիրությամբ և հավատարմությամբ: Բանակը բարձրակարգ մասնագետներով համալրելու նպատակով երկրի ղեկավարը սկսեց նաև հատուկ ուշադրություն դարձնել ռազմական կրթությանը՝ հրավիրելով օտարերկրյա մասնագետների, ինչպես նաև կազմակերպելով իր քաղաքացիների ռազմական կրթությունը Եվրոպայում: Այսպես Մուհամմադ Ալին ապահովում էր բանակի ոչ միայն ուժային, այլ նաև մտավոր զարգացումը:

[315] Նույն տեղում, էջ 310:

Կարևորելով մարդկային գործոնի դերը բանակի կայացման հարցում՝ Մուհամմադ Ալին պակաս տեղ չէր հատկացնում նաև բանակի տեխնիկական վերազինմանը և արդիականացմանը, ինչի համար հսկայական միջոցներ էր տրամադրում երկրի բյուջեից:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել, որ Մուհամմադ Ալիի դերը Եգիպտոսի բանակի զարգացման գործում անգնահատելի է և բացառիկ: Բանակի կառավարման մի շարք մեթոդներ և մոտեցումներ, որոնք միշտ չէ, որ հավանության էին արժանանում և հաջողությամբ պսակվում, այնուամենայնիվ, որակապես փոխեցին եգիպտական բանակի կառուցվածքը և թույլ տվեցին տևական ժամանակահատվածում ապահովել երկրի անվտանգությունը և համեմատական անկախությունը:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

ԵԳԻՊՏՈՍԸ ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ 1848-1914ԹԹ.

3.1. Բարեփոխումների ընթացքը Եգիպտոսում Աբբասի, Սայիդի և Իսմայիլի կառավարման տարիներին (1848-1879թթ.)

Մուհամմադ Ալին, ով դրեց Եգիպտոսի արագացված արդիականացման հիմքերը և իրականացրեց մի շարք բարեփոխումներ երկրի պետական կառավարման, ռազմական, տնտեսական և մշակութային ոլորտներում, իր ժառանգներին թողեց ուժեղ, կենտրոնացված, ինքնազարգացման նշանակալի կարողություններով մի երկիր, որը, սակայն, իր առջև ուներ դժվար լուծելի խնդիրների մի ամբողջություն, որոնցից ամենակարևորը, թերևս, եգիպտական փաստացի անկախության պահպանումն էր: XIX դարի կեսերին վերոնշյալ խնդիրն ավելի սուր դրսևորում ստացավ, քանի որ Մուհամմադ Ալիի ժառանգները չէին տիրապետում այն անձնային և կառավարչական որակներին, որոնք պետք է ունենար արտաքին և ներքին ռազմաքաղաքական բախումների կիզակետում գտնվող երկրի կառավարիչը:

Մուհամմադ Ալիին փոխարինեց նրա թոռ Աբբաս Հիլմի Ի-ը (1813-1854թթ.), որն իշխեց 1848-1854թթ., որին հաջորդեց Մուհամմադ Ալիի որդին՝ Սայիդը (1854-1863թթ.): Աբբասը Մուհամմադ Ալիի որդու՝ Թուսուն փաշայի տղան էր, ով մահացել էր 1816թ. ժանտախտից[316]: Նա կորցրեց իր հորը, երբ 2 տարեկան էր, իսկ 4 տարեկանում դարձավ երկկողմանի ծնողազուրկ և դաստիարակվեց իր պապի տանը նրա երեխաների հետ միասին: Մուհամմադ Ալիի և Աբբասի հարաբերություններն այնքան էլ հարթ չէին, և երբ Աբբասն անցավ իշխանության գլուխ, նրա անբարյացակամությունը Մուհամմադ Ալիի նկատմամբ դրսևորվեց նրա կազմակերպած համեստ թաղումով, այնուհետև միտումնավոր գործողություններով, որոնք ուղղված էին ժառանգած քաղաքական համակարգը խարխլելուն և նրա հիմքում

[316] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1984, էջ 202:

դրված սկզբունքները վարկաբեկելուն[317]: Սակայն օժտված չլինելով իր պապի լայն մտահորիզոնով՝ նա կարողացավ փոխել միայն նախկին քաղաքականության որոշ ուղղություններ: Այսպես, Աբբասն արտաքին քաղաքականությունը ֆրանսիամետ ուղղությունից վերափոխեց անգլիամետի: 1851թ. նա համաձայնության եկավ Մեծ Բրիտանիայի հետ Ալեքսանդրիա-Կահիրե-Սուեզ երկաթգծի կառուցման հետ կապված, որը կապում էր Միջերկրական ծովը Հնդկական օվկիանոսի հետ: Նա հրաժարվեց Կոստանդնուպոլսի հետ հակասության մեջ մտնելուց և մասնակցեց Ռուսաստանի դեմ Ղրիմի պատերազմին օսմանյան սուլթանի վասալի կարգավիճակում: Այնուամենայնիվ 1854թ. հուլիսին 41 տարեկան հասակում նա վաղաժամ մահացավ. Աբբասն իրականում սպանվեց իր շրջապատի մարդկանց կողմից, սակայն պաշտոնական տվյալներով արձանագրվեց որպես սրտի կաթված[318]:

Պետական կառավարման տեսանկյունից Աբբաս Ի-ի վեցամյա կառավարման ժամանակաշրջանն ունեցավ նաև իր դրական արդյունքը: Նախ և առաջ դրանք տարիներ էին, որոնք երկրին տվեցին կարճատև հանգստություն Մուհամմադ Ալիի և Իբրահիմ փաշայի կառավարման լարված տարիներից հետո: Աբբասի կառավարման տարիներին Եգիպտոսում սկսվեց երկաթգծերի և հեռագրային կապերի մեծամասշտաբ շինարարություն[319]: Նրա օրոք վատթարացած պետական հին դպրոցների փոխարեն ստեղծվեցին ռազմական և քաղաքական նոր ուսումնական հաստատություններ, վերականգնվեց արտասահմանում եգիպտացի ուսանողների ֆինանսավորումը, ընդ որում հատուկ ուշադրություն էին դարձնում բժշկական կրթությանը: Աբբասը շարունակեց եգիպտացիների հավաքագրումը մշտական բանակում՝ վերջինիս թվաքանակը հասցնելով 100-110 հազար մարդու՝ չնայած 1841թ. գործող սահմանափակմանը: Դրա հետ մեկտեղ 1853թ. վերականգնվեց ալբանական գվարդիայի կորպուսը: Ափերի երկայնքով իրականացվեցին զգալի ճարտարագիտական աշխատանքներ, որոնք ուղղված էին պաշտպանության ամրապնդմանը: Տպավորիչ

[317] Луцкий В., նշվ. աշխ., էջ 135-136:
[318] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 987-988:
[319] Heyworth-Dunne J., նշվ. աշխ., էջ 288-289:

արդյունքներ գրանցվեցին հասարակական անվտանգության և կարգի պահպանման ոլորտում, վերացվեց ոչ մուսուլմանական հոգևոր համայնքների նկատմամբ խտրականությունը[320]:

Աբբասի օսմանամետ ուղղվածությունը բացատրվում էր ինչպես նրա իսլամական աշխարհայացքով, այնպես էլ XIX դարի 40-ական թթ. եվրոպացիների բացասական ազդեցությամբ Եգիպտոսի հասարակական կյանքի վրա: Նա միտված էր բարելավել հարաբերությունները ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլ նաև Լոնդոնի հետ, քանի որ համամիտ չէր իր պապի և հորեղբոր՝ ոչ միշտ արդարացված ֆրանսիամետ ուղղվածության հետ: Մեծ Բրիտանիայի գլխավոր կոնսուլ Մյուրեյը Աբբասի ընկերն էր և մեծ ազդեցություն էր թողնում նրա վրա, ինչը վտանգ էր ներկայացնում Եգիպտոսի համար պայքարում ոչ միայն Ֆրանսիայի, այլ նաև օսմանյան սուլթանի համար:

Ինչ վերաբերում է պետական կառավարմանը, ապա Մուհամմադ Ալիի կողմից ստեղծված պետական համակարգը շարունակեց մնալ կայուն և աշխատունակ նաև Աբբասի օրոք: Պետական համակարգի կայունությունն այս անգամ պայմանավորված չէր պետական կառավարչի անձով, այլ արդյունք էր ներդրված պետական համակարգի գործառույթների կանոնակարգման և կառուցվածքային գործուն հիերարխիայի: Այդ պատճառով Աբբասն ուներ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության ուղղությունների լայն ընտրություն: Ֆինանսական քաղաքականությունը Աբբասի կառավարման թույլ կողմերից էր. եկամտի նկատմամբ պետական ծախսերի տևական գերազանցումը հանգեցրեց Եգիպտոսի արտաքին պարտքերի մեծացմանը[321]:

1854թ. Աբբասին փոխարինեց Մուհամմադ Ալիի կրտսեր որդիներից մեկը՝ Սայիդ փաշան, ով Եգիպտոսի արդիականացման գործընթացին տվեց բացահայտ կախյալ արևմտամետ, հաճախ բացառապես ֆրանսիամետ բնույթ: Հայրենիքի ազատության և անկախության մտքերը գերիշխող չէին նրա գիտակցության մեջ: Միևնույն ժամանակ Սայիդը մեծ նշանակություն էր տալիս

[320] Նույն տեղում, էջ 290-312:
[321] Mustafa A. A.-R., The Breakdown of the Monopoly System in Egypt after 1840, Political and Social Change in Modern Egypt, Historical Studies From the Ottoman Conquest to the United Arab Republic, London, 1968, p. 304.

անձնական ազատությանը և ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքին, ինչից զրկված էր հոր կենդանության տարիներին:

Սայիդն իր կրթությունը ստացել էր հիմնականում արտասահմանյան մանկավարժների մոտ, ազատ տիրապետում էր ֆրանսերենին և անգլերենին, սակայն չգիտեր թուրքերեն: Նաստերտ հարաբերությունների մեջ էր Ֆրանսիայի կոնսուլ Ֆերդինանդ դե Լեսսեպսի (1805-1894թթ.) հետ: Սայիդ փաշայի իշխանության գալուց հետո Լեսսեպսը առանց դժվարության կարողացավ համոզել նրան ստորագրել Սուեզի ջրանցքի կառուցման հետ կապված կոնցեսիայի ստեղծման փաստաթղթերը, որոնք շահավետ չէին Եգիպտոսի համար[322]: Սայիդի թույլ բնավորության հետևանքը եղավ այն, որ իր չմտածված քայլերի արդյունքում Եգիպտոսը կանգնեց տնտեսական և քաղաքական ճգնաժամի առջև[323]:

1858թ. հոկտեմբերին Լեսսեպսը հայտարարեց «Սուեզի ջրանցքի» համատեղ բաժնետիրական ընկերության ստեղծման մասին, իսկ 1859թ. ապրիլին, հենվելով միայն իր ընկեր Սայիդ փաշայի համաձայնության վրա, առանց սուլթանի պաշտոնական թույլտվության սկսեց ջրանցքի շինարարությունը[324]:

Բրիտանական կառավարությունը դեմ արտահայտվեց ջրանցքի կառուցման նախագծին, քանի որ այն կարող էր բացասական ազդեցություն ունենալ եգիպտական երկաթգծերի աշխատանքների վրա, որոնք գտնվում էին Մեծ Բրիտանիայի հսկողության տակ: Հատկապես կարևոր նշանակություն ուներ Ալեքսանդրիայի երկաթգիծը, որն անցնում էր Կահիրեով դեպի Սուեզ: Մեծ Բրիտանիան դրա կառուցման թույլտվությունը ստացել էր 1851թ., որը սկսել էր շահագործել 1858թ.[325]: Բրիտանական նավերը Մեծ Բրիտանիայից գալիս էին Ալեքսանդրիա և Հնդկաստանից Սուեզ: Այս երկու նավահանգիստների միջև կապը պահպանվում էր երկաթգծով, որը պատկանում էր Մեծ Բրիտանիային: Վերջինս վախենալով, որ ջրանցքի հսկողությունը կանցներ ֆրանսիացիների

[322] جورج يانج, նշվ. աշխ., էջ 213-217:
[323] Heyworth-Dunne J., նշվ. աշխ., էջ 313:
[324] جورج يانج, նշվ. աշխ., էջ 218-219:
[325] عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الأول، القاهرة، ١٩٨٢، ص. ٢٠-٢١، ٣٣-٣٤.

ձեռքը՝ պաշտոնապես պնդում էր, որ Կոստանդնուպոլիսը համաձայնություն չտանախագծի իրականացմանը[326]:

Իր վրա զգալով թե՛ Մեծ Բրիտանիայի, թե՛ Ֆրանսիայի ճնշումը՝ երկար մտորումներից հետո, այնուհանդերձ, սուլթանը տվեց ջրանցքի շինարարության համաձայնությունը, մինչդեռ ջրանցքն արդեն կիսով չափ կառուցված էր, և աշխատանքները պարզապես շարունակվեցին: Շինարարության վրա օրական աշխատում էր 20 հազար բանվոր, երեք հերթափոխով: Նրանք բոլորը գյուղացիներ էին, ովքեր ժամանակավորապես կտրվել էին իրենց գյուղատնտեսական աշխատանքներից և ստիպողաբար ուղարկվել էին աշխատելու շինարարության վրա: Շինարարական աշխատանքներն ավարտվեցին 1869թ. նոյեմբերի 17-ին Սուեզի ջրանցքի վրա նավագնացության պաշտոնական բացումով, ինչը տեղի ունեցավ արդեն նոր կառավարիչ Իսմայիլ փաշայի օրոք[327]:

Սայիդ փաշայի օրոք Եգիպտոսի վարչական իշխանությունը լուրջ փոփոխությունների չենթարկվեց, սակայն պահպանեց կենտրոնացման միտումը: Այդ շրջանի կարևոր նորամուծություններից կարելի է նշել հարկային բարեփոխումը, ինչը պետությանը հնարավորություն տվեց հարկերը հավաքելու անմիջապես արհեստավորական կորպորացիաների անդամներից՝ շրջանցելով շեյխերի պրոֆեսիոնալ միավորումները՝ գիլդիաները[328]:

Ջրանցքի կառուցումը Սայիդից պահանջեց կառավարման հզոր համակարգ և դրա համար անհրաժեշտ մարդկանց կենտրոնացում: Շինարարության վրա մշտապես աշխատում էին 20-40 հազար մարդ: Սայիդի օրոք փոփոխություններ կատարվեցին նաև դատական համակարգում. 1853թ., այնուհետև 1854թ. օսմանյան առևտրային օրենսգիրքը (1850թ.) կրկին հայտարարվեց միակ առևտրային օրենսդրական փաստաթուղթը, որը գործում էր Եգիպտոսի տարածքում[329]: Հենց այդ ժամանակ ստեղծվեց խառը կազմով

[326] Մանրամասն տե՛ս Ерофеев Н., Англо-французская борьба за Суэцкий канал (1854-1875), Из истории общественных движений и международных отношений, сб. статей., М., 1957, с. 590-614.
[327] جورج يانج, նշվ. աշխ., էջ 232-233:
[328] Ghazaleh P., The Guilds: Between Tradition and Modernity, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, 1995, p. 70.
[329] Hill E., նշվ. աշխ., էջ 100:

բողոքարկման առևտրային դատարանը, որի անդամների մի մասը եգիպտացիներ էին, իսկ մյուս մասը՝ արտասահմանցիներ, ովքեր նշանակվում էին արտասահմանյան հյուպատոսների կամ Ալեքսանդրիայի նահանգապետի կողմից[330]:

Սայիդի օրոք Եգիպտոսում արգելվեցին ստրկությունը և ստրկավաճառությունը: 1858թ. հրապարակվեց հողային օրենսգիրքը, որի համաձայն՝ վերացվեցին ստիպողական գյուղատնտեսական աշխատանքները, իսկ գյուղացիները, ովքեր տնօրինում էին աթար կամ խարաջիատիպի հողակտորների, դրանք վաճառելու, գնելու կամ ժառանգելու իրավունք ստացան, այսինքն՝ հողը դարձավ նրանց մասնավոր սեփականությունը: Վերջինս հանգեցրեց հողային սեփականության վերաբաշխմանը՝ հօգուտ նոր ունևոր շերտերի՝ առևտրականների, արտասահմանյան սեփականատերերի, գյուղական շեյխերի և այլն: Հողայինի հետ մեկտեղ իրականացվեցին նաև հարկային փոփոխություններ. գյուղերի կոլեկտիվ հարկահավաքությունը փոխարինվեց առանձին գյուղական տնտեսությունների հարկերի հավաքագրմամբ: Հարկերի հավաքագրումը գյուղական շեյխերից անցավ հատուկ հարկային պաշտոնյաներին: Սայիդի օրոք գյուղացիներն իրավունք ստացան մշակելու այն գյուղատնտեսական մշակաբույսերը, որոնք անհրաժեշտ էին համարում, և բերքը տնօրինելու ըստ իրենց ցանկության: 1856թ. Սայիդը օսմանյան սուլթանից թույլտվություն ստացավ մեծացնելու եգիպտական բանակը մինչև 30 հազար զինվոր, ինչը պայմանավորված էր Ղրիմի պատերազմում եգիպտացիների ակտիվ մասնակցությամբ: Շարունակելով իր հոր և հորեղբոր քաղաքականությունը՝ Սայիդը խրախուսեց եգիպտացիների ծառայությունը բանակում, ընդ որում՝ ոչ միայն շարքային, այլև սպայական պաշտոններում[331]:

Սայիդի գործողությունները հանգեցրին եգիպտական վարչական համակարգի կառուցվածքային վերափոխմանը: Լայնածավալ վարչական բարեփոխումը, որը համեմատելի է Մուհամմադ Ալիի՝ 1830-ական թթ. բարեփոխումների հետ,

[330] Ziadeh F., Lawyers The Rule of Law and Liberalism in Modern Egypt, Stanford, California, 1968, p. 13-14.
[331] Луцкий В., նշվ. աշխ., էջ 143-144:

իրականացվեց միայն 1870-ական թթ. Իսմայիլ փաշայի կառավարման ժամանակաշրջանում[332]:

Այս ամենին անդրադառնալուց առաջ կցանկանայինք նշել, թե ինչպիսի պայմաններում իշխանության գլուխ եկավ Իսմայիլ փաշան: Բանն այն էր, որ Սայիդ փաշայի ժառանգորդը պետք է դառնար վերջինիս ազգականը՝ Իբրահիմ փաշայի ավագ որդին, և հետևաբար Իսմայիլի ավագ եղբայր Ահմադը, ով իր հորից ժառանգել էր քաղաքական տաղանդ, կամային հատկություններ և հայրենասիրություն՝ հատկանիշներ, որոնք իշխող ընտանիքի մյուս անդամների մոտ հիմնականում բացակայում էին: Սակայն այդ ընդունակ և մեծ հույսեր ներշնչող եգիպտական գահի թեկնածուն ողբերգական մահ ունեցավ երկաթուղային աղետի հետևանքով: Ահմադը կառավարող տան այլ անդամների հետ միասին հրավիրված էր նոր երկաթուղային ճյուղի բացման հանդիսավոր արարողությանը, որի մի մասն անցնում էր Նեղոսի վրա կառուցված կախովի կամրջով: Ինչ-որ մեկի անփութության հետևանքով հյուրերով գնացքը բաց թողնվեց դեռևս չկառուցված կամրջի վրայով և այնտեղից ընկավ Նեղոսը: Գնացքի գրեթե բոլոր անվանի ուղևորները մահացան, այդ թվում նաև եգիպտական գահի բոլոր ավագ հավակնորդները, բացառությամբ Մուհամմադ Ալիի կրտսեր որդի Խալիմի: Իսմայիլը, ով Ահմադի կրտսեր եղբայրն էր, պատճառ բռնելով վատառողջությունը, չմասնակցեց արարողությանը և փրկվեց: Այսպիսով Սայիդ փաշայի մահից հետո Եգիպտոսի տիրակալ դարձավ Իսմայիլը: Ահմադի ընտանիքը մշտապես կասկածում էր Իսմայիլին այն բանում, որ հենց նա է կազմակերպել այդ բժբախտ պատահարը, որը և գահին հասնելու միակ իրատեսական ճանապարհն էր[333]:

Իսմայիլ փաշան (1863-1879թթ.) գահ բարձրացավ 33 տարեկանում: Նա կրթություն էր ստացել Եգիպտոսում և Ֆրանսիայում: Իսմայիլն իրեն դրսևորեց և՛ որպես պետության հմուտ ղեկավար, և՛ որպես գյուղատնտեսության արտադրության կազմակերպիչ[334]: Սուեզի ջրանցքի շինարարությանը զուգահեռ կառուցվեցին 112

[332] Tignor R., նշվ. աշխ., էջ 38-39:
[333] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1985, էջ 67:
[334] Heyworth-Dunne J., նշվ. աշխ., էջ 342:

ոռոգման ջրանցքներ՝ ընդհանուր 8400 մղոն երկարությամբ, ընդարձակվեց երկաթգծերի ցանցը՝ 275 մղոնից մինչև 1185 մղոն, անցկացվեցին ավելի քան 5200 մղոն հեռագրային լարեր, կառուցվեց 500 կամուրջ՝ ներառյալ Գեզիրի կամուրջը, որը երկար ժամանակ համարվում էր աշխարհի լավագույն կամուրջներից մեկը: Ալեքսանդրիայում և Կահիրեում կառուցվեցին ջրմուղներ, Սուեզում՝ նավահանգիստներ, 15 փարոս և 64 շաքարի գործարան, ու բացի դրանից, մեծ աշխատանքներ տարվեցին Կահիրեի և այլ քաղաքների փողոցները բարեկարգելու ուղղությամբ[335]:

Իսմայիլ փաշայի օրոք ընդարձակվեցին ոռոգվող հողատարածքները, ինչը հնարավորություն տվեց տարեկան բերքի քանակը բարձրացնել 2-3 անգամ: Այդ ժամանակ գյուղատնտեսական մշակաբույսերից գլխավորը բամբակն էր, որի վաճառքից Եգիպտոսը միջազգային շուկայում ստանում էր զգալի եկամուտ, երբ դրա պահանջարկը զգալիորեն աճեց ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի ժամանակ (1861-1865թթ.): Վաճառքի նման մեծ ծավալներ ապահովելու համար պահանջվեցին մեծ ֆինանսական միջոցներ, և Իսմայիլ փաշան գնաց իր նախորդի ճանապարհով՝ նոր պարտավորություններ կուտակելով եվրոպական բանկերում: Հակառակ սպասելիքների՝ գյուղատնտեսական նախագիծը չտվեց սպասվող եկամուտը, նույնիսկ վերցված վարկերի հաշվարկով բերեց կորուստներ: Դա տեղի ունեցավ նախ և առաջ այն պատճառով, որ ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո բամբակի պահանջարկը պակասեց, և բամբակ աճեցնող գյուղատնտեսական շատ տնտեսություններ սնանկացան, երկրորդ՝ համաճարակը ոչնչացրեց Եգիպտոսի համարյա բոլոր խոշոր եղջերավոր անասուններին, և արտասահմանից նորերը գնելու համար զգալի միջոցներ պահանջվեցին: Բացի դրանից, Իսմայիլի օրոք իրականացվեցին հետևյալ նախագծերը. ընդարձակվեցին և խորացվեցին ծովային ու գետային նավահանգիստները, կառուցվեցին փարոսներ և կամուրջներ, բարեկարգվեցին ճանապարհները[336]: Ինչպես արդեն նշվեց, Իսմայիլ փաշայի օրոք տեղի ունեցավ Սուեզի ջրանցքի բացումը, որի առիթով

[335] Malortie B., Egypt: Native Rulers and Foreign Interference, London, 1883, p. 123-125.
[336] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1985, էջ 68:

հանդիսությունները սկսվեցին 1869թ. նոյեմբերի 17-ին: Եգիպտոս էին եկել եվրոպական թագավորական տների խոշոր ներկայացուցիչներ, հարյուրավոր քաղաքական գործիչներ և այլն[337]:

Ինքնիշխանություն, աշխարհայացքի արևմտամետ բնույթ և հակում դեպի բարեփոխումներ. ահա այս 3 առանձնահատկություններով էր բնորոշվում Իսմայիլ փաշայի կառավարման ժամանակաշրջանը:

Իսմայիլ փաշան ինքնիշխանության հասնելու համար անհաջող փորձեր կատարեց, որպեսզի Բարձր դուռը պաշտոնապես ընդունի Եգիպտոսի անկախությունը: Ի պատասխան Բարձր դռանը վճարվող եգիպտական տարեկան հարկի կրկնապատկման՝ օսմանյան սուլթան Աբդ ալ-Ազիզը (1861-1876թթ.) 1866թ. մայիսի 27-ին համաձայնվեց Եգիպտոսում փոխել գահաժառանգության կարգը. այսուհետև իշխանությունը պետք է անցներ ոչ թե տոհմի ավագին, այլ ավագ որդուն: 1867թ. հունիսի 8-ին Իսմայիլը ստացավ խեդիվի ժառանգական կոչումը, որը ոչ պաշտոնապես կրում էր դեռևս նրա պապը՝ Մուհամմադ Ալին՝ դրանով ընդգծելով Եգիպտոսի և նրա կառավարչի յուրահատուկ տեղը՝ համեմատած օսմանյան այլ նահանգների և դրանց նահանգապետների հետ: Իսմայիլի պնդմամբ 1873թ. սուլթանը հրաման արձակեց Եգիպտոսի ֆինանսական ինքնավարության մասին, ինչը մի կողմից թուլացնում էր Կոստանդնուպոլսից նրա կախվածությունը, իսկ մյուս կողմից ճանապարհ էր բացում երկիր օտարերկրյա ֆինանսական ներխուժման համար, ինչ ունեցավ ճակատագրական հետևանքներ[338]:

Իսմայիլ փաշան ամրապնդեց արաբերենի կարգավիճակը՝ որպես Եգիպտոսի միակ պաշտոնական լեզու: Բացի դրանից Իսմայիլի օրոք 20 անգամ ավելացավ տարրական դպրոցների թիվը, աճեց միջնակարգ և մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը, ստեղծվեցին առ այսօր գործող Եգիպտական ազգային գրադարանը, Ազգային թանգարանը, Կահիրեի օպերան և այլն[339]:

---

[337] Виноградов К., Мировая политика 60-80-х годов XIX века: события и люди, Л., 1991, с. 39-40.
[338] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1982, էջ 80-86:
[339] Heyworth-Dunne J., նշվ. աշխ., էջ 342-395:

Փոփոխությունների վերլուծության համար, որոնք տեղի ունեցան Մուհամմադ Ալիից հետո Եգիպտոսի վարչական կառավարման մեջ, անհրաժեշտ է ուսումնասիրել եգիպտական դատական համակարգի էվոլյուցիան: Մուհամմադ Ալիի օրոք դատական գործառույթներն անջատված չէին քաղաքական և վարչական գործառույթներից: Կարևորագույն դատական որոշումները սկզբում ընդունվում էին կառավարչին կից դիվանի կողմից (դիվան ալ-վալի), 1830թ. հետո՝ Ալեքսանդրիայում և Դամիեթթում ստեղծված նմանատիպ մարմինների կողմից, և վերջապես 1837թ.՝ նոր կազմակերպված գերագույն դիվանի կողմից (ադ-դիվան ալ-ալի), որի իրավասության մեջ մտնում էր տարբեր իրավաբանական գործերի քննությունը, ներառյալ վակուֆայինը[340]: 1842թ. ստեղծվեց իրավաբանական ասամբլեայի խորհուրդը (մաջլիս ալ-ջամիա ալ-հականիա), որն իրականացնում էր երկրի բարձրագույն դատական ատյանի գործառույթները, հսկում էր պետական օրենքների և ցուցումների իրականացումը, քննարկում էր բարձրագույն զինվորական և քաղաքացիական անձանց դատական գործերը: Այն կազմված էր նախագահից, երկու զինվորական սպաներից, երկու ծովային սպաներից և երկու քաղաքացիական պաշտոնյաներից[341]: 1848-1849թթ. այն ստացավ նոր անվանում՝ արդարադատության խորհուրդ (մաջլիս ալ-ահքամ) և ընդարձակվեց. նրա կազմի մեջ մտան 9 սպա և 2 հոգևորական (մեկը՝ հանիֆի, իսկ մյուսը՝ շաֆի): Հնացած իրավաբանական հարցերը փոխանցվեցին նահանգային վարչական մարմինների իրավասությանը: Աբբաս Ի-ը, վախենալով դավադրությունից, վերափոխեց դատական համակարգն՝ իրավացիորեն ենթադրելով, որ արդյունավետ կառավարվող դատական համակարգն իրեն թույլ կտա հաղթահարել ընդդիմությանը և իր վրայից հանել բռնակալության մեղադրանքները: 1851-1852թթ. նա ստեղծեց 5 նահանգային դատարաններ, որոնք ընդգրկեցին ողջ երկրի տարածքը և Սուդանը: Դրանք գտնվում էին Տանտեում, Սամանուդում, Ֆիշնեում, Գիրգեում և Խարթումում, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր նախագահից, 4 անդամներից, 4 գրագիրներից, 2 հոգևորականներից (շաֆի և հանիֆի), 2

[340] Hill E., նշվ. աշխ., էջ 98-99:
[341] Ziadeh F., նշվ. աշխ., էջ 11-13:

քաղաքացիական անձից տեղացի շեյխերի թվից, իմամից և գրագիր քարտուղարից: Հենց այդ ժամանակ տեղի ունեցավ շարիաթական (կրոնական) և աշխարհիկ դատարանների հստակ սահմանազատումը: Քաղաքացիական գործերը մնացին շարիաթական դատարանների իրավասության տակ, իսկ վարչական գործերն անցան նոր ստեղծված դատական մարմինների իրավասության տակ, իսկ նրա ընդունած որոշումներն իրականացվում էին տեղական վարչական մարմինների կողմից[342]:

Սայիդ փաշան 2 անգամ կասեցրեց աշխարհիկ դատարանների գործունեությունը՝ ներառյալ մաջլիս ալ-ահքամը (1854-1855թթ. և 1859-1860թթ.): Երկրորդ անգամ, վերականգնելով վերջինի գործունեությունը, Տանտա քաղաքում երկրի հյուսիսի համար նա կազմեց գերագույն դատական մարմին, որը լուծարվեց միայն 1884թ.՝ բրիտանացիների կողմից ազգային դատարանների ստեղծումից հետո (ալ-մահաքիմ ալ-ահլիա)[343]:

Դատական համակարգում նշանակալի փոփոխություններ կատարվեցին խեդիվ Իսմայիլի օրոք 1870-ական թթ.: Սկսած 1870-1873թթ.՝ նրա կարգադրությամբ ձևավորվեցին 4 տիպի դատական մարմիններ, որոնք ենթարկվում էին արդարադատության խորհրդին (մաջլիս ալ-ահքամ): Դրանցից առաջինը մաջլիս դաավին էր, որի գործառույթների մեջ մտնում էր մանր դատական հարցերի լուծումը: Երկրորդը մաջլիս մարքազին էր, որի գործառույթների մեջ մտնում էր հիմնական դատական հայցերի լուծումը (դատական այս 2 մարմինները լայնորեն տարածված էին ամբողջ երկրով մեկ, առաջին հերթին քաղաքներում): Երկրի 8 խոշոր քաղաքներում ստեղծվեցին առաջին ատյանի դատարաններ՝ մաջլիս իբթիդան: Կահիրեում, Տանտեում և Ասյուտում կազմակերպվեցին բողոքարկման դատարաններ (մաջլիս իսթիանաֆ): Հետագայում «մաջլիս» (խորհուրդ) բառը փոխարինվեց «մահկամա» (դատարան) բառով, և այդ անվան տակ վերը նշված 2 դատական մարմինները պահպանվել են մինչև օրս[344]:

---

[342] Hill E., նշվ. աշխ., էջ 99:
[343] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1982, էջ 50-52:
[344] Ziadeh F., նշվ. աշխ., էջ 16:

Միևնույն ժամանակ, չհաշված վերը նշված բարեփոխումները, քաղաքացիական դատական զարգացող համակարգի հետ միասին շարունակում էին գոյություն ունենալ շարիաթական դատարանները: Դրանց գործունեության ոլորտն աստիճանաբար վերաբերում էր քաղաքացիների անձնական հարցերի կարգավիճակին և դրա հետ կապված հողատիրության խնդիրներին: Դրա հետ մեկտեղ ծանր հանցագործություններին վերաբերող գործերը, կապված սպանությունների հետ, պահանջում էին քաղաքացիական դատարանների՝ մաջլիս ալ-ահքամի հաստատումը[345]: Դատական այլ նորամուծություններ էին 1840-ական թթ. առաջացած առևտրական դատարանները, որոնց վիճակված էր լուծել առևտրական հարցեր՝ պայմանավորված Եգիպտոսում արտասահմանյան առևտրականների առևտրական գործունեության սահմանափակման վերացմամբ: Այդպիսի դատարաններ բացվեցին Կահիրեում ու Ալեքսանդրիայում 1845-1846թթ., որոնք ունեին խառը կազմ: Ատենակալների մի մասը եգիպտացիներ էին, իսկ մյուս մասը՝ օտարերկրացիներ, որոնք ընտրվում էին վիճակահանությամբ[346]: Սայիդ փաշան բազմիցս փոփոխություններ մտցրեց առևտրական օրենսգրքում և դատավարական համակարգում: 1853թ. Եգիպտոսում տարածվեց օսմանյան առևտրական օրենսգիրքը (1850թ.), որը հիմնված էր ֆրանսիական օրենքների վրա: Ալեքսանդրիայում կազմակերպվեց խառը կազմով առևտրական բողոքարկման դատարան, որում նշանակումներն իրականացվում էին Ալեքսանդրիայի նահանգապետի կողմից՝ եգիպտացիների համար և հյուպատոսների կողմից՝ օտարերկրացիների համար: 1861թ. Կահիրեում ստեղծվեց նոր դատական մարմին՝ Կահիրեի հանձնաժողովը, որը պետք է լուծեր օտարերկրացիներին վերաբերող դատական հարցերը: Հանձնաժողովն ուներ խառը կազմ. նախագահը՝ եգիպտացի, 2 եգիպտացի և 2 օտարերկրացի անդամներ: Այս մարմնի ստեղծմամբ ճանապարհ հարթվեց եգիպտական դատական համակարգ օտարերկրյա ներկայացուցիչների ներթափանցման համար, ինչն էլ հանգեցրեց

[345] Hill E., նշվ. աշխ., էջ 100:
[346] Brinton J., The Mixed Courts of Egypt, New Haven, 1930, p. 97-98.

այսպես կոչված «Խառը դատարանների» (մահաքիմ մուհթալաթա) ստեղծմանը[347]:

Խառը դատարանները ստեղծվեցին 1876թ. խեդիվ Իսմայիլի կարգադրությամբ, որոնք կազմված էին եգիպտացիներից և օտարերկրացիներից[348]: Դրանց ստեղծմանը նախորդեցին մի քանի տարի տևողությամբ դիվանագիտական ջանքեր և համառ բանակցություններ, որոնք կապված էին վարչապետ Նուբար փաշայի անվան հետ: Այդ դատարանների առաջացումը պայմանավորված էր նրանով, որ 1870-ական թթ. օտարերկրացիների ներգրավվածությունը Եգիպտոսի տնտեսական կյանքում էապես աճեց, իսկ այդ ժամանակ Եգիպտոսում տեղացիների, ինչպես նաև օտարերկրացիների իրավունքների պահպանման երաշխիք գոյություն չուներ: Հենց այդ նպատակին էին ծառայելու Խառը դատարանները: Նուբար փաշան Խառը դատարաններ ստեղծելու գաղափարն առաջին անգամ առաջարկեց 1866թ.: Այնուհետև մոտ 10 տարի նա պաշտպանում էր այդ գաղափարը, քանի դեռ այն չվերածվեց վերջնական նախագծի: Վերջինի էությունն այն էր, որ հյուպատոսական և եգիպտական դատարանները փոխարինվեն այնպիսի դատարաններով, որտեղ դատավորները կլինեին եվրոպացիներ, իսկ դատարանի անդամները՝ ոչ միայն եվրոպացիներ, այլ նաև եգիպտացիներ: Միջազգային հանձնաժողովները 2 անգամ (1869թ. և 1873թ.) քննարկեցին այդ նախագիծը, այնուհետև ևս 3 տարի պահանջվեց՝ բոլոր շահագրգիռ երկրների համաձայնությունը ստանալու համար, որոնք պետք է էապես փոխեին երկրում դատավարության բնույթը, որի վրա տարածվում էին կապիտուլյացիոն համաձայնագրերի պայմանները: 1875թ. վերջինն իր համաձայնությունը տվեց Ֆրանսիան, իսկ 1876թ. հունվարի 1-ին հայտարարվեց նոր դատարանների ձևավորման սկիզբը: Առաջին Խառը դատարանները ստեղծվեցին Կահիրեում, Ալեքսանդրիայում, Զակազիկում և Մանսուրում: Կանոնադրության համաձայն՝ դրանք պետք է քննեին օտարերկրացիների հետ կապված տնտեսական հարցեր, իսկ գործնականում նրանց իրավասության մեջ մտնում էր տնտեսական խնդիրների ամբողջությունը: Պալատների նախագահները նշանակվում էին խեդիվի կողմից, իսկ

[347] Hill E., նշվ. աշխ., էջ 100:
[348] ألبرت فارمان، مصر و كيف غدر بها، القاهرة، ١٩٦٤، ص. ٢٧٧-٢٧٨.

փոխնախագահներն ընտրվում էին դատավորների ամենամյա ժողովներում, որոնց մեծ մասը եվրոպացիներ էին[349]:

Խառը դատարանների գոյության առաջին տարիները համընկան երկրում քաղաքական և ֆինանսական ճգնաժամի աճի հետ, ինչը պայմանավորված էր եվրոպական երկրների և անհատների նկատմամբ ունեցած եգիպտական պետական պարտքի մեծացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ խեդիվ Իսմայիլը փորձում էր լուծել պարտքի հետ կապված խնդիրները վարչական բարեփոխումների ճանապարհով: 1879թ. ապրիլի 7-ին իր նստավայր Աբդինյան պալատում խեդիվը հրավիրեց դիվանագիտական կորպուսի և Կահիրեի ավագանու ներկայացուցիչներին՝ մեծածավալ բարեփոխումների սկիզբը հայտարարելու համար, որոնց նպատակն էր վերջին հաշվով Եգիպտոսում հաստատել խորհրդարանական կարգ[350]: Վկայակոչելով համընդհանուր դժգոհությունը «եվրոպական գրասենյակի» նկատմամբ՝ Իսմայիլը հայտարարեց դրա լուծարման և «իսկական եգիպտական կառավարությամբ» վերջինի փոխարինման մասին: Սակայն դա կրում էր հարկադրական բնույթ և օժանդակ միջոց էր, այն դեպքում, երբ հիմնական առաջարկը Պետական խորհրդի (Մաջլիս ադ-դաուլա) ստեղծումն էր[351]:

Զգալով եվրոպական տերությունների կողմից աճող ճնշումը և հնարավորություն չունենալով վերահսկել «Խառը դատարանների» գործունեությունը, որոնք գործնականում գտնվում էին եվրոպական երկրների հյուպատոսների ազդեցության տակ, Իսմայիլը շտապեց օրինականացնել նոր մարմինը: Արդեն 1879թ. ապրիլին Նոտաբլների պալատը, որի մասին կխոսենք ավելի ուշ, հավանություն տվեց խեդիվի նոր մարմին ստեղծելու կարգադրությանը, որը ստացավ «Պետական խորհրդատվական խորհուրդ» (Մաջլիս շուրա ալ-հուքումա) անունը: Այս նոր վարչական մարմինը, որի նախատիպը ֆրանսիական Պետական խորհուրդն էր, պետք է դառնար օրենսդրական բարեփոխման վերջնական փուլը: Այն պետք է գործեր Նոտաբլների պալատի հետ համատեղ (մաջլիս շուրա ան-նուաբ)՝ որպես իրավական հարցերով

[349] Brinton J., նշվ. աշխ., էջ 134:
[350] Луцкий В., նշվ. աշխ., էջ 179-180:
[351] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 180:

բարձրագույն փորձագիտական խորհուրդ: Ենթադրվում էր, որ դրա նախագահը պետք է լիներ վարչապետը: Բացի նրանից խորհրդի մեջ պետք է մտնեին նաև 2 փոխնախագահներ և 8 անդամներ՝ 4 եգիպտացի և 4 օտարերկրացի: Խորհուրդը պետք է մասնակցեր օրենքների մշակմանը, հանդես գար որպես խորհրդատվական մարմին հանրային սեփականության և վարչական վեճերի հարցերով: Ստեղծելով այն՝ Իսմայիլը ձգտում էր վերջ տալ «իրավական խառնաշփոթությանը, որն առաջացել էր խառը դատարանների ստեղծման արդյունքում», ինչպես նաև մեխանիզմ մշակեց, որը նպաստելու էր եգիպտական պետական պարտքի վերացմանը: Սակայն ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը նա չհաջողեց իրականացնել: Նրա վարչական նախաձեռնությունն առաջ բերեց եվրոպական տերությունների հետ հարաբերությունների սրում, ինչի արդյունքում 1879թ. հունիսին Իսմայիլը պաշտոնանկ արվեց[352]:

Իսմայիլ փաշայի բարեփոխման ողջ գործունեությունը՝ լիներ դա դատական համակարգի վերակազմավորումը, երկաթգծերի շինարարությունը և փոխադրամիջոցների ենթակառուցվածքային կատարելագործումը, հողաբարելավման աշխատանքները և ազգային կրթական համակարգի զարգացումը, նպատակ ուներ Եգիպտոսը վերածելու ժամանակակից պետության, ինչի համար պահանջվում էին մեծ ծախսեր: Այդ պատճառով Իսմայիլ փաշան ձգտում էր գրավել արտասահմանյան ներդրողների ուշադրությունը, ովքեր էլ իրականացնում էին իրենց համար շահաբեր տնտեսական նախագծեր՝ համագործակցելով եգիպտական վերնախավի և արտասահմանյան բանկերի հետ: Այսպես, 325 միլիոն ֆրանկից, որը նախատեսված էր երկաթգծի շինարարության համար, միայն 75 միլիոնն օգտագործվեց իրական նպատակով, իսկ մնացած գումարի ճակատագիրն անհայտ մնաց[353]: Եգիպտոսի գաղութացման պատմությունը կարելի է անվանել ֆինանսական զավթման դասական օրինակ[354]: Եթե մինչև XIX դարի կեսը Եգիպտոսը գործնականում չուներ պետական պարտք, ապա 1870-ական թթ. կեսերին նրա պարտքը, գլխավորապես անգլո-

[352] Hill E., նշվ. աշխ., էջ 102-103:
[353] Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., նշվ. աշխ., էջ 190:
[354] Кряжин В., Национально-освободительное движение на Ближнем Востоке, Часть 1, Сирия и Палестина, Киликия, Месопотамия и Египет, М., 1923, с. 116.

ֆրանսիական բանկերին կազմեց 94 միլիոն ֆունտ սթեռլինգ[355]: Խեդիվ Իսմայիլի անմիջական վարկատուներն էին Ռոտշիլդների բանկային մասնաճյուղերը (փարիզյան, լոնդոնյան, ֆրանկֆուրտյան), «Կրեդիտ ֆոնսյե դե ֆրանսը», «Լիոնյան վարկը», «Փարիզյան բանկը», «Օպենհեյմը», «Ֆլյուրինգ և Գոշենը», «Բիշովսհեյմը», անգլո-եգիպտական ու ֆրանկո-եգիպտական բանկերը և այլն: Տվյալ ժամանակաշրջանի Եվրոպայի համար վարկի տոկոսադրույքը կազմում էր 3,5-5%, իսկ Եգիպտոսը վարկը ստանում էր 12-26, երբեմն էլ 30%-ով: Արդյունքում միջոցների մեծ մասը, որոնք Եգիպտոսը ստանում էր վարկերով, փաստորեն մնում էր վարկատուների մոտ և վերադարձվում էր նրանց որպես տոկոսների վճար նախկին վարկերի դիմաց: Գործնականում պահումները և տոկոսները կազմեցին Եգիպտոսի պարտքի ավելի քան երկու երրորդը՝ 70 միլիոն ֆունտսթեռլինգ[356]:

Արտասահմանյան բանկերից վերցնելով վարկեր, որը երկիրը չէր կարող ամբողջությամբ վերադարձնել՝ Իսմայիլը շուտով բացահայտեց, որ չի կարող վճարել նույնիսկ վերցված վարկերի տոկոսները: Ձգտելով ելք գտնել ֆինանսական փակուղուց՝ նա որոշում ընդունեց Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ հրավիրել խորհրդարան՝ Պատգամավորների խորհրդատվական ժողով (Մաջլիս շուրա ան-նուաբ), որը հաճախ անվանում են Պատգամավորների պալատ կամ Նոտաբլների պալատ (1866թ.): Պաշտոնապես այդ մարմինը ստեղծվեց՝ ֆինանսական ճգնաժամից դուրս գալու ուղիներ փնտրելու համար, սակայն իրականում այն կատարում էր խորհրդակցական գործառույթներ՝ զբաղվելով ուղիներ փնտրելով՝ բնակչությունից լրացուցիչ հարկեր ստանալու համար[357]:

Պալատը կազմված էր 75 անդամներից, որոնք ընտրվում էին 3 տարի ժամկետով գյուղական շեյխերի, Կահիրեի, Ալեքսանդրիայի և Դամիեթթի նոտաբլների կողմից: Նրա անդամներից համարյաբոլորը խոշոր հողատերերի ներկայացուցիչներ էին[358]: Խորհրդատվական

[355] Кошелев В., Египет: уроки истории. Борьба против колониального господства и контрреволюции (1879-1981), Минск, 1984, с. 12.
[356] Нерсесов Г., Дипломатическая история египетского кризиса 1881-1882 гг., М., 1979, с. 25, 257.
[357] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1982, էջ 109:
[358] Луцкий В., նշվ. աշխ., էջ 145:

ժողովը մի մարմին էր, որտեղ կենտրոնացված էր քաղաքական իշխանության նշանակալի ներուժ. մոտ 50 հողատիրական խոշոր ընտանիքներ մենաշնորհ էին դարձրել իրենց անդամակցությունը խորհրդատվական ժողովում՝ պահպանելով հսկայական քաղաքական իշխանությունը ընդհուպ մինչև 1952թ. հեղափոխությունը[359]:

1875թ. վերջին սպառելով լրացուցիչ հարկահավաքության հնարավորությունները՝ հերթական վարկի վճարումները ծածկելու նպատակով, Իսմայիլ փաշան որոշեց վաճառել Եգիպտոսին պատկանող Սուեզի ջրանցքի արժեթղթերը՝ խեդիվի տրամադրության տակ մնացած եգիպտական տնտեսության միակ եկամտաբեր հաստատությունը: Համապատասխան առաջարկներն ուղարկվեցին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններին: Ավելի արագ արձագանքեցին Մեծ Բրիտանիան և խեդիվի շրջապատի անգլիամետ գործակալները: Այսպես վարչապետ Դիզրաելին (լորդ Բիկոնսֆիլդ) Մեծ Բրիտանիայի համար 4 միլիոն ֆունտսթեռլինգով գնեց Սուեզի ջրանցքի եգիպտական արժեթղթերը, ով այդ գործարքի արդյունքում ստացավ արժեթղթերի 45%-ը[360]: Չնայած ֆրանսիական կողմը տիրապետում էր արժեթղթերի ավելի մեծ քանակի, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, որի դեպքում դրանք գտնվում էին կառավարության ձեռքում, ֆրանսիական մասնաբաժինը բաշխված էր մի քանի բաժնետերերի միջև[361]:

Սուեզի ջրանցքի արժեթղթերի ձեռքբերումը Մեծ Բրիտանիայի համար առաջին քայլն էր Եգիպտոսը գաղութացնելու ուղղությամբ: Արժեթղթերը Մեծ Բրիտանիային իրավունք տվեցին պահանջելու հսկողություն Սուեզի ջրանցքի վրա և 2 բրիտանացի ներկայացուցիչների ներգրավումն ընկերության նախագահների խորհրդի մեջ: Հաջորդ քայլը կատարեց խեդիվ Իսմայիլը, ով օգնության համար դիմեց եվրոպական տերությունների աջակցությանը՝ խնդրելով նրանց օգնել Եգիպտոսին դուրս գալ ֆինանսական փակուղուց: Դա ռազմավարական սխալ էր և փաստորեն անսահմանափակ հնարավորություններ տվեց եվրոպական

---

[359] Кошелев В., Консультативное собрание депутатов в Египте (1866-1879 гг.), Восток в новое время. Экономика, государственный строй, М., 1991, с. 180-200.

[360] محمد صبري، تاريخ مصر من محمد علي إلى المصر الحديث، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٦، ص. ١٠٤-١٠٥.

[361] Landes D., Bankers and Pashas: International Finance and Economic Imperialism in Egypt, Cambridge, Massachusetts, 1958, p. 315-318.

տերություններին միջամտելու Եգիպտոսի գործերին: Եգիպտոսին ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու նպատակով 1876թ. ստեղծվեց միջազգային մարմին՝ Խեդիվի պարտքի դրամարկղ: Դրա մեջ մտան Եգիպտոսի վարկատու երկրների ներկայացուցիչները Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ավստրո-Հունգարիայից և Իտալիայից[362]: Այս մարմնում անգլո-ֆրանսիական հակասությունները հանգեցրին վերջինի լուծարմանը, որի փոխարեն 1876թ. նոյեմբերի 18-ին ստեղծվեց կրկնակի ստուգման համակարգ. պետական ծախսերը և եկամուտները ղեկավարելու համար նշանակվեցին 2 ստուգողներ՝ բրիտանացի և ֆրանսիացի: Նրանց և խեդիվ Իսմայիլի միջև, ով պայքարում էր Եգիպտոսի սուվերենության մնացորդները պահպանելու համար, առաջացավ անհաշտ հակասություն, որը լուծեց հետաքննության Միջազգային հանձնաժողովը, որն աշխատում էր եվրոպական հսկողությամբ (1878թ.): Այդ հանձնաժողովի երաշխավորության հիման վրա խեդիվ Իսմայիլը փաստացի հեռացվեց պետության ղեկավարումից, և 1878թ. օգոստոսի 28-ին նա երկրի ղեկավարումը կրկին տվեց ստեղծված նախարարների միջազգային գրասենյակին, որը Եգիպտոսում ստացավ «եվրոպական գրասենյակ» անվանումը[363]:

Այդ կառավարության գլուխ որպես վարչապետ նշանակվեց Եգիպտոսի արտաքին գործերի նախկին նախարար Նուբար փաշան[364]: Այդ գրասենյակում ներքին գործերի նախարար նշանակվեց եվրոպամետ Մուստաֆա Ռիյազ փաշան, պաշտպանության նախարար՝ Ռահիբ փաշան, վաքֆերի և կրթության նախարար՝ Ալի Մուբարաք փաշան, ֆինանսների նախարար դարձավ բրիտանացի Ռիվերս Վիլսոնը, իսկ հասարակական աշխատանքների նախարար՝ ֆրանսիացի դե Բլիները: Եվրոպացիները զբաղեցրին կարևոր պաշտոններ գրեթե բոլոր նախարարություններում: Եվրոպացիների ներկայությունը կառավարությունում վկայում էր, որ Եգիպտոսում օտարերկրյա ազդեցությունը դուրս է եկել տնտեսական հետաքրքրությունների սահմաններից և ստացել է օրինական կարգավիճակ բարձրագույն քաղաքական մակարդակով (նախարարների մակարդակով): Տարբեր

[362] جورج جانج, նշվ. աշխ., էջ 491-492:
[363] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1985, էջ 69-71:
[364] Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., նշվ. աշխ., էջ 192-193:

հեղինակներ այդ փաստը տարբեր կերպեն մեկնաբանում: Օրինակ՝ Վ. Լուցկին դիտարկում է «եվրոպական գրասենյակի» ի հայտ գալը որպես ծայրահեղ բացասական երևույթ, որը վնաս էր պատճառում Եգիպտոսի ազգային սուվերենությանը[365]: Ռ. Հանթերը դրանում տեսնում էր մի կողմից խեդիվի, իսկ մյուս կողմից եվրոպական կոնսուլների, առաջին հերթին՝ բրիտանացիների միջև փոխհամաձայնության որոնում[366]:

Յունան Ռիզկը ընդգծում է, որ գրասենյակն ուներ եվրոպական կառավարության տեսք: Այն ծառայում էր եվրոպացիների շահերին և իր կազմում ուներ օտարերկրացիներ, ովքեր օժտված էին բացառիկ իրավունքով արգելող վետո դնելու կառավարական մեծամասնության ցանկացած որոշման վրա: Այդուհանդերձ դա մի քայլ էր ժամանակակից պետական ապարատի ստեղծման ուղղությամբ, որը պատրաստ էր լուծելու բարդ քաղաքական խնդիրներ: Եվրոպական գրասենյակը քաղաքական համակարգի սկզբունքորեն նոր տարր էր, որը Եգիպտոսում պահպանվել է առ այսօր[367]:

1830-ական թթ. Մուհամմադ Ալիի վարչական բարեփոխումների և 1870-ական թթ. Իսմայիլի վարչական բարեփոխումների ժամանակաշրջանների միջև առկա է անվիճելի հաջորդական կապ, սակայն այդ բարեփոխումների արդյունքները տարբեր են: Մուհամմադ Ալին ստեղծեց կենտրոնական արդիականացված վարչական կոշտ համակարգ: Արդիականացված այդ համակարգը շարունակում էր մնալ Եգիպտոսի համար ավանդական քաղաքական մշակույթի շրջանակներում, որին բնորոշ էր քաղաքական և վարչական իշխանության անբաժանությունը: Մուհամմադ Ալին պահպանում էր վերջնական որոշումներ կատարելու իրավունքը, որոնք պարտադիր պետք է իրականացվեին: Նրա օրոք եգիպտական պետականության կենտրոնացված համակարգը գործիք էր, որը պետք է իրականացներ բարձրագույն կառավարչի կամքը: Գործադիր, իրավական և օրենսդրական իշխանության առավել նեղ միացում, որը Մուհամմադ Ալիի օրոք էր, դժվար է պատկերացնել[368]:

---

[365] Луцкий В., նշվ. աշխ., էջ 174:
[366] Hunter R., Egypt Under the Khedives 1805-1879: From Household Government to Modern Bureaucracies, Pittsburgh, 1984, p. 179.
[367] Rizk Y., նշվ. աշխ., էջ 91-92:
[368] Ziadeh F., նշվ. աշխ., էջ 11-13:

Իսմայիլի վարչական բարեփոխումը հանգեցրեց խեդիվի և նախարարների խորհրդի վարչական իշխանության քաղաքական բաժանվածությանը: Պետության գործունեության գործնական հարցերի հիմնական մասը դուրս եկավ խեդիվի անմիջական հսկողությունից, ինչը պայմանավորված էր նախարարների գրասենյակում արտասահմանցիների ներկայությամբ, ովքեր նույնիսկ ձևականորեն չէին ենթարկվում Եգիպտոսի կառավարչին: Այսպիսով, վերացավ Եգիպտոսի քաղաքական և վարչական իշխանության ավանդական անբաժանելիությունը, և առաջացան անհատական պատասխանատվության նոր ձևեր՝ կառավարչի օրենսդրական քաղաքական և նախարարների գործադիր վարչական պատասխանատվությունը, որոնցից առաջինը պատասխանատու էր ընդունվող որոշումների ճշտության համար, իսկ երկրորդը՝ դրանց իրականացման համապատասխանելիության համար[369]:

1830-ական թթ. իրականացվող բարեփոխումները կրում էին անկախ բնույթ, քանի որ ընդունվում էին բացառապես Մուհամմադ Ալիի կողմից: Ինչ վերաբերում է Իսմայիլի օրոք իրականացվող բարեփոխումներին, հատկապես «եվրոպական գրասենյակի» առաջացմանը, ապա դրանք նպատակաուղղված ճնշման արդյունք էին եվրոպական տերությունների, նախ և առաջ Եգիպտոսի հիմնական վարկատուների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից: Պնդելով քաղաքական և վարչական իշխանության բաժանումը, այսինքն՝ «եվրոպական գրասենյակի» ստեղծումը՝ արտասահմանյան տերությունները ձգտում էին կառավարչին զրկել կատարման համար պարտադիր որոշումներ կայացնելու իրավունքից՝ այդ իրավունքը տալով գործադիր մարմնին՝ նախարարների խորհրդին, որտեղ տերություններն ունեին իրենց ներկայացուցիչները, ովքեր օժտված էին մեծ իրավունքներով: Խեդիվ Իսմայիլը փորձեց իշխանության բաժանմանը տալ ազգային բնույթ, այսինքն՝ իրեն վերադարձնել գերագույն օրենսդրական իշխանությունը, բայց եվրոպական երկրների ջանքերով անմիջապես հեռացվեց քաղաքական ասպարեզից և փոխարինվեց իր որդի Թաուֆիկով, ով ավելի պատրաստ էր քաղաքական փոխզիջումների:

[369] Rizk Y., նշվ. աշխ., էջ 97:

Այսպիսով, Մուհամմադ Ալիի կառավարման լարված և բազմաթիվ հաջողությունների հասած տարիներից հետո եգիպտացիների կարևորագույն խնդիրը դարձավ պահպանել Ալիի ջանքերով ստեղծված միավորված և ամուր պետականությունը: Սակայն դա այնքան էլ հեշտ չէր, քանի որ չկար այնպիսի հզոր առաջնորդ, ինչպիսին Ալին էր: Անշուշտ, որոշակի անկում էր նկատվում բարեփոխումների ոլորտում: Նրա մահից հետո իր գահաժառանգները ֆինանսական սխալ քաղաքականություն վարելու հետևանքով մի շարք պետական պարտքեր էին կուտակել՝ Եգիպտոսը հասցնելով տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Հետագայում ստորագրելով Սուեզի ջրանցքի կառուցման փաստաթղթերը՝ Եգիպտոսը հայտնվել էր ոչ շահավետ պայմաններում: Խեդիվ Իսմայիլը, կառավարելով 1863-1879թթ., իր առաջ նպատակ էր դրել հասնել Եգիպտոսի անկախացմանը, սակայն նրա կառավարման օրոք Եգիպտոսը շարունակեց սնանկանալ, ինչի հետևանքով Մեծ Բրիտանիան բռնազավթեց երկիրը:

3.2. Ներքաղաքական իրավիճակը Եգիպտոսում 1879-1882թթ. և Օրաբի փաշայի ապստամբությունը

XIX դարի 2-րդ կեսին Եգիպտոսում ստեղծված իրավիճակը հստակ տարանջատեց քաղաքական երկու հակադարձ ճակատ՝ մի կողմից եվրոպական նախարարների հպատակներ, ովքեր անձնական շահերը վեր էին դասում ազգային և պետական շահերից, մյուս կողմից՝ ազգանվեր գործիչներ, ովքեր ներկայացնում էին հասարակ եգիպտացիների՝ գյուղացիների ու զինվորականների շահերը և դեմ էին եվրոպական կամակատարություններին ու անարդարություններին իրենց իսկ երկրում: Եվրոպացիների տևական անօրինությունները եգիպտացիների հեղափոխությունը վերածեցին մի քնած հրաբխի, որի ժայթքումն անխուսափելի էր, բայց և ուժգին:

Եգիպտոսը 1879-1882թթ. հայտնվեց քաղաքական խորը ճգնաժամի մեջ, որի պատճառը եգիպտական բանակի և նախարարների «եվրոպական գրասենյակի» միջև ծագած հակասությունն էր: Միջոցներ

խնայելու նկատառումներով եվրոպացի նախարարներն աշխատանքից հեռացրեցին բանակի 2500 սպաների, իսկ մնացած սպաների աշխատավարձը երկու անգամ պակասեցրին և նույնիսկ չվճարեցին նախկին պարտքերը: Տեղեկանալով իրենց արձակման մասին՝ բանակի սպաների մի խումբ՝ Լատիֆ բեյ Սալիմի գլխավորությամբ, ում աջակցում էին զինվորները և քաղաքացիները, 1879թ. փետրվարի 18-ին կանգնեցրեց վարչապետ Նուբար փաշայի և ֆինանսների նախարար Ռիվեր Ուիլսոնի կառքերը՝ նրանց վրահսկողություն սահմանելով ֆինանսների նախարարության շենքում: Խեդիվ Իսմայիլը, ով հավանաբար այդ իրադարձությունների կազմակերպիչն էր, ցույց տվեց, որ միայն ինքը կարող էր վերահսկել իրադրությունը երկրում: «Գերիներին» հնարավոր եղավ ազատել միայն նրա միջամտությամբ և նրան հավատարիմ զորքերի միջոցով: Այդ միջադեպը հատկանշական էր նրանով, որ Եգիպտոսի նոր պատմության մեջ առաջին անգամ ընդգծվեց բանակի քաղաքական ակտիվ դերը, և բացահայտվեց քաղաքական պայքարում վերջինի ներուժը: Այդ իրադարձություններից հետո վարկատու տերությունները սկսեցին զգուշանալ, որ Խեդիվ Իսմայիլի աճող հեղինակությունը և ներքին քաղաքական անկայունությունը կարող են պատճառ դառնալ Եգիպտոսի՝ իր պարտքերը մարել հրաժարվելու համար: Այս մտավախությունները հաստատվեցին 1879թ.: Իսմայիլը մերժեց Ռիվեր Ուիլսոնի ֆինանսական նախագիծը՝ առաջ քաշելով հակաճգնաժամային միջոցառումների ֆինանսական ծրագրի սեփական նախագիծը, հասավ «եվրոպական գրասենյակի» հրաժարականին Նուբար փաշայի գլխավորությամբ (1879թ. ապրիլի 7) և վարչապետի պաշտոնում նշանակեց իր ավագ որդի Թաուֆիկ փաշային[370]:

Ի պատասխան այդ քայլերի՝ վարկատու տերությունները, առաջին հերթին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, սկսեցին Իսմայիլին սպառնալ, որ կտապալեն նրան, եթե վերջինս մեծ զիջողականություն չցուցաբերի եվրոպական երկրների պահանջների հանդեպ: Իսմայիլին իշխանությունից հեռացնելու Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի քաղաքական խաղին միացան նաև Գերմանիան և Ավստրիան, որոնք քննադատում էին Խեդիվի գործողությունները: 1879թ.

[370] Луцкий В., նշվ. աշխ., էջ 177-179:

հունիսի 19-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան դիմեցին Իսմայիլին՝ պահանջելով հրաժարվել իշխանությունից՝ հօգուտ իր ավագ որդի Թաուֆիկի: Այդ պահանջին Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից և Ավստրիայից բացի միացան նաև Ռուսաստանը և Իտալիան[371]:

Եվրոպական երկրների՝ եգիպտական կառավարչին պաշտոնանկ անելու ցանկությունը բացատրվում էր նրանով, որ վերջինս հանդես եկավ եվրոպական բանկիրների քաղաքականության դեմ: Իսմայիլն իր ճակատագրի որոշման համար դիմեց սուլթան Աբդուլ Համիդ II-ին, ով իր հերթին, զգուշանալով եվրոպական տերությունների հետ ընդհարումից, 1879թ. հունիսի 25-ին Իսմայիլին տեղեկացրեց նրա տապալման մասին և խեդիվ նշանակեց Իսմայիլի որդուն՝ 27-ամյա Թաուֆիկին: Հունիսի 30-ին Իսմայիլը լքեց Եգիպտոսը և ուղևորվեց Իտալիա, որտեղ անցկացրեց իր կյանքի մնացած տարիները[372]:

Նոր խեդիվ Թաուֆիկի առաջին քայլերը հաստատեցին, որ բրիտանացիները ստացան հնազանդ, անկամք և հեշտ կառավարելի կառավարչի: Նոտաբլների պալատը լուծարվեց (1879թ. հուլիս), վերականգնվեց երկակի անգլո-ֆրանսիական ֆինանսական հսկողության ռեժիմը, երկրի նոր վարչապետ նշանակվեց անգլիամետ Ռիյազ փաշան: Թաուֆիկի օրոք մտցվեցին նոր հարկեր, մշտապես չէր վճարվում զինվորների ու սպաների աշխատավարձը և այլն: Վերջապես 1880թ. հուլիսի 17-ին նոր խեդիվը համաձայնություն տվեց օրենք հրապարակել եգիպտական պետական պարտքի լուծարման վերաբերյալ, ըստ որի՝ այդ պարտքը գնահատվում էր 98 միլիոն ֆրանկ: Նշվում էին դրա լուծարման ճանապարհները և ժամանակահատվածը, ընդ որում եգիպտացիները զրկվում էին առանց օտարերկրացիների գիտության և համաձայնության ֆինանսական ոլորտում որևէ գործողություն իրականացնելու հնարավորությունից[373]: Այդ օրենքով ավարտվեց եգիպտական ինքնիշխանության կորստի իրավաբանական ձևակերպման գործընթացը, որի սկիզբը դրվեց այն իրավունքներով, որոնք

[371] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 191:
[372] عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الثانى، القاهرة، ١٩٨٢، ص. ٢٥١-٢٥٦.
[373] Луцкий В., նշվ. աշխ., էջ 182-183:

եվրոպացիները ստացել էին այսպես կոչված կապիտուլյացիոն համաձայնագրերի շրջանակներում (վերջինները կնքվում էին, սկսած 1535թ., օսմանյան սուլթանների և եվրոպական տերությունների միջև): Այդ համաձայնագրերով օտարերկրացիներն այլևս չէին ենթարկվում եգիպտական դատարանների դատաիրավասությանը, իսկ այդ երկրների հյուպատոսներն իրավասություն էին ստանում միջամտել Եգիպտոսի ներքին գործերին[374]: Օսմանյան կայսրության ընդհանուր թուլացման պայմաններում օտարերկրացիներն այդ արտոնությունները սկսեցին օգտագործել՝ հարկերից խուսափելու և տեղական օրենքներին չենթարկվելու համար: Գործելով իրենց երկրների հյուպատոսների հովանավորության տակ՝ Եգիպտոսում եվրոպացիները կարող էին կատարել ցանկացած հանցագործություն և խուսափել պատասխանատվությունից: Միակ պատիժը երկրից արտաքսումն էր, սակայն նույնիսկ արտաքսվածները կարողանում էին հետգալ և մնալ անպատիժ[375]:

Իսմայիլ փաշայի կառավարման ժամանակաշրջանից որպես ժառանգություն Թաուֆիկին մնաց հզոր ընդդիմական շարժում, որն առաջացավ իր հոր կառավարման վերջին տարիներին: Ռիյազ փաշայի անգլիամետ պահպանողական գրասենյակի իշխանության գալուց հետո (1879թ.) ընդդիմադիր շարժումը ձեռք բերեց եգիպտական ազգայնական բնույթ, որը սկզբունքորեն նոր երևույթ էր Եգիպտոսի ներքին քաղաքական կյանքում[376]: Այդ շարժման 3 կարևորագույն բաղադրիչ խմբերը սերտորեն կապված էին երկրի եգիպտացման գործընթացի հետ: Առաջին խումբը խոշոր հողատերերն էին, գլխավորապես բնիկ եգիպտացիները, ովքեր իրենց կարողությունը ձեռք էին բերել Մուհամմադ Ալիի կառավարման ժամանակաշրջանում կամ նրա բարեփոխումների արդյունքում: Ընդդիմության երկրորդ խումբը երիտասարդ մտավորականներն էին (հիմնականում աշխարհիկ ուսումնական հաստատությունների շրջանավարտներ): Նրանցից շատերն ուղղակիորեն կապ էին պահպանում գյուղացիների հետ և ներկայացնում էին նրանց

[374] Новичев А., Турция, Краткая История, М., 1965, с. 30.
[375] Marsot A. L. al-S., նշվ. աշխ., 1985, էջ 70-71:
[376] عبد الرحمن الرافعي، الثورة العرابية و الاحتلال الإنجليزي، القاهرة، ١٩٨٤، ص. ٦٩-٧٥.

հետաքրքրությունները: Երրորդ խումբը հիմնականում բանակի եգիպտացի սպայական կազմի կրտսեր և միջին շերտն էր, ով անհանգստանում էր բարձրագույն սպայական պաշտոնների մենաշնորհով, որոնք տրվում էին թուրք-չերքեզական միջավայրից դուրս եկած անձանց: Արդեն 1880թ. ամբողջ եգիպտական բանակում կար 4 եգիպտացի գնդապետ, մնացած բարձրաստիճան սպաները և ողջ գեներալական կորպուսը կազմված էր թուրքերից և չերքեզներից: Այդ 4 եգիպտացիները գնդապետի աստիճանին հասել էին Սայիդ փաշայի կառավարման ժամանակաշրջանում, ով, ի տարբերություն իր ժառանգորդների, նպաստում էր սպայական կորպուսի եգիպտացմանը[377]:

Խեդիվ Իսմայիլի և Թաուֆիկի օրոք իրավիճակը փոխվեց, և բանակի թուրք-չերքեզական խմբավորումը կառավարիչների կողմից ստացավ լիակատար աջակցություն՝ ի վնաս եգիպտական սպայական կորպուսի շահերի: Թաուֆիկի օրոք ռազմական նախարար Օսման Ռիֆկղին, շրջանցելով եգիպտացի սպաներին, ցուցադրաբար բարձրացրեց մի քանի սպաների աստիճանը, ովքեր թուրք-չերքեզական ազնվականության դասից էին: Այս ամենը բացահայտ բողոքի առիթ հանդիսացավ բնիկ եգիպտացիների նկատմամբ ռազմական ղեկավարության իրականացրած խտրական քաղաքականության դեմ: 1881թ. հունվարի 17-ին 4-րդ հետևազորային գնդի հրամանատար Օրաբի բեյը 2 այլ եգիպտացի գնդապետների՝ Անդալ-Ալյայի և Ալի Ֆահմի ուղեկցությամբ վարչապետ Ռիյազ փաշային անձամբ հանձնեց հանրագիր պաշտպանության նախարարի գործողությունների դեմ[378]: Դրա պատասխանը եղավ նրանց ձերբակալումը պաշտպանության նախարարության շենքում, որտեղ նրանց հրավիրել էր հենց պաշտպանության նախարարը վերջինների բողոքի քննարկման պատրվակով: Սակայն նրանց ենթակայության տակ գտնվող զինվորներն ազատեցին իրենց հրամանատարներին՝ ուժով մտնելով նախարարության շենք, իսկ պաշտպանության նախարարին մի կերպ հաջողվեց փախչել: Պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակվեց Մահմուդ Սամի ալ-Բարուդին (1839-1904թթ.)[379]:

---

[377] Նույն տեղում, էջ 71-72:
[378] عبد الرحمن الرافعي، նշվ. աշխ.,1984, էջ 88-90:
[379] Луцкий В., նշվ. աշխ., էջ 184-185:

Այս իրադարձությունները գնդապետ Ահմադ Օրաբիին (1839-1911թթ.) դարձրին հայրենասիրական շարժման առաջնորդ, ում շուրջը համախմբվեցին ընդդիմության հիմնական ուժերը: Օրաբին գյուղական ծագում ուներ. նրա հայրը գյուղական շեյխ էր: Բանակից առաջ Օրաբին որոշ ժամանակ սովորել էր ալ-Ազհարի համալսարանում[380]: Ավելի ուշ ծառայության անցնելով բանակում՝ նա մշտապես կարդում էր, հետաքրքրությամբ ուսումնասիրում էր ֆրանսիական հեղափոխության փորձը, նապոլեոնյան պատերազմները, իտալական ազգային-ազատագրական պայքարը: Նրա արտասովոր կարողությունները շուտով նկատվեցին, և նա դարձավ Եգիպտոսի կառավարիչ Սայիդ փաշայի ադյուտանտը: Խեդիվ Իսմայիլի օրոք Օրաբին ավելի քան 12 տարի նոր զինվորական կոչում չէր ստանում: 1876թ.՝ եթովպիական անհաջող պատերազմից հետո, նա բանակում գլխավորեց եգիպտացի սպաների գաղտնի կազմակերպությունը, որի անդամներն իրենց կոչում էին «վաթանիյուն»՝ հայրենասերներ: Որոշ հեղինակներ արտահայտում են այն կարծիքը, որ սկզբնական շրջանում միության գլուխ կանգնած էր Ալի առ-Ռուբին, իսկ Օրաբին այն գլխավորեց ավելի ուշ[381]: Ընկերության բոլոր ներկայացուցիչները եգիպտական ծագում ունեցող սպաներ էին, ովքեր դժգոհ էին եգիպտական բանակում չերքեզների՝ բարձր պաշտոններ զբաղեցնելու փաստից: Ըստ երևույթին, սկզբնական շրջանում նրանք իրենց չէին համարում գաղտնի կազմակերպության անդամներ, այլ պարզապես պահանջում էին բանակում ազգային իրավահավասարություն և ծառայության պայմանների բարելավում: Ավելի ուշ այդ խնդիրները լրացվեցին համազգային և հակաարտասահմանյան պահանջներով[382]: Հենց Օրաբիի շրջապատում ծնվեց հայտնի կարգախոսը՝ որն էլ հենց դարձավ եգիպտական ողջ ազգային շարժման կարգախոսը. «Եգիպտոսը եգիպտացիների համար»: 1881թ. Օրաբին և իր համախոհները կազմավորեցին Ազգային կուսակցությունը կամ Հայրենիքի կուսակցությունը (Հիզբ ալ-վաթան): Նոր շարժման կողմնակիցները պահանջում էին Խեդիվի

[380] Tignor R., նշվ. աշխ., էջ 15-16:
[381] Cole J., Colonialism and Revolution in the Middle East: Social and Cultural Origins of Egypt's Urabi Movement, Princeton, New Jersey, 1993, p. 155.
[382] Кошелев В., նշվ. աշխ., 1984, էջ 26:

ինստիտուտի և բանակում ու քաղաքացիական վարչությունում թուրք-չերքեզական վերնախավի գերիշխանության վերացումը[383]:

Պետության և բանակի միջև հակամարտության նոր փուլը սկսվեց 1881թ. աշնանը: 1881թ. սեպտեմբերի 9-ին պաշտպանության նախարար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի պաշտոնից հեռացնելուն և ազգայնական-վաթանիստների ազդեցության տակ գտնվող անվստահելի զինվորական միավորների վերացմանն ուղղված քայլերին ի պատասխան՝ 4 հազար զինվորներ, որոնց գլուխկանգնած էին 30 սպաներ, Օրաբի բեյի հրամանատարությամբ շարվեցին Կահիրեում խեդիվի նստավայրի՝ Աբդինյան պալատի դիմաց և այն ռմբակոծելու սպառնալիքով պահանջեցին վարչապետ Ռիյազ փաշայի հրաժարականը և Նոտաբլների պալատի գումարումը: Թաուֆիկ փաշան, վախենալով զինվորականների վճռական գործողություններից, ում աջակցում էին գրեթե բոլոր ընդդիմադիր ուժերը, բավարարեց նրանց բոլոր պահանջները: Անցկացվեցին Նոտաբլների պալատի երկրորդ գումարման ընտրությունները, և 1881թ. դեկտեմբերի 23-ին կրկին ընտրված պատգամավորները գումարեցին իրենց առաջին նիստը: Բանակի վճռական գործողությունների շնորհիվ երկրում իշխանության եկավ քաղաքացիական ընդդիմության չափավոր թևը՝ Շերիֆ փաշայի գլխավորությամբ: Ազգային կուսակցության ղեկավարները և չափավոր ընդդիմության առաջնորդները՝ Մուհամմադ Աբդոն, Մուհամմադ Սուլթան փաշան և նրանց համախոհները, ընդհանուր առմամբ բավարարված էին ձեռք բերած արդյունքներով[384]:

Ի տարբերություն կուսակցության քաղաքացիական թևի և չափավոր ընդդիմության՝ բանակային ընդդիմության առաջնորդներն Օրաբի փաշայի գլխավորությամբ, կղերական արմատականները՝ դերվիշները, ինչպես նաև Աբդալլահ Նադիմի խմբավորումը պահանջեցին եվրոպացիների ամբողջական վտարումը երկրից: Մահմուդ Սամի ալ-Բարուդին զսպողի դեր էր խաղում, ով հանդես էր գալիս Օրաբիի և նրա կողմնակիցների մտադրությունների դեմ. վերջինները ցանկանում էին ուժ կիրառել և ցրել օպորտունիստական կառավարությունը:

[383] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1984, էջ 82-83:
[384] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1984, էջ 119-128, 162-170:

Օրաբիստների և Ծերիֆի կառավարության միջև ուժեղ վեճ սկսվեց 1882թ. հունվարի 2-ին, որը պայմանավորված էր կառավարության կողմից առաջարկված հիմնական օրենքով (ալ-լահիա ալ-ասասիա) և ընտրությունների մասին օրենքով, որոնք ստացան Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի վերահսկիչների հավանությունը[385]: Այդ օրենքները սահմանափակում էին Նոտաբլների պալատի իրավունքները, քանի որ ընդունվել էին առանց վերջինի համաձայնության: Այդ խնդիրը լուծվեց իշխանությունից վարչապետ Ծերիֆի փաշայի հեռացումով և այդ պաշտոնում նախկին պաշտպանության նախարար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի նշանակումով: Պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրեց Ահմադ Օրաբի բեյը: Փաստացի իշխանությունն անցավ բանակի ձեռքը, որը 1881թ. սկսած՝ վճռորոշ դեր խաղաց Եգիպտոսի քաղաքական կյանքում[386]:

Ազգային կուսակցության քաղաքացիական թևի առաջնորդները, ովքեր աջակցում էին Ծերիֆ փաշային, հեռացան քաղաքական ակտիվ գործողություններից: 1882թ. փետրվարից սկսած՝ հակաարտասահմանյան պայքարն առաջնորդող դերն ամբողջությամբ անցավ բանակին: 1882թ. փետրվարի 7-ին նոր կառավարությունն իշխանության գալուց անմիջապես հետո հրապարակեց Օրգանական օրենք, որը մշակվել էր Նոտաբլների պալատի կողմից. վերջինը երաշխավորում էր պալատի իրավունքները և փաստացի դադարեցնում էր երկակի հսկողությունը: Ֆրանսիական վերահսկիչ դե Բլիները, ինչպես բողոքի, ցուցադրաբար լքեց Եգիպտոսը[387]: Մահմուդ Սամի ալ-Բարուդիի և Օրաբիի կառավարությունը շարունակեց իր գործունեությունը և սկսեց նոր՝ ավելի ժողովրդավարական ընտրական օրենքի մշակումը, ինչպես նաև պատրաստեց առաջադիմական օրենքի մի շարք նախագծեր, մասնավորապես օրենքների նախագծեր, որոնք վերացնում էին գյուղացիների հարկադիր աշխատանքը, ինչպես նաև ուղղված էին

[385] عرابي أحمد، مذكرات الزعيم أحمد عرابي، القاهرة، ١٩٨٩، ص. ١١٤-١١٥.
[386] Tignor R., նշվ. աշխ., էջ 18:
[387] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 335:

գյուղատնտեսական բանկի ստեղծմանը և խառը դատարանների բարեփոխումներին[388]:

Նոր կառավարությունը սկսեց եվրոպացի պետական պաշտոնյաների հեռացումը և նրանց փոխարինումը բնիկ եգիպտացիներով: 1882թ. մարտի 15-ին Ահմադ Օրաբիին և նրա 5 ամենամոտ զինակիցներին տրվեցին բրիգադային գեներալների աստիճան և փաշայի տիտղոս: 520 վաթանիստ-սպաների պաշտոնները բարձրացվեցին, նրանցից շատերը նշանակվեցին նահանգների նահանգապետներ, փոխնահանգապետներ, ոստիկանական վարչությունների պետեր և այլն[389]:

1882թ. հունիսին Ալեքսանդրիայում մուսուլմանների կողմից տեղի ունեցան հակաեվրոպական և հակաքրիստոնեական ելույթներ, որոնց արդյունքում երկու կողմերը կրեցին մեծ կորուստներ: Միայն պաշտոնական տվյալներով մահացան մոտ 50 արտասահմանցի և 140 եգիպտացի: Այդ բախումների հետևում կանգնած էր խեդիվ Թաուֆիկը, ով այս կերպ ցանկանում էր արագացնել Ալեքսանդրիայում զինված ներխուժումը: Օրաբին կարողացավ դադարեցնել անկարգությունները և ձախողել հրահրումը: Ալեքսանդրիայի իրադարձություններից հետո երկրի ներսում ուժերի սահմանագծումն ավելի հստակ տեսք ստացավ: Հունիսի 13-ին խեդիվ Թաուֆիկը ապստամբած Կահիրեից բրիտանական նավատորմի պաշտպանությամբ փախավ Ալեքսանդրիա: Նրա հետ միասին փախան նաև երկրի հետադիմական խոշոր գործիչները՝ Ռիյազը, Շերիֆը, Սուլթանը: Այս քայլին հետևեցին նաև եգիպտական ֆեոդալ-բյուրոկրատական վերնախավի բազմաթիվ ներկայացուցիչներ: 1882թ. հունիսի 20-ին այստեղ ձևավորվեց խեդիվին հնազանդ կառավարություն՝ Ռահիբ փաշայի գլխավորությամբ: Այսպիսով, Ալեքսանդրիան դարձավ անգլո-խեդիվյան խմբավորման կենտրոնը[390]:

Ինչ վերաբերում է Կահիրեին, ապա այստեղ իշխանությունը պատկանում էր վաթանիստներին և Օրաբիին, ով դեռևս շարունակում էր համարվել խեդիվյան պաշտպանության նախարարը: Հազարավոր արտասահմանցիներ, վախենալով ժողովրդական ցասումից, փախչում

[388] Луцкий В., նշվ. աշխ., էջ 191:
[389] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1984, էջ 193-195:
[390] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 200:

էին Եգիպտոսից: Նրանց հետ մեկտեղ երկիրը լքում էր նաև տեղացի ունևոր դասը՝ կալվածատերերը և վաշխառուները: Հունիսի վերջին Կահիրեի բրիտանացի գործակալը հայտնում էր եվրոպացիների, թուրքերի և «պատվավոր արաբների» զանգվածային փախուստի մասին: Ի պատասխան վերջինի՝ Օրաբին հրաման արձակեց բռնագրավել եգիպտացի վտարանդիների սեփականությունը, ովքեր ինքնակամ լքում էին երկիրը[391]:

1882թ. ամռանը Եգիպտոսը հայտնվեց բրիտանական բռնազավթման իրական վտանգի տակ: Դա թույլ չտալու համար ֆրանսիական կառավարությունը Ֆրեյսինեի գլխավորությամբ միակ ելքը համարում էր եգիպտական հարցով միջազգային համաժողով հրավիրելը: Ստեղծված իրավիճակում նա գտնում էր, որ ավելի լավ է պահպանել Եգիպտոսի անկախությունը՝ Մեծ Բրիտանիայի տիրապետությունից խուսափելու համար, ինչից դրդված նա նույնիսկ պատրաստ էր աջակցել Օրաբիին: Ըստ Ֆրեյսինեի մտադրության՝ միջազգային համաժողովը պետք է կարգավորեր Եգիպտոսում ծագած խնդիրները և կանխեր դրա բռնազավթումը Մեծ Բրիտանիայի կողմից: Տերություններն աջակցեցին Ֆրանսիայի նախաձեռնությանը: Եգիպտական հարցով համաժողովը բացվեց 1882թ. հունիսի 23-ին Կոստանդնուպոլսում, որին մասնակցեցին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Գերմանիայի և Իտալիայի ներկայացուցիչները: Թուրքիան հրաժարվեց համաժողովի աշխատանքներին մասնակցելուց, քանի որ դրանում տեսնում էր իր իրավունքների խախտում: Ֆրանսիայի առաջարկով տերությունները, որոնք մասնակցում էին համաժողովին, պարտավորվում էին. «Եգիպտոսում չփնտրել տարածքային ոչ մի ձեռքբերում, ոչ մի կոնցեսիաբացառիկ արտոնություններով, ոչ մի առևտրային առավելություններ իրենց քաղաքացիների համար»: Որոշում ընդունվեց նաև այն մասին, որ. «...քանի դեռ համաժողովը շարունակվում է, տերությունները պետք է խուսափեն Եգիպտոսում ցանկացած միայնակ գործողություններից»[392]:

[391] Луцкий В., նշվ. աշխ., էջ 194-195:
[392] Ротштейн Ф., Захват и Закабаление Египта, М., 1959, с. 174-179.

Այդ առաջարկին Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ լորդ Դաֆֆերինը պատասխանեց. «եթե չլինի արտակարգ իրավիճակ»: Որպես «արտակարգ իրավիճակ»՝ օգտագործվեց վեճը կապված Ալեքսանդրիայի ափերի ամրացման հետ: Այդ ամրությունները, որոնք կառուցվել էին դեռևս Մուհամմադ Ալիի օրոք, հնացել էին և բրիտանական նավատորմի դեմ վատ պաշտպանական միջոցներ էին և հիմնականում ավերված էին: Արտասահմանյան նավատորմերի՝ Ալեքսանդրիա ժամանումից հետո եգիպտացիներն Օրաբի փաշայի հրամանով սկսեցին վերանորոգել նավահանգիստների ափերը: Մեծ Բրիտանիայի պահանջով Բարձր դուռը հրամայեց դադարեցնել ամրացման աշխատանքները: Սակայն հուլիսին աշխատանքները վերսկսվեցին, և Մեծ Բրիտանիան անմիջապես օգտագործեց դրանք որպես պատրվակ՝ բռնազավթելու երկիրը[393]: 1882թ. հուլիսի 6-ին ծովակալ Սեյմուրը, ով գլխավորում էր Եգիպտոսում բրիտանական նավատորմը, վերջնագիր ներկայացրեց Ալեքսանդրիայի կայազորի պետին և նրան առաջարկեց դադարեցնել ամրաշինական աշխատանքները, ինչը մերժվեց եգիպտացիների կողմից: 1882թ. հուլիսի 10-ին ծովակալ Սեյմուրը երկրորդ վերջնագիրը ներկայացրեց, որում նա պահանջում էր 24 ժամվա ընթացքում հանձնել Ալեքսանդրիայի ափամերձ ամրությունները: Վճռական մերժում ստանալով՝ նա սկսեց ռազմական գործողություններ: 1882թ. հուլիսի 11-ին բրիտանական նավերը ռմբակոծեցին Ալեքսանդրիան, որը տևեց մոտ 10 ժամ, և ինչի հետևանքով քաղաքն ավերվեց: 1882թ. հուլիսի 12-ին Օրաբին իր զորքերին հրամայեց հեռանալ այրվող քաղաքից: Նրանց հետ միասին քաղաքը լքեցին հազարավոր բնակիչներ: Չորս օր անց բրիտանական դեսանտը զբաղեցրեց դատարկված քաղաքը[394]:

Ալեքսանդրիայի ռմբակոծումը սկիզբ դրեց 1882թ. անգլո-եգիպտական պատերազմին: Հուլիսի 27-ին բրիտանական կառավարությունը գումար հատկացրեց եգիպտական ռազմարշավի համար: Բրիտանական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ Ուոլսլին, խեդիվը և նրա կողմնակիցներն

[393] ألبرت فارمان, նշվ. աշխ., էջ 298-301:
[394] عبد الرحمن الرافعي, նշվ. աշխ., 1984, էջ 295-298:

անցան բրիտանացիների կողմը ու մնացին Ալեքսանդրիայում: Երբ Օրաբին լքեց Ալեքսանդրիան, խեդիվը նրան հրամայեց անմիջապես դադարեցնել բրիտանացիների դեմ ռազմական գործողությունները, որը մերժվեց Օրաբիի կողմից: Խեդիվը Օրաբիին հայտարարեց ապստամբ և ձևականորեն նրան հեռացրեց պաշտպանության նախարարի պաշտոնից, որին ի պատասխան՝ Օրաբին խեդիվին հայտարարեց դավաճան: Ժամանակ չկորցնելով՝ Օրաբին սկսեց պաշտպանության կազմակերպումը. հազարավոր գյուղացիներ և քաղաքացիներ կամավոր գրվում էին բանակ: Ֆելլահների տրամադրած խնայողություններով Օրաբին կարողացավ գնել բավականաչափ զենք՝ կամավորներին զինելու համար: Աշնանը Օրաբին նախատեսում էր զինել և վարժեցնել մոտ 100-հազարանոց բանակ: Ալեքսանդրիայում մնացած Ռահիբ փաշայի կառավարության փոխարեն, ում վաթանիստները հայտարարեցին դավաճան, Կահիրեում ստեղծվեցին հեղափոխական իշխանության նոր մարմիններ՝ Արտակարգ խորհուրդը և Ռազմական խորհուրդը: Արտակարգ խորհրդին վաթանիստների առաջնորդների հետ միասին անդամակցում էին ուլեմներ, շեյխեր և նոտաբլներ, ովքեր մնացել էին Կահիրեում[395]:

Եգիպտոսում ռազմական գործողություններ սկսելն առաջացրեց եվրոպական տերությունների դժգոհությունը: Բրիտանացիների կողմից Եգիպտոսի բռնազավթումը խոչընդոտելու համար Կոստանդնուպոլսի համաժողովին մասնակցող տերությունները որոշեցին կազմակերպել թուրքական բռնազավթումը: Դեռ 1882թ. հուլիսի 6-ին նրանք դիմեցին սուլթանին՝ առաջարկելով Եգիպտոս ուղարկել թուրքական զորքեր որոշակի պայմաններով (ստատուս քվոյի պահպանում, չխառնվել Եգիպտոսի ներքին գործերին, բռնազավթման եռամսյա ժամկետ): Սակայն բրիտանական ճկուն դիվանագիտության շնորհիվ այս պայմանավորվածությունը կյանքի չկոչվեց: Տերությունները հասկանալով, որ Կոստանդնուպոլսի համաժողովն անզոր է խանգարել բրիտանական ներխուժումը Եգիպտոս, և հետևաբար՝

[395] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 198-200:

անպատակ է, 1882թ. օգոստոսի 14-ին փակեցին այն[396]: Այսպիսով, բրիտանական դիվանագիտությունը հասավ նրան, որ ներխուժումն իրականացվեց միայն բրիտանական զորքերի կողմից, և միայն նրանք բռնազավթեցին Եգիպտոսը[397]:

Ինչ վերաբերում է ռազմական գործողություններին, ապա դրանք ընթանում էին հետևյալ կերպ: Բրիտանացիները կարող էին հարձակվել Եգիպտոսի վրա կամ հյուսիսից՝ Միջերկրական ծովի կողմից, կամ արևելքից՝ Սուեզի ջրանցքի կողմից: Հյուսիսից երկիր մտնելու ճանապարհը դժվարացնում էին անանցանելի ճահիճները: Այդ ճահիճների միջակայքում Օրաբին ստեղծեց ուժեղ պաշտպանական դիրքեր: Բրիտանացիների փորձը Քաֆր ադ-Դաբարայի մոտճեղքել դրանցից մեկը ավարտվեց անհաջողությամբ[398]:

Եգիպտոսի արևելյան սահմանի պաշտպանության գործն ավելի բարդ էր, որի համար եգիպտական բանակի շտաբի պետ ճարտարագետներ Մահմուդ Ֆահմին առաջարկեց շարքից հանել Սուեզի ջրանցքը և փակել քաղցրահամ ջրի ջրատարը: Այդ երկու գործողությունները կապահովեին արևելքից Եգիպտոսի սահմանները և թույլ կտային եգիպտացիներին հաջողությամբ դիմադրել երկար ժամանակահատված: Սակայն ջրանցքը կառուցող Ֆերդինանդ դե Լեսսեպսը մերժեց Մահմուդ Ֆահմիի նախագիծը: Ֆրանսիային եկամուտներից չզրկելու նպատակով նա որոշեց ամեն ինչ անել՝ ապահովելու ջրանցքի անխափան աշխատանքը: Նա Օրաբի փաշային խոստացավ թույլ չտալ բրիտանական զորքերի իջեցումը ջրանցքի տարածքում, իսկ Օրաբին, հավատալով նրան, կասեցրեց Մահմուդ Ֆահմիի առաջարկը, ինչով նա թույլ տվեց կոպիտ ռազմական և քաղաքական սխալ[399]:

Բրիտանացիներն առանց կռվի օգոստոսի 2-ին զբաղեցրին Սուեզը: Լեսսեպսի հավաստիացումներին հակառակ՝ օգոստոսի 20-ին բրիտանացիները դեսանտ իջեցրին Պորտ Սաիդում և Իսմաիլիայում: Նեղոսի հովիտն արևելքից մնաց անպաշտպան, քանի որ այն գտնվում էր եգիպտական բանակի վատագույն

[396] Ротштейн Ф., նշվ. աշխ., էջ 193:
[397] Луцкий В., նշվ. աշխ., էջ 197-198:
[398] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 222:
[399] Նույն տեղում, էջ 223:

զորամիավորումների ներքո: Մեծ մասամբ դրանք վատ պատրաստված նորակոչիկներ և անկանոն բեդվինական ջոկատներ էին: Բրիտանացիները 3 շաբաթ պատրաստվում էին վճռական մարտին: 1882թ. սեպտեմբերի 13-ին նրանք գիշերը հանկարծակի հարձակվեցին Թել ալ-Քաբիրի մոտ գտնվող եգիպտական դիրքերի[400]: Բրիտանացիներին լուրջ դիմադրություն ցույց չտալով՝ բեդվինները դիմեցին փախուստի: Օրաբի փաշան փորձեց կանգնեցնել փախչող զինվորներին, սակայն բեդվինական շեյխերը նրան քարկոծեցին: Տեսնելով, որ հետագա բանակցություններն անօգուտ են, Օրաբին անմիջապես մեկնեց Կահիրե[401]: Այստեղ Արտակարգ խորհրդի նիստում նա պնդում էր շարունակել պատերազմը. նա առաջարկում էր անմիջապես Կահիրեի շուրջը կառուցել պաշտպանական շինություններ: Նրան աջակցեցին Աբդ ալ-Ալը, Աբդալլահ Նադիմը, Մահմուդ Սամին՝ առաջարկելով ջրապատել Կահիրեի շրջակայքը: Սակայն Արտակարգ խորհրդի կալվածատերերը քվեարկեցին կապիտուլյացիայի օգտին, և Օրաբին թույլ տվեց երկրորդ սխալը՝ ենթարկվելով Արտակարգ խորհրդի որոշմանը[402]: Եգիպտական ազգային բանակի լավագույն միավորումները, որոնք գտնվում էին հյուսիսում, անվնաս էին մնացել: Հակառակորդը գրավել էր միայն Ալեքսանդրիան և Սուեզի տարածքը, իսկ երկրի մնացած մասը գտնվում էր եգիպտացիների ձեռքում: Իհարկե, դիմադրել հնարավոր էր, բայց այն չիրականացավ: Եգիպտական բանակը պարտվեց ոչ թե բրիտանական զենքից, այլ բեդվինական շեյխերի և Կահիրեի նոտաբլների դավաճանության, ինչպես նաև Օրաբի փաշայի անվճռականության պատճառով, ով կարևոր պահին չհամարձակվեց իրեն օժտել բռնատիրական իրավասություններով և չցրեց Արտակարգ խորհուրդը, որն անցել էր թշնամու կողմը[403]:

Սեպտեմբերի 14-ի երեկոյան անգլո-հնդկական հեծելազորը մոտեցավ Կահիրեին, և Օրաբին հանձնվեց բրիտանացիներին: Դրանից հետո զենքը ցած դրեցին Քաֆր ադ-Դավարի, Աբուկիրի և

---

[400] أحمد حسين, նշվ. աշխ., էջ 1110:
[401] Ротштейн Ф., նշվ. աշխ., էջ 195:
[402] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 226-235:
[403] Луцкий В., նշվ. աշխ., էջ 198-199:

Դամիեթթի զորքերը: 1882թ. սեպտեմբերի 24-ին մայրաքաղաք ժամանեց խեդիվ Թաուֆիկն իր «նախարարների» հետ միասին: Ձավթիչները զինաթափեցին եգիպտական բանակը, իսկ եգիպտական ազգի վրա դրվեց ռազմատուգանք 9 միլիոն ֆունտ սթեռլինգի չափով: Անկախության համար պայքարի մասնակիցներին պատժելու նպատակով ժամանեց Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան լորդ Դաֆֆերինի հատուկ հանձնաժողովը: 1882թ. դեկտեմբերին Օրաբին և նրա աջակիցները դատապարտվեցին մահվան: Հասկանալով, որ Օրաբիի մահապատիժը կարող էր նոր ապստամբության առիթ դառնալ՝ Դաֆֆերինը փոխեց այն ցմահ աքսորով դեպի Ցեյլոն[404]: Օրաբիի հետ միասին աքսորվեցին ապստամբության ևս 6 ղեկավարներ: Տասնյակ վաթանիստներ փախան երկրից, իսկ ապստամբության բազմաթիվ մասնակիցներ բրիտանացիների կողմից որակվեցին որպես հանցագործներ: Բրիտանացի քննիչները նրանց դաժան փորձությունների էին ենթարկում: Զինվորական դատարանները նրանց դատապարտում էին մահվան կամ ուղարկում էին անապատի հեռավոր օազիսները[405]:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացված պատմական իրադարձությունները և վերլուծությունները՝ կարող ենք եզրահանգել, որ Օրաբի փաշայի ղեկավարած շարժումը, սկզբնական շրջանում արտացոլելով ընդամենը բանակային ընդդիմության հակաչերքեզական պահանջները, եվրոպական ուժերի կողմից մերժում ստանալու արդյունքում ի վերջո ձեռք բերեց եվրոպական գերիշխանությանը հակազդող ուղղվածություն: Իր շուրջը համախմբելով եվրոպական կամակատարություններից հոգնած և Եգիպտոսի ազգային շահերի ու ինքնուրույնության համար անհանգիստ համախոհների՝ Օրաբի փաշան կարողացավ կառուցել ուժեղ ընդդիմություն՝ պատրաստ պայքարելու երկրի դե յուրե և դե ֆակտո անկախացման համար: Շարժումը բացառիկ էր նաև այն հանգամանքով, որ կարողացավ համախմբել հասարակության լայն շերտեր՝ ընդգրկելով հասարակ գյուղացուց մինչև ռազմական

[404] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 236:
[405] Луцкий В., նշվ. աշխ., էջ 199-200:

գործիչ ու մտավորական, ինչը շարժմանը հաղորդեց համազգային բնույթ:

Օրաբի փաշան թեև կարողացավ ստեղծել լայնածավալ ազգային շարժում և տևական ժամանակ լուրջ ընդդիմություն կազմել օտարերկրյա զավթիչների դեմ, այնուամենայնիվ, նա չկարողացավ կարևոր պահերին կատարել վճռորոշ, երբեմն նաև խիստ համարձակ քայլեր՝ վախենալով կորցնել կարևոր գործընկերներ, և ի վերջո դրանով ձախողեց մի ամբողջ հեղափոխություն: Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք դեմ էին հանդես գալիս Եգիպտոսի բրիտանական բռնազավթմանը, խանգարեցին Մեծ Բրիտանիային Եգիպտոսը դարձնել իր գաղութը: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը 32 տարի Մեծ Բրիտանիան չկարողացավ հասնել Եգիպտոսի նկատմամբ իր իրավունքների միջազգային ճանաչմանը, որը բրիտանացիներին չխանգարեց Եգիպտոսում հաստատել գաղութային համակարգ և փաստացի երկիրն ընդգրկել բրիտանական կայսրության մեջ: Եգիպտոսում բրիտանական ռազմական ներկայությունն ավարտվեց միայն 1954թ.՝ Խեդիվ Թաուֆիկի մահից (1892թ.) շուրջ 62 տարի անց: Այսպիսով, Խեդիվ Թաուֆիկի մտադրությունները՝ Եգիպտոսի ազգային ինքնուրույնության «վաճառքի» շնորհիվ հետագայում ձեռք բերել միանձնյա կառավարման հնարավորություն, լիովին տապալվեցին:

3.3. Բրիտանական տիրապետության հաստատումը Եգիպտոսում (1882-1914թթ.)

XIX դարի 80-ական թթ. Եգիպտոսը հայտնվեց համաշխարհային քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունների կիզակետում, որն իր ազդեցությունն ունեցավ երկրի ներքաղաքական կյանքի համապատասխան ոլորտների վրա: Այս ժամանակաշրջանում առանձնացան Եգիպտոսի կառուցվածքային վերափոխմանը նպաստող մի քանի երևույթ.

- Եգիպտոսում ֆրանսիական ներկայության ժամանակաշրջանում (1798-1801թթ.) կառավարման նոր ձևերի և մեխանիզմների ներդրումն ու կիրառումը,

- սեփական ուժերի վրա հիմնված արդիականացման գործընթացը, որը նախաձեռնեց և իրականացրեց Մուհամմադ Ալին (1805-1848թթ.),
- կախյալ ձև ունեցող արդիականացման բարեփոխումները Սայիդ փաշայի (1854-1863թթ.) և հատկապես խեդիվ Իսմայիլի օրոք (1863-1879թթ.):

Այդ պատճառով բրիտանացիների օրոք Եգիպտոսի քաղաքական և տնտեսական արդիականացումը հենվում էր սոցիալական այն ուժերի վրա, որոնք շահագրգռված էին բարենորոգումների ընդլայնմամբ. այս ուժերում ներգրավված էին ազգային և օտարերկրյա, առևտրական և ֆինանսական օլիգարխիան, ինչպես նաև եվրոպական ոգով կրթված եգիպտացիները, ովքեր սովորել էին եգիպտական աշխարհիկ ուսումնական հաստատություններում և Եվրոպայում[406]:

Պատմաբաններն առանձնացնում են գործոնների 4 խումբ, որոնք հանգեցրին Մեծ Բրիտանիայի կողմից Եգիպտոսի նվաճմանը. տնտեսական գործոններ, ռազմավարական և աշխարհաքաղաքական նպատակներ, որոնք կապված էին պետության անվտանգության շահերի հետ, ազգային հեղինակության նկատառում, բնակչության տեղափոխություն մետրոպոլիայից դեպի գաղութ: Այս 4 գործոններն էլ էական ազդեցություն ունեին Եգիպտոսում բրիտանական գաղութային ներկայության բնույթի վրա, սակայն կարևորությամբ առանձնանում էին տնտեսական և աշխարհաքաղաքական շահերը, որոնք և պատճառ դարձան Եգիպտոսի գաղութային բռնազավթման համար[407]: Բացի դրանից Եգիպտոսում բրիտանական գաղութային քաղաքականության վրա ազդեցին անգլո-ֆրանսիական գաղութային մրցակցությունը, եգիպտական ազգային շարժումը և քաղաքական պայքարը Մեծ Բրիտանիայի ներսում, որի գաղութային քաղաքականությունը Եգիպտոսում ոչ միանշանակ գնահատական ստացավ[408]: Թվարկված 7 գործոնները պայմանավորեցին Եգիպտոսում բրիտանական գաղութային կառավարության յուրահատկությունը, որը կախված էր նաև այն հանգամանքից, թե

[406] Tignor R., նշվ. աշխ., էջ 25:
[407] Մանրամասն տե՛ս Dicey E., England and Egypt, London, 1881, p. 178-222.
[408] Tignor R., նշվ. աշխ., էջ 21-22:

կհաջողվի՞ արդյոք գաղութային վարչակարգին գրավված երկրում ապահովել խաղաղություն:

Եգիպտոսում բրիտանական բռնազավթման առաջին տարիների կարևորագույն հարցը բրիտանական զորքերի կարգավիճակի հստակեցումն էր այդտեղ: 1882թ. սեպտեմբերին Ֆրանսիայի վարչապետ Դյուկլերկը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Գրենվիլինին հարցում արեց՝ իմանալու համար, թե ինչպիսին են Եգիպտոսի նկատմամբ նրա կառավարության մտադրությունները: Գրենվիլինը պատասխանեց, որ բռնազավթումը ժամանակավոր բնույթ է կրում և կդադարեցվի անմիջապես Եգիպտոսում կարգ ու կանոնը վերականգնելուց հետո: Հետագայում Մեծ Բրիտանիայի կողմից այսպիսի հայտարարությունները բազմիցս կրկնվում էին, մասնավորապես Գրենվիլինի հայտարարությունները հաստատեց նաև Մեծ Բրիտանիայի վարչապետ Գլադստոնը՝ 1884թ. հայտարարելով, որ Եգիպտոսից բրիտանական զորքերի դուրսբերումը Մեծ Բրիտանիայի համար պատվի հարց է: Մեծ Բրիտանիան խոստացավ Եգիպտոսից բրիտանական զորքերը դուրս բերել 1888թ., ինչը պնդում էին Ֆրանսիան, Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, հակառակը, աջակցում էին բրիտանական բռնազավթումը, ինչը Մեծ Բրիտանիային խուսանավելու հնարավորություն էր տալիս: Սակայն 1904թ. Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան մի շարք համաձայնագրեր կնքեցին, որոնք և դրեցին Անտանտի ստեղծման հիմքը: Արդյունքում Ֆրանսիան համաձայնվում էր Մեծ Բրիտանիային Եգիպտոսում ազատ գործելու հնարավորություն տալ, որի փոխարեն ինքը գործողությունների ազատության հնարավորություն էր ստանում Մարոկկոյում: Այսպես, 1904թ. կարգավորվեցին անգլո-ֆրանսիական հակասությունները, որոնք վերաբերում էին Եգիպտոսի բռնազավթմանը: Միաժամանակ կարգավորվեցին նաև Եգիպտոսում անգլո-ֆրանսիական այլ հակասությունները, որոնք վերաբերում էին Եգիպտոսի պետական պարտքի հարցերին և Սուեզի ջրանցքի շահագործման կանոնակարգին[409]:

[409] Луцкий В., նշվ. աշխ., էջ 201-203:

Սուեզի ջրանցքի շահագործման կանոնակարգի հարցը 20 տարի շարունակ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև տարաձայնության պատճառ է եղել: Վախենալով, որ Եգիպտոսի բռնազավթումը վտանգի տակ կդնի Սուեզի ջրանցքով նավագնացությունը՝ Ֆրանսիան պնդում էր ստեղծել միջազգային վերահսկողության մարմին: 1885թ. նրա նախաձեռնությամբ գումարվեց միջազգային հանձնաժողով, որը զբաղվեց ջրանցքից ազատ օգտվելու միջոցների մշակմամբ: Երկարատև և համառ պայքարից հետո հանձնաժողովը մշակեց համաձայնագրի նախագիծ, որը պետք է ապահովեր ազատ նավարկություն Սուեզի ջրանցքով: Համաձայնագիրը ստորագրվեց 1888թ. հոկտեմբերի 29-ին Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, Իսպանիայի, Հոլանդիայի և Թուրքիայի ներկայացուցիչների կողմից[410]:

1888թ. Կոստանդնուպոլսի համաձայնագիրը հաստատում էր, որ. «Սուեզի ջրանցքը ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակ պետք է միշտ ազատ և բաց լինի բոլոր երկրների առևտրական և ռազմական նավերի համար»: Ըստ համաձայնագրի՝ ռազմանավերը ջրանցքի տարածքում 24 ժամից ավելի մնալ չէին կարող: Դրանով Մեծ Բրիտանիան զրկվում էր Սուեզի ջրանցքի սահմաններում իր նավատորմը պահելու հնարավորությունից: Համաձայնագիրն արգելում էր նաև ջրանցքի տարածքում կառուցել ամրություններ, տեղակայել զորքեր և ստեղծել ռազմական պահեստներ, ինչը նույնպես չէր բխում Մեծ Բրիտանիայի շահերից: Բրիտանական կառավարությունը հանդես եկավ 1888թ. կոնվենցիայի դեմ և ամեն կերպ խոչընդոտում էր վերջինի իրագործումը: Միայն 1904թ. անգլո-ֆրանսիական հարաբերությունների կարգավորումից հետո Մեծ Բրիտանիան միացավ 1888թ. Կոստանդնուպոլսի համաձայնագրին և համաձայնվեց այն կյանքի կոչել[411]:

Եգիպտոսում բրիտանական բռնազավթման առաջին տարիներին գլխավոր քաղաքական մարմիններն էին խեդիվ Թաուֆիկը և Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գերագույն հյուպատոս Իվլին

[410] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 205:
[411] Луцкий В., նշվ. աշխ., էջ 203-204:

Բերինգը (լորդ Կրոմեր): Թաուֆիկը ամբողջովին ենթարկվում էր Բերինգի կամքին, ով, հենվելով բրիտանական օկուպացիոն զորքերի վրա, դարձավ Եգիպտոսի լիակատար տիրակալը: Բերինգն ավարտեց Եգիպտոսի ամբողջական բռնազավթումը՝ եգիպտական բոլոր խոշոր քաղաքներում տեղակայելով բրիտանական կայազորները, իսկ եգիպտական ազգային բանակը լուծարվեց: Բնակչության այն մասը, որն ինչ-որ կերպ կապված էր Օրաբի փաշայի ազգային շարժման հետ, ենթարկվեց պատժամիջոցների (մոտ 30 հազար մարդ)[412]:

Եգիպտական վերնախավի ներկայացուցիչները շտապեցին հավաստիացնել խեդիվին և բրիտանացիներին իրենց օրինապահության մասին: Վախենալով կորցնել իրենց կարողությունը կամ դառնալ խեդիվի զոհերը իրենց նախկին ընդդիմադիր վարքի համար՝ նրանք ուղղակիորեն դիմում էին Բերինգին պաշտպանության խնդրանքով: Ամենից հաճախ նրանք Բերինգի կողմից ստանում էին անձնական անվտանգության երաշխիք՝ փոխարենը համաձայնվելով համագործակցել բրիտանական օկուպացիոն վարչակարգի հետ: Ֆելլահները և գյուղական հողատերերը, ովքեր, հույս ունենալով մեղմել իրենց վրադրվելիք հարկային պարտավորությունները, հարեցին հայրենասիրական շարժմանը և հայտնվեցին այնպիսի իրավիճակում, որ նախկին ֆինանսական պարտավորությունների հետ միասին նրանց վրա դրվեցին լրացուցիչ վճարումներ նյութական վնասի համար, որոնք հասցվել էին քրիստոնյաներին 1882թ. Ալեքսանդրիայի անկարգությունների ժամանակ (9 միլիոն ֆունտսթեռլինգ), ինչպես նաև Եգիպտոսում բրիտանական զորքերը պահելու ծախսերը հոգալու համար: Եգիպտոսի պետական պարտքի վճարումներն օտարերկրյա վարկատուներին հսկում էր խեդիվյան պարտքի Գանձարանի վարչությունը, որը ստեղծվել էր 1876թ.: Բրիտանացիների հետ մեկտեղ դրանում առաջատար դեր էին խաղում նաև ֆրանսիացիները, ովքեր, վախենալով դուրս մնալ կարևորագույն ֆինանսական որոշումների ընդունումից, ձգտում էին կանխարգելել բրիտանական նախագծերը և նախաձեռնությունները, որոնք ուղղված էին Եգիպտոսի ֆինանսական համակարգի բարելավմանը:

[412] عرابي أحمد, նշվ. աշխ., էջ 236:

Ֆրանսիացիներն իրենց այս քաղաքականությունը մտադիր էին շարունակել մինչև Եգիպտոսի՝ օտարերկրյա վարկատուներին արտաքին պարտքի վճարումը[413]:

Գաղութային պետական կառավարման ոլորտում Բերինգի առաջադրված էր 2 կարևորագույն խնդիր՝ Եգիպտոսում ապահովել գաղութային կարգ ու կանոն՝ հսկողության տակ վերցնելով եգիպտական ազգային շարժումը և չնայած ֆրանսիական հակազդեցությանը՝ Եգիպտոսը վերածել եկամտաբեր բրիտանական գաղութի: Բերինգն այս 2 խնդիրների լուծման մեջ հաջողություն ունեցավ, ինչը բարձր գնահատվեց Լոնդոնում: Եգիպտոսի գլխավոր հյուպատոս լինելու 10 տարին լրանալուց հետո Բերինգին շնորհվեց լորդի տիտղոս, և նրան սկսեցին կոչել լորդ Կրոմեր. հենց այս անունով էլ նամտավ պատմության մեջ[414]:

Եգիպտոսի բրիտանական բռնազավթման առաջին փուլը, որն ընդգրկում էր 1882-1888թթ., ընդունված է համարել Եգիպտոսի հանդեպ բրիտանական ռազմավարության ձևավորման ժամանակաշրջան: Այդ ժամանակաշրջանին են վերաբերում վարչական բարեփոխումների 3 նախագիծ, որոնք կապված են լորդ Դեֆֆերինի (ով 1882-1883թթ. գլխավորում էր Եգիպտոսում պաշտոնական առաքելությունը), Կլիֆֆորդ Լլոյդի (ով 1883-1884թթ. Եգիպտոսում նշանակվեց բարենորոգումների գծով գլխավոր տնօրեն) և Դրամոնդ Վոլֆֆի (ով 1885թ. գլխավորում էր պաշտոնական առաքելությունը) անունների հետ[415]:

Առաջին և առավել արդյունավետ փորձը՝ գտնելու Եգիպտոսի վարչաքաղաքական կառավարման լավագույն ձևերը, կապված էր լորդ Դեֆֆերինի (1882-1883թթ.) գործունեության հետ, ով Կոստանդնուպոլսում բրիտանական հյուպատոսն էր, և ում հանձնարարված էր Եգիպտոսում ուսումնասիրել իրադրությունը և առաջարկել լավագույն միջոցները՝ երկրում կարգ ու կանոնը և կայունությունը վերականգնելու համար: Դեֆֆերինի զեկույցը բռնազավթման սկզբնական ժամանակաշրջանում դարձավ բրիտանական

[413] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 207:
[414] Նույն տեղում, էջ 208:
[415] Նույն տեղում:

քաղաքականության ուղեցույցը: Զեկույցում առանձնացվում էին 5 կարևորագույն միջոցառումներ.

- ոռոգման համակարգը բարելավելու աշխատանքների իրականացում, որոնք ամբողջ տարի կապահովեին գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումը և կավելացնեին բերքատվությունը[416]:
- Եգիպտական բանակի և ոստիկանության վրա բրիտանական հսկողություն հաստատելու անհրաժեշտությունը, առանց որի այդ կառույցները կշարունակեին մնալ հակաանգլիական գործունեության մշտական աղբյուրներ:
- Դատական համակարգի բարեփոխում, որը երկրում կարգ ու կանոն ապահովելու կարևոր պայման էր:
- Առաջարկվում էր իրականացնել բարեփոխումներ կրթության և հարկահավաքության բնագավառում, մասնավորապես հարկահավաքություն սահմանել օտարերկրացիների համար, ովքեր, կապիտուլյացիոն համաձայնագրերի համաձայն, դրանցից ազատված էին:
- Զեկույցում առաջարկվում էր բարեփոխել քաղաքական իշխանության մարմինների կառուցվածքը: Առաջարկվում էր լուծարել Նոտաբլների խորհուրդը և դրա փոխարեն ստեղծել եռաստիճան քաղաքական համակարգ. Օրենսդրական խորհուրդ (Legislative Council), Գերագույն ասամբլեա (General Assembly) և տեղական նահանգային խորհուրդներ: Այս համակարգը հենվում էր Եգիպտոսում արդեն գոյություն ունեցող քաղաքական համակարգի և Հնդկաստանում բրիտանական կառավարման փորձի վրա: Սակայն մտավախությունները, որ բրիտանացիների կողմից հսկվող ներկայացուցչական մարմինները կարող են զբաղեցնել հակաանգլիական դիրքեր, բացատրում են, թե ինչու նոր ստեղծված կառույցներն ունեին խիստ սահմանափակ լիազորություններ, իսկ դրանց մեջ ընդգրկվում էին միայն

[416] Richards A. R., Accumulation, Distribution and Technical Change in Egyptian Agriculture, 1800-1940, Madison, 1975, p. 98-99.

հասարակության վերնախավի ներկայացուցիչները, ովքեր խիստ կապված էին օկուպացիոն իշխանությունների հետ[417]:

Ինչ վերաբերում է Կլիֆֆորդ Լլոյդի բարեփոխման նախագծերին, ապա դրանք իրենց արմատականության պատճառով անընդունելի էին, իսկ դրանց հեղինակը, ով մեղադրվեց անիրազեկության մեջ, ստիպված էր լքել Եգիպտոսը: Դրամոնդ Վոլֆֆի առաքելությունը, որը Եգիպտոսի գծով անգլո-օսմանյան պայմանագրի կնքման խնդիր էր դնում, նույնպես հաջողություն չունեցավ: Պայմանագիրը Կոստանդնուպոլսի կողմից չվավերացվեց, և դրանում ներկայացված առաջարկները համարվեցին անիրագործելի[418]: Այսպիսով, իրականացվեցին միայն լորդ Դեֆֆերինի առաջարկները, որոնց համաձայն՝ խեդիվի օրոք ձևավորվեց կառավարություն, որը կազմված էր 6 նախարարներից, ինչպես նաև ներկայացուցչական իշխանության մարմինների համակարգ: Խեդիվի հրամանով 1883թ. սկսած՝ յուրաքանչյուր նահանգում ընտրվում էին Նահանգային ժողովներ (մաջլիս)՝ որպես տեղական ինքնակառավարման մարմիններ: Մայրաքաղաքում հաստատվեցին 2 գերագույն ներկայացուցչական մարմիններ՝ Օրենսդրական խորհուրդ և Գերագույն ասամբլեա[419]: Օրենսդրական խորհուրդը կազմված էր 30 անդամից, որոնցից 14-ը նշանակվում, իսկ 16-ը ընտրվում էին նահանգային խորհուրդների ժողովներում: Գերագույն ասամբլեան կազմված էր 82 անդամից, որի կազմի մեջ մտնում էին բոլոր նախարարները, Օրենսդրական խորհրդի 30 անդամները և 46 պատգամավորներ, ովքեր ընտրվում էին ըստ իրենց ունեցվածքի աստիճանի: Այս 2 պալատների նստաշրջանները տեղի էին ունենում 2 տարին մեկ անգամ: Դրանք իրավասու չէին հանդես գալու օրենսդրական նախաձեռնություններով և քննարկում էին միայն կառավարության կողմից առաջարկված օրինագծերը, իսկ պալատների որոշումները պարտադիր իրագործման ուժ չունեին: Միայն ուղիղ հարկերի հաստատման համար պահանջվում էր Գերագույն ասամբլեայի համաձայնությունը: Մնացած դեպքերում

[417] Tignor R., նշվ. աշխ., էջ 52-54:
[418] Նույն տեղում, էջ 70-73, 85-86:
[419] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 210:

Գերագույն ասամբլեան և Օրենսդրական խորհուրդը բացառապես իրավազուրկ էին[420]:

Այդ մարմինների ձևավորման կարգը, իրավունքները և պարտականությունները հստակորեն կանոնակարգված էին, սակայն դրանք բոլորն անզոր էին բրիտանական վարչակարգի առաջ, քանի որ չունեին իրական իշխանություն և հիմնականում իրականացնում էին ձևական գործառույթներ: Ստեղծված իրավիճակն ամբողջապես համապատասխանում էր Եգիպտոսում լորդ Կրոմերի գաղութային կառավարման սկզբունքներին, ով, հիմնվելով իր հնդկական փորձի վրա, պնդում էր, որ եգիպտացիները պատրաստ չեն և չեն ձգտում ինքնակառավարման: Օգտվելով խեդիվ Թաուֆիկի ամբողջական աջակցությունից՝ լորդ Կրոմերը կարողացավ իր կողմը գրավել ազգային շարժման ազդեցիկ գործիչներին, հատկապես ակնառու կրոնական-քաղաքական գործիչ Մուհամմադ Աբդոյին (1849-1905թթ.), ով 1889թ. վերադարձավ վտարանդիությունից, որտեղ նա գտնվում էր Օրաբի փաշայի ապստամբության տապալումից հետո: Վերադառնալով Եգիպտոս՝ նա հրաժարվեց իր հայացքներից, ընկերական հարաբերություններ հաստատեց լորդ Կրոմերի հետ և նրա օգնությամբ 1899թ. դարձավ Եգիպտոսի մուֆթի՝ զբաղեցնելով երկրի բարձրագույն հոգևոր պաշտոնը: Նա իր գործունեությունը ծավալում էր՝ քարոզելով մուսուլմանական բարեփոխումների և լուսավորության գաղափարները, դրա հետ մեկտեղ պահպանելով իր անգլիամետդիրքերը[421]:

Եգիպտոսում գտնվելու առաջին տասնամյակի ընթացքում բրիտանացիները բազմիցս քննարկում էին եգիպտական դատավարության վերակառուցման անհրաժեշտության հարցը: Այսպես, 1883թ. հունիսի 21-ից խեդիվի հրամանով հաստատվեց դատարանների քառաստիճան համակարգ՝ գյուղական դատարաններ, խոշոր քաղաքներում առաջին ատյանի դատարաններ, Կահիրեում և Ասյուտում բողոքարկման դատարաններ և վճռաբեկ դատարան: Եգիպտոսում դատական գործերը որակյալ ձևով վարելու համար Բելգիայից և Դանիայից հրավիրվեցին 40 դատավորներ, քանի որ

[420] Луцкий В., նշվ. աշխ., էջ 209:
[421] Долинина А., Очерки истории арабской литературы нового времени, Египет и Сирия, публицистика 1870-1914 гг., М., 1968, с. 19-31.

եգիպտական դատավորները չունեին անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն: Եգիպտոսում գոյություն ունեցող օրենսդրությունն աննշան փոփոխված ֆրանսիական օրենսգրքի թարգմանությունն էր, և բրիտանացիների կարծիքով այն պետք է փոխարինվեր անգլո-հնդկական իրավական համակարգով[422]:

Եգիպտոսի դատական համակարգի վերակառուցումը սկսվեց 1890թ. և շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: 1914թ. դրությամբ Եգիպտոսում գոյություն ուներ 8 կենտրոնական տրիբունալ (որոնք իրականացնում էին ինչպես առաջին ատյանի դատարանների, այնպես էլ վճռաբեկ դատարանների գործառույթները), 90 տեղական տրիբունալներ, 28 կենտրոնական դատարաններ, 235 շրջանային դատարաններ[423]: Եգիպտոսում դատավարության վերակառուցման արդյունքում առաջացավ արդիականացված դատական համակարգ, որի հիմնական տարրերը պահպանվեցին մինչև XX դար, և բրիտանացիներն ամբողջական հսկողություն ստացան եգիպտական արդարադատության համակարգի, հետևաբար՝ նաև հասարակությունը կառավարող կարևորագույն գործիքներից մեկի վրա[424]:

Եգիպտոսում բրիտանական ներկայության առաջին տարիների և լորդ Կրոմերի ջանքերի կարևոր արդյունքները եղան 1887թ. եգիպտական բյուջեի կայունացումը և դրա եկամտի աստիճանական աճը՝ ծախսերի հետ համեմատած: Դա չեզոքացրեց ֆրանսիացիների՝ Եգիպտոսի գործերին ուղղակիորեն խառնվելու վտանգը, քանի որ Եգիպտոսը սկսեց կատարել իր պարտավորությունները վարկատու երկրների, մասնավորապես Ֆրանսիայի հանդեպ: 1888թ. հետո այլևս անհրաժեշտ չէին արտակարգ միջոցներ եգիպտական բյուջեի պակասորդը մարելու համար, ինչը ֆինանսական հնարավորություններ էր ընձեռում լայնամասշտաբ բարեփոխումների համար[425]:

Բրիտանական ներխուժումից հետո՝ 10 տարվա ընթացքում, եգիպտական ազգային շարժումը մարել էր, ինչի պատճառը դարձել

[422] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 211:
[423] Tignor R., նշվ. աշխ., էջ 129-138:
[424] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 212:
[425] Մանրամասն տե՛ս Milner A., England in Egypt, London, 1902, p. 170-220.

էին պատժամիջոցները, ինչպես նաև այն, որ բազմաթիվ եգիպտացիներ հավատում էին, որ բրիտանացիները կապահովեն ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը և դրանից հետո կհեռանան երկրից: Բրիտանական բռնազավթման առաջին 20 տարիների ընթացքում եգիպտական ազգային շարժման վերականգնմանը նպաստեցին գրական և քաղաքական գործիչ Յակուբ Սաննան (1839-1912թթ.), հրապարակախոս Աբդալլահ Նադիմը (1845-1896թթ.), սիրիացի գաղթական Աբդ առ-Ռահման ալ-Քավաքիբին (1849-1903թթ.): Սակայն աճող եգիպտական ազգային շարժման մեջ վճռական դեր խաղաց Մուստաֆա Քամիլը (1874-1908թթ.)[426]:

Ի տարբերություն ավագ սերնդի ներկայացուցիչների՝ Մուհամմադ Աբդոյի գլխավորությամբ, որոնք Մեծ Բրիտանիայի հետ համագործակցության կողմնակից էին՝ Մուստաֆա Քամիլը երիտասարդ ազգայնականների առաջնորդն էր, ովքեր պահանջում էին բրիտանացիների ներկայությունից Եգիպտոսի ազատագրումը: Մուստաֆա Քամիլը բրիտանացիների դեմ քաղաքական պայքարը սկսեց 18 տարեկանում, երբ դեռ ուսանող էր[427]: Նա անսպասելի աջակցություն ստացավ նոր խեդիվ Աբբաս II Հիլմիի կողմից, ով փոխարինել էր 1892թ. մահացած խեդիվ Թաուֆիկին: Աբբաս II Հիլմին համակարծիք էր Մուստաֆա Քամիլի հակաանգլիական գաղափարների հետ և գտնում էր, որ Մեծ Բրիտանիան Եգիպտոսում գտնվելու իրավունք չունի, քանի որ նրա զորքերը Եգիպտոս էին հրավիրվել նախկին խեդիվի խնդրանքով, ով արդեն մահացել էր: Ուստի Եգիպտոսից բրիտանական զորքերի դուրսբերմանը եվրոպացիների ուշադրությունը գրավելու նպատակով խեդիվ Աբբաս II Հիլմին Մուստաֆա Քամիլին ապահովեց գումարով և ուղարկեց Եվրոպա, որպեսզի վերջինս լրատվական արշավանք սկսի Եգիպտոսում բրիտանական բռնազավթման դեմ: Չնայած դա խեդիվին մեծ օգուտ չտվեց, սակայն Մուստաֆա Քամիլին դարձրեց հայտնի: Շուտով Մուստաֆա Քամիլը եկավ Եգիպտոս և ջանքեր գործադրեց Եգիպտոսի ու Օսմանյան կայսրության մտերմացման ուղղությամբ, որն այդ ժամանակ գլխավորում էր սուլթան Աբդուլ Համիդ II-ը, ում նա համարում էր դաշնակից բրիտանացիների դեմ պայքարում:

[426] طلى المحافظة، الاتجاهات الفكرية عند العرب في عصر النهضة، ١٧٩٨-١٩١٤، دمشق، ١٩٧٥، ص. ١٢٥-١٢٧.
[427] تشارلز آدمز، الإسلام و التجديد في مصر، القاهرة، ١٩٣٥، ص. ٢١١-٢٢١.

Պատահական չէ, որ 1904թ. 30-ամյա Մուստաֆա Քամիլին սուլթանը շնորհեց փաշայի տիտղոս: Մուստաֆա Քամիլի ղեկավարությամբ ուսանողները սկսեցին կառավարության դեմ կազմակերպել գործադուլներ և ցույցեր: Հենց այդ ժամանակվանից ցույցերը դարձան Եգիպտոսի քաղաքական պայքարի ձևերից մեկը, որոնք իրենց նշանակությունը պահպանում են առ այսօր[428]:

Եգիպտական ազգային շարժման ակտիվացմանը նպաստեցին դեպքերը, որոնք պատմական գրականության մեջ ստացել են «Դենշավյան գործ» անվանումը, որի էությունը հետևյալն էր. 1906թ. հունիսի 13-ին բրիտանացի սպաների մի խումբ որոշեց աղավնիներ որսալ Դենշավայ գյուղի մոտ, որը գտնվում էր Նեղոսի դելտայի Տանտա քաղաքի մոտակայքում: Ինչպես հաճախ պատահում է նման դեպքերում, բրիտանացի սպաները ցանքերը տրորեցին, և զայրացած գյուղացիները վերջիններից պահանջեցին հեռանալ գյուղից: Ի պատասխան դրա՝ բրիտանացիները կրակեցին գյուղացիների վրա, մի քանիսին վիրավորեցին, ինչի արդյունքում կռիվ սկսվեց, որի ժամանակ գյուղացիները գործի դրեցին մահակներ: Բրիտանացի սպաներից մեկը գլխին մահակով հարված ստացավ և մահացավ (կամ ուղեղի ցնցումից, կամ էլ հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին ստացած արևահարումից): Դենշավյան գյուղացիներին մեղադրեցին բրիտանացի սպայի սպանության մեջ: Գյուղի բոլոր բնակիչները ձերբակալվեցին, իսկ նրանցից 52-ի նկատմամբ քրեական գործ հարուցվեց: Նրանցից 4-ը դատապարտվեցին մահվան կախաղանի միջոցով, 6 մարդ դատապարտվեց 7 տարվա ազատազրկման, իսկ մնացածը՝ տարբեր քանակի մտրակի հարվածների[429]:

Դատավճռի անսովոր դաժանությունը, որը բողոք առաջացրեց նույնիսկ Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Համայնքների պալատում, ցնցեց ողջ Եգիպտոսը և սկիզբ դրեց զանգվածային հզոր ազգային շարժման: Բողոքների ճնշման տակ ինչպես Եգիպտոսում, այնպես էլ արտասահմանում բրիտանացիները ստիպված եղան գնալ զիջումների և դենշավայցիներին ներում շնորհել: Բացի այդ, լորդ Կրոմերը Մուստաֆա Քամիլին հրավիրեց իր մոտ և ի նշան համերաշխության՝ նրան առաջարկեց ցանկացած եգիպտացու անուն տալ, ում վերջինս

[428] عبد الرحمن الرافعي، مصطفى كامل باعث الحركة الوطنية، القاهرة، ١٩٨٥، ص. ١٧٧.
[429] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 213:

կընդգրկի նախարարների գրասենյակի կազմի մեջ: Մուստաֆա Քամիլը տվեց իր ընկերոջ և համախոհ Սաադ Զաղլուլի անունը (1860-1927թթ.), ով Օրաբի փաշայի շարժման մասնակից էր, ուներ իրավաբանի կրթություն և 1906թ. լորդ Կրոմերի կողմից նշանակվեց լուսավորության նախարար, այնուհետև՝ Օրենսդրական խորհրդի փոխնախագահ, իսկ ավելի ուշ (1919թ.) դարձավ քաղաքական «Վաֆդ» կուսակցության առաջնորդ[430]:

Դենշավյան իրադարձությունների ազդեցության տակ եգիպտական ազգայնականները միավորվեցին 1907թ. հոկտեմբերի 22-ին ստեղծված քաղաքական կազմակերպության մեջ, որը Օրաբի փաշայի կուսակցության օրինակով կոչվեց «Ազգային կուսակցություն» կամ «Հայրենիքի կուսակցություն» («Հիզբ ալ-վաթան»): Կուսակցության առաջին նախագահ դարձավ Մուստաֆա Քամիլը, իսկ նրա մահից հետո՝ 1908թ., կուսակցությունը գլխավորեց Մուհամմադ Ֆարիդ բեյը, ով, ինչպես Մուստաֆա Քամիլը, սերում էր հայտնի մամլուքյան ընտանիքից[431]: «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը դարձավ վերածնված կուսակցության և ողջ հակաանգլիական ընդդիմադիր շարժման պաշտոնական կարգախոսը: Գրեթե նույն ժամանակահատվածում ստեղծվեցին ևս մի քանի քաղաքական կազմակերպություններ՝ «Ազգի կուսակցություն» («Հիզբ ալ-ումմա»), օսմանամետ «Սահմանադրական բարեփոխումների կուսակցություն» («Հիզբ ալ-իսլահ ադ-դուսթուրի») և ուրիշներ[432]: Ընդգծենք, որ ընդդիմադիր կուսակցությունների և շարժումների մեծամասնությունն առաջ էին քաշում քաղաքացիական բարեփոխումների ծրագրեր, այն դեպքում, երբ բրիտանացիները պահանջում էին ենթարկվել գործող համակարգին[433]:

«Դենշավյան գործը» վերջ դրեց լորդ Կրոմերի քաղաքական կարիերային, և 1907թ. ապրիլին նա պաշտոնաթող եղավ: Նրա տեղը զբաղեցրեց Էլդոն Գորստը, ում մահից հետո՝ 1911թ., բրիտանական գաղութային վարչության գլուխ անցավ գեներալ Կիտչեները, ով

---

[430] Луцкий В., նշվ. աշխ., էջ 214:
[431] عبد الرحمن الرافعي، محمد فريد رمز الإخلاص و التضحية، القاهرة، ١٩٨٥، ص. ٣١.
[432] تشارلز آدمز, նշվ. աշխ., էջ 214-215:
[433] Кошелев В., նշվ. աշխ., 1984, էջ 32-57:

գրավել էր Սուդանը (1898թ.)[434]: Այս 3 անձինք մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի Եգիպտոսը ոչ միայն ենթարկվի Մեծ Բրիտանիային, այլև բերի նյութական շոշափելի եկամուտ: Լորդ Կրոմերը կարողացավ հասնել Եգիպտոսի վճարողունակությանը՝ վերափոխելով եգիպտական գյուղատնտեսությունը այնպես, որ վերջինս հիմնականում արտադրի միայն բամբակ, որն էլ իր հերթին արտահանվում էր Մեծ Բրիտանիա և սնում էր բրիտանական տեքստիլ արդյունաբերությունը: Ծխախոտի աճեցումը Եգիպտոսում արգելվեց, իսկ արտասահմանից ներմուծվող ծխախոտի համար տուրքը բարձրացավ, ինչը նույնպես օգնեց կարգավորել եգիպտական բյուջեն[435]: Բրիտանացիները խրախուսում էին եգիպտական խոշոր քաղաքներում եվրոպացի բնակչության քանակի աճը: Դրա օրինակը Ալեքսանդրիան էր, որի 480 հազար բնակիչներից 120 հազարը եվրոպացիներ էին, իսկ մնացածը՝ մուսուլմաններ: Քրիստոնյաներից ամենամեծ թիվը կազմում էին հույները և իտալացիները (60 հազար մարդ), այնուհետև ֆրանսիացիները, բրիտանացիները, ավստրիացիները, գերմանացիները և ռուսները[436]:

Սոցիալական հարաբերությունների բնագավառում բրիտանական բռնազավթման ժամանակաշրջանը նպաստեց խոշոր հողատերերի, հատկապես օտարերկրացիների դիրքերի ամրապնդմանը: 1913թ. դրությամբ 7791 օտարերկրացի տնօրինում էր 702,833 ֆեդան հող, այսինքն՝ միջինը 90 ֆեդան մեկ մարդու համար, այն դեպքում, երբ 1,548,519 եգիպտացի տնօրինում էր 4,770,250 ֆեդան հող (յուրաքանչյուր մարդ մոտ 3 ֆեդան): Այնուամենայնիվ եգիպտացի հողատերերի դասը 1900-1913թթ. ընթացքում ավելացավ 20%-ով: Հողատիրական վերնախավի վրա հենվելը Եգիպտոսում բրիտանական կառավարման կարևոր քաղաքական սկզբունք էր: Կառավարման մյուս կարևոր յուրահատկությունը բյուրոկրատական ապարատի մեծացումը և պաշտոնյաների թվի աճն էր: Վարչական մարմիններում պաշտոնների մեծ մասը զբաղեցնում էին բրիտանացիները, իսկ ինչ վերաբերում է եգիպտացիներին, ապա

[434] Tignor R., նշվ. աշխ., էջ 291-318:
[435] سعيد إبراهيم ذو الفقار، الإمبريالية البريطانية في مصر ١٨٨٢-١٩١٤، القاهرة، ١٩٨٦، ص. ١٥١-١٥٥.
[436] Нацвалов Л., Рассказ о путешествии по Западной Европе, Египту и Палестине в конце 1912 г., Из дневника воспоминаний и заметок артиллерийского офицера, Тифлис 1913, с. 51.

վարչական համակարգի կարևոր տարրը դարձան օմդերը, ովքեր կապող դեր էին խաղում կենտրոնական կառավարության և գյուղական բնակչության միջև[437]:

Մեծ Բրիտանիայի հյուպատոսի տվյալների համաձայն՝ 1911թ. Եգիպտոսում ակտիվորեն գործում էին 26 ազգայնական կազմակերպություններ, որոնց մեծ մասը կապված էր «Հայրենիքի կուսակցության» հետ: Դրանց մեջ առանձնանում էր ընդհատակյա, ահաբեկչական ուղղվածություն ունեցող «Եղբայրական համերաշխության միություն» կազմակերպությունը, որը կապված էր կրոնական սուֆիական եղբայրության հետ[438]: Նախապատերազմյան տարիներին բրիտանական գաղութային վարչակարգը մեծացնում էր ճնշումը եգիպտական ընդդիմադիր ուժերի վրա: Դրան նպաստում էր վարչապետ ղպտի-քրիստոնյա Բութրուս Ղալին: Նրա օրոք 1909թ. ընդունվեցին արտակարգ օրենքներ, որոնք ուղղված էին ազգայնականների, հատկապես «Հայրենիքի կուսակցության» անդամների դեմ, որոնց աքսորումն իրականացվում էր նույնիսկ կասկածի հիմքի վրա՝ առանց հետաքննության և դատի: Այս ամենի հետևանքով իրականացվեց XX դարի՝ Եգիպտոսի պատմության մեջ առաջին ահաբեկչական գործողություններից մեկը՝ 1910թ. փետրվարի 20-ին Բութրուս Ղալիի սպանությունը մուսուլման Իբրահիմ Վարդանիի կողմից, ով «Եղբայրական համերաշխության միություն» կազմակերպության մարտիկ էր և կապված էր ընդհատակ անցած «Հայրենիքի կուսակցության» հետ[439]:

Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս Էլդոն Գորստն այդ ահաբեկչական գործողությունն օգտագործեց՝ ազգայնականների և մուսուլմանների նկատմամբ պատժամիջոցներն ուժեղացնելու համար՝ դրան տալով միջկրոնական բնույթ և սրելով ղպտիների ու մուսուլմանների փոխհարաբերությունները: Սակայն Վարդանին կտրականապես ժխտում էր, որ իր կողմից իրականացված սպանությունը կրոնական հողի վրա է եղել և դրան քաղաքական բնույթ էր տալիս: Գորստի վարչական գործունեության արդյունքներն ընդունված է գնահատել անբավարար: 1911թ.

---

[437] Tignor R., նշվ. աշխ., էջ 206-248:
[438] Кошелев В., նշվ. աշխ., 1984, էջ 41-42:
[439] Նույն տեղում, էջ 42-46:

մահացած Գորստին փոխարինած գեներալ Կիտչեներն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին միջազգային իրադրության սրման պայմաններում հրաժարվեց ազգայնական ընդդիմության՝ իր նախորդի կողմից կիրառված բախումային քաղաքականությունից և սահմանադրական բարեփոխում կատարեց՝ Եգիպտոսի երկպալատանի խորհրդարանական համակարգը փոխարինելով մեկպալատանի Օրենսդրական ժողովով[440]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները որոշակի դադար ապահովեցին անգլո-եգիպտական քաղաքական հակասություններում: Վախենալով խեդիվ Աբբաս II Հիլմիի օսմանամետ ուղղվածությունից՝ բրիտանացիները խեդիվի՝ Լոնդոնում գտնվելու ընթացքում նրան հեռացրին իշխանությունից՝ վերջինի փոխարեն նշանակելով Աբբաս II Հիլմիի հորեղբորը՝ Հուսեյն Քամիլին (1914-1917թթ.), ով ստացավ սուլթանի տիտղոս: Այս ամենը պետք է նշանակեր Եգիպտոսի առանձնացումն Օսմանյան կայսրությունից, որը Համաշխարհային պատերազմի տարիներին հանդես էր գալիս Գերմանիայի և նրա դաշնակիցների կողմից: Այդ ժամանակ (1914թ.) սուլթան Հուսեյնը համաձայնություն տվեց Եգիպտոսը հռչակել անգլիական պրոտեկտորատ, որի վարչական համակարգը գործում էր բրիտանական հսկողությամբ և բրիտանացի խորհրդականների մասնակցությամբ[441]:

Այսպիսով, անգլո-եգիպտական պատերազմի հիմնական շարժառիթներից մեկն այն էր, որ Մեծ Բրիտանիան փորձում էր մի կողմից իր տիրապետության տակ առնել Եգիպտոսը՝ ընդլայնելով իր գաղութային տիրույթները, իսկ մյուս կողմից՝ Սուեզի ջրանցքը, քանի որ այն անգլո-ֆրանսիական հակամարտության պատճառն էր: Այդ ժամանակ եգիպտական հասարակությունն ի վիճակի չէր դիմադրելու օտարերկրյա նվաճողներին: Արդյունքում 1882թ. տեղի ունեցած պատերազմն ավարտվեց Մեծ Բրիտանիայի հաղթանակով, և դրանից հետո շուրջ 40 տարի Եգիպտոսը գտնվում էր Մեծ Բրիտանիայի տիրապետության տակ: Բրիտանական

[440] Tignor R., նշվ. աշխ., էջ 311-312:
[441] Зеленев Е., նշվ. աշխ., էջ 217-218:

ազդեցությունը եգիպտական վարչական համակարգի վրա իրականացվում էր տարբեր ձևերով: Եգիպտոսում բրիտանացի հյուպատոսներն ուղիներ էին որոնում՝ երկրում իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար՝ ձգտելով խիստ հսկողություն սահմանել եգիպտական նախարարությունների վրա: Դրա հետ մեկտեղ նրանք հսկայական ազդեցություն ունեին նաև երկրի վարչական կառավարման վրա և ի վնաս հասարակության՝ իրենց նպատակների իրագործման համար հպատակեցնում էին նախարարներին: Իսկ ինչ վերաբերում է եգիպտացի կառավարիչներին և քաղաքական գործիչներին, ապա նրանք հավատարիմ էին բրիտանական գաղութային վարչակարգին և անվերապահորեն աջակցում էին բրիտանական առաջարկություններին:

3.4. Հայերի ներդրումը XIX-XX դարերի Եգիպտոսի պետականաշինության մեջ

Աշխարհասփյուռ հայկական համայնքը պատմության մեջ իրապես կարելի է համարել սփյուռքների մեջ ամենամեծերից և ամենաազդեցիկներից մեկը: Հայկական համայնքը միշտ տարբերվել է իր կրոնի և լեզվի նկատմամբ ընդգծված հավատարմությամբ, նվիրվածության ու կրթական բարձր մակարդակի շնորհիվ մշտապես կարողացել է էական տեղ գրավել այլ երկրների հասարակական ու քաղաքական կյանքում՝ հավատարիմ մնալով իր ազգային հիմքերին և ծառայեցնելով իր դիրքն ու ազդեցությունը նաև հայրենիքի ու հայերի շահերին:

Այս պատմական իրողության դրսևորումներից մեկն է նաև հայերի գործունեությունը Եգիպտոսում: Բազմաթիվ պատմական աղբյուրներում կարելի է փաստերի հանդիպել այն մասին, որ Եգիպտոսը, չնայած կրոնական տարբերություններին, մինչև XX դարի կեսերը հայերի համար դարձել էր հիմնական գաղութային ուղղություններից մեկը: Չնայած իրենց թվաքանակի համեմատական սակավությանը՝ հայերը կարողացել են նշանակալի

ազդեցություն թողնել Եգիպտոսի հասարակական և քաղաքական կյանքի մի շարք բնագավառներում:

Եգիպտոսում հայերի ներկայության մասին պատմագրության մեջ խոսվում է Հռոմեական և Բյուզանդական տիրապետությունից սկսած մինչև մեր օրերը: Հայերն իրենց ներդրումն են ունեցել տնտեսական և միջազգային առևտրի բնագավառներում, իսկ հայկական զորագունդը վճռական դեր է խաղացել Եգիպտոսի վաղմիջնադարյան պատմության մեջ: Հիմնվելով բազմադարյան հայկական կրթական և մշակութային ժառանգության վրա՝ նրանք կարողացել են իրենց ներդրումն ունենալ Եգիպտոսի կրթության բնագավառի կազմակերպման, ազգային կրթական հաստատությունների հիմնադրման մեջ, ինչպես նաև իրենց հետքն են թողել շինարարական արվեստի, նկարչության, երաժշտության, լուսանկարչության բնագավառներում[442]:

Եգիպտոսն Օսմանյան տիրապետության շրջանում (1517-1798թթ.) գտնվել է իր պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկում: Նրա տնտեսական կյանքը մտել է լճացման մեջ և կորցրել է իր երբեմնի առաջավոր դիրքը Մերձավոր Արևելքում: Թուրք տիրակալների կեղեքումները՝ մի կողմից, նրանց հովանավորության տակ գտնվող մամլուք ֆեոդալական շրջանում ծայր առած հակասությունները՝ մյուս կողմից, Եգիպտոսը հասցրել էին բացահայտ քայքայման: Այս ժամանակաշրջանում իշխանության իսկական տերերը մամլուք աղաները և նրանց գլխավորած 7 զորախմբերը կամ օջաքներն էին: Այս շրջանում ծագումով հայ մամլուքները կարևոր դիրքեր գրավեցին էմիրի, շրջանային հրամանատարի, նահանգապետի, ծովակալի, օջաքը գլխավորող աղայի տեղակալի, ինչպես նաև Կահիրեի շուկաների և արհեստակցական միությունների հսկիչի՝ մուհթասիբի պաշտոններում: Ծագումով հայ այս մուհթասիբները հսկում էին շուկաների կանոնավոր գործունեությունը, միաժամանակ դյուրացնում էին հայ արհեստավորական միությունների և անհատ առևտրականների հարաբերությունները տեղական այլ խմբավորումների և ազդեցիկ առևտրականների հետ: Սա կարևոր

[442] Ձէյթլեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Մոնթրէալ, 2004, էջ 17:

նշանակություն ուներ մոտ 1000 ընտանիք հաշվվող եգիպտահայության բարօրության տեսակետից[443]:

Հայերը հիմնականում լավ արհեստավորներ էին և ավանդաբար գործում էին որպես ոսկերիչ, արծաթագործ, ակնագործ, քարտաշ, շինարար, մուշտակագործ, կոշկակար, դերձակ, մետաքսագործ և ժամագործ: Հատկանշական է, որ 1776-1798թթ. Կահիրեի Խան էլ-Խալիլ շուկայի արհեստավորների և առևտրականների 67,5%-ը հայեր էին, ովքեր ապահովում էին քաղաքի եկամտի 89,3%-ը[444]:

Մամլուքների զորամասերը, ինչպես հայտնի է, կազմվում էին կռիվների կամ ասպատակությունների ժամանակ գերեվարված լեզգի, վրացի և հայ[445] մանկահասակ երեխաներից, որոնց բերում էին Եգիպտոս, կրոնափոխ անում, տեղավորում զինանոցներում, զինավարժություն սովորեցնում և ապա նրանցով համալրում մամլուքյան զորամասերը: Ծագումով հայ այս մամլուքների մեջ գտնվել են անհատներ, ովքեր իրենց քաջության և ընդունակությունների շնորհիվ պետական և զինվորական համակարգերում կարողացել են բարձր պաշտոններ զբաղեցնել[446]:

Օսմանյան տիրապետության ժամանակ հիշատակվում են ծագումով հայ զինվորական և քաղաքական մամլուք գործիչներ՝ էմիր Սուլեյման բեյ ալ-Արմանին (Բարեմ Զեյլու), ով 1690թ. Մինուֆիայի և Ղարբիայի նահանգապետն էր, նրա որդի Օսման Չելեբին, ով հոր մահից հետո նշանակվեց նրա պաշտոնում, շրջանային հրամանատարներ Ալի ալ-Արմանին և Ալի բեյ ալ-Արմանի Աբուլ Ազաբը, օջաքը գլխավորող աղայի տեղակալ քեհիայի պաշտոն ունեցող թիֆլիսահայ Մուստաֆա Զաբարտին: Մամլուք Մուհամմադ Քեհիա ալ-Արմանին այնքան մեծ համբավ ուներ, որ 1798թ. ուղարկվեց Ալեքսանդրիա՝ Նապոլեոն Բոնապարտի հետ բանակցելու մայրաքաղաք Կահիրեի բնակչության խնայելու շուրջ: Բոնապարտն այնքան տպավորվեց ծագումով հայ մամլուքի հաշտարար ոգով և քաղաքական ու ռազմավարական հմտությամբ, որ հետագայում

[443] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 63:
[444] Նույն տեղում, էջ 64:
[445] Մամլուքյան շրջանի նշանավոր հայերի մասին տե՛ս Մըսրլեան Գ., Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 116-127:
[446] Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատոր Բ, Ե., 1967, էջ 55:

նշանակեց Կահիրեի քաղաքական հարցերի վարչության պատասխանատու[447]:

Ֆրանսիական ռազմարշավի ժամանակ (1798-1801թթ.) ծագումով ալբանացի Մուհամմադ Ալին սուլթանից հրաման ստացավ ստանձնել օսմանյան բանակի փոխհրամանատարությունը և դաշնակից բրիտանական ուժերի հետ միասին ազատել Եգիպտոսը ֆրանսիական լծից: Մուհամմադ Ալին իր պաշտոնը ստանձնելուց առաջ փորձեց ապագայի ծրագրերն ամուր հիմքերի վրա դնել: Այդ պատճառով նա դիմեց պոլսեցի երևելի սեղանավոր (սառաֆ) Աբրահամ Քարաքեհիային, ով չմերժեց նյութական օժանդակության խնդրանքը: Տեղին է նշել, որ Օսմանյան կայսրության հարուստ սեղանավորները զբաղվում էին ֆինանսական գործերով, իսկ նրանց զգալի մասը, եթե ոչ մեծամասնությունը, հայեր էին[448]: Մուհամմադ Ալին, դառնալով Եգիպտոսի փոխարքա, Քարաքեհիային նշանակեց Կոստանդնուպոլսի ելևմտական ներկայացուցիչ և շնորհեց «Միսր Սառաֆի» տիտղոս, որը սերնդեսերունդ պետք է մնար որպես ընտանեկան մենաշնորհ[449]:

Ամրապնդելով իր դիրքերը՝ Մուհամմադ Ալին ուշադրությունը կենտրոնացրեց պետական դատարկ գանձարանի վրա: Այս անգամ ևս նրան օգնության եկավ հայ սեղանավոր բնիկ ակնցի, Մահտեսի Եղիազար Ամիրա Պետրոսյանը, ով Եգիպտոսում հաստատվել էր 1790թ. և զբաղվում էր թանկագին քարերի առևտրով ու սեղանավորությամբ: 1808թ. պետական գանձարանի համար անհրաժեշտ վարկերն ապահովելուց հետո փոխարքան այնքան գոհ մնաց, որ հայ սեղանավորին նշանակեց հարկահավաք և իր խորհրդական: Եղիազար Ամիրան կանոնավորեց ելք ու մուտքի սպասարկությունները և հարկահավաքությունը ու վերջ դրեց հողերի ապօրինի գրավմանը: Ապօրինություններին վերջ տալու նպատակով նա իրականացրեց մի շարք հողային բարեփոխումներ[450]:

---

[447] Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Բ հատոր, Պատմութիւն Եգիպտոսի հայ բարերարներու եւ կրթական հաստատութիւններու, Վենետիկ, 1986, էջ 13:
[448] Ալպոյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 182:
[449] Ձէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 67-68:
[450] Ձէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 68-69:

Իր կառավարման սկզբնական շրջանում Մուհամմադ Ալին պետական եկամուտներ ապահովելու և տնտեսությանը զարկ տալու համար դիմեց մեծ թվով հայ ամիրա-սառաֆների, ովքեր պետական բյուջեից վարկավորված ձեռնարկությունների համար դրամական միջոցներ էին հայթայթում: Հայ սեղանավորներն այնքան կարևոր դեր էին խաղում պետական գործունեության մեջ, որ իրենց արհեստակցական միության ներկայացուցիչը կամ սառաֆբաշին փոխարքայի կամ պետական ազդեցիկ անձանց կողմից էին նշանակվում: Իսկ սառաֆբաշիի կողմից նշանակված սեղանավորները պետության համար անհրաժեշտ վարկեր էին հայթայթում[451]:

Մեծ էր նաև հայ սեղանավորների դերը Եգիպտոսի տնտեսական զարգացման մեջ: Այսպես, տարբեր ժամանակներում նրանց էին պատկանում Կահիրեի բաղնիքների, Մաթարիայի աղահանքերի և Դամմիեթի ձկան շուկայի շահագործման մենաշնորհը[452]: Հայ սեղանավորների ազդեցությունն ավելի ուժեղացավ 1830-ական թթ., երբ 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին քաղաքական հալածանքների հետևանքով ուժեղացավ Թուրքիայի հայ առևտրավարկային կապիտալի հոսքը դեպի Եգիպտոս: 1837թ. հասնելով իրենց հզորության բարձրակետին՝ հայ սեղանավորները Կահիրեում հիմնեցին Եգիպտոսի առաջին բանկը[453]:

Հակառակ Եգիպտոսի իսլամական կրոնին և ավանդույթներին՝ ոչ միայն հայ սեղանավորները, այլև վարչական կամ այլ կարողության տեր հայ քրիստոնյաները բարձր պաշտոններ ստանձնեցին: Փոխարքան վստահում էր հայերի անշահախնդրությանը, հավատարմությանը, նրանց ունեցած ծանոթությանը՝ իսլամական բարքերին, արևելյան լեզուներին (հատկապես թուրքերենին), ինչպես նաև նրանց հմտությանը իբրև վարկատուներ, առևտրականներ և այլ մասնագիտության տեր անձինք: Ավելին, գնահատվում էր բարեկարգիչ նոր գաղափարներով Եգիպտոսի արդիականացմանը նպաստելու հայերի ձգտումը: Այս բոլորը հաշվի առնելով՝ Մուհամմադ Ալին կարգադրում էր գործի

[451] Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., 1978, էջ 51-56:
[452] Նույն տեղում, էջ 57:
[453] Նույն տեղում, էջ 52:

նշանակել հայ պաշտոնյաների, քանի որ նրանք իրենց պաշտոնն ավելի ճշգրտությամբ, ավելի խղճով, ավելի նվիրված են կատարում և պետության գործերը մեծ քայլերով առաջ էին տանում[454]:

Խոսքից գործի անցնելով՝ 1817թ. փոխարքան մոտ 200 արհեստավորներ՝ հյուսներ, դարբիններ, քարտաշներ և այլ մասնագիտության տեր մարդիկ հրավիրեց Եգիպտոս և նրանցից շատերին իր պալատում աշխատանք տվեց: Մի կողմից՝ կրոնական հանդուրժողականության, մյուս կողմից՝ պետական կառույցների մեջ հայերի ձեռք բերած հեղինակության շնորհիվ մեծ թվով հայ գաղթականներ Երուսաղեմից, Դամասկոսից, Հալեպից, Կոստանդնուպոլսից, Դիարբեքիրից և հայկական գավառներից հաստատվեցին Եգիպտոսում: Եգիպտահայության թվի աճի հետ ավելացավ նրանց մասնակցությունը պետական գործերին, և գաղութը բարգավաճեց[455]:

Եգիպտոսի տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման համար Մուհամմադ Ալիին անհրաժեշտ էին նվիրված և կրթված մարդիկ: Պատահական չէ, որ վերոնշյալ նպատակի իրագործման համար նա իրեն շրջապատել էր մի խումբ հայազգի գործիչներով՝ Արթին բեյ Չրաքյան, Կարապետ Նուբարյան, Արիստակես Ալթուն Տյուրի, եղիազար ամիրա և ուրիշներ, ովքեր զգալի դեր ունեին պետության ղեկավարման գործում[456]: Պետության հիմնաքարերը դնելու, զարգացման ուղեգծերը ճշտելու և երկրի արդիականացումն ապահովելու տեսակետից հայերը կարևոր դեր խաղացին: Նրանց մեջ առանձնակի տեղ էր գրավում Պողոս բեյ Յուսուֆյանը (1768-1844թթ.)[457], ով Եգիպտոս էր գաղթել Զմյուռնիայից: Լավ հարաբերությունների մեջ լինելով Մուհամմադ Ալիի հետ և դառնալով նրա գործընկերն առևտրի ասպարեզում՝ Պողոս Յուսուֆյանը լեզուների իր իմացության շնորհիվ դարձավ Եգիպտոսի փոխարքայի գլխավոր թարգմանիչը, առաջին կարգի խորհրդականը, պաշտոնական բանբերը, առևտրի և արտաքին գործերի

---

[454] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 56:
[455] Նույն տեղում, էջ 57-59:
[456] Հովհաննիսյան Ա., Եգիպտոսի ազգային և կրոնական փոքրամասնությունները (1907-1967 թվականներ), ատենախոսություն՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, Ե., 2002, էջ 36:
[457] Պարթևեան Ս., Եգիպտահայ տարեցոյցը, Ատարի, Գահիրէ, 1914, էջ 8, Նազարէթ Մ. Աղազարմ, Նօթեր Եգիպտոսի հայ գաղութին վերայ, Գահիրէ, 1911, էջ 25-32:

նախարարը և տասնամյակներ շարունակ պահպանեց երկրի առաջավոր պետական գործչի նշանակությունը[458]: Պողոս բեյը երկրում վերահաստատեց կարգ ու կանոն, հետո կազմեց ելևմտական վարչությունը՝ պետության եկամտի նոր աղբյուրներ որոնելու համար: Պետական հսկողության տակ անցան մաքսատները, ապա հողագործական հաստատությունները, ինչպես նաև կազմակերպվեցին ներքին և արտաքին առևտրի ցանցերը[459]:

Սկզբնական շրջանում Պողոս բեյը ընդլայնեց Եգիպտոսի ծովային առևտուրը բրիտանական ծովուժի օգնությամբ, որոնք Եգիպտոսի հացահատիկի կարիքն ունեին: Պետական եկամուտներն ավելացնելու նպատակով երկրի տնտեսության հիմքը հանդիսացող հողագործությունը հսկողության տակ անցավ, ինչպես նաև կատարվեցին էական բարեկարգումներ: Հողագործական արտադրությունների քանակն ու որակը բարելավելու համար հին ջրանցքները մաքրվեցին, բացվեցին նորերը, կառուցվեցին ջրամբարներ, և ոռոգման վիճակը բարելավվեց: Այս ձևով մշակելի հողերը 30%-ով ավելացան, եռապատկվեց տարեկան ընդհանուր բերքի քանակը, և գլխավոր բերքի՝ երկարաթել բամբակի մշակումն ընդլայնվեց[460]:

Պայմանավորված այն հանգամանքով, որ գյուղատնտեսությունը գտնվում է պետական հսկողության տակ՝ Պողոս բեյի կազմած ելևմտական վարչության ստեղծած հանձնաժողովը բերքը առնում էր փոխարքայի նշած գնով, կուտակում էր պետական մթերանոցների մեջ և այնուհետև կանոնավորում էր մաքսատան փոխադրությունը: Նույն հանձնաժողովը պատժում էր շահագործումը, գողությունն ու խաբեությունը: 1837թ. ելևմտական վարչությունը Պողոս բեյի գլխավորությամբ վերակազմավորվեց և վերակոչվեց Առևտրի և Արտաքին գործերի նախարարություն: Պողոս բեյն առևտրական գլխավոր կենտրոններում ներկայացուցիչ նշանակեց իր ազգականներին ու վստահելի մտերիմներին, ովքեր լավ ծանոթ էին եվրոպական շուկաներին և շնորհիվ իրենց փորձառության՝

[458] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 81-82:
[459] Ձեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 72-73:
[460] Նույն տեղում, էջ 74:

եգիպտական արտադրանքը վաճառում էին առավելագույն գներով ու փոխարենը Եգիպտոսի գործարանների, բանակի և ընդհանուր սպառման համար անհրաժեշտ գնումներ էին կատարում համեմատաբար ցածր գներով: Այսպիսով, Պողոս բեյի առևտրական քաղաքականությունն ամրապնդեց երկրի դիրքը միջազգային շուկաներում և վերջ դրեց օսմանյան առևտրական ցանցից կախմանը, ինչպես նաև նպաստեց Եգիպտոսի տնտեսական անկախությանը[461]:

Պողոս բեյը մեծ ներդրում ունեցավ նաև Եգիպտոսի պետական մտածողության զարգացման մեջ: Նա ներդրում ունեցավ Պատերազմի և Ծովուժի դիվանների ստեղծման գործում, իսկ բանակի կազմակերպման հարցում մեծ մասամբ սուդանցի ստրուկների, Հյուսիսային Աֆրիկայի վարձկանների, ինչպես նաև չերքեզների փոխարեն քաջալերեց տեղացի տարրերի, մեծամասամբ ֆելլահների զինվորագրումը: Փոխարքայի ավագ որդու՝ բանակի ընդհանուր հրամանատար Իբրահիմ փաշայի գլխավորությամբ եգիպտացիների շարքերը խտացան: Բանակին միացան նաև հայեր և հույներ[462]:

Բանակի վերակազմավորումը խթանեց կրթության զարգացումը: Բացվեցին նախակրթարաններ, երկրորդական և մասնագիտական վարժարաններ: Այս զարգացումները ֆելլահների մեջ հետզհետե ազգային արժանապատվության համոզում և իբրև քաղաքացի հայրենիքին հավատարմորեն ծառայելու ցանկություն առաջացրին: Իսկ 1882թ. ֆելլահ սպա Ահմադ Օրաբին դարձավ Եգիպտոսի առաջին ազգայնական շարժման առաջնորդը:

Համաձայն պատմաբան Խալիդ Ֆահմի վկայության. «Իբրահիմ փաշայի բանակը վճռական նշանակություն ունեցավ արդի Եգիպտոսի պետական համակարգի ձևավորման մեջ: Բանակի վերակառուցումը հանգեցրեց այնպիսի զարգացումների, որոնք հիմնովին փոխեցին պետության դերն ու հարաբերությունը իր քաղաքացիների հետ»[463]:

---

[461] Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ե., 2011, էջ 356:

[462] Բանակային և ծովային ուժերի մաս կազմող հայերից հայտնի են Սուդանի կռիվների մասնակից Էդուարդ Հանրի Զոհրաբ փաշան, ով հետագայում նշանակվել է պաշտպանության նախարարի խորհրդական, Նշան Նարգիլեջյանը՝ ծովային սպա, Սուդանի կռիվների մասնակից Բարթամ Յազմաջյանը և այլք: Եգիպտոսի բանակում ծառայել են նաև զինագործ վարպետներ և բժիշկներ, որոնցից հիշատակվում են դոկտոր Ստեփան Գևորգյանը և Ալեքսանդրիայի նավատորմի ու հիվանդանոցի բժիշկ Հարությունն Բետանբեյը:

[463] Khaled F., All the Pasha’s Men: Mehmed Ali, His Army and the Making of Modern Egypt, Cambridge, 1997, p. 314.

Պողոս բեյն առաջ է քաշել ու հովանավորել բազմաթիվ հայ գործիչների: Նա էապես օգնել է նաև հայ երիտասարդներին եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններ կրթության ուղարկելու գործում: Պողոս բեյը նաև ստեղծեց Հանրային կրթության գերագույն խորհուրդ, որը Եգիպտոսում բացեց դպրոցներ և մեկ դպրոց էլ Փարիզում, որի տնօրեն նշանակվեց Ստեփան Էֆենդի Ռեսմին (Դեմիրճյան)[464]: Ամեն տարի պետական միջոցներով ուսանողներ էին ուղարկվում Փարիզի վարժարան՝ մասնագիտական ուսում ստանալու և Եգիպտոս վերադառնալով՝ պետական աշխատանք կատարելու համար: Փարիզ ուղարկված 20-հոգանոց առաջին խմբում ներգրավված էին հայ ուսանողներ, որոնցից ոմանք հետագայում պետական բարձր պաշտոններ ստանձնեցին. նրանցից էր Արթին բեյ ալ-Արմանին (Չրաքյան, 1800-1859թթ.)[465], ով, վերադառնալով Եգիպտոս, 1844թ. նշանակվել է միաժամանակ արտաքին գործերի և առևտրի նախարար ու պաշտոնավարել է մինչև 1850թ.: Նրա անվան հետ է կապված առևտրի մենաշնորհի վերացումը Եգիպտոսում, ինչով հնարավորություն է ստեղծվել երկրի արտադրական ուժերի անարգել զարգացման համար: Նա է կարգ ու կանոն ստեղծել պետական գանձարանում, կարգավորել մաքսային անցագրերի վարչության աշխատանքը և այլն[466]:

Խոսրով բեյ ալ-Արմանին (Չրաքյան, 1808-1873թթ.) Արթինի եղբայրն էր, ով հետագայում նշանակվել է Փարիզի վարժարանի փոխտնօրեն: Վերադառնալով Կահիրե՝ նա նշանակվել է զինվորական վարժարանի հրետանիի բաժնի վարիչ և, միանալով բանակին, ստացել է գնդապետի աստիճան[467]:

Արիստակես Ալթուն Տյուրի բեյը (Ալթունյան, 1804-1868թթ.), ով, վերադառնալով Եգիպտոս, դարձել է փոխարքայի քարտուղարը և կառավարության՝ արաբերենով ու թուրքերենով լույս տեսնող «ալ-Միսր» պաշտոնաթերթի խմբագրության անդամը, իսկ Պողոս բեյի

[464] Ստեփան Դեմիրճյանը եղել է նաև Մուհամմադ Ալիի խորհրդականը, իսկ 1850-1853թթ. և 1855-1857թթ.՝ Եգիպտոսի արտաքին գործերի նախարարը:
[465] Արթին բեյ Չրաքյանի մասին տե՛ս Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 226-230:
[466] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 65-66:
[467] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 231-232:

մահից հետո նշանակվել է խմբագիր: Կարևոր դեր է կատարել 1860թ. Ազգային սահմանադրության օրենքների խմբագրության մեջ[468]:

Յուսուֆ Էֆենդի ալ-Արմանին (Պալյան, 1803-1849թթ.), ով ուսումնասիրել էր գյուղատնտեսություն և, վերադառնալով Եգիպտոս, իր հետ բերել է մանդարինի պտուղն ու ծառատունկը: Փոխարքան այնքան է գոհ մնացել, որ պտուղը կոչել է Յուսուֆ Էֆենդի: Ժամանակի ընթացքում անունն աղավաղվելով դարձել է օսթաֆանտի: Յուսուֆ Էֆենդին վարել է երկրագործական վարժարանի տնօրինությունը և արաբերենով գրել է Եգիպտոսի գյուղատնտեսության առաջին գիրքը[469]:

Պողոս բեյի օրոք տիրում էին կարգ ու կանոն, կյանքի և ունեցվածքի ապահովություն: Վերջինը վայելում էր Մուհամմադ Ալիի մտերմությունը և վստահությունը: Նա մեծ ծառայություններ է մատուցել նաև եգիպտահայ գաղութին: Նա փոխարքայի միջնորդությամբ եգիպտահայ թեմի առաջնորդական աթոռը Երուսաղեմից վերադարձնել տվեց Կահիրե, որի առաջնորդը Գաբրիել եպիսկոպոս Մարաշցին էր[470]:

Բազմաթիվ պատմաբանների վկայությամբ Եգիպտոսի ամբողջ եկամուտը վերահսկող Պողոս բեյը պահեց իր անբասիր անունը և երբ 1844թ. հունվարին մահացավ, Եգիպտոսի տարածքում 40 օր պետական սուգ հայտարարվեց այդ մեծանուն հայի համար. «...որ Եգիպտոսի տնտեսական և քաղաքական կյանքի արդիականացման ու զարգացման համար մեծապես եղել է օգտակար՝ ծառայելով նվիրվածությամբ թե՛ պատերազմի, թե՛ խաղաղության ժամանակ»[471]:

Պողոս բեյ Յուսուֆյանի հաջորդների մեջ կարևոր դեր է ունեցել քաղաքագետ և բացառիկ կարողություններով օժտված Նուբար փաշա Նուբարյանը, ով 5 տասնամյակ վարել է պետական բարձրագույն պաշտոններ, ունեցել է միջազգային համբավ և մնայուն հետք է թողել Եգիպտոսի արդիականացման մեջ:

Նուբար փաշան (1825-1899թթ.) ծնվել է Զմյուռնիայում: Ժնևում և Թուլուզում ուսումն ավարտելուց հետո՝ 1842թ., իր քեռի Պողոս

[468] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 261-263:
[469] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 358:
[470] Զէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 79-80:
[471] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 68-69:

բեյի հրավերով եղբայրների հետ եկավ Եգիպտոս ու սկզբում դարձավ Պողոս բեյի քարտուղարը, իսկ նրա մահից հետո՝ 1844թ., նշանակվեց փոխարքայի թարգմանիչ և Արտաքին գործերի դիվանատան երկրորդ քարտուղար: Ծնունդով Նուբար փաշան, իր կարողություններով գրավելով փոխարքայի ավագ որդի և բանակի ընդհանուր հրամանատար Իբրահիմ փաշայի ուշադրությունը, 1845թ. դարձավ նրա թարգմանիչն ու քարտուղարը[472]: Փաշան խելացի և ուսումը գնահատող անձնավորություն էր ու Նուբարի քարտուղարության տարիներին կազմեց թուրքերեն, արաբերեն, պարսկերեն և հայերեն մոտ 9000 հատոր ունեցող գրադարան[473]:

Իբրահիմ փաշայի մահից մի քանի ամիս անց մահացավ նաև Մուհամմադ Ալին, և 1848թ. իշխանությունը փոխանցվեց նրա զավակներից Թուսունի որդի Աբբասին (1848-1854թթ.): Նոր փոխարքան Նուբարին դարձրեց իր անձնական խորհրդականը և հատուկ առաքելությունների պատվիրակը: 1850թ., երբ Նուբարը ամուսնության համար պետք է գնար Կոստանդնուպոլիս, Աբբասը նրան հանձնարարեց դիվանագիտական նուրբ առաքելություն՝ մերժել Օսմանյան կայսրության կողմից Եգիպտոսին պարտադրվող թանզիմաթի դրույթները: Նուբարն իր հմուտ դիվանագիտության շնորհիվ կարողացավ Մեծ Բրիտանիայի հետ պայմանագիր կնքել Եգիպտոսում Ալեքսանդրիա-Կահիրե, Կահիրե-Սուեզ երկաթգծի կառուցման վերաբերյալ և դրանով հասավ թանզիմաթը Եգիպտոսին պարտադրելու սպառնալիքի վերացմանը[474]: Նուբարն իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև Ալեքսանդրիայի ու Սուեզի նավահանգիստների վրա, քանի որ երկուսն էլ տարանցիկ առևտրի պահանջները չէին բավարարում: Անհրաժեշտ էր արդիականացնել նավահանգիստները, ստեղծել փարոսներ, մթերանոցներ և զարգացնել Կարմիր ծովով առևտուրը Ջիդդայի, Մեքքայի և Սուդանի հետ: Ծնորհիվ Նուբարի՝ կազմվեց տարանցիկ առևտրի ընկերություն, որը ստանձնեց Ալեքսանդրիայի և Սուեզի նավահանգիստների համար անհրաժեշտ հարմարություններ ստեղծելու, ինչպես նաև պետության եկամտի նոր աղբյուրներ

[472] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 359:
[473] Ջէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 82-83:
[474] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 85:

հայթայթելու առաքելությունները: Օսմանյան սուլթան Աբդել Մեջիդի անունով ընկերությունը կոչվեց Մեջիդիե, այնուհետև նրան հաջորդած Աբդել Ազիզի անունով՝ Ազիզիե, իսկ 1867թ. հետո Եգիպտոսի փոխարքա Իսմայիլի պատվին՝ Խեդիվիե[475]:

1854թ. Աբբասին հաջորդեց Մուհամմադ Ալիի որդիներից Սայիդը (1854-1863թթ.): Նուբարը շարունակեց պատասխանատու պաշտոններ վարել առողջապահական սպասարկությունների տնօրինությունում, ընդհանուր դատախազությունում, Արտաքին գործերի նախարարությունում, փոխարքայի և դեսպանատների միջև կատարեց համադրական աշխատանք և վերջապես Փարիզում նշանակվեց Եգիպտոսի առևտրական ներկայացուցիչ, իսկ նրա Առաքել եղբայրը՝ Բեռլինում[476]:

Նուբար փաշայի ամենաբեղմնավոր գործունեությունը սկսվեց Իսմայիլ փաշայի (1863-1879թթ.) կառավարման ժամանակաշրջանում: 1865թ. նա նշանակվեց Հանրօգուտ շինության նախարար: Նուբար փաշան ոռոգման նոր ծրագիր մշակեց, որի արդյունքում ընդարձակվեցին մշակելի հողերը և ապահովեցին երկրի բարգավաճումն ու եկամուտների ավելացումը: Այս ծրագիրն այնքան արդյունավետ էր, որ Բեհերանահանգի նոր ջրանցքը կոչվեց նրա անունով՝ Նուբարիա[477]:

Նուբարը մեծ աշխատանք է տարել նաև Եգիպտոսի քաղաքական անկախությունը պահպանելու և ամրացնելու ուղղությամբ: 1867թ. թուրքական կառավարությունը նպատակ է դնում նորից Եգիպտոսը վասալական կախվածության մեջ դնելու և ջնջելու Մուհամմադ Ալիի ձեռք բերած ժառանգական իրավունքը: Նուբարը հարկադրված եղավ գնալ Կոստանդնուպոլիս և այնպիսի վարպետությամբ վարել այդ բանակցությունները, որ կարողացավ ապահովել Եգիպտոսի կուսակալների ժառանգական իրավունքը: Որպես երախտագիտություն՝ փոխարքան Նուբարին շնորհեց փաշայի տիտղոս և նվիրեց բարեբեր ընդարձակ կալվածք. առաջին անգամ էր, որ քրիստոնյան փաշայի տիտղոս էր ստանում[478]:

---

[475] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 85-88:
[476] Նույն տեղում, էջ 88:
[477] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 67:
[478] Նույն տեղում:

Նուբարը կատարել է մի շարք բարեփոխումներ արաբ գյուղացու (ֆելլահի) դրության բարելավման ուղղությամբ[479]: Ճիշտ է, այս գործում նա հանդիպել է տեղի ֆեոդալական շրջանների ուժեղ դիմադրությանը, սակայն արել է ամեն հնարավորը՝ սահմանափակելու նրանց կեղեքումները: Եգիպտոսի աշխատավոր ժողովուրդը սիրել է Նուբարին և անվանել «Ֆելլահի մարդը», «Ֆելլահի բարեկամը» և «Ֆելլահի հայրը»[480]:

1867թ. հրամանագրով վարչական կառույցներ հաստատելու իրավասությունը ճանապարհ հարթեց, որ Նուբարը մշակի Եգիպտոսի օրենսդրական բարեկարգումների ծրագիրը և զբաղվի խառը դատարանների հաստատմամբ (նախքան Նուբարը Եգիպտոսի դատական համակարգը կանոնակարգված չէր): Գոյություն ունեցող դեսպանատներից յուրաքանչյուրն ինքն էր տնօրինում իր հպատակների դատերն իր դատարանների մեջ և իր երկրի օրենքներին համաձայն: Հարցը բարդանում էր, երբ դատական գործընթացի մասնակիցները տարբեր հպատակություն ունեին, կամ էլ կողմերից մեկը եգիպտացի էր: Այս իրավիճակում մշտապես տուժում էին եգիպտացիները, ինչի մասին պատմաբան Արշակ Ալպոյաճյանը գրել է. «Եգիպտական կառավարությունը անկարող էր պատժել իր երկրի մեջ կատարված հանցանքները: Երկրի մեջ դատական և օրենսդրական միություն հնարավոր չէր ստեղծել, ինչը դառնում էր բարդությունների, ձգձգումների, դիվանագիտական բանավեճերի և հակասությունների պատճառ»[481]:

Նուբար փաշան սկսեց բանակցություններ վարել եվրոպական տերությունների հետ, որոնք տևեցին շուրջ 2 տարի՝ շարունակվելով մինչև 1869թ., երբ նրան հաջողվեց Կահիրեում դատական բարենորոգման միջազգային խորհրդաժողով կազմակերպել, որին մասնակցեցին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Դատական բարենորոգման խորհրդաժողովը տևեց 3 ամիս, որը 1870թ. հունվարին որոշեց, որ առևտրական և քաղաքային հարցերի մեջ խառը դատարանները վճիռ կայացնելու իրավունք

[479] Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Ե., 1962, էջ 152:
[480] Նազարեթ Մ. Աղազարմ, նշվ. աշխ., էջ 42:
[481] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 104:

պիտի ունենային տարբեր հպատակության տեր օտարների, ինչպես նաև օտարահպատակների և տեղացիների միջև ծագած վեճերի պարագայում: Իսկ քրեական հարցերի գծով հյուպատոսական դատարանները պետք է զբաղվեին միայն իրենց հպատակների դատերով, տեղական դատարաններն էլ պետք է դատեին եգիպտահպատակ քրեական հանցագործներին[482]: Խառը դատարանների բացումը տեղի ունեցավ 1875թ. հունիսի 28-ին[483]: Նուբար փաշայի դատական բարենորոգման երկարատև պայքարի մասին հետևյալն է գրում պատմաբան Ջասպեր Յեթս Բրինտոնը. «Մի կողմից Նուբարը խառը դատարանների հարցը լուծեց երկարատև և հետևողական աշխատանքով, իսկ մյուս կողմից փորձեր եղան ձախողելու իր գործադրած ջանքերը, բայց ի վերջո հաղթանակեց դատական բարենորոգումների ծրագիրը»: Այսպիսով, կարելի է Նուբար փաշայի այս բարեկարգումը դասել ժամանակակից Եգիպտոսի պատմության դիվանագիտական խոշոր հաջողությունների շարքում: Հետագայում Եգիպտոսի վարչապետ Սաադ Զաղլուլ փաշան խառը դատարանների կատարած անփոխարինելի դերի մասին հայտարարել է. «Եգիպտոսի դատական համակարգի հիմնաքարը խառը դատարաններն են»[484]:

Նուբար փաշայի ջանքերի շնորհիվ 1873թ. հատուկ հրովարտակով խեդիվը իրավունք ստացավ այլ պետությունների հետ առևտրական և մաքսային համաձայնագրեր կնքել և անհրաժեշտության դեպքում օտարների հանդեպ կիրառել իրավական պատժամիջոցներ:

1878թ., երբ Նուբար փաշան նշանակվեց վարչապետ, իր իրավասության տակ վերցրեց Արտաքին գործերի և Դատական նախարարությունները[485]: Այդ առիթով նա փորձեց ստեղծել իրավական կատարյալ միություն՝ խառը և տեղական դատարանների միաձուլումով: Սակայն այս ծրագիրը չհաջողվեց իրականացնել:

---

[482] Պարթեիեան Ս., նշվ. աշխ., էջ 11:

[483] Երեք խառը դատարաններ սկսեցին գործել Կահիրեի, Ալեքսանդրիայի և Մանսուրայի մեջ, իսկ Վճռաբեկ ատյանը՝ Ալեքսանդրիայում: Դատարաններում գործում էր ֆրանսերենը, իսկ 1905թ.՝ անգլերենը: Այս դատարաններում աշխատում էին մեծ թվով հայեր՝ Արթին բեյ Ռեյզյանը, Արթին Էֆենդի Խաչատուրը, Խաչեր բեյ Միքայելյանը, Կարապետ բեյ Ռեյզյանը, Յուսուֆ բեյ Չրաքյանը, Ստեփան Խաչատուրը, Յուսուֆ բեյ Ազիզը և այլք:

[484] Brinton J., նշվ. աշխ., էջ 12:

[485] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 360:

Միայն 1949թ. հոկտեմբերի 14-ին խառը դատարանները փոխարինվեցին ազգային դատարաններով, և դրանցում սկսեց գործել արաբերենը[486]:

Խեդիվ Իսմայիլին փոխարինեց իր որդի Թաուֆիկը (1852-1892թթ.): Նոր խեդիվի իշխանության ժամանակ (1879-1892թթ.) տեղի ունեցավ ազգային շարժման ղեկավար Ահմադ Օրաբիի ապստամբությունը, որը Մեծ Բրիտանիայի կողմից ճնշվեց, և 1883թ. Եգիպտոսն անցավ բրիտանական հովանու տակ, իսկ հյուպատոս նշանակվեց Իվլին Բերինգը (հետագայում՝ լորդ Կրոմեր): Այս պայմաններում 1884թ. Նուբար փաշան կրկին նշանակվեց վարչապետ: Լորդ Կրոմերը ցանկանում էր, որ Եգիպտոսի պետական համակարգում բրիտանացիները զբաղեցնեն բարձր պաշտոններ, ինչին դեմ էր Նուբար փաշան: Լորդ Կրոմերը չէր հանդուրժում հակաճառությունը, այդ պատճառով Նուբար փաշան վերջինիս համար դարձավ անցանկալի: Թեև 1889թ. Նուբար փաշան հեռացվեց վարչապետի պաշտոնից, սակայն 1894թ. խեդիվ Թաուֆիկի որդու՝ Աբբաս II-ի (1874-1944թ.) իշխանության տարիներին (1892-1914թթ.) Նուբար փաշան դարձյալ նշանակվեց վարչապետ: Նուբար փաշան, 6 փոխարքաներին ծառայելու և անկախության համար Եգիպտոսի մղած պայքարին մասնակցելուց բացի, խոր հիասթափությամբ էր նայում Մեծ Բրիտանիայի սարքած մեքենայություններին, հատկապես վարչական բարձրագույն դիրքերի հասած հայ պաշտոնյաների գործունեությունը Մեծ Բրիտանիայի շահերին ենթարկելու անշեղ քաղաքականության[487]: Ի վերջո, 1895թ. Նուբար փաշան արժանացավ Եգիպտոսի բարձրագույն պատվին՝ «Նեղոսի Մեծ շքանշանին», որից հետո հեռացավ քաղաքական ասպարեզից և 4 տարի անց մահացավ Փարիզում, իսկ ավելի ուշ՝ 1904թ. հունիսի 3-ին, Ալեքսանդրիայում տեղադրվեց նրա արձանը, որն այժմ գտնվում է Մուհամմադ Ալիի անվան թատրոնի դիմացի հրապարակում[488]:

Նուբար փաշայի քաղաքական գործունեությունը ոչ միանշանակ արձագանքի է արժանացել պատմաբանների կողմից. այսպես, եթե սովետական հեղինակները ներկայացնում էին Նուրբար փաշային որպես անգլիամետ պետական գործիչ, ապա ավելի

[486] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 95-96:
[487] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 360-361:
[488] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 99:

ժամանակակից հեղինակները, վերլուծելով վերջինի իրատեսական և երկարաժամկետ լուծումներին միտված քաղաքականությունը, հակված են Նուբար փաշային բնորոշել որպես ազգանվեր պետական գործչի, որի գործունեությունն ուղղված էր Եգիպտոսի շահերի պաշտպանմանը[489]:

Նուբար փաշան սերտկապեր ուներ Եգիպտահայության հետ: Ըստ պատմաբան Արշակ Ալպոյաճյանի՝ մի առիթով Նուբարն ասել է. «Ես կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտը իմ առաջ այդ գործն է հանել, հրապուրվել եմ նրանով և կապվել նրա հետ: Բայց օտար երկրի մեջ այդ գործունեությունը ինձ երբեք մոռացնել չտվեց, որ ես հայ եմ»[490]:

Հայերի համար Նուբար փաշայի գլխավոր ձեռքբերումը եղավ բարեգործական հաստատությունների կամ վաքֆերի և կտակների վերաբերյալ վիճահարույց հարցերի լուծումը: Մեծապես գնահատելով հայ լինելու հպարտությունը՝ Նուբար փաշան խոստումնալից հայ երիտասարդներին միջոցներ էր տրամադրում՝ Եվրոպայում ուսումը կատարելագործելու համար: Նա ապահովում էր նաև 1890-ական թթ. հայերի ջարդերի հետևանքով Եգիպտոսում ապաստանած որբերի կեցությունը և ուսումը: Նուբարի թելադրանքով էր, որ Կահիրեի թաղական խորհրդի ատենապետ և Խորենյան ազգային վարժարանի տեսուչ Աբրահամ Մուրադյանը 1865թ. մարտի 16-ից սկսեց հրատարակել «Արմավենի» կիսամսյան՝ դառնալով Եգիպտահայ լրագրության հայրը:

Նուբար փաշայի քաղաքական երկարատև գործունեության կարևոր արդյունքը եղավ Եգիպտոսի ազգային գիտակցությունը խարսխել ոչ միայն լեզվի և կրոնի, այլև օրենքի վրա[491]:

Անդրադարձ կատարենք նաև մեկ այլ ականավոր հայ գործչի՝ Տիգրան փաշա Ապրոյանի կամ դ'Ապրոյի (1846-1904թթ.) գործունեությանը, ով ծնվել է Կահիրեում և ուսանել Եվրոպայի մի շարք երկրներում[492]: 1868թ. նա վերադառնում է Եգիպտոս և դառնում Նուբար փաշայի քարտուղարը: Այնուհետև նա ստանձնում է Խառը

[489] Арутюнян С., Укрепление позиций Британской империи в Египте (80-90 гг. XIX в.), автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989, с. 17.
[490] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 94:
[491] Ճէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 100-103:
[492] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 117:

դատարանների կազմակերպության միջազգային ժողովի քարտուղարությունը, իսկ 1873-1876թթ. վարում է Դատական բարեկարգման հանձնաժողովի քարտուղարությունը: Տիգրանը 1873թ. բեյի աստիճան ստացավ: Որոշ ժամանակ անց կազմակերպեց Արտաքին գործերի նախարարության դիվանները, այնուհետև նշանակվեց արաբական և եվրոպական թարգմանության վարչության գործավար, իսկ 1881թ. ղեկավարեց Արտաքին գործերի նախարարությունը[493]:

1883-1884թթ. Տիգրան փաշան սկսեց հակադրվել Մեծ Բրիտանիայի հյուպատոս լորդ Կրոմերի՝ Մեծ Բրիտանիայի շահերին նպաստող հրահանգների արձակմանը: Նաբողոքեց. «Ես եգիպտական նախարար եմ, այլ ոչ թե Մեծ Բրիտանիայի կառավարության վարձու պաշտոնյա»: Լորդ Կրոմերը հայ գործչի համարձակությունը չներեց: Արտաքին գործերի նախարարը որքան էլ գնահատված լիներ Եգիպտոսում, պետք է հասկանար, որ եգիպտացի նախարարը միայն Մեծ Բրիտանիայի հյուպատոսի թույլտվությամբ կարող էր պահել իր պաշտոնը: Տիգրան փաշան նախընտրեց հրաժարվել, սակայն 1885թ., ընդառաջելով Նուբար փաշայի խնդրանքին, այցելեց Փարիզ և Լոնդոն՝ Եգիպտոսի ելևմտական հարցերը կարգավորելու[494]:

1892թ. խեդիվ Թաուֆիկին հաջորդած Աբբաս II-ը մեծապես գնահատում էր Տիգրան փաշայի՝ հանուն Եգիպտոսի բարօրության մղած պայքարը բրիտանացի իշխանավորների դեմ, ինչի շնորհիվ 1893թ. Տիգրան փաշան նշանակվեց վարչապետ: Լորդ Կրոմերը դեմ էր այս նշանակմանը՝ պատճառաբանելով, որ իսլամական երկրի համար քրիստոնյա վարչապետունենալն անհարմար է: Խեդիվը հաշվի չառավ լորդ Կրոմերի առարկությունը, և Կրոմերը սկսեց ձախողել Տիգրան փաշայի նախաձեռնությունները: Եգիպտոսի շահերը պաշտպանող Տիգրան փաշան դիմեց խեդիվին, որ նա ուրիշ վարչապետ նշանակի: Խեդիվը վարչապետ նշանակեց մեկ այլ հայ քրիստոնյայի՝ Նուբար փաշային, իսկ Տիգրան փաշան նշանակվեց Արտաքին գործերի նախարար: Մինչ ուրիշ հայ նախարարներ ծառայել են կառավարական զանազան բաժիններում, Տիգրան փաշան հիմնականում աշխատել է Արտաքին գործերի նախարարությունում[495]: Այս առիթով կարելի է

[493] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 362:
[494] Ալաբոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 97:
[495] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 192:

նշել, որ 1808-1908թթ. միջև ընկած ժամանակահատվածում 64 տարի հայ նախարարները վարել են Եգիպտոսի Արտաքին գործերի նախարարությունը: Նա մեծ դեր է խաղացել նաև եգիպտահայ համայնքի կյանքի մեջ: Առողջական խնդիրների պատճառով Տիգրան փաշան բուժվելու նպատակով գնաց Ֆրանսիայի Էվիեն-Լե-Բեն քաղաքը և 1904թ. այնտեղ էլ մահացավ: Նրա հուղարկավորությունը տեղի ունեցավ Կահիրեում: 1952թ. երախտագետ եգիպտահայությունը Նուբար և Տիգրան փաշաների կիսանդրիները տեղադրեց Կահիրեի Ազգային առաջնորդարանի մուտքի մոտ[496]:

Եգիպտոսի կյանքում կարևոր դեր կատարած պետական դեմքերի մեջ իր յուրահատուկ տեղն ունի Յակուբ (Հակոբ) Արթին փաշան (1842-1919թթ.), ով Եգիպտոսի կրթական համակարգում իր կատարած բարենորոգումների համար կոչվել է «ալ-ուսթազ ալ-քաբիր»[497]: Հակոբը պետական վաստակավոր գործիչ Արթին բեյ Չրաքյանի որդին էր: Ծագումով սեբաստացի Չրաքյան ընտանիքը Եգիպտոսում հաստատվել էր 1814թ.: Հակոբը ծնվել էր Կահիրեում և ուսումը ստացել Փարիզում, իսկ 1866թ. խեդիվ Իսմայիլի կարգադրությամբ ուղարկվել էր Իտալիա, Ավստրիա, Գերմանիա և Մեծ Բրիտանիա՝ հարստացնելու իր գիտելիքները, և վերադառնալով Եգիպտոս՝ աշխատելու պետական հաստատություններում: Որոշ ժամանակ տարբեր բաժանմունքներում աշխատելուց հետո կրթության նախարարությունում սկսվեց նրա երկարամյա գործունեության շրջանը[498]:

Քաղաքներում և գյուղերում բացվող դպրոցների համար ուսուցիչներ գտնելու նպատակով Հակոբ Արթին փաշայի նախաձեռնությամբ հիմնվեց Կահիրեի պետական ուսուցչանոցը[499]: Հակոբ Արթին փաշայի կարգախոսը հետևյալն էր. «Եթե փոքր ղեկը կարող է իրենից հազար անգամ մեծ նավի ուղղությունը որոշել, ապաերկրի ուսյալ տարրը կարող է առաջնորդել զանգվածների»: Դրա հիման վրա նա փորձ կատարեց՝ բարձրացնելու ուսուցիչների կրթական մակարդակը և նախակրթարանների ուսուցիչների համար

[496] Զէյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 106-109:
[497] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 138-140:
[498] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 363:
[499] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 244:

պահանջեց մուտքի քննություն: Նա մեծապես բարելավեց ուսուցիչների նյութաբարոյական վիճակը: Պետական ուսուցչանոցի հաջողությունն այնքան մեծ էր, որ նույն սկզբունքներով հիմնվեցին նաև ուրիշները[500]:

Հակոբ Արթին փաշան կարևորություն էր տալիս աղջիկների ուսմանը: 1873թ. խեդիվ Իսմայիլի երրորդ կնոջ՝ Չեշմե Աֆեթի հովանավորությամբ բացվեց Եգիպտոսի աղջիկների առաջին դպրոցը՝ Սիուֆիեն: Հակոբ Արթին փաշայի նախաձեռնությամբ աղջիկների դպրոցներում մտցվեցին ձեռագործության և ձևագիտության դասընթացներ: Նրա կարևոր ձեռքբերումը եղավ Եգիպտոսի կրթական ծրագրի մշակումը, որի անմիջական արդյունքը կրթական աննախադեպ առաջադիմությունն էր: Մշակութային դաստիարակության բնագավառում նա առաջինը հավաքեց ու հրատարակեց ժողովրդի մտածելակերպն ու ապրելակերպն արտահայտող և բերնեբերան փոխանցվող հեքիաթները: Այս գործը բարձր գնահատվեց, քանի որ հեքիաթասացությունը մինչև օրս Եգիպտոսում վայելում է մեծ ժողովրդականություն: Հակոբ Արթին փաշայի գրի առած հեքիաթներից շատերը մինչ օրս պատմվում են և իսլամական պատկանելությունից բացի շեշտում են Եգիպտոսի ազգային ինքնությունը: Հակոբ Արթին փաշան մասնակցություն է ունեցել նաև եգիպտական մշակութային հաստատությունների հիմնադրմանն ու զարգացմանը: Դրանցից են Եգիպտական կաճառը, Պետական մատենադարանը, Հնությունների թանգարանը, Արաբական արվեստի թանգարանը, որի սրահներից մեկը կոչվում է իր անունով, որտեղ և գտնվում են նրա գրադարան-թանգարանի բազմահարուստ հավաքածուները[501]:

Հակոբ Արթին փաշան մեծ դեր է կատարել նաև եգիպտահայության կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում և մեծ աջակցություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ջարդերի հետևանքով Եգիպտոսում ապաստանած հայ գաղթականներին[502]:

---

[500] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 112:
[501] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 117-118:
[502] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 113-116:

Մյուս նշանավոր հայ գործիչը Նուբար փաշա Նուբարյանի որդին՝ Պողոս Նուբար փաշան է (1851-1930թթ.), ով նույնպես պետական բարձր պաշտոններ զբաղեցրեց, դարձավ ոչ միայն եգիպտահայ, այլև համահայկական չափերով երևելի դեմք և ստեղծեց հայության հաջորդ սերունդներին ծառայելու կառույց՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ֆրանսիայում ուսումը կատարելագործելով՝ Պողոս Նուբարը 1878թ. վերադարձավ Եգիպտոս և զբաղեցրեց երկաթուղիների վարչության տնօրենի պաշտոնը: Ժամանակի ընթացքում նա նպաստեց նոր երկաթգծերի կառուցմանը և վարչական բարեկարգմանը: Հետագայում Պողոս Նուբարը մասնակցեց Երկրագործական ընկերության, ինչպես նաև 1896թ. Ալեքսանդրիայի Ռամլեի հանրակառքերի և Մենզելեի հողերի ջրարբիացման ու շահագործման ընկերության կազմավորմանը: Նա կազմեց նաև ոռոգման ծրագրեր Կահիրեի ջրի ընկերության համար[503]:

Հալածանքներից փախչող և կոտորածներից փրկված հայության բեկորների հանդեպ հոգատարությունը եղել է Պողոս Նուբար փաշայի ազգային գործունեության առանցքը: 1906թ. մարտի 4-ին Գալուստյան ազգային վարժարանի Բուլակի շենքի հիմնադրման առիթով նա իր ճառում հայտարարեց Հայկական բարեգործական ընդհանուր միության ստեղծման մասին: Այս միության նպատակն էր օգնել հայերին և նրանց ցուցաբերել նյութական, մտավոր ու բարոյական աջակցություն: Բացի այս միությունից, բացվեցին նաև այլ միություններ, որոնք եգիպտահայության դարձրին Սփյուռքի նշանավոր գաղթավայրերից մեկը: Հետզհետե եգիպտահայության ծոցում կազմված միությունները ճյուղավորվեցին և այլ գաղթավայրերի մեջ ստեղծեցին մասնաճյուղեր՝ միշտ ծառայելով հայության վերելքին[504]:

Պողոս Նուբար փաշան Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահի պաշտոնում մնաց մինչև 1928թ.: Այնուհետև նա շարունակեց ծառայել ազգային նպատակներին և 1930թ. Փարիզում կառուցել տվեց Մարի Նուբար հայ ուսանողական տունը: Իր ամբողջ

[503] Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 365:
[504] Զեյթլեան Ս., նշվ. աշխ., էջ 119-123:

կյանքն իր ազգի ցավերով ապրած և հայության բարօրությանը նվիրված մեծանուն հայը մահացավ Փարիզում 1930թ.[505]:

Եգիպտահայերն իրենց ներդրումն են ունեցել նաև բժշկության, արհեստագործության (ոսկերչություն, դերձակություն, ասեղնագործություն, մուշտակագործություն, կոշկակարություն, շինարարական արհեստներ), առևտրի, մշակույթի (դպրոցներ, մշակութային ընկերություններ, պարբերական մամուլ և տպարաններ, թատերական և երաժշտական կյանք), արդյունաբերության, ճարտարապետության և այլ բնագավառներում[506]:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ չնայած XIX դարի սկզբին Եգիպտոսի փոքրամասնությունների մեջ հայերը թվաքանակով ամենասակավն էին, սակայն նրանց մասնակցությունը Եգիպտոսի զարգացման և պետականության պահպանման գործում համարվում է բեկումնային և անգնահատելի: Անկախ կրոնական և մշակութային տարբերություններից՝ պետական կյանքի մասնակցության, կազմակերպչական ունակությունների, ինչպես նաև վայելած հեղինակության շնորհիվ հայերին հաջողվել է վայելել Եգիպտոսի ղեկավարության վստահությունն ու զբաղեցնել կարևոր դեր պետական կառավարման համակարգում, նշանակալի մասնակցություն ունենալ կարևորագույն բանակցություններում, արտերկրում ունեցած կապերի շնորհիվ բարելավել տնտեսական, մասնավորապես առևտրային հարաբերությունները: Զբաղեցնելով բարձր պաշտոններ պետական ու հասարակական ոլորտներում՝ եգիպտահայերը շարունակել են դրսևորել հավատարմություն իրենց ղեկավարների և սկզբունքների հանդեպ, ինչի պատճառով հաճախ վտանգել են թե՛ իրենց պաշտոնը և թե՛ իրենց կյանքը, մշտապես պայքարել են օտարերկրյալների դեմ և պահպանել են խիզախ ու հավատարիմ դաշնակցի ու պաշտոնյայի համբավը:

XIX դարում Եգիպտոսում հաստատված հայ քաղաքական, հասարակական ու մշակութային գործիչները, լինելով իրապես հայրենասեր և ազգային շահերի նվիրյալներ՝ ստեղծեցին ազդեցիկ

---

[505] Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 198:

[506] Մանրամասն տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 59-61, 72-76, Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 42-49, 51-59, 88-97, 98-116, 183-211:

համայնք և իրենց ստեղծած արժեքներով դարձան ոչ միայն Օսմանյան կայսրության տեղահանումներից և ջարդերից փրկված հայրենակիցների, այլ նաև Եգիպտոսի պարծանքը՝ վայելելով եգիպտացիների հարգանքն առ այսօր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզրակացություն բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

- Մինչև Նապոլեոն Բոնապարտի արշավանքը Եգիպտոսի քաղաքական կյանքը կարելի է բնութագրել Օսմանյան կայսրության և մամլուքյան ուժերի միջև ընթացող մշտական հակամարտությամբ: Մամլուքյան ուժերը, օգտվելով Օսմանյան կայսրության՝ Ռուսաստանի դեմ պայքարում ռազմական ուժերի կենտրոնացումից, վերականգնեցին իրենց իշխանությունը Եգիպտոսում՝ ստանձնելով երկրի կառավարման ղեկը, որը պահպանեցին մինչև ֆրանսիական զորքերի ներխուժումը՝ 1798թ.:
- Ունենալով համեմատաբար թույլ նավատորմ, ինչը հնարավորություն չէր տալիս ուղղակիորեն պայքարելու Մեծ Բրիտանիայի դեմ՝ ֆրանսիացիներն իրենց համար առաջնային նպատակ էին սահմանել Եգիպտոսը դարձնել իրենց գաղութը՝ մշտապես լարվածության մեջ պահելով հակառակորդ Մեծ Բրիտանիային, և Միջերկրական ծովը դարձնել ֆրանսիական: Ֆրանսիացիներն ունեցան էական ռազմական հաջողություններ Եգիպտոսում և անցան իշխանության գլուխ, ինչպես նաև նախաձեռնեցին և իրականացրին մի շարք բարեփոխումներ, որոնք էական ազդեցություն ունեցան Եգիպտոսի հետագա զարգացման համար: Այդուհանդերձ, Ֆրանսիական ռազմարշավը մատնվեց անհաջողության, և Եգիպտոսը կրկին անցավ թուրքական սուլթանի սուվերենության տակ: Ֆրանսիական ռազմարշավի համակողմանի վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ Բոնապարտի ղեկավարած եգիպտական արշավանքի ձախողման հիմնական պատճառը տեղացի բնակչության նկատմամբ կիրառած կոպիտ քաղաքականությունն էր, ինչը թույլ չտվեց ստանալ եգիպտացիների աջակցությունը ո՛չ Եգիպտոսի ներքին քաղաքական խնդիրներում, ո՛չ էլ բրիտանացիների դեմ պայքարում, ինչն էապես թուլացրեց

ֆրանսիական իշխանության դիրքերը և իր տրամաբանական հետևանքն ունեցավ ֆրանսիական ռազմարշավի համար:

- Եգիպտոսում կառավարման և դատական համակարգերը, ներառելով ավանդական և մուսուլմանական իրավունքին հատուկ գործառույթներ, այնուամենայնիվ, Նապոլեոն Բոնապարտի ռազմարշավի արդյունքում էապես վերափոխվեցին և դարձան հետագա համակարգային փոփոխությունների հիմքը: Հիմնական կառավարման համակարգում մամլուքների տեղը գրավեցին իսլամական հոգևոր հեղինակությունները: Ֆրանսիացիների օրոք Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ իշխանության մարմինների հասարակական կազմի ընդարձակում, ինչը ենթադրում է երկրի կառավարման մեջ հասարակության տարբեր շերտերից ներկայացուցիչների ներգրավում, ինչն էապես նվազեցնում էր ներքին խռովությունների առաջացման հավանականությունը: Արդյունքում Բոնապարտը, ներդնելով պետական կառավարման համակարգի արդիական մեխանիզմներ, իր դրածոների միջոցով ընդլայնում էր իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը Եգիպտոսում:
- XVIII դարի վերջի և XIX դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանը Եգիպտոսի հետագա զարգացման համար դարձավ բեկումնային, քանի որ հենց այս ժամանակահատվածում հանդես եկած պատմական իրադարձությունների, մասնավորապես Նապոլեոն Բոնապարտի արշավանքի արդյունքում Եգիպտոսը քաղաքական և մշակութային անկման փուլից թևակոխեց արդիականացման և զարթոնքի փուլ, որը դարձավ պատմական նոր զարգացումների շարժիչ ուժ: Թեև բոնապարտյան բարեփոխումները միշտ չէ, որ ուղղված էին Եգիպտոսի ազգային շահին և հաճախ առաջացնում էին տեղացիների դժգոհությունը, այդուհանդերձ հենց այս բարեփոխումները դարձան պատմական հենասյուն արդի Եգիպտոսի կայացման հարցում:
- XIX դարի առաջին կեսին Մուհամմադ Ալին նախաձեռնեց բարեփոխումների մի շարք, ինչն էական ազդեցություն ունեցավ Եգիպտոսի քաղաքական և սոցիալ-տնտեսական կայունացման, զարգացման և Օսմանյան կայսրության

անմիջական հսկողությունից ձերբազատվելու գործում: Եգիպտոսի պետական համակարգում ներդնելով կառավարման լավագույն միջազգային փորձը՝ Մուհամմադ Ալիի առջև, այնուամենայնիվ, կանգնեց ֆորմալ կառավարման սկզբունքների գործնական կիրառության խնդիրը: Չնայած կառավարման, իրագործման և վերահսկողության առաջադիմական մոտեցումների որդեգրմանը՝ Մուհամմադ Ալին չկարողացավ ամբողջությամբ օգտագործել վերջինների իրական ներուժը՝ մեծամասամբ պայմանավորված կառավարման միանձնյա համակարգի թերություններով և կառավարման միջին ու ստորին օղակներում հետևողականության, վերահսկողության, սկզբունքայնության, արմատացած կոռուպցիոն մտածելակերպի և պետական համակարգված մոտեցումների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, երկրի կառավարման նորաստեղծ համակարգը որակապես տարբերվեց նախորդներից և հիմք դրեց սոցիալ-տնտեսական երկարաժամկետ բարեփոխումների մի ամբողջ շարքի, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն ունեցան ինչպես ողջ երկրում, այնպես էլ յուրաքանչյուր եգիպտացու կյանքում:

- Մուհամմադ Ալին, իր կառավարման ժամանակահատվածում հզորացնելով երկրի ռազմական ներուժը և հասարակության լայն շերտերում բարձր հեղինակություն վայելելով, աստիճանաբար լուրջ սպառնալիք դարձավ Օսմանյան կայսրության համար: Նա կարողացավ հասնել մամլուքների և օսմանների չեզոքությանը, ովքեր սովորաբար վճռորոշ դեր էին խաղում երկրի բարձրագույն պաշտոնի համար պայքարում: Մուհամմադ Ալիի բեկումնային որոշումներից մեկը հանդիսացավ այն, որ նա Եգիպտոսի ազգային-քաղաքական ուժերին հնարավորություն տվեց դրսևորվելու երկրի ռազմաքաղաքական ոլորտներում, ինչի արդյունքում վերջինները ժամանակի ընթացքում ամբողջությամբ դուրս մղեցին օսմաններին և մամլուքներին Եգիպտոսի քաղաքական կյանքից:

- Մուհամմադ Ալիի օրոք բանակի համալրման և կառավարման մշակույթը ձևավորվեց եվրոպական, մասնավորապես ֆրանսիական ռազմական ուժերի կառավարման մեթոդների և մոտեցումների հիման վրա: Բանակի տեխնիկական վերազինմանը և արդիականացմանը զուգընթաց, Մուհամմադ Ալին նաև էական ջանքեր և բյուջետային միջոցներ էր հատկացնում բանակի կրթական զարգացմանը և վերապատրաստմանը: Իր առջև նպատակ դնելով ստեղծել կայուն, հուսալի և ուժեղ բանակ՝ Մուհամմադ Ալին բախվեց մի շարք անհաջողություններ, որոնք նա ընդունեց որպես փորձառություն և խելացիորեն օգտագործեց իր հետագա ռազմավարական քայլերի կառուցման համար: Արդյունքում Մուհամմադ Ալիի իրականացրած ռազմական բարեփոխումներն որակապես փոխեցին եգիպտական բանակի կառուցվածքը և թույլ տվեցին տևական ժամանակահատվածում ապահովել երկրի անվտանգությունը և համեմատական անկախությունը:
- Մուհամմադ Ալիի իշխանության ժամանակահատվածի ձեռքբերումների պահպանումը դարձավ հետագա սերունդների առաջնային խնդիրներից մեկը, ինչը դժվար իրագործելի էր առանց Մուհամմադ Ալիի նման ազգանվեր, բարձր դիվանագիտական և կառավարչական հատկանիշներով օժտված առաջնորդի: Նրա հաջորդները ոչ միայն թերացան բարեփոխումների շարունակական իրագործման տեսանկյունից, այլ նաև ֆինանսական սխալ քաղաքականություն վարելու հետևանքով մի շարք պետական պարտքեր կուտակեցին՝ Եգիպտոսը հասցնելով տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Խեդիվ Իսմայիլը, կառավարելով 1863-1879թթ., իր առաջ նպատակ էր դրել հասնել Եգիպտոսի անկախացմանը, սակայն նրա կառավարման օրոք ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցրեց երկրի բռնազավթմանը Մեծ Բրիտանիայի կողմից:
- Բռնազավթման արդյունքում եվրոպական տերությունները Եգիպտոսում իրենց քաղաքացիների համար սահմանել էին արտոնյալ պայմաններ և սահմանափակում էին Եգիպտոսի ազգային պետականության հաստատման ցանկացած փորձ: Օրաբի

փաշան, ով կարողացավ ստեղծել լայնածավալ ազգային շարժում՝ պատրաստ պայքարելու երկրի դե յուրե և դե ֆակտո անկախացման համար, տևական ժամանակ լուրջ ընդդիմություն կազմեց օտարերկրյա զավթիչների դեմ: Այնուամենայնիվ, նա չկարողացավ կարևոր պահերին կատարել վճռորոշ, երբեմն նաև խիստ համարձակ քայլեր՝ վախենալով կորցնել կարևոր գործընկերներ և ի վերջո դրանով ձախողեց մի ամբողջ հեղափոխություն: Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք դեմ էին Եգիպտոսի բրիտանական բռնազավթմանը, խանգարեցին Մեծ Բրիտանիային Եգիպտոսը հռչակել իր գաղութը, ինչը բրիտանացիներին չխանգարեց Եգիպտոսում հաստատել գաղութային համակարգ և փաստացի երկիրն ընդգրկել բրիտանական կայսրության մեջ: Եգիպտոսում բրիտանական ռազմական ներկայությունն ավարտվեց միայն 1954թ.:

- Չնայած XIX դարի սկզբին Եգիպտոսի փոքրամասնությունների մեջ հայերը թվաքանակով ամենասակավն էին, սակայն նրանց մասնակցությունը Եգիպտոսի զարգացման և պետականության պահպանման գործում համարվում է բեկումնային և անգնահատելի: Անկախ կրոնական և մշակութային տարբերություններից՝ պետական կյանքի մասնակցության, կազմակերպչական ունակությունների, ինչպես նաև վայելած հեղինակության շնորհիվ հայերին հաջողվել է վայելել Եգիպտոսի ղեկավարության վստահությունն ու զբաղեցնել կարևոր դեր պետական կառավարման համակարգում, նշանակալի մասնակցություն ունենալ կարևորագույն բանակցություններում, արտերկրում ունեցած կապերի շնորհիվ բարելավել տնտեսական, մասնավորապես առևտրային հարաբերությունները: Բարձր պաշտոններ զբաղեցնելով պետական ու հասարակական ոլորտներում՝ եգիպտահայերը շարունակել են դրսևորել իրենց հավատարմությունը Եգիպտոսի հանդեպ: XIX դարում Եգիպտոսում հաստատված հայ քաղաքական, հասարակական ու մշակութային գործիչները, լինելով հայրենասեր և ազգային շահերի նվիրյալներ, ստեղծեցին ազդեցիկ համայնք: Նրանք դարձան ոչ միայն հայ

ազգի, այլ նաև Եգիպտոսի պարծանքը՝ վայելելով եգիպտացիների հարգանքն առ այսօր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայերեն

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատոր Բ, Երևան, Հայաստան հրատ., 1967, 423 էջ:
2. Ալպոյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, Նոր աստղ տպ., 1960, 350 էջ:
3. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 718 էջ:
4. Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, Հայպետհրատ, 1962, 248 էջ:
5. Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Բ հատոր, Պատմութիւն Եգիպտոսի հայ բարերարներու եւ կրթական հաստատութիւններու, Վենետիկ, Մխիթարեան հրատ., 1986, 765 էջ:
6. Ճէյթլեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Մոնթրէալ, Մոնթրէալի Եգիպտահայերու Ընկերակցութիւն, 2004, 192 էջ:
7. Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 359 էջ:
8. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, հեղինակային հրատ., 2003, 408 էջ:
9. Հովհաննիսյան Ա., Եգիպտոսի ազգային և կրոնական փոքրամասնությունները (1907-1967 թվականներ), ատենախոսություն՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, Երևան, 2002, 165 էջ:
10. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 2, Օսմանյան տիրապետության շրջան, Երևան, Զանգակ-97, 2004, 680 էջ:
11. Մըսրլեան Գ., Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, Սահակ-Մեսրոպ տպ., 1947, 188 էջ:

12. Նազարէթ Մ. Աղազարմ, Նօթեր Եգիպտոսի հայ գաղութին վերայ, Գահիրէ, Զարեհ Ն. Պէրպէրեան տպ., 1911, 123 էջ:
13. Պարթեւեան Ս., Եգիպտահայ տարեցոյցը, Ա տարի, Գահիրէ, Զարեհ Ն. Պէրպէրեան տպ., 1914, 280 էջ:
14. Սաքոյան Տ., Նապոլեոն Բոնապարտի Արևելյան արշավանքի շարժառիթները, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XI-XII (հոդվածների ժողովածու), Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2017, էջ 150-155:
15. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, Գասպրինտ տպ., 2011, 744 էջ:

Ռուսերեն

16. Абрамовна С., Бартницки А., Бютнер Т., История национально-освободительной борьбы народов Африки в новое время, М., изд. «Наука», 1976, 636 с.
17. Ал-Джабарти Абд ар-Р., Египет в канун экспедиции Бонапарта (1776-1798), М., изд. «Наука», 1978, 494 с.
18. Ал-Джабарти Абд ар-Рахман, Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), М., изд. «Наука», 1962, 540 с.
19. Арутюнян С., Укрепление позиций Британской империи в Египте (80-90 гг. XIX в.), автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989, 22 с.
20. Ацамба Ф., Система административного управления египетской провинции Османской империи (XVI-XVIII вв.), Восток в новое время. Экономика, государственный строй, сб. статей, М., изд. «Наука», 1991, с. 109-128.
21. Бешанов. В., Шестьдесят сражений Наполеона, Минск, изд. «Харвест», 2000, 511 с.
22. Виноградов К., Мировая политика 60-80-х годов XIX века: События и люди, Ленинград, изд. Ленинградского университета, 1991, 166 с.
23. Долинина А., Очерки истории арабской литературы нового времени, Египет и Сирия, публицистика 1870-1914 гг., М., изд. «Наука», 1968, 144 с.
24. Дюфрес Р., Наполеон, М., изд. «Весь мир», 2003, 192 с.

25. Ерофеев Н., Англо-французская борьба за Суэцкий канал (1854-1875) // Из истории общественных движений и международных отношений: сборник статей в память акад. Е. В. Тарле/ Под ред. Волгин В. П. и др., М., изд. АН СССР, 1957, с. 590-614.
26. Зеленев Е., Государственное управление, судебная система и армия в Египте и Сирии (XVI - начало XX века), СПб., изд. С.-Петербургского университета, 2003, 420 с.
27. Кириллина С., Ислам в Османском Египте в XVIII-первой трети XIX века (социально-политические и идеологические функции), диссертация на соискание ученой степени доктора исторических наук, М., 1998, 357 с.
28. Кириллина С., Рябков М., Система управления и мусульманское судопроизводство Египта в период экспедиции Наполеон 1 Бонапарта (1798-1801гг.), Восток в новое время. Экономика, госуарственный строй, М., изд. «Наука», 1991, с. 129-145.
29. Клот-бей А., Египет в прежнем и нынешнем своем состоянии, ч. II, СПб., изд. книгопродавца В. Полякова, 1845, с. 439.
30. Кошелев В., Египет: уроки истории. Борьба против колониального господства и контрреволюции (1879-1981), Минск, изд. Университетское, 1984, 206 с.
31. Кошелев В., Консультативное собрание депутатов в Египте (1866-1879 гг.), Восток в новое время. Экономика, государственный строй, М., изд. «Наука», 1991, с. 180-200.
32. Кряжин В., Национально-освободительное движение на Ближнем Востоке, Часть 1, Сирия и Палестина, Киликия, Месопотамия и Египет, М., изд. Мосполиграф, 1923, 152 с.
33. Луцкий В., Новая история арабских стран, М., изд. «Наука», 1965, 372 с.
34. Манфред А., Наполеон Бонапарт, М., изд. «Мысль», 1971, 724 с.
35. Мережковский Д., Данте Наполеон, М., изд. «Республика», 2000, 542 с.
36. Наполеон Бонапарт, Египетский поход, СПб., изд. «Азбука», 2000, 432 с.
37. Нацвалов Л., Рассказ о путешествии по Западной Европе, Египту и Палестине в конце 1912 г. Из дневника воспоминаний и заметок артиллерийского офицера, Тифлис, типография канцелярии наместника Е. И. В. на Кавказе, 1913, 114 с.
38. Нерсесов Г., Дипломатическая история египетского кризиса 1881-1882 гг., М., изд. «Наука», 1979, 320 с.
39. Новичев А., Турция, Краткая История, М., изд. «Наука», 1965, 270 с.
40. Ротштейн Ф., Захват и Закабаление Египта, М., изд. восточной литературы, 1959, 367 с.

41. Тарле Е., Наполеон, М., изд. Академии наук СССР, 1957, 467 с.
42. Тененбаум Б., Великий Наполеон, «Моя любовница-власть» М., изд. «ЯУЗА», «ЭКСМО», 2011, 447 с.
43. Тюлар Ж., Наполеон, или миф о «спасителе», М., изд. «Молодая гвардия», 2009, 362 с.
44. Чандлер Д., Военные кампании Наполеона. Триумф и трагедия завоевателя, М., изд. «Центрполиграф», 2000, 694 с.
45. Черновская В., Формирование египетской интеллигенции в XIX-первой половине XX в., М., изд. «Наука», 1979, 162 с.
46. Шеремет В., Война и бизнесс: Власть, деньги и оружие, Европа и Ближний Восток в новое время, М., изд. Технологическая школа бизнеса, 1996, 722 с.

Անգլ երեն

47. Abbott J., The Life of Napoleon Bonaparte, London, Ward, Lock and Co, 1900, 747 p.
48. Abu-Lughod I., Arab Rediscovery of Europe, A Study in Cultural Encounters, Princeton, Princeton University Press, 1963, 188 p.
49. Ayubi N., Bureaucracy and Politics in Contemporary Egypt, London, Ithaca Press, 1980, 547 p.
50. Brinton J., The Mixed Courts of Egypt, New Haven, Yale University Press, 1930, 416 p.
51. Charles-Roux F., Bonaparte: Governor of Egypt, Translated From The French by Dickes E, London, Methuen and Co, 1937, 374 p.
52. Cole J., Colonialism and Revolution in the Middle East: Social and Cultural Origins of Egypt's Urabi Movement, Princeton, New Jersey, Princeton University Press, 1993, 360 p.
53. Cole J., Napoleon's Egypt, Inviding the Middle East, New York, Palgrave Macmillan, 2007, 279 p.
54. Crabites P., Ibrahim of Egypt, London, G. Routledge & Sons, 1935, 272 p.
55. Crecelius D., The Roots of Modern Egypt, A Study of the Regimes of Ali Bey al-Qabir and Muhammad Bey Abu al-Dhahab, 1760-1775, Minneapolis, Bibliotheca Islamica, 1981, 201 p.
56. Dicey E., England and Egypt, London, John Murray, 1881, 305 p.
57. Dodwell H., The Founder of Modern Egypt. A Study of Muhammad Ali, Cambridge, Cambridge University Press, 1931, 276 p.

58. Efendi H., Ottoman Egypt in the Age of the French Revolution: Translated by Stanford Jay Shaw, Cambridge, Harvard University Press, 1964, 198 p.
59. Findley C., The Tanzimat, The Cambridge History of Turkey, Volume 4, Turkey in the Modern World, edited by Kasaba R., Cambridge, Cambridge University Press, 2008, pp. 11-37.
60. Geer W., Napoleon The First, An Intimate Biography, New York, Brentano's, 1921, 390 p.
61. Ghazaleh P., The Guilds: Between Tradition and Modernity// The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present// edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 60-74.
62. Hamed R., The Siyasatname and the Institutionalization of Central Administration under Muhammad Ali // The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present// edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 75-86.
63. Hanna N., Administration in Egypt from Ottoman Times to the Present: An Introduction, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 1-14.
64. Heyworth-Dunne J., An Introduction to the History of Education in Modern Egypt, London, Cass, 1968, 503 p.
65. Hill E., Courts and the Administration of Justice in the Modern Era// The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present// edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 98-113.
66. Holt P., Egypt and the Fertile Crescent 1516-1922, A Political History, London, Longmans, Green & Co, 1966, 337 p.
67. Holt P., Political and Social Change in Modern Egypt, Historical Studies From the Ottoman Conquest to the United Arab Republic, London, Oxford University Press, 1968, 400 p.
68. Hunter R., Egypt Under the Khedives 1805-1879: From Household Government to Modern Bureaucracies, Pittsburgh, University of Pittsburgh Press, 1984, 283 p.
69. Khaled F., All the Pasha's Men: Mehmed Ali, His Army and the Making of Modern Egypt, Cambridge, Cambridge University Press, 1997, 334 p.
70. Landes D., Bankers and Pashas: International Finance and Economic Imperialism in Egypt, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1958, 354 p.

71. Malortie B., Egypt: Native Rulers and Foreign Interference, London, W. Ridgway, 1883, 322 p.
72. Marsot A. L. al-S., A Short History of Modern Egypt, Cambridge, Cambridge University Press, 1985, 164 p.
73. Marsot A. L. al-S., Egypt in the reign of Muhammad Ali, Cambridge, Cambridge University Press, 1984, 312 p.
74. McLynn F., Napoleon, A Biography, New York, Arcade Publishing, 2002, 739 p.
75. Milner A., England in Egypt, London, Edward Arnold, 1902, 410 p.
76. Mustafa A. A.-R., The Breakdown of the Monopoly System in Egypt after 1840, Political and Social Change in Modern Egypt, Historical Studies From the Ottoman Conquest to the United Arab Republic, London, Oxford University Press, 1968, pp. 291-307
77. Radwan A., Old and New Forces in Egyptian Education, New York, Bureau of Publications, Teachers College, Columbia University, 1951, 192 p.
78. Raymond A., The Role of the Communities (Tawa'if) in the Administration of Cairo in the Ottoman Period, The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present, edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 32-43
79. Richards A. R., Accumulation, Distribution and Technical Change in Egyptian Agriculture, 1800-1940, Madison, University of Wisconsin, 1975, 614 p.
80. Rivlin H., The Agricultural Policy of Muhammad Ali in Egypt, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1961, 393 p.
81. Rizk Y., The Development of the Ministerial System in Egypt 1878-1923// The State and its Servants: Administration in Egypt from Ottoman Times to the Present// edited by Hanna N., Cairo, The American University in Cairo Press, 1995, pp. 87-97.
82. Soliman H., Zamalek: The Changing Life of a Cairo Elite, 1850-1945, Cairo, The American University in Cairo Press, 2005, 416 p.
83. Tignor R., Modernization and British Colonial Rule in Egypt, 1882-1914, New Jersey, Princeton University Press, 1966, 417 p.
84. Vatikiotis P., The History of Modern Egypt. From Muhammad Ali to Mubarak, fourth edition, London, Weidenfeld and Nicolson, 1991, 572 p.

85. Ziadeh F., Lawyers The Rule of Law and Liberalism in Modern Egypt, Stanford, California, Hoover Institution Publications, 1968, 177 p.

86. Zürcher E., Turkey, A Modern History, 3rd edition, London, I. B. Tauris, 2004, 418 p.

Արաբերեն

87. أحمد حسين، موسوعة تاريخ مصر، الجزء الثالث، القاهرة، موسوعة دار الشعب، ١٩٧٣، ١٢٨٦ ص.

88. ألبرت فارمان، مصر و كيف غدر بها، القاهرة، المؤسسة المصرية العامة للتأليف والترجمة، ١٩٦٤، ٣٣١ ص.

89. الأمير عمر طوسون، صفحة من تاريخ مصر في عهد محمد علي، الجيش المصري السبري و البحري، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٠، ٤٢٠ ص.

90. أنور زقلمة، المماليك في مصر، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٥، ١٩٢ ص.

91. تشارلز آدمز، الإسلام و التجديد في مصر، القاهرة، ١٩٣٥، ٢٩٥ ص.

92. جرجي زيدان، مصر العثمانية، تحقيق د. محمد عرب، القاهرة، دار المعارف، ١٩٩٣، ٣١٦ ص.

93. جلال يحيى، مصر الحديثة ١٨٠٥-١٨٤٠، القاهرة، المكتب الجامعي الحديث، ١٩٨٣، ٥٠٢ ص.

94. سامي أمين، تقويم النيل، ج. ٢، القاهرة، مطبعة دار الكتب المصرية، ١٩٣٦، ٤٠٢ ص.

95. سعيد إبراهيم ذو الفقار، الإمبريالية البريطانية في مصر ١٨٨٢-١٩١٤، القاهرة، إيديشنس بلوريبل، ١٩٨٦، ٢٠٤ ص.

96. سلوى العطار، التغييرات الاجتماعية في عهد محمد علي، القاهرة، دار النهضة العربية، ١٩٨٩، ٣٩٢ ص.

97. طلى المحافظة، الاتجاهات الفكرية عند العرب في عصر النهضة، ١٧٩٨-١٩١٤، دمشق، الأهلية للنشر و التوزيع، ١٩٧٥، ٢٧٦ ص.

98. طه جاد، معالم تاريخ مصر الحديث و المعاصر، القاهرة، دار الفكر العربى للطباعة والنشر، ١٩٨٥، ٤٥٢ ص.

99. عبد الرحمن الجبرتي، عجائب الآثار في التراجم و الأخبار، الجزء ثالث، القاهرة، الهيئة البيان العربي، ١٩٦٤، ٣٩١ ص.

100. عبد الرحمن الجبرتي، عجائب الآثار في التراجم و الأخبار، الجزء الرابع، القاهرة، الهيئة البيان العربي، ١٩٦٥، ٣٨٣ ص.

101. عبد الرحمن الرافعي، عصر محمد علي، القاهرة، دار المعارف، ١٩٥١، ٧٤٠ ص.

102. عبد الرحمن الرافعي، تاريخ الحركة القومية و تطور نظام الحكم في مصر، الجزء الثانى، القاهرة، دار المعارف، ١٩٥٨، ٣٩١ ص.

103. عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الأول، القاهرة، دار المعارف، ١٩٨٢، ٣٠٨ ص.

104. عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الثانى، القاهرة، دار المعارف، ١٩٨٢، ٣٥٢ ص.

105. عبد الرحمن الرافعي، الثورة العرابية و الاحتلال الإنجليزي، القاهرة، دار المعارف، ١٩٨٤، ٥١٥ ص.

106. عبد الرحمن الرافعي، مصطفى كامل باعث الحركة الوطنية، القاهرة، دار المعارف، ١٩٨٥، ٥١٧ ص.

107. عبد الرحمن الرافعي، محمد فريد رمز الإخلاص و التضحية، القاهرة، دار المعارف، ١٩٨٥، ٥١٩ ص.

108. عبد الرحمن زكي، التاريخ الحربي لعصر محمد علي الكبير، القاهرة، دار المعارف، ١٩٥٠، ٥٥٨ ص.

109. عرابي أحمد، مذكرات الزعيم أحمد عرابي، القاهرة، دار الهلال، ١٩٨٩، ٣٩٢ ص.

110. علي بركات، تطور الملكية الزراعية في مصر (١٨١٣-١٩١٤) و أثره على الحركة السياسية ، القاهرة، دار الثقافة الجديدة، ١٩٧٧، ٥٤٢ ص.

111. علي محمد شلبي، المصريون و الجندية قي القرن التاسع عشر، القاهرة، دار الكتاب الجامعي، ١٩٨٨، ٢٥٥ ص.

112. لطيفة محمد سالم، الحكم المصري في الشام (١٨٣١-١٨٤١م)، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٠، ٣٣٢ ص.

113. محمد صبري، تاريخ مصر من محمد علي إلى المصر الحديث، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٦، ٣١٣ ص.

114. محمد فؤاد شكري، عبد المقصود العناني، سيد محمد خليل، بناء دولة مصر محمد علي (السياسة الداخلية)، القاهرة، دار الفكر العربي، ١٩٤٨، ٨٤٧ ص.

115. محمد محمود السروجي، الجيش المصري في القرن التاسع عشر، القاهرة، ١٩٦٧، ٥٠٨ ص.

116. محمد نور فرحات، القضاء الشرعي في مصر في العصر العثماني، القاهرة، الهيئة المصرية العامة للكتاب، ١٩٨٨، ١٢٧ ص.

117. يانج جورج، تاريخ مصر من عهد المماليك إلى نهاية حكم إسماعيل، تعريب: علي أحمد شكري، القاهرة، مكتبة مدبولي، ١٩٩٦، ٦٢٨ ص.